2782

9(47.925)
Р-54

12012

9(47·925)
Ա-54 ա՛ծ·
19 AUG 2006

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՇԱՐԱԳՐԵՑ

Ա· ՀԱՄԱԶԱՍՊ ԹԵՐՁԻՄԱՆԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1004
Ա 6662


ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

1860

115400-42



(14576-58)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Յայտնի ու ամենէն ծանուցեալ ճշմարտութիւն մըն է, թէ գործք մը ամենուն միօրինակ հաճոյ ընելը՝ եթէ անկարելի ալ չըսենք, բայց ամենադժուար բան է։ Ա՛ս դժուարութիւնս տարակոյս չկայ որ անհամեմատ կ՛աւելնայ գրքի մը համար, մանաւանդ այնպիսի գրքի մը որ յատուկ ազգային ըլլալով, ինչպէս է ազգային պատմութիւն մը, բոլոր ազգը իրաւունք ունի քննելու, ևս առաւել որ գաստատեալ ալ ըլլալով ինքը պիտի ըլլայ բոլոր ազգին տղոցը ազգայնութեան հոգին տպաւորողը. և չէ թէ միայն ընդհանուր ազգին՝ հապա իւրաքանչիւր գործոց ու ինչ և իցէ կերպով ա-

նուանի եղող անհատիցն ալ արժանաւոր գաղափարը տուող ու յարգը ճանչցնող : Ա.ս պատճառաւ որչափ ջանք և փոյթ ըլլայ ասանկ գրքի մը կատարելութեանը համար դեռ քիչ է : Եւ մենք որ այս պզտիկ բայց կարևոր գործքիս ձեռք զարկինք , չգիտեմ թէ կրցանք արդեօք այն պահանջուած կատարելութիւնը տալ այս փոքրիկ դասատետրիս : Ջանացինք իրաւ եւելցնել ըստ տեղւոյն յարմար ու հարկաւոր խորհրդածութիւնները , առանց որոնց անօգուտ ու նիւթական ուսմունք մը կ'ըլլար պատմութիւնը տղայոց : Ջանացինք նմանապէս յայտնել ու առելի ընել՝ չարաց , որ ամէն ազգի մէջ չեն պակսիր , միևնոյնակար պակասութիւնները ու ախտերը առանց անիրաւելու և ընդհանուր ազգին տալու այն մասնաւորաց պակասութիւնները : Ջանացինք վերջապէս փոխանակ ընդունայն պարծանքներու՝ յայտնել այն ամենայն ազգային կատարելութիւնները ու գեղեցիկ յատկութիւնները որ ազգի մը ճշմարիտ պարծանք են և որոնցմով սիրելի ու յարգոյ կ'ըլլայ պատմութիւնը ազգայնոց ու օտարաց : Եւ որովհետև մեր վախճանն էր տղայոց և ժողովրդեան առ հասարակ դիւրընթեռնելի ընել ազգային պատմութիւնը , ասելորդ սեպեցինք ծանրաբեռնել զանի երկրորդա-

կան պարագաներով ու այնպիսի մտանա-
ւոր ու առանձնական դէպքերով, որ ազ-
գային պատմութեան հետ անմիջապէս վե-
րաբերութիւն մը չունին։

Բախտաւոր կը համարինք զմեզ՝ թէ որ
կրցանք քիչ շատ դիտած վախճաններնուս
հասնելով օգտակար ընել գասիկայ եթէ
տղայոց և եթէ վարժապետաց, որոնց՝ի
դիւրութիւն ընծայելով, կը յուսանք որ թե-
րութեանցն ալ ներողամիտ կ՚ըլլան։

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Կ Ա Զ Ա Ն Ց

ԴԱՍ Ա.

Հայկեան սկսեալ ի Նիչոտան Ա. տարւ :

Հ. Ո՞եր Հայոց ազգը ո՞ւմէկից առաջ եկած է.
Պ. Նոյ Նահապետին Յաբեթ որդիէն :

Հ. Ո՞վ եղաւ մեր ազգին նահապետը.
Պ. Հայկ, որ էր Թորգոմայ որդին. Թորգոմն ալ Գամերայ, Գամերն ալ Յաբեթայ :

Հ. Ի՞նչպէս մեր ազգին նահապետ եղաւ Հայկ.
Պ. Իր ազգատոհմին վրայ աչեր և գլուխ ըլլալով, և զանոնք իր անուամբը Հայք անուանելով. որոնց մէ մենք ալ ինչած ենք :

Հ. Ե՞րբ սկսաւ մեր ազգին տէրութիւնը.
Պ. Անմիջապէս ջրհեղեղէն քիչ մը ետքը :

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իր տէրութիւնը.

Պ. Երբոր Բաբելոն գացող և աշտարակը շինել ուզող մարդկանց լեզուն խառնուեցաւ, և ազգերը պիտի ցրուէին, Բէլ ուզեց ամենուն վրայ բռնութեամբ իշխել ու Աստուծոյ պէս պաշտուիլ. Հայկ ալ աս բանիս չհամացաւ, ու Հայաստան դարձաւ իր երեք հարիւր կարիճներովը, որ էին իրեն որդիքը, թոռունքը, և անոնց ընկերացած հաւատակիմ մարդիկներ (2346):

Հ. Բէլ երբոր աս բանս լսեց ինչ ըրաւ.

Պ. Հպարտութեամբ պատգամ խաւրեց Հայկայ որ գայ հնազանդի իրեն, թէ չէ տնով տեղով ջինքը թրէ կ'անցընէ:

Հ. Հայկ աս բաներս լսելով հնազանդեցաւ Բէլայ.

Պ. Չէ. հապա իրեն կարիճ տղաքներովը, ծառաներովը և ուրիշ հաւատարիմ մարդիկներով Բէլայ անհամար բազմութեանը դէմ ելաւ, որոնք եկեր էին իր վրայ:

Հ. Ի՞նչպէս պատերազմեցան Հայկն ու Բէլը.

Պ. Նախ Հայկ յաղթեց Բէլայ զօրքերուն. վերջը երբոր Բէլ եռ կը քաշուէր քիչ զօրքով, Հայկ մէկէն վրան վազեց զարկաւ նետովը, ու հոն սպաննած փուեց ամբարտաւանն հսկան, Աստուծոյ և մարդկութեան թշնամին:

Հ. Հայկ Բէլայ մարմինը ինչ ըրաւ.

Պ. Չմռսել տալով տարաւ Հայաստանի Հարք ըսուած երկիրը, ու բլրի մը վրայ թաղեց, ուզելով որ ամէնքն ալ տեսնեն և իմանան ամբարտաւանն մարդոն վիճակը. և իրեն ալ աչխարհքիս ըրած բարիքը:

Հ. Հայկ Բէլը սպաննելէն ետքը ինչ ըրաւ. ու որչափ տարեցաւ.

Պ. Ուզելով խմացընել իր արդարասէր և անաչառահակալ ոգին՝ Թշնամին հալածելէն ետքը դարձաւ Հայաստան եկաւ. քաղաքներ շինեց ու բարեկարգութիւններ ըրաւ ու 400 տարիի չափ տարեցաւ ետքը խաղաղութեամբ մեռաւ (2265):

Հ. Ինչ բնութիւն և ինչ ձիրքեր ունէր Հայկ.

Պ. Մարմնով կորիճ մարդ էր, մեծահասակ եւ գեղեցիկ, գառուզ մազերով, կարմիր երեսով, վառվռուն աչքերով. ձեռքով ալ շատ ճարպիկ ու ապրատաշարժ. իսկ մտօք՝ բարեկամիտ, հնարագէտ, աշխարհահռչակ և անվախ սրտով:

Հ. Հայկայ առեն ինչ մանաւանդ բան պատահեցաւ Հայաստանի մէջ.

Պ. Նոյ 950 տարուան վախճանեցաւ, ու թաղուեցաւ ինչպէս կ'ըսուի Նպատ լերան վրայ. նոյնպէս Նոյեմզարա՝ Նոյայ կինն ալ թաղուեցաւ Մարանդ գաւառը:

Հ. Հայկայ առեղը ով անցաւ.

Պ. Արմենակ Հայկայ քաջ և հայրենասէր անդրանիկ որդին:

Հ. Արմենակ ինչ գործ ըրաւ իր հայրենասիրութեանը վայել.

Պ. Իր խոհ եւ Մանաւազ եղբայրները Հարք գաւառը թողուց ու ինքը արեւելեան կողմերը գնաց, հոն առեղուանքն ալ չէնցուց:

Հ. Արմենակայ մեկալ եղբայրքը ինչ եղան.

Պ. Երկու եղբայրքն ալ անանկ բազմացան, որ հազարաւոր տարի ցեղերնին դիմացաւ իրենց ա-

նունովը Խորխոռունիք ու Մանաւազեանք ըսուելով։ Նոյնպէս Բազ Արմենակայ որդւոյն ցեղն ալ իր անունովը Բզնունիք ըսուեցաւ։

Հ. Արմենակայ ո՞վ յաջորդեց.

Պ. Արամայիս իր որդին, որ Արմաւիր քաղաքը շինեց Երասխ գետին քով (1975)։

Հ. Ո՞վ էր Շարա.

Պ. Շարա Արամայիսի որդւոց մէկն է որ շատ կերուխում կը սիրէր, հայրն ալ զինքը բարեբեր երկիր մը խաւրեց որ իր անունովը Շիրակ կոչուեցաւ։

Հ. Արամայիսին տեղը ո՞վ անցաւ.

Պ. Ամասիա իրեն որդին, որ իր անունովը՝ Մասիս անուանեց Արարատ լեռը։

Հ. Ամասիայի որդւոց վրայ ինչ գիտելիք կայ.

Պ. Ամասիա իրեք տղայ ունէր Փառոս, Ցոլակ և Գեղամ. առջի երկուքին համար մէյմէկ քաղաք շինեց որ անոնց անունովը Փառասպա եւ Ցոլակերտ ըսուեցան. իսկ երրորդը Գեղամ իր տեղը յաջորդեց։

Հ. Գեղամայ վրայ ինչ կը պատմուի.

Պ. Քանի մը տարի էշխելէն ետքը՝ յանձնեց տէրութիւնը իր Հարմա տղուն, ու ինքը Սևան ծովին եզերքները բնակելով ան տեղը իր անունովը կոչեց Գեղարքունիք ու ծովն ալ Գեղամայ ծով։

Հ. Սևսակ Գեղամայ որդւոյն վրայ ինչ գիտելիք կայ.

Պ. Սևսակ իր քաղցր նայուածքին եւ խօսուած

քին համար Աղու ըսուեցաւ. ասոր բնակած տեղին անունը Սիսական ըսուեցաւ կամ Սիւնիք:

Հ. Ո՞վ էր Հարմա և իր վրայ ինչ մանաւանդ գործք մը կը պատմուի.

Պ. Գեղամայ որդին էր. ասոր առեղը սկսան Թշնամիք Հայաստանի վրայ վազել ու տիրել, որոնք որ Հայկայ և իրեն որդւոցը քաջութեան գործքերը լսելով առաջ վախցեր ու թուլցեր էին. բայց առեն անցնելով մոռցուեր էր առ իրաւացի վախը ինչուան որ Աբրամ նորէն վախ ձգեց անոնց սիրտը:

ԴԱՍ Բ.

Աբրահեմ հինչուան Պաբոյր:

Հ. Ո՞վ էր Աբրամ.

Պ. Հարմայի որդին եւ յաջորդը:

Հ. Աբրամին առջի Թշնամին ո՞վ եղաւ.

Պ. Նիւքար Մարտց իշխանը, որուն դէմ երթալով Աբրամ յիսուն հազար զօրքով, յաղթեց ու գինքը բռնեց աշտարակի մը ծայրը գամեց (1828):

Հ. Հայոց երկրորդ Թշնամին ո՞վ էր.

Պ. Բարշամ Բաբելացւոց իշխանը որ նոյնպէս յաղթուելով ապաննուեցաւ Աբրամէն:

Հ. Հապա երրորդ Թշնամին ո՞վ էր.

Պ. Պայապիա Կապադովկիոյ իշխանը որ յաղթուելով փախաւ Մինէրկրական ծովուն կղզիներէն մէկը:

Հ. Արամ Պայապիսին երկիրները ինչ ըրաւ.

Պ. Բոլորին ալ սիրելով Մշակ անուանով մէկը իշխան դրաւ հոն, ու պատուիրեց որ ամէնքն ալ հայերէն խօսին. որով ան տեղին անունն ալ փոքր Հայք ըսուեցաւ, Մշակայ բնակած տեղն ալ՝ Մաժակ, որ է Գայաերի քաղաքը:

Հ. Արամայ վրայ ուրիշ ինչ գիտնալու բան կայ.

Պ. Նինոս Ասորեստանցւոց Թագաւորէն մարգարտազարդ պսակ մը ընդունեցաւ, եւ անոր երկրորդը կոչուեցաւ:

Հ. Ինչ պատճառաւ Նինոս աս Թագը խաւրեց.

Պ. Վասն զի Արամայ քաջութիւններէն ակնածելով ուզեց անոր բարեկամութիւնը ստանալ:

Հ. Արամ որչափ տեղ իշխեց ու երբ մեռաւ.

Պ. Յիսունըհինգ տարի իշխեց ու մեռնելով իրեն յաջորդ Թողուց Արայ որդին:

Հ. Արայ ինչու համար պատերազմի ելաւ Շամիրամայ դէմ:

Պ. Արայ շատ գեղեցիկ ըլլալով Շամիրամ Ասորեստանցւոց ախտամոլ Թագուհին ուզեց հետը կարգուիլ. բայց Արայ չանձն չառաւ ու պատերազմի ելաւ:

Հ. Պատերազմին վերջը ինչպէս եղաւ.

Պ. Արայ քաջութեամբ կռուեցաւ, բայց պատերազմին տաքցած տեղը զարնուեցաւ ու մեռաւ. Թէպէտ և Շամիրամ տպատրեր էր իր զօրացը որ գինքը չսպաննեն ողջ բռնեն (1769):

Հ. Շամիրամ ինչ ըրաւ Հայաստանի մէջ.

Պ. Հասնելով մեր աշխարհքին դրեցը և օդին դեղեցկութեանը, ամուր քաղաք մը և բերդ մը շինել տուաւ Շամիրամակերտ անունով որ Վան ալ կ'ըսուի. և ինչուան հիմայ կեցած են ան տեղուան շինած պատերը:

Հ. Արայի ով յաջորդեց.

Պ. Շամիրամ Հայոց վրայ եկեան դրաւ Արայի կարդաս որդին:

Հ. Շամիրամ ու կարդաս ինչպէս մեռան.

Պ. Շամիրամ ու կարդաս Նինուասայ վրայ պատերազմի եկան՝ որ Շամիրամին որդին էր, ու իրմէ ապատամբած. բայց յաղթուելով երկուքին ալ մեռան:

Հ. կարդասին ով յաջորդեց.

Պ. Անուշաւան էր որդին, որ Թէպէտ և գերի ընկած էր Նինուասայ ձեռքը, բայց սիրելի ըլլալով անոր, ազատեցաւ գերութենէն, ու եկաւ տիրեց իր հայրենեացը. երկար տաեն եկեց շատ խելքով ու մեռաւ:

Հ. Ո՞վ էր Պարեատ.

Պ. Հայկայ մեկալ որդւոց ցեղերէն եկած կըտրիճ մըն էր որ Անուշաւանին տեղը նահապետ եղաւ. որովհետև Անուշաւան որդի չունէր (1662):

Հ. Պարեատին վրայ ինչ գիտելիք կայ, ու իրեն ով յաջորդեց.

Պ. Ասկայ շատ քաջութիւններ ըրած ունի. իրեն յաջորդեց Արբակ:

Հ. Արբակին ով յաջորդեց.

Պ. Ջաւան: Ջաւանին յաջորդեց Փառնակ: Փառնակին Սուր:

Հ. Սուր նահապետին վրայ ինչ գիտեմք կայ.

Պ. Սուր որ իրեն քաջութեանցը համար աս անունը ժառանգեց, շատ յաղթութիւններ ըրաւ ընդդէմ Թշնամեաց: Ասոր առենը Քանանացիք Իսրայելացիներէն հալածուելով ումանք Հայաստան եկան, որոնցմէ ձևացաւ Քանանիդեանց կամ Գընթունեաց նախարարութիւնը:

Հ. Սուրայ ովՀ յաջորդեց.

Պ. Եաւէ եաւ յաջորդեցին Հաւանակ և Վաշտակ, որոնց վրայ պատմութիւն չունինք:

Հ. Հայկակ Ա. նահապետը ինչ քաջութեան գործք ըրած ունի.

Պ. Ամինդէս Ասորւոց Թագաւորին յաղթեց. բայց անոր Բելոքոս յաջորդին յաղթուեցաւ ու մեռաւ (1369):

Հ. Որոնք յաջորդեցին Հայկակէն եաւ.

Պ. Երկու հարիւր տարուան չափ միջոցի մէջ եղեցին Հայոց վրայ տասնք. Ամբակ Ա, Առնակ, Շաւարշ Ա, Նորայր, Վտամ, կար, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ և Հօրոյ որոնց վրայ գիտեմք մը չկայ:

Հ. Ձարմայրի վրայ ինչ կը պատմուի.

Պ. Տրոյացւոց օգնութեան գնաց ու շատ քաջութիւններ ըրաւ. բայց Աքիլլեսի հետ պատերազմելով մեռաւ (1182):

Հ. Ձարմայրէն ինչուան Հսկայորդի ոչխափնահապետները նասան.

Պ. Դրեթէ չորս հարիւր տարուան միջոցի մէջ տասնի չափ նահապետներ նասան, որոնց վրայ տեղեկութիւն մը չունինք. և են տասնք. Շա-

ւարշ Բ, Պերճ Ա, Արբուն, Պերճ Բ, Բաղուկ, Հոյ, Յուսակ, Ամբակ Բ, Փառնաւազ Ա, Փառնակ Բ, ու Հակայորդի:

ԳԱՍ Գ.

Պատրաստեւ Հնչուած Հայկազանց թագաւորութեան կործանիլը. և կոչնակալաց Իշխանութիւնը:

Հ. Ո՞վ էր Պարոյր.

Պ. Հակայորդւոյն որդին էր, որ Հայոց առաջին Թագաւորը եղաւ:

Հ. Ի՞նչ պատճառաւ Թագաւոր պսակուեցաւ.

Պ. Սարդանապալ Ասորւոց Թագաւորին դէմ օգնութիւն գնաց Վարբակէս Իշխանին ու միաբան յաղթեցին անոր. ու ինքը Վարբակեանէն Թագաւորեցաւ (746):

Հ. Պարոյրին առեղը ուրիշ ինչ գիտնալու արժանի բան եղաւ.

Պ. Աղրամելէք և Սանհասար Ասորեստանցւոց Թագաւորին տղաքը Հայաստան փախան, որոնք վերջէն մեծամեծ նահարարութիւններ եղան, այսինքն Արծրունիք և Սանհասունք կամ Սանոյք:

Հ. Պարոյրէն ետև որո՞նք Թագաւորեցին.

Պ. Հարիւր տարուան չափ միջոցի մէջ հինգ Թագաւոր նստեցան, որոնց վրայ յիշատակութիւն մը չունինք. սոոնք են Հրաչեայ, Փառնաւազ Բ, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս:

Հ. Հայկակ ինչ վայ ինչ պիտեվնք կայ.

Պ. Նաբուգոդոնոսորին հետ Երուսաղեմի վայ գնաց, ու հոնկէ Հայաստան բերաւ Համբառ անունով իշխան մը, ուսկից սերեցաւ Բագրատուհեաց ցեղը Բագարատ երևելի իշխանին անունէն առնելով (605):

Հ. Ո՞վ յաջորդեց Հայկակին.

Պ. Իր որդին Երուանդ առաջին որ չորս տարի միայն Թագաւորելով մեռաւ, անոր համար Սահակաւակեաց ըսուեցաւ (565):

Հ. Ո՞վ ի Տիգրան Ա.

Պ. Երուանդայ տղան ու Հայկազանց ամենէն երևելի Թագաւորը:

Հ. Ինչու համար Աժդահակ Մարաց Թագաւորը Տիգրանայ հետ Թշնամացաւ.

Պ. Վասն զի Տիգրան բարեկամութիւն ըրաւ Կիւրոսի հետ՝ որ իր Թշնամին էր:

Հ. Աժդահակ ինչ վարպետութիւն բանեցուց Տիգրանը մեռցընելու.

Պ. Տիգրանին Տիգրանուհի քոյրը երեն կին առաւ, ու անոր ձեռքովը ուզեց սպաննել զՏիգրան:

Հ: Աժդահակայ չարութեան խորհուրդը առաջ գնաց:

Պ. Ձէ. վասն զի Տիգրանուհին Աժդահակայ խորհուրդը ծածուկ լսացուց իր եղբօրը:

Հ. Ասով Տիգրանուհին ինչ մը եղաւ.

Պ. Ձէ. որովհետև Տիգրան պատերազմը ուշացուց որ քոյրը առնէ գոնելով փախչի Աժդահակին քովէն:

Հ. Պատերազմը ինչպէս եղաւ.

Պ. Երբոր Կիւրոս իր զօրքովը եկաւ հասաւ, Տիգրան անոր հետ մէկտեղ Աժդահակայ դէմ ելաւ. պատերազմին էն տաք միջոցը Տիգրան քաջութեամբ սպաննեց զԱժդահակ, որով պատերազմը լմնցաւ:

Հ. Տիգրան պատերազմէն դառնալէն եաքը ինչ ըրաւ.

Պ. Աժդահակին կինն, ընտանիքը և ուրիշ գերիները Հայաստանի մէջ բնակեցուց, ուսկից սերեցան Վիշապազունք կամ Մուրացան ըսուած ցեղը: Իսկ Տիգրանուհի քոյրը Տիգրանակերտի կողմերը բնակեցուց, ուսկից որ սերեցաւ Ոսոան կամ Ոսոանիկ ըսուած ազգաց ցեղը:

Հ. Տիգրան ինչպէս Թագաւորութիւն գրեց.

Պ. Շատ խելքով, շատ չինութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ. և քառասնուհինգ տարի Թագաւորելէն եաև մեռաւ. իրեն տեղը յաջորդեց Վահագն իր որդին:

Հ. Վահագնի վրայ ինչ բան կը պատմուի.

Պ. Իսկատ քաջ ըլլալուն համար՝ վրան շատ առասպելներ զրուցեցին. և Վրացիք զինքը կը պաշտէին: Աւոր ցեղը Վահունիք ըսուեցաւ (320):

Հ. Վահագնի ով յաջորդեց.

Պ. Որդւոց որդի յաջորդեցին Առաւան, Ներսեհ, Զարեհ, Արգամ, Բայգամ, Վան և Վահէ (351):

Հ. Ինչու համար Աղեքսանդր Վահէին վրայ եկաւ.

Պ. Վան զի Դարեհ Պարսից Թագաւորին օգնութիւն խաւրեր էր Վահէ:

Հ. Ի՞նչպէս մեռաւ Վահէ.

Պ. Աղէքսանդրի դէմ պատերազմելով շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ պատերազմին մէջ ընկաւ մեռաւ, ու ասով Հայկազանց Թագաւորութիւնը վերջացաւ 1800 տարի դիմանալէն ետքը (328):

Հ. Վահէէն վերջը Հայաստանի ո՛վ կ՚իշխէր.

Պ. Մակեդոնացւոց կամ Յոյնց Թագաւորները մէկ իշխան մը կը խաւրէին որ Հայաստանը կառավարէ. աս իշխանները Կուսակալք կ՚ըսուին:

Հ. Ո՞վ եղաւ առջի կուսակալը.

Պ. Միհրան, որն որ Աղէքսանդրէն խրկուեցաւ ու հինգ տարի կենալէն ետքը եռանչուեցաւ (319):

Հ. Միհրանայ տեղ ո՞վ եղաւ կուսակալ.

Պ. Նէոպտղոմէոս, որ Հայոց վրայ գէշ աչքով կը նայէր, ան պատճառաւ շատ նեղութիւններ տուաւ Հայոց:

Հ. Ո՞վ ազատեց զնոսին ասանկ նեղութենէն.

Պ. Ադուարդ մեր քաջ նախարարը, որ Նէոպտղոմէոսը փախուց Հայաստանէն:

Հ. Ադուարդ մինակ իշխեց Հայոց վրայ.

Պ. Չէ. Վասն զի Եւմենէս մակեդոնացի իշխանին միջնորդութեամբը նորէն եկաւ Նէոպտղոմէոս ու իբրև Ադուարդին երկրորդը կը կենար (317):

Հ. Ադուարդ ո՛րչափ տաեն իշխեց.

Պ. Ութիշ շատ քաջութիւններ ընելէն ետքը հաստատուեցաւ իր իշխանութեանը մէջ, ու երեսուն և երեք տարի իշխեցէն ետքը մեռաւ:

Հ. Ադուարդին տեղը ո՞վ խաւրուեցաւ կուսակալ.

Պ. Հրանտ. ասոր ալ յաջորդեց Արտաւազդ ա-նունով իշխան մը, որ ապստամբելով Սելևկիա-ցւոց [1] Անտիոքոս Գ. Թագաւորէն՝ ինքնագլուխ իշխեց:

Հ. Յաջողեցա՞ Արտաւազդին ապստամբութիւնը.

Պ. Վախնալով Անտիոքոսէն շատ ընծաներով խոստացաւ հարկը տալ, ու անով նորէն կուսա-կալ եղաւ:

Հ. Արտաւազդին տեղը ո՛վ դրուեցաւ կուսակալ.

Պ. Արտաշէսս և Զահրատ հայ իշխաններըը:

Հ. Զահրատ և Արտաշէսս ինչուան վերջը հա-ւատարիմ մնացի՞ն Սելևկիացւոց.

Պ. Ձէ. Հապա Հռովմայեցւոց օգնութեամբը ապստամբեցան ու երկուքն ալ Թագաւորեցին: Զահրատ Փոքր Հայոց վրայ, Արտաշէսս ալ մեծ Հայոց վրայ. ուր որ Աննիբաղ Կարքեդոնացի մեծ զօրապետին խրատովը Արտաշատ քաղաքը շինեց:

Հ. Անտիոքոս Եպիփան երբոր լսեց ասս բանս ի՞նչ ըրաւ.

Պ. Արտաշէսսին վրայ պատերազմի ելլելով բըռ-նութեամբ հնազանդեցուց:

Հ. Արտաշէսսէն և Զահրատէն վերջը ո՛րո՞նք իշխեցին Հայոց.

Պ. Առնցմէ վերջը քանի մը Թագաւորներ ալ նստան Հայաստան ինչուան Արշակունեաց առե-նը, բայց պատմութիւննին շփոթ ըլլալով որոշ բան մը չիգիտցըւիր վրանին: Միայն թէ անոնց վերջի Թագաւորը եղաւ Մորփիւղիկէս Զահրա-տին տղան (159):

1 Ասոր՝ Սելևկիացիք ալ ըսուեցան իրենց առաջին Թագաւորին Սելևկոսին անուամբը:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ե Ա Ց

ԴԱՍ Դ.

Վաղարշակեան սկսեալ մինչեւ զառաւելագոյն Ա:

Հ. Ո՞վ էին Արշակունիք.

Պ. Պարթեւ ըստուած ազգէն էին, որոնցմէ Արշակ անունով կարճ մը թագաւոր եղաւ իր ազգին. իր թոռը Արշակ ալ շատ գօրաւոր ըլլալով թագաւորութիւնը մեծցուց, Հայաստանին ալ տիրեց. և իր Վաղարշակ եղբայրը հոն թագաւոր դրաւ (149):

Հ. Վաղարշակ թագաւոր ըլլալէն ետքը ինչ պատերազմ ըրաւ.

Պ. Մօրմիւղիկեան հետ պատերազմ ընելով զինքը սպաննեց ու անով բոլոր Հայոց տիրեց:

Հ. Վաղարշակ ո՞ւր դրաւ իր աթոռը.

Պ. Մծբին քաղաքը, որ Ասորւոց երկրին և Հայաստանին մէջ տեղուանքն է:

Հ. Վաղարշակ Հայերը սիրե՞ց.

Պ. Տեսնելով անոնց քաջութիւնը և տիրասի-

բուլթիւնն ան ասոիճան սիրեց զՀայերը, որ ե-
ւեւէ եղաւ գիտնալ ու իմանալ այնպիսի պատուա-
կան ազգին պատմութիւնը:

Հ. Ուրեմն վաղարշակ գոնէ ուզած պատմու-
թիւնները.

Պ. Հայաստանի մէջ չգտնելով, Մարիբաս կա-
թինա անունով մէկը խաւրեց Վինուէ, որ երթայ
հոն գրատան մէջէն գտնէ Հայոց պատմութիւնը,
ինչպէս որ գոնաւ ալ:

Հ. Վաղարշակ ուրիշ ինչ բարեկարգութիւն-
ներ ըրաւ.

Պ. Նախարարաց և աղքունեաց մէջ շատ կար-
գեր դնելէն ետքը, որոշեց ալ որ Թագաւորին
հետ միայն անդրանիկ որդին ճոյ, մէկալները ու-
րիշ տեղ կենան:

Հ. Վաղարշակայ ո՞վ յաջորդեց.

Պ. Արշակ Ա. իւր որդին, որ շատ բարեկարգու-
թիւններ ու քաջութիւններ ըրաւ (127):

Հ. Գլխաւոր քաջութիւնը ո՞րն է:

Պ. Պոնտացիները նուաճեց ու երեն յաղթու-
թեան նշան կոթող մը անկեց Ծովուն եզերքը. ու
նիզակը զարնելով ծակեց քարը:

Հ. Արշակայ Աին ո՞վ յաջորդեց.

Պ. Իր որդին Արտաշէս Ա. որ Յունաստանի և
բոլոր Փոքր Ասիոյ սիրեց:

Հ. Ի՞նչ բան ըրաւ Պարսկաստանի մէջ.

Պ. Իր անունովը տակ կոխեց. ու Պարսից Թա-
գաւորը որ ինչուան ան առեն պատուով առաջին
էր՝ երեն երկրորդը ըրաւ:

Հ. Աբրահամի զօրաց բազմութեանը վրայ ինչ կը պատմուի.

Պ. Կ'ըսեն թէ երբոր ամէնքը միաբան նետ նետէին՝ արևը կը խափանէր ու թէ որ մէյմէկ քար նետէին՝ բլուր մը կը ձևանար:

Հ. Աբրահամ ինչպէս մեռաւ.

Պ. Զօրացը մէջ խռովութիւն եյնալով զինքը սպաննեցին (87):

Հ. Աբրահամին ո՞վ յաջորդեց:

Պ. Տիգրան իր որդին որ ալոդէն երկու տարիէ՝ի վեր հօրը հետ կը թագաւորէր:

Հ. Տիգրան Բին առջի գործքը ինչ եղաւ.

Պ. Յոյները նուաճեց, որոնք Աբրահամի մահը լսելով ապստամբեր էին:

Հ. Տիգրան զո՞վ դրաւ իրեն փոխանորդ Պոնտոսի մէջ, ու Յոյները նուաճող.

Պ. Իր Միհրդատ անունով քեռայրը, որ քաջ ու խելացի մարդ էր:

Հ. Տիգրան Ք. ինչ կրօնական գործողութիւններ ըրաւ.

Պ. Ալ և այլ տեղեր մեհեաններ շինելով Յունաստանէն բերած աստուածներու արձանները կանգնեց ու անոնց քուրմեր հաստատեց:

Հ. Ասորւոց երկիրը ինչ բան ըրաւ Տիգրան.

Պ. Ասորւոց երկրին տիրեց և անոնց Սելևկեան թագուհին բռնեց սպաննեց. վասն զի Սելևկիացիները յորդորեր էր Տիգրանէն ապստամբելու:

Հ. Հրէայք երբոր լսեցին Սելևկ թագուհւոյն սպաննուիլը ինչ ըրին.

Պ. Շատ ընծաներ տուին Տիգրանայ որ իրենց Աղեքսանդրա Թագուհիին ետև մը չհասցնէ:

Հ. Ինչ պատճառաւ Հռովմայեցիք Միհրդատայ հետ Թշնամացան.

Պ. Վասն զի Միհրդատ կապադովկիոյ իշխելով իր Արիարաթ ազգն անունց Թագաւոր դրաւ. Կապադովկացիք ալ Հռովմայեցւոց դիմեցին:

Հ. Հռովմայեցիք ալ ինչ ըրին.

Պ. Մէկէն Սիլլա քաջ զօրապետը խաւրեցին որ եկաւ Արիարաթը և իրեն Գորդիաս զօրապետը վռնտեց, և Արիոբարզան Կապադովկացին Թագաւորեցուց:

Հ. Միհրդատ ան ատեն ինչ ըրաւ.

Պ. Տիգրանէն օգնութիւն առնելով նորէն վռնտեց Հռովմայեցիները և Արիարաթը Թագաւորեցուց:

Հ. Հռովմայեցիք նորէն զօք խաւրեցին Միհրդատայ վրայ.

Պ. Անյև այլ զօրավարներ խաւրեցին որոնց շատ անգամ յաղթեց Միհրդատ, և Ակիւղաս զօրավարնին սպաննեց բերնէն վար հալած ոսկի լեցնելով:

Հ. Հռովմայեցիք զի՞նչ խաւրեցին զօրավար.

Պ. Լուկուլլոսը որ շատ հեղ կռուելով երբեմն յաղթուեցաւ երբեմն ալ յաղթեց Միհրդատայ:

Հ. Ինչո՞ւ համար Տիգրան Միհրդատայ վրայ բարկացաւ.

Պ. Վասն զի անգամ մը չարաչար յաղթուելով Լուկուլլոսէն փախաւ Տիգրանայ քով՝ և Լուկուլ-

լոս շատ տեղերու ախրեց. բայց վերջէն նորէն հաշտուեցաւ Տիգրան:

Հ. Տիգրան ինչ պատերազմի մէջ յաղթուեցաւ Լուկուլլոսէն.

Պ. Լուկուլլոս Հայաստան մուտ Տիգրանակերտը պաշարեց. Տիգրան Հռովմայեցւոց քիչ ուրուժիւնը տեսնելով անհոգ կեցեր էր. բայց Լուկուլլոս յանկարծ վրայ վազելով Տիգրանին զօրքերը հալածեց ու Տիգրանակերտը առաւ:

Հ. Լուկուլլոս կրցաւ իր յաղթութեանը վրայ ուրախանալ.

Պ. Չէ. վասն զի լսեց որ Տիգրան՝ իր ուրիշ տեղ Թողուցած զօրացը վրայ հասնելով լաւ մը ջարդ տուեր էր. ու քիչ մը առենէն իր վրան ալ հասնելով Միհրդատին հետ, վերջապէս Հայաստանէն հալածեց:

Հ. Հռովմայեցիք Լուկուլլոսին տեղը զո՞վ խաբեցին.

Պ. Պոմպէոսը, ու Լուկուլլոսը եա կանչեցին:

Հ. Միհրդատ ինչո՞ւ ինքզինքը սպաննեց.

Պ. Իր Փառնակէս որդին և Կատոր նախարարը կաշառք առած Հռովմայեցւոց կողմը անցան. ինքն ալ բերդի մը մէջ անօգնական պաշարուելով ինքզինքը սպաննեց Պոմպէոսին ձեռքը չկենալու համար (59):

Հ. Տիգրան երբոր լսեց Միհրդատայ մեռնիլը ինչ ըրաւ.

Պ. Տեսնելով որ իր Տիրան որդին ալ ապստամբեր է իրմէ ու ինքն ալ ծերացած, հաշտուելուն ըրաւ Պոմպէոսի հետ, ու ասով պատերազմը լմնցաւ:

Հ. Տիգրան Պոմպէոսի երթալէն եաքը Հռովմայեցւոց վրէժը առաւ.

Պ. Մինջագեսաց նորէն տիրեց, ու Գաբինոս Հռովմայեցւոց զօրապետը Եգիպտոս փախուց:

Հ. Տիգրան ինչո՞ւ Արշէզ Պարսից Թագաւորին տուաւ նորէն նախագահութեան պատիւը.

Պ. Վասն զի տեսաւ որ Հռովմայեցիք նորէն Ասորւոց ու Մինջագեսաց տիրելով էր վտայ կուգային որոնց չէր կրնար դէմ դնել ծերութեանը պատճառաւ, ուստի Արշեզի տուաւ նախագահութիւնը՝ որ իրեն օգնէ:

Հ. Հռովմայեցիք Գաբինոսին տեղը զո՞վ խաբեցին.

Պ. Կրասոսը որ յաղթուելով սպաննուեցաւ Հայերէն ու Պարթեւներէն:

Հ. Ո՞վ եղաւ Հայոց զօրավար Տիգրանայ ծերութեան ատեն.

Պ. Բարզափրան քաջ նախարարը որ Հայոց և Պարսից բանակին ընդհանուր սպարապետն էր:

Հ. Բարզափրան ինչ գործողութիւններ ըրաւ Ասորւոց երկրին մէջ.

Պ. Բոլոր Ասորւոց երկրին տիրեց, և Երուսաղէմն ալ առաւ խաբէութեամբ. Թէպէտ և վերջը նորէն առին Հռովմայեցիք Հայոց ձեռքէն:

Հ. Ա՛ս յաղթութիւններէն եաքը Տիգրան ո՞րչափ ապրեցաւ.

Պ. Խիստ քիչ. ութսունըհինգ տարուան մեռաւ յետոյ երբոր տարի Թագաւորելէն եաքը (35):

ԴԱՍ Ե

Աբոտաւազդ Ա. Աբշամ և Աբգար։

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանայ.

Պ. Աբոտաւազդ Ա. Տիգրանայ որդին։

Հ. Աբոտաւազդ ինչ ճամբայ բռնեց.

Պ. Ինքզինքը կերուխումի տուաւ որով Անտոնինոս Հռովմայեցւոց զօրապետը բոլոր Ասորւոց երկրին և ուրիշ տեղերու տիրեց։

Հ. Անտոնինոս ինչ պատճառաւ Աբոտաւազդայ հետ թշնամացաւ.

Պ. Վասն զի Աբոտաւազդ ընդդէմ երեն խոստմանը ծածուկ Պարսից օգներ էր, փոխանակ զի Անտոնինոսին օգնելու խօսք տուեր էր։

Հ. Անտոնինոս ինչ կերպով Աբոտաւազդը բռնեց.

Պ. Աբելի խաբկանքելով քան թէ քաջութեամբ բռնեց զինքը ու ոակիե շղթայի զարկած Եգիպտոս տարաւ (30)։

Հ. Աբոտաւազդին բռնուելէն ետքը Հայաստանի վիճակը ինչ եղաւ.

Պ. Անտոնինոս տիրեց Հայաստանի ու Ասորին Հայքը իր Ազեքսանդր տղուն տուաւ, և վերինը Մարաց։

Հ. Աբոտաւազդը ո՞վ սպաննեց.

Պ. Կղեոպատրա Թագուհին, որ գլուխը կտրել տուաւ։

Հ. Ո՞րչափ տաեն Հռովմայեցիք Հայաստանի տիրեցին.

Պ. Խիստ քիչ. վասն զի Արշամ Տիգրանին եղբօրորդին՝ Պարսից օգնութեամբը Հռովմայեցիները վռնտեց ու ինչուան Կեսարիա տիրեց (28)։

Հ. Ինչո՞ւ համար Արշամ սկսաւ Հռովմայեցւոց հարկ տալ.

Պ. Օգոստոսէն խնդրեց Արտաւազդայ երկու տղաքը որ Հռովմ գերի էին. երբոր անիկայ չկրնաւ, ան տաեն Արշամ յանձն առաւ հարկ տալ, միայն թէ անոնք ազատին. ինչպէս որ ազատեցան։

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց Թագաւորութիւնը երկու բաժնուեցաւ, այսինքն Վերին և Ստորին.

Պ. Վասն զի Վերին Հայաստանի Հայերը որ Պարսից տակն էին, ձանձրացած անոնց տուած բռնութիւններէն, Օգոստոս կայսեր դիմեցին. ան ալ Արտաւազդայ տղան Տիգրանը Թագաւոր դրաւ անոնց որ Փոքր Տիգրան ըսուեցաւ։ Ա՛ս Վերին Հայոց Թագաւորութիւնը յիսունըվինը տարի քաշեցին եաքը, Երուանդ Ստորին Հայոց Թագաւորութեան հետ միացուց։

Հ. Արշամ ո՞րչափ տաեն Թագաւոր եղաւ.

Պ. Քսանըվինը տարի խաղաղութեամբ Թագաւորեց։

Հ. Աբգար Արշամայ որդին ի՛նչ հօրը յաջորդելով ինչ անուն հանեց.

Պ. Իր խելացիութեանը և հեղաբարոյութեանը համար ամէնքն ալ սկսան Աւագ այր ըսել իրեն, որ վերջէն ազաւաղելով Աբգար ըսուեցաւ։

Հ. Ինչո՞ւ համար Հերովդէս Աբգարու հետ Թշնամացաւ.

Պ. Վասն զի Հերովդէս կ'ուզէր որ իր պատկերն ալ Օգոստոսի պատկերին հետ միկտեղ մեհեաններուն մէջը կախուի. Աբգար ասոր բանս չանձն չառաւ, ու պատերազմ բացուելով մէջերնին՝ Հերովդէս չարաչար յաղթուեցաւ:

Հ. Ինչո՞ւ համար Աբգար Հռոմ գնաց.

Պ. Վասն զի Հերովդեսի կողմը եղողները ոխ պահելով Աբգարու վրայ ամբաստանութիւններ ըրին Օգոստոս կայսեր. ան ալ Հռոմ գնաց ու ինքզինքը արդարացուց:

Հ. Ինչո՞ւ համար Թագաւորական աթոռը Մըծբինէն Եդեսիա փոխադրուեցաւ.

Պ. Վասն զի Աբգար կ'ուզէր Հռոմայեցւոցմէ ապահովիլ. ուստի աթոռը Եդեսիա փոխեց ու սկսաւ ամրացնել զանիկայ:

Հ. Ի՞նչ բանէն գրգռուեցաւ Աբգար ապրստամբելու Հռոմայեցւոցմէ.

Պ. Տիբերիոս կայսեր ուրախակցութեան համար խրկուած Հայ գեսպաններուն անարգուեցան Հռոմայեցւոցմէ փուճ պատճառի մը համար:

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Աբգար չկրցաւ ապստամբիլ.

Պ. Արտաշէր Պարսից Թագաւորը մեռնելով նոյն օրերը, Պարսկաստան գնաց Աբգար, ու անոր որդւոյը մէջ ինկած խռովութիւնը խաղաղցուց, Քրիստոսի 21 թուին:

Հ. Ի՞նչ ձախորդութիւն հանդիպեցաւ Աբգարու Պարսկաստան.

Պ. Սասոիկ բորոտեցաւ որ բժիշկները չկրցան առողջացնել. վերջը Թադէոս առաքեալը բժշկեց:

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսի ծանօթացաւ.

Պ. Իմանալով որ իր ապաստամբութեան խորհուրդը Տիբերիոս կայսեր ականջը հասեր է, դեսպանները խրկեց Հռովմայեցւոց Պաղեստին կեցող զօրապետին, որ զինքը արդարացընէն. դեսպանները առնելով հոն Քրիստոսի ըրած հրաշագործութիւնները՝ եկան պատմեցին իրեն:

Հ. Աբգար ինչ ըրաւ ան առեն.

Պ. Թուղթ գրեց Քրիստոսի և իր Անանէ սուրհանդակին ալ խաւրեց որ երթայ աղաչէ Քրիստոսի Հայաստան գալ ու զինքը բժշկել. իսկ թէ որ չկարենայ գալ, Քրիստոսի դիմաց պատկերը օրինակէ ու բերէ:

Հ. Քրիստոս կատարե՞ց Աբգարու խնդիրքը.

Պ. Չէ. բայց պատասխան գրեց Աբգարու, ու իսկոյն տուաւ որ համբառնալէն ետքը իր աշակերտներէն մէկը կը խաւրէ որ զինքը բժշկէ. ինչպէս որ եղաւ. Թադէոս առաքելոյն ձեռքովը Քրիստոսի 31 Թուին:

Հ. Աբգար Քրիստոսի հաւատալէն ու բժշկուելէն ետև ինչ ըրաւ.

Պ. Իրեք տարի ալ ապրեցաւ ու մէյմէկ Թուղթ գրեց Տիբեր կայսեր, Պարսից և Ասորւոց Թագաւորներուն՝ ցուցնելով Քրիստոսի աստուածութիւնը. ու ընդ ամէնը երեսունըհինգ տարի թագաւորելէն ետև սրբութեամբ մեռաւ:

ԴԱՍ Զ.

Աբգար, Սանատրուկ և Երուանդ։

Հ. Աբգարու մեռնելէն ետև ինչ՞ խառնուածիւն ինկաւ Հայաստանի մէջ.

Պ. Վասն զի Անանէ Աբգարու որդին Եդեսիոյ մէջ թագաւորեց ու նորին կռապաշտութիւն սկսաւ. իսկ Սանատրուկ Աբգարու քեռորդին Ասորշանի մէջ թագաւորեց ու կ՚ուզէր բոլոր Հայաստանի տիրել։

Հ. Անանէ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Երբոր իր թագաւորական պալատը նորոգել կուտար, սիւն մը ինկալով վրան ապաննեց զինքը, չորս տարի թագաւորելէն ետքը (38)։

Հ. Անանէի մեռնելէն ետև ո՞վ թագաւոր եղաւ Հայաստանի.

Պ. Սանատրուկ՝ որ Եդեսացւոց երդում տուաւ՝ Թողլու որ ազատ պաշտեն զՔրիստոս. Թէպէտ վերջէն ատոց իր երդմանը ու շատ մարդ նահատակեց, ինչպէս նաև իր Սանդուխտ աղջիկը։

Հ. Սանատրուկ քաղաքական չինուածեանց մէջ ի՞նչ երևելի գործք ըրաւ.

Պ. Մծբինը՝ որ երկրաշարժէ մը աւրուեր էր, ազանչելի կերպով նորոգեց, ու քաղքին մէջ տեղը իր արձանը կանգնեց ձեռքը դրամ մը տուած. ի մացնել ուզելով որ բոլոր ունեցածը ծախեր է։

Հ. Սանահարուկ ինչ կերպով մեռաւ.

Պ. Որսի առեն դիպուածով նետէ մը զարնուելով մեռաւ, երեսունըչորս տարի թագաւորելէն ետքը:

Հ. Սանահարուկին ով յաջորդեց.

Պ. Երուանդ Բ. որ Թէպէտ և Արշակունի էր, բայց թագաւորական ցեղէ չէր:

Հ. Երուանդ ինչպէս թագաւոր եղաւ.

Պ. Իրեն ըրած քաջութիւններովը և քաղցրաբարոյութեամբը ամենուն սիրտը իրեն քաշեց, որով Սանահարկոյ մեռնելէն ետև զինքը թագաւոր դրին նախարարները:

Հ. Երուանդ իր թագաւորութիւնը ապահովցընելու համար ինչ բան ըրաւ.

Պ. Բոլոր Սանահարկոյ ցեղը Թրէ անցնել տըւաւ, որոնցմէ միայն Արտաշէս անունով տղան Պարսկաստան փախաւ Սմբատ Բագրատունիին ձեռքովը:

Հ. Ինչու համար Երուանդ Մխիթարեանքը հրովմայեցաց տուաւ ու ինքը Վերին Հայքը տուաւ.

Պ. Վասն զի լսեց Արտաշէսի Պարսկաստան փախչիլը և ուզեց իր թագաւորութիւնը առ կերպով զօրացնել. առ պատճառաւ աթոռն ալ Արմաւիր փոխադրեց:

Հ. Երուանդայ ըրած շինութիւններուն մէջ որն է երևելին.

Պ. Երուանդաշատ քաղաքը իրեն գեղեցկութեանը համար, ուր որ վերջէն աթոռն ալ փոխադրեց, ու Բագարանը՝ իրեն մեհեաններուն համար:

Հ. Ի՞նչ կերպով Արտաշէս իր թագաւորութիւնը առաւ.

Պ. Դարեհ Պարսից թագաւորին օգնութեամբը, որուն միջնորդ եղան Սմբատ և Պարսից նախարարները (88):

Հ. Երբոր Երուանդ լսեց Արտաշէսի գալը իր վրայ ինչ ըրաւ.

Պ. Որովհետև Ուտէացւոց վրայ պատերազմի գացած էր, մեկէն հաշտութիւն ըրաւ ու առատ վարձքով շատ զօրք ժողված սկսաւ Արտաշէսի վրայ երթալ:

Հ. Երբոր Հայերը լսեցին Արտաշէսի գալը՝ ինչ կերպով ընդունեցան զինքը.

Պ. Շատ ուրախութեամբ. որով շատ նախարարներ ամբողջ իրենց գնդովը Արտաշէսի կողմը անցան, որոնցմէ մեկին էր Արգամ որ խիստ քաջ մարդ էր:

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Արտաշէսի կողմը, որով ստիպուեցաւ Երուանդ փախչիլ Երուանդաշատ:

Հ. Երուանդ ինչպէս մեռաւ.

Պ. Նորէն պատերազմը սաստկանալով Երուանդաշատը առնուեցաւ, ու հոն իր պալատին մէջ Երուանդն ալ սպանուեցաւ Արտաշէսի զօրքերէն (89):

ԴԱՍ Է.

Արտաշես երկրորդին ինչուան Տրդատ:

Հ. Արտաշես Բ. Թագաւորելով իր առջի գործքը ինչ ըրաւ.

Պ. Իրեն բարեբարները մեծ պարգեւներով պատուեց. Ամբաստը ընդհանուր ապարատես ըրաւ, Արքամը իրեն երկրորդ:

Հ. Ուրիշ որո՞ւ բարիք ըրաւ Արտաշես.

Պ. Գիսակ նախարարին Ներսես անունով որդուն որն որ մեծ նախարարութիւն ըրաւ Դիմաքսեան կամ Կամսարական անուանելով. որովհետեւ որ Գիսակ դէմքին կէսը կորնցուցեր էր պատերազմի մէջ Արտաշէսը ազատելու համար:

Հ. Արտաշես որո՞նց հետ պատերազմ ըրաւ.

Պ. Ալանաց հետ որոնց յաղթեց և Թագաւորին տղան պատերազմի մէջ բռնեց:

Հ. Ի՞նչպէս լմնցաւ պատերազմը.

Պ. Ալանաց Թագաւորին Սաթինիկ աղջիկը Արտաշեսի տղայելով իր եղբայրը ազատեց ու պատերազմը լմնցուց, և ինքն ալ Արտաշեսի Թագուհի եղաւ:

Հ. Արտաշես քաղաքական բաներու մէջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

Պ. Ամենայն բանի կարգ կանոն դրաւ և ծաղկեցուց Հայաստանը. որով իրենները սիրելի և օ-

տարաց նախանձելի եղաւ Թէ ինքը և Թէ իր աշխարհքը :

Հ· Ի՞նչ մանաւանդ նախապարծութիւն հաստատեց Արտաշէս·

Պ· Ալանաց կողմանէ Սաթինկայ համար եկած հարնածուները մանաւանդ ցեղ որոշեց Առաւելեան անուանելով :

Հ· Արտաշէս եռանէ եղաւ Հռովմայեցիներէն ապստամբելու·

Պ· Շատ չանք ըրաւ ասոր բանիս· Տրայիանոսի տուրք տալը դադրեցուց, և Հռովմայեցւոց զօրացը քանի մը անգամ յաղթեց :

Հ· Արտաշէս Ե· կրցա՞ւ իր խորհուրդը առաջ տանիլ·

Պ· Չէ· վասն զի երբոր լսեց Տրայիանոսի անթիւ բազմութեամբ գալը, վախնալով շատ ընծաներ առած դիմացը ելաւ ու անոր բարկութիւնը խլեցուց :

Հ· Ո՞ւր մեռաւ Արտաշէս·

Պ· Մարանդ գաւառը՝ Մարաց կողմերէն գտնալու առեն քառասունհնումէկ տարի Թագաւորեցէն ետքը· այնպէս սպացին զինքը Հայերն՝ որ շատը խրենք զխրենք սպաննեցին գերեզմանին վրայ (129) :

Հ· Արտաւազդ Ե· իր հօրը տեղը յաջորդելով ինչ գործողութիւն ըրաւ·

Պ· Չբօսասէր և անկարգ կեանք ունեցաւ· բոլոր իր եղբայրները քովէն վանտեց, միայն Տիրանը քովը պահեց, իրեն յաջորդեցնելու համար :

Հ· Արտաւազդ ինչպէս մեռաւ·

Պ· Որսի ելած ատենը վհի մը մէջ ինկաւ ու կորսուեցաւ, երկու տարի Թագաւորելէն ետքը:

Հ· Տիրան Ա· իր եղբօրը յաջորդելով ինչ ձամբայ բռնեց·

Պ· Եղբօրը անկարգ և անհոգ ձամբան· ան պատճառաւ տասուերեք տարի Թագաւորելէն ետև կառավարութիւնը Երախնաւու անունով իշխանին յանձնեց ու ինքը Եկեղեաց գաւառը քաշուեցաւ:

Հ· Ատոր ատենը Հռովմայեցիք ինչպէս էին Հայոց հետ·

Պ· Երբոր Անտոնինոս Պիոս կայսր եղաւ, Տիրան խնդակցութեան դեսպան խրկեց իրեն հարկն ալ մէկտել· Անտոնինոս սիրով ընդունեցաւ, և Թագ ու ծիրանի խաւրեց Տիրանայ՝ և տակ մը կոխել տուաւ ձեռքը Տիրանայ ուսին վրայ դրած:

Հ· Տիրան ինչպէս մեռաւ·

Պ· Քանուերկու տարի Թագաւորելէն ետքը օր մը ձամբայ ընելու ատեն՝ ձեան հիւս մը վրան փլաւ ու խղդեց զինքը (151):

Հ· Տիրանին ով յաջորդեց·

Պ· Տիգրան Գ· իր պզտիկ եղբայրը, որ Պերոզ Պարսից Թագաւորին հետ միացած յաղթեց Հռովմայեցւոց և Սևերիանոս զօրավարինն ալ ըսպաննեց·

Հ· Տիգրան աս յաղթութենէն ետքը ինչ ձախորդութեան հանդիպեցաւ·

Պ· Որելիոս կայսրը լսելով աս եղածները՝ Վերոս Ղուկիոս իր կայսերակից խաւրեց որ եկաւ

իր Թշնամիներուն յաղթեց, ու Տիգրանին վրան խղճալով գերութենէ ազատեց, որ կենդանի մը խաբուելով բռնուեր էր Միջագետքի կողմերը գացած աոեներ:

Հ. Տիգրան Գ.ին ով յաջորդեց.

Պ. Վաղարշ իր որդին. ասոր աոենը Հայաստանի վրայ եկան Հիւսիսային ազգերը, ինքն ալ քաջութեամբ պատերազմելով վռնտեց. բայց ինքն ալ զարնուելով մեռաւ, քսան տարի Թագաւորեչէն եաքը:

Հ. Խոսրով Ա. Թագաւորելէն եաև իր առջի գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Հիւսիսային ազգաց վրայ պատերազմի ելաւ, իր հօրը մահուան վրէժը առնելու համար ու յաղթեց (214):

Հ. Անտոնիոս Կարակալլա Խոսրովու ինչ բան ըրաւ.

Պ. Կարակալլա երբոր Միջագետքի կողմերը եկեր էր, Խոսրով դիմացը գնաց պատուելու համար զինքը. բայց Կարակալլա զինքը չթողուց որ դառնայ, ինչուան որ Հայերը կատղած սկսան Կապադովկիային վրայ վազել:

Հ. Ինչո՞ւ համար Արտաշիր Պարսից Թագաւորը եաևէ եղաւ Խոսրովը ապաննելու.

Պ. Արտաշիր Պարսից Արտաւան Թագաւորը ապաննեց որ Արշակունի էր ազգաւ ու ինքը Թագաւոր եղաւ. ասոր բանիս համար Խոսրով անոր դէմ ելաւ, և շատ անգամ յաղթելով ինչուան Հնդկաստան փախուց զինքը և չէր թողուր որ հանգիստ Թագաւորէ:

Հ. Արտաշէս երբեմն պատերազմով չկրցաւ խոսրովու յաղթել քիչ ըրաւ.

Պ. Մեծամեծ բաներ խոստացաւ ան մարդուն որ Հայաստան երթալով խոսրովը սպաննէ:

Հ. Ո՞վ յանձն առաւ ան բանս.

Պ. Անակ Պահլաւունին, որ Հայաստան եկաւ, ձևացընելով որ Արտաշէսի բռնութիւններէն փախեր է: Ճամբան գալու ատենը օրդի մը ունեցաւ, այն իսկ է մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:

Հ. Անակ քիչպէս կատարեց իր չարութեան խորհուրդը.

Պ. Օր մը որսի ատեն նեռով զարկաւ սպաննեց խոսրովը, ու երբոր Թագաւորին քովի մարդիկները զինքը կ'ուզէին սպաննել, փախչելու ատեն գետը ինկաւ ու խեղդուեցաւ (289):

ԴԱՍ Ը.

Տրդատ և խոսրով Բ:

Հ. Մեծին խոսրովու մեռնելէն ետև Հայոց վիճակը քիչպէս եղաւ.

Պ. Եկաւ Արտաշէսը ու բոլոր Հայոց տիրեց և խոսրովու ցեղը չնչել տուաւ, որմնմէ Տրդատ անուանով մանչ մը և անոր խոսրովիդուխտ քոյրը ապաստեցան Արտաւազդ Մանդակունիին և Օտա Ամատունիին ձեռքովը:

Հ. Տրդատը ո՞ւր փախաւ Արտաւազդ Մանդակունին.

Պ. Նախ կեսարիա ու վերջը Հռոմ, ուր շատ քաջութիւններ ընելով մեծ պատուոյ հասաւ:

Հ. Արտաշէր ո՞րչափ տաեն տիրեց Հայոց վրայ և ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Արտաշէսի անկած տահմանապլխի քարեբուն վրայն արձանագրութիւնները աւրել տալով իր անունը գրել տուաւ պարսկերէն. քսանըվեց տարի իշխեց Հայոց և Պարսից վրայ ու մեռաւ:

Հ. Արտաշէսն ո՞վ յաջորդեց.

Պ. Իր Շապուհ որդին, որուն տաեներ Տրդատ Հռոմայեցի զօրքով եկաւ ու առաւ իր հայրենեաց ժառանգութիւնը:

Հ. Տրդատ ինչ արդիւնք ըրաւ որ Հռոմայեցիք իրեն օգնութիւն տուին.

Պ. Դիոկղետիանոսի կողմանէ Գողեացւոց Հռչէհ հսկայ ու քաջ Թագաւորին հետ մենամարտութիւն ընելով, յաղթեց անոր ու Հռոմայեցիքը մեծ նախատինքէ մը ազատեց:

Հ. Երբոր Տրդատ կեսարիա հասաւ՝ Հայերը ինչպէս ընդունեցան զինքը.

Պ. Ամէն նախարարները դիմացը ելլելով զինքը նորէն Թագաւոր դրին, ու բոլոր Հայաստան մեծ խնտում եղաւ (286):

Հ. Տրդատ Հայաստանի տիրելէն առաջ ուրիշ ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Եկեղեաց գաւառը գնաց Անահատայ շնորհակալութիւն ընելու համար, և հոն խմանալով որ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ ու Անակայ որդին է, շատ չարչարելէն ետև զինքը խոր վիրապի մը մէջ ձգել տուաւ:

Հ. Ի՞նչպէս Տրդատ Ճապուհը վռնտեց Հայաստանէն.

Պ. Իրեք անգամ Ճապուհ պատերազմի ելաւ, բայց իրեք անգամ ալ յաղթուելով Հայաստանը ձգեց ու ինչուան Ասորեստանի աշխարհքը փախաւ: Ուրիշ շատ յաղթութիւններ և քաջութիւններ ընելով Տրդատ բոլոր մօտակայ ազգերուն սիրտը վախ ձգեց:

Հ. Տրդատ քրիստոնեաները հալածելուն համար ինչ պատիժ կրեց.

Պ. Որովհետև Հռոմէն եկած Հռիփսիմեան կուսանքները նահատակեց, ինքն ալ Աստուծմէ պատժուելով որսի ատեն խոզի կերպարանք փոխուեցաւ ու վայրենացաւ. իշխաններէն շատն ալ նոյն պատիժները ունեցան:

Հ. Ո՞վ բժշկեց զՏրդատը.

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ տասնըչորս տարի վիրապը կենալէն ետքն ալ դեռ ողջ էր Աստուծոյ հրաշքովը. վիրապէն ելլելով բժշկեց զՏրդատը և բոլոր նախարարները, և զՔրիստոս քարոզելով զամենքը սկրտեց. ինքն ալ Կեսարիա խրկուելով արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

Հ. Տրդատ քրիստոնեայ ըլլալէն ետև ինչ մասնաւոր գործողութիւն ըրաւ.

Պ. Լսելով որ Կոստանդիանոս ալ քրիստոնեայ եղեր է, սրբոյն Գրիգորի հետ մեկտեղ Հռոմ գընաց, ուր որ սուրբ Սեղբեստրոս պապը հրաման տուաւ որ Լուսաւորչայ աթոռն ալ պատրիարքական աթոռ սեպուի (319):

Հ. Տրդատ Հռոմէն դառնալէն ետև ինչպէս դարձաւ Հայաստանը.

Պ. Շապուհ Հիւսիսայինն ազգաց հետ միացած Հայաստանի վրայ վազեր էր. Տրդատ շուտով մը պատերազմի պատրաստուելով զամինքը վռնտեց, և հիւսիսային ազգաց Գեղուհոն անունով քաջ զօրավարը մեկ զարնուածքով ձիովը մեկտեղ երկու ձղքեց: Ա պատերազմելով Տրդատ բոլոր Հայոց քաղաքները ազատեց Պարսից ձեռքէն՝ որոնց որ բռնութեամբ տիրեր էին:

Հ. Ի՞նչպէս մեռաւ Տրդատ.

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները, թոզուց Թագաւորութիւնը ու Լուսաւորչայ ձգնարանը քաշուելով հոն կը բնակէր. նախարարները կրկին անգամ զինքը կանչելէն եաքը Թոյն տուին իրեն. ու ասանկով մեռուցին յիսունըմէց տարի Թագաւորելէն եաքը (341):

Հ. Տրդատայ մեռնելէն եաև ինչ խառնութիւններ եղան Հայաստանի մէջ.

Պ. Աղուանք ապստամբեցան ու Սանասարուկ անունով մեկը իրենց վրայ Թագաւոր դրին. նոյնպէս նաև Բակուր Աղձնեաց իշխանը. իսկ Բզնունիք, Մանասպեանք և Որդունիք իրարու դէմ ելլելով մեկզմեկ չարդեցին:

Հ. Տրդատայ որվ յաջորդեց.

Պ. Նախարարները տեսնելով աս անկարգութիւնները սուրբ Գրիգոր Լուսաւորչին հետ միացած Տրդատայ որդին Խոսրով Բ. Թագաւոր դրին Կոտայիզ կոչուած հաճութեամբը, որն որ Թագ ու Ծիրանի խաւրեց:

Հ. Խոսրով Բ. Թագաւորելէն եաև ինչ գործողութիւններ ըրաւ.

Պ. Իրեն մեղկութեամբն ու անհոգութեամբը

ամենևին յիշատակի արժանի գործողութիւն մը չըրաւ. Դուին (ապ. Բր-ը.) քաղաքը շինեց ու անոր հոն փոխադրեց:

Հ. Խոսրովու առեն ինչ երևելի զօրավար կար Հայաստան.

Պ. Վահան Ամատունին, որ մեծ յաղթութիւն մը ըրաւ Շապհոյ և Հիւսիսայինն ազգաց դէմ, որոնք առաջ Խոսրովու յաղթելով ինչուան Վաղարշապատ հասեր էին:

Հ. Խոսրով որչափ առեն թագաւորեց.

Պ. Ինը տարի. երեն յաջորդեց իր որդին Տիրան Բ. (353):

ԴԱՍ Թ.

Տիրան և Արշակ:

Հ. Տիրան ինչ կերպով թագաւորեց.

Պ. Սուրբ Գրիգորեանին հետ Սամոսատ գնաց ու հոն կոստանդ կայսրը թագաւորեցուց զինքը:

Հ. Շապուհ երբոր լսեց Տիրանայ Սամոսատ երթալը ինչ ըրաւ.

Պ. Անթիւ զօրք տալով իր Ներսեհ եղբօրը ձեռքը Հայաստան խաւրեց որ երթայ թագաւորէ Հայոց վրայ. բայց Արշաւիր Կամսարական, որուն որ յանձնուած էր Հայաստանը, նախարարները միացնելով յաղթեց ու վռնտեց զՆերսեհը:

Հ. Տիրան երբոր Հայաստան գարձաւ ինչպէս սկսաւ կառավարել իր տէրութիւնը.

Պ. Իոլորովին անկարգութեամբ ու թուլութեամբ. ան պատճառաւ Ջապուհին հետ հաշտութիւն խօսեցաւ ու սկսաւ տուրք տալ անոր ալ, ինչպէս Յունաց կուտար:

Հ. Տիրան ինչո՞ւ համար տուրք Յուսիկ հայրապետը սպաննեց,

Պ. Վասն զի երբոր Յուլիանոս ուրացող կայսրը Պարսից վրայ կ'երթար, իր պիղծ պատկերը խաւրեց Տիրանայ որ եկեղեցւոյ մէջը կախէ. երբոր տուրբ Յուսիկ դէմ դրաւ աս բանիս և պատկերըը ոտքին տակը առնելով կոտրտեց, Թագաւորը բարկութենէն այնչափ ծեծել տուաւ տուրբ հայրապետը՝ որ մեռաւ:

Հ. Ինչո՞ւ համար Ջապուհ Տիրանին աչքերը փորել տուաւ.

Պ. Վասն զի Տիրան իր երդմանը դէմ Յուլիանոսին օգներ էր Պարսից վրայ երթալու առեն. Ջապուհ ալ աս բանիս վրէժը առնելու համար խաբէութեամբ իրեն կանչեց Տիրանը ու աչքերը փորել տալով Կուաշ ասանը խաւրեց (362):

Հ. Տիրան ինչպէս մեռաւ.

Պ. Անգամ մը Տիրան իր Արշակ տղուն յանդիմանութեան թուղթ մը գրեց. Արշակ ալ բարկանալով սպաննել տուաւ զհայրը:

Հ. Արշակ իր հօրը տեղը յաջորդելով ինչպէս կառավարութիւն ունեցաւ.

Պ. Հօրը պէս անկարգ և քան զնայն ալ գէշ. ոտով ազգին մէջն եղած ամէն տեսակ խեղճութեանց և անկարգութեանց պատճառ և յառաջացուցիչ եղաւ:

Հ. Արշակայ առեն ինչ երևելի մարդ կար Հայաստանու մէջ.

Պ. Մեծն Ներսէս մեր սուրբ հայրապետը որ Լուսաւորչայ Թոռանը Թոռն էր, որն որ շատ մեծամեծ բարիքներ ըրաւ Թէ ազգին և Թէ Թագաւորութեան:

Հ. Ինչու համար Վաղէնտինոս Արշակայ վրայ պատերազմ բացաւ.

Պ. Վասն զի Արշակ Վաղէնտինոսի խաւրած դեսպաններըը, որոնք եկեր էին համոզել զԱրշակը որ Պարսից ծառայութենէն ետ կենայ՝ արհամարհեց. ան առեն Վաղէնտինոս ալ մեծ պատրաստութեամբ իր Թէոդոս զօրապետը խաւրեց որ երԹայ աս արհամարհանաց վրէժը լուծանէ:

Հ. Ո՞վ իջեցուց Վաղէնտինոսի բարկութիւնը.

Պ. Մեծն Ներսէս որ Սամոսատ գնաց ու իրեն պատնէշելի և քաղցր խօսուածքովը Թագաւորը համոզեց, ու ամէն բան կարգի դրաւ:

Հ. Արշակայ ըրած անիրաւ սպանութիւնը ո՞րն է.

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնել որդւոյն սպանութիւնը, ունեցած հարստութեանն ու կնկանը վրայ նախանձելով. որով Գնելայ փառանձեմ կինը իրեն երկրորդ կին առաւ. ան ալ Ուլիմպիադա Արշակին կինը Թունաւորեց:

Հ. Արշակ ինչպէս չէնցուց Արշակաւան քաղաքը.

Պ. Ա՛ս քաղաքը իր անունովը շինել սկսաւ և հրաման հանեց որ ամէն անզգամ և չարագործ մարդիկ հոն փախչելով ազատին, որով քիչ առեն մէջ բոլոր քաղաքը լեցուեցաւ:

Հ. Ա՛ն անիրաւ հրամանին հետևանքէն ինչ եղաւ.

Պ. Նախարարները բարկացած Շապուհը իրենց օգնութիւն կանչեցին, ու անոր օգնութեամբը Արշակաւանը կործանեցին, բնակիչները ջարդեցին բաց ՚ի պզտիկ տղոցմէ, և Արշակն ալ փախուցին որ գնաց Վրաց ապաւինեցաւ:

Հ. Արշակ Վրացւոցմէ օգնութիւն գտա՞ւ.

Պ. Շատ մը զօրք ժողված նախարարներուն հետ սկսաւ պատերազմիլ. և երկու տարիի չափ երկու կողմէն ալ մեծամեծ ջարդեր եղան. ան միջոցին Վաղէս կայսրն ալ Արշակայ դէմ զօրք խաւրեց իմանալով որ Շապուհին օգներ է Յունաց դէմ:

Հ. Արշակ երբոր ամէն կողմանէ թշնամիներէ պաշարուեցաւ, ինչ հնարք մտածեց.

Պ. Ուրիշ անգամներուն պէս նորէն սուրբ Ներսեսի ապաւինեցաւ. ան ալ շատ գժուարութեամբ նախարարները հաշտեցուց Թագաւորին հետ, և վերջը Արշակին որդին Պապը պատանդ առած՝ Սամոսատ Վաղէս կայսեր գնաց. բայց Վաղէս ա-րիոսեան ըլլալով մեկէն քշել տուաւ սուրբ Ներսէսը և դաշինքն ալ չկնդունեցաւ:

Հ. Երբոր լսեց Արշակ սուրբ Ներսեսի աքսորուիլը ինչ ըրաւ.

Պ. Սկսաւ արձակ համարձակ իր անկարգութիւնները ընել. շատ մարդ անիրաւութեամբ ըսպաննեց, որով նորէն խռովութիւններ սկսան:

Հ. Արշակ ինչպէս բռնուեցաւ.

Պ. Շապուհ ոխ ունենալով Արշակայ վրայ՝ նորէն շատ զօրք խաւրեց որոնց հետ միացան նաև նախարարներն, ու Արշակը ան ատեն Պարսից անձնատուր եղաւ:

Հ. Ընդունի՞ր ըրաւ զԱրշակը.

Պ. Լաւ մը յանդիմանելէն եաքը Անյուշ ըսուած բերդը խաւրեց:

Հ. Ընդունի՞ր կերպով եաւէ եղաւ Հայերը արևապաշտ ընելու.

Պ. Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարներուն Թագ խոստացաւ և շատ զօրք տուաւ ձեռքերնին որ երթան Հայերը արևապաշտ ընեն. անոնք ալ ամէն չարիք հասուցին Հայոց (378):

Հ. Արշակ ինչպէս մեռաւ.

Պ. Լսելով բոլոր ան եղած չարիքները՝ յուսահատելով ինքզինքը սպաննեց, քսան տարի չափ Թագաւորելէն եաքը:

ԴԱՍ Ժ.

Պապ և Վարազդատ:

Հ. Ի՞նչ կերպով Հայերը ան Թշուառութիւնները ազատեցան.

Պ. Սրբոյն Ներսեսի աղաչանքովը՝ Մեծն Թէոդոս Արշակին որդին Պապը Թագաւոր դրաւ Հայոց վրայ, և Յունաց զօրքով Հայաստան խաւրեց, որոնք եկան Պարսիկները վռնտեցին (381):

Հ. Ան պատերազմին առենը սուրբ Ներսես ինչպէս օգնեց Հայոց բանակին.

Պ. Երբոր երկու կողմին ալ ահել պատրաստութեամբ կը պատերազմէին՝ սուրբ Ներսես Նպատա լեռան վրայ ելաւ ու բազկատարած ակաա-

աղօթել, որով քամի մը ելաւ ու Պարսից նեաւերը երկնից վրայ կը գարձնէր. և արեւուն դէմը ամպ մը գալով արևը ծածկեց որ Հայերը չիննեղէ:

Հ. Ո՞վ լմնցուց պատերազմը.

Պ. Սմբատ Բագրատունին, որ Մերուժան Հայ ուրացող իշխանին եաևէն վազելով բռնեց զինքը ու ապքցուցած շամխուրի երկաթը պատկաձև գլուխը դնելով ըսաւ. « Ասով կը պատկեմ զքեզ, Մերուժան, որ կ'ուզէիր Թագաւոր ըլլալ Հայոց ». ու այնպէսով սպաննեց զինքը, որով և պատերազմը լմնցաւ:

Հ. Պապ երբոր Թագաւորեց ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Յունաց զօրքը առաջ պարգևով եաև Համբեց, և ինքը ու նախարարներն ալ մեկտեղ խօսք տուին սրբոյն Ներսեսի որ անկէ ետքը հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ:

Հ. Ինչու համար Պապ սուրբը Ներսեսի Թոյն տուաւ.

Պ. Վասն զի սկսաւ երեն ըրած չարութիւններն և անկարգութիւնները յանդիմանել. Պապ չկրնալով յայտնի մեռցնել՝ Թոյն տուաւ անոր (383):

Հ. Ինչու համար Թէոդոս կայսր Պապը սպաննել տուաւ.

Պ. Վասն զի Պապ՝ կայսերին ապստամբելով, Տերենտիանոս կայսեր զօրավարը՝ վռնտեց Հայաստանէն. բայց վերջը յաղթուելով բռնուեցաւ. Թէոդոս կայսրն ալ գլուխը կտրել տուաւ երեք տարի Թագաւորելէն ետքը:

Հ. Պապին տեղը ով յաջորդեց.

Պ. Թէոդոս Վարազդատ Արշակունի կուիզը Թագաւորեցուց, որ իրեն քաջութիւններովը ե-
ւեւլի եղած էր Յունաց մէջ:

Հ. Վարազդատայ գլխաւոր քաջութիւնները որո՞նք են.

Պ. Թագաւոր չեղած՝ անգամ մը հինգ Լոնգո-
բարտացիի դէմ ելլալով մէկմէկու եանէ հինգն ալ սպաննեց. բերդի մը վրայ վազելով տասնըեօթը հոգի եանէ եաև նետով սպաննեց ու ինքը չվնա-
սուեցաւ. դարձեալ քսանուերկու կանգուն դեռի մը վրայէն մէկ ընդով ցաթկեց:

Հ. Ինչո՞ւ համար Վարազդատ կայսերէն ապըս-
տամբեցաւ.

Պ. Տեսնելով որ Յունաց զօրավարները կ'ուզեն իր վրայ իշխել՝ չդիմանալով ասոնց բանից, Շապու-
հին օգնութեամբը ուզեց ապստամբիլ:

Հ. Առաջ գնաց Վարազդատայ ապստամբու-
թեան խորհուրդը.

Պ. Չէ. վասն զի լսելով որ կայսրը իմացեր է ասոնց բանս, Կոստանդնուպոլիս գնաց որ զինքը արդա-
րացնէ. կայսրը բարկութենէն առանց տեսնելու մէկէն քշել տուաւ զինքը հեռու կղզի մը:

Հ. Վարազդատայ աքսորուելէն եաքը ինչ փո-
փոխութիւն եղաւ Հայոց Թագաւորութեան մէջ.

Պ. Թէոդոս՝ Պապայ երկու որդիքը այսինքն Ար-
շակն ու Վաղարշակը Թագաւոր դրաւ Հայոց վը-
րայ, որպէս զի Թէ որ մէկը ապստամբի՝ մէկալը հաւասարիմ մնայ:

Հ. Ա՛ս երկու Թագաւորները ո՞ւր դրին իրենց աթոռները.

Պ· Արշակ Դուին դրաւ իր աթոռը· իսկ Վաղարշակ Երիզա դրաւ, որն որ և ոչ տարի մը թագաւորելով մեռաւ (388)։

Հ· Վաղարշակին մեռնելէն ետև՝ ուրիշ ինչ նոր փոփոխութիւն եղաւ·

Պ· Յոյնք և Պարսիկք ուզեցին նոյն միջոցին որ Հայաստանին Արևելեան կողմը Պարսից իշխանութեան տակը ըլլայ՝ Արևմտեանը Յունաց· ասոր պատճառաւ Արշակ չուզելով Պարսից ծառայել՝ Յունաց մասը գնաց ու աթոռը Երիզա փոխեց։

ԴԱՍ ԺԱ·

Խոսրով Գ· Վռամշապուհ և Արտաշէս Գ։

Հ· Երբոր Արշակ իրեն նախարարներովը մեկտեղ Յունաց մասը գնաց, Պարսիկք զմէ դրին Թագաւոր իրենց մասին մէջ·

Պ· Խոսրով անունով մեկը Արշակունեաց ցեղէն։

Հ· Ինչու համար Արշակայ և Խոսրովու մէջ պատերազմ բացուեցաւ·

Պ· Վասն զի քանի մը նախարարներ Արշակայ կողմէն Խոսրովին մասը անցնելու առեննին, յայտնեցին Արշակայ գանձերը և Խոսրովին տարին։ Արշակ ապաշանքով ուզեց իր գանձերը, բայց երբոր Խոսրով մեկ չըրաւ, պատերազմ բացուեցաւ մէջերնին։

Հ· Ո՞ր կողմը յաղթեց·

Պ· Երկու կողմանէ ալ սաստիկ կարդ ըլլալէն

եաքը՝ Խոսրով յաղթեց։ Արշակ քիչ մը առեն ալ ապրեցին եաքը մեռաւ։

Հ։ Արշակայ տեղը զրո՞վ Թագաւոր դրին Յոյները։

Պ։ Թագաւորի տեղ յոյն կոմս մը դրին ու Գաղաւոն քաղ հայ իշխանն ալ սպարապետ։

Հ։ Յունաց բաժինին Հայերը աս բանս երբոր տեսան ինչ ըրին։

Պ։ Նախարարները աղաչեցին Խոսրովու որ զիրենք ալ իր մասին մէջը ընդունի և իրենց առջի կալուածները տայ։ Խոսրով յանձն առաւ և ասով զօրացած կայսեր խօսք տուաւ, որ բոլոր Հարկը կը վճարէ Թէ որ ինքը իշխէ Յունաց բաժինին ալ։ կայսրն ալ հաւանեցաւ։

Հ։ Ինչո՞ւ համար Շապուհ Խոսրովին վրայ խաւրեց իր Արտաշիր որդին։

Պ։ Նախարարներէն ոմանք Թշնամութիւն ունենալով Խոսրովին հետ, գացին սուտ ամբաստանութիւն ըրին Շապուհին Թէ Խոսրով կ'ուզէ ապստամբիլ։ ան ալ շատ զօրքով իր Արտաշիր որդին խաւրեց։

Հ։ Արտաշիր ինչ կերպով բռնեց Խոսրովը։

Պ։ Խոսրով տեսնելով որ ամէն կողմանէ անօգնական մնաց՝ Արտաշիր քով գնաց։ ան ալ շղթայի զարկած Անյուշ բերդը խաւրեց զինքը ու Խոսրովին Վռամշապուհ եղբայրը Թագաւորեցուց (392)։

Հ։ Վռամշապուհ ինչպէս Թագաւորութիւն ըրաւ։

Պ։ Խաղաղութեամբ ու խելացի կերպով, և իրեն հաւատարիմ հպատակութեամբը Պարսից Վռամկրման Թագաւորին ալ շատ սիրելի եղաւ։

Հ. Վ. ամկրտման ինչ փոխարէն ըրաւ Վ. ամշապուհին հաւատարմութեանը.

Պ. Իր խոսրով եղբայրը Անյուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր:

Հ. Վ. ամշապուհի աստենը ինչ ուսումնական յառաջադիմութիւն ըրաւ ազգերնիս.

Պ. Սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ տեսնելով ազգին խաղաղութիւնը և Վ. ամշապուհին ուսումնասիրութիւնը եռանդ եղան հայերէն գիրերը գըտնալու, ու դպրոցներ բանալով ազգին ուսումնական կենդանութիւն տուին (406):

Հ. Վ. ամշապուհ որչափ տարի թագաւորեց.

Պ. Քանըմէկ տարի՝ ամենայն բարեկարգութիւն և ուղղութիւն ընելով:

Հ. Վ. ամշապուհին տեղը ով թագաւորեց.

Պ. Նորէն խոսրով թագաւորեց երկրորդ անգամ, որովհետև Վ. ամշապուհին Արտաշէս որդին դեռ պզտիկ էր:

Հ. Խոսրով Գ. երկրորդ անգամ որչափ տարի թագաւորեց.

Պ. Մէկ տարի միայն ու մեռաւ (414):

Հ. Խոսրով Գ.էն ետքը ինչ պատահաւ Հայաստան տակնուվրայ եղաւ.

Պ. Վասն զի Յազկերտ ուզելով որ Հայերը կրակապաշտ ընէ, իր որդին Շապուհը Հայոց թագաւոր դրաւ:

Հ. Ինչ կերպով Յազկերտի սա խորհուրդը առաջ չգնաց.

Պ. Քանի մը տարիէն Յազկերտ հիւանդացաւ.

ան պատճառաւ Շապուհ ալ Պարսկաստան դնաց որ Թագաւորութիւնը առնէ. բայց Յազկերտ մեռաւ ու ինքն ալ սպաննուեցաւ:

Հ. Շապուհին երթալէն ետեւ նախարարները ինչ ըրին.

Պ. Շապուհին Թողուցած զօրացը վրայ վազեցին ու աղէկ ջարդ մը տալով փախուցին. բայց Վռամ Պարսից Թագաւորէն վախնալով ամէնքն ալ ցրուեցան ու իրենց բերդերը քաշուեցան:

Հ. Վռամ Խոսրովին աեղը գով Թագաւոր դրաւ հայոց վրայ.

Պ. Աղբերնիս լաւ մը չարչարելէն ետքը, Թագաւոր դրաւ Վռամշապուհին Արտաշէս որդին տանըրութը տարուան, ու անունն ալ փոխելով Արտաշիր դրաւ:

Հ. Արտաշէս կամ Արտաշիր ինչպիսի կառավարութիւն ունեցաւ.

Պ. Անկարգ ու մոլի ըլլալով ամենուն ատելի եղաւ:

Հ. Ի՞նչպէս վերջացաւ Արշակունեաց Թագաւորութիւնը.

Պ. Նախարարները ձանձրացած Արտաշեսի անկարգութիւններէն, Վռամին աղաչեցին որ Թագաւորութիւնին վերցնէ ու իրենց վրայ պարսիկ մարզպան մը դնէ. Վռամ ալ կատարեց խնդիրքնին:

Հ. Ձեզմէ մէկը որ Թագաւորութեան վերցուելուն դէմ կենայ.

Պ. Սուրբ Սահակ հայրապետը չատ չանաց նախարարներուն չար միտքը փոխել, նաև Վռամայ

առջևն ալ պաշտպանեց Արտաշէսը. բայց վատ մարիկ չընելով բանս դնել տուաւ զինքը ու Արտաշէսն ալ աքսորեց (428):

Հ. Արտաշէս ոչխարի աուեն Թագաւորեց.
Պ. Վեց տարի. աքսորուելէն վերջն ալ քանի մը տարի ապրեցաւ ու մեռաւ:

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԴԱՍ ԺԲ.

Վ. Եհմիհրշապուհ և Վարդանանց պատերազմը։

Հ. Արշակունեաց Թագաւորութիւնը վերնա-
լէն եաև Հայաստանի ոմ կ'իշխեր.

Պ. Պարսից Թագաւորը իր կողմէն իշխան մը կը
խրկէր որ Հայաստանի հարկը ժողվէ, և հոն նըս-
տելով աչք ունենայ Հայոց հաւատարմութեանը
վրայ. ասիշխանը Մարզպան կ'ըսուէր։

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մարզպանը.

Պ. Վ. Եհմիհրշապուհ անունով պարսիկ մը։

Հ. Ի՞նչ աչքով կը նայէր ասիկայ Հայոց վրայ.

Պ. Բնութեամբ լաւ մարդ ըլլալով խիստ աղեկ
նայեցաւ ազգը, տասնըչորս տարի։

Հ. Վ. Եհմիհրշապուհէն տեղը ով գրաւեցաւ մարզ-
պան.

Պ. Վասակ Սիւնեաց իշխանը, որ իր ազգին ա-
մենայն չարիք հասուց (442)։

Հ. Ի՞նչ պատճառաւ Յազկերտ պարսիկ մարզ-
պանի տեղ Վասակը գրաւ.

Պ. Որպէս զի անով Հայոց սէրը վաստկի և վերջը ուզածը ընէ։

Հ. Ուրիշ ինչ հնարք բանեցուց Յազկերտ Հայերը կրակապաշտ ընելու.

Պ. Հրաման հանեց որ Հայերը իրեն զօրք տան, որպէս զի տով աղջին մեծերը և պատերազմական զօրութիւնը հեռացընէ որ չկարենան իրեն դէմ դնել։

Հ. Հայերը Յազկերտին հրամանը կատարեցին.

Պ. Մեսրան խորհրդով բազմաթիւ գունդ մը խաւրեցին. որոնց հետ մէկտեղ դացին խել մը նախարարներ ու քահանաներ։

Հ. Ի՞նչ ըրաւ Յազկերտ ասոնց զօրքերը.

Պ. Հոնաց վրայ պատերազմի տարաւ, ուր որ վեց եօթը տարի պատերազմով յոգնեցընելէն ետև, սկսաւ զամէնքն ալ կրակապաշտութեան սոխել։

Հ. Նախարարներէն ով յայտնի Թագաւորին հրամանին դէմ դնելով նահատակուեցաւ.

Պ. Գարեգին քաջ նախարարը որ Թագաւորին ըսածներուն դէմ դնելով խաղք ըրաւ զինքը ու նահատակուեցաւ։

Հ. Ուրիշ որո՞նք նահատակուեցան.

Պ. Ատոմ Գնունի և Մանաճիհր Ռշտունի իրենց զօրքերովը. որոնք տեսնելով Յազկերտին ասոնց հրամանը փախեր էին. բայց Յազկերտ եւ տևնէն զօրք ղրկեց ու զամէնքն ալ Թրէ անցընել տուաւ։

Հ. Ան միջոցին որ նախարարներէն ոմանք Պարսկաստան էին՝ Հայաստան ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յաղկերտ Դենշապուհ անունով քննիչ մը խաբեց՝ որ Հայերը շատ նեղեց ու բաց ասկէ Թուղթ մ՝ ալ գրել տուաւ Հայոց՝ ստիպելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կրօնքը ընդունին. Յովսէփ կաթուղիկոս ազգին միաբան հաւանութեամբը Թղթին պատասխանը գրեց:

Հ. Յաղկերտ երբոր առաւ Թղթին պատասխանը ինչ ըրաւ.

Պ. Սաստիկ բարկացաւ ու հրաման գրեց որ բոլոր ազգին մեծամեծ նախարարները Պարսկաստան գան:

Հ. Նախարարները հնազանդեցա՞ն.

Պ. Ճարերնին հատնելով եկան գացին՝ որոնց գլխաւորները էին Վասակ և Վարդան:

Հ. Երբոր նախարարները Պարսկաստան հասան՝ Յաղկերտ հետերնին ինչպէս վարուեցաւ.

Պ. Մէկէն բանտ դնել տուաւ ու սկսաւ սպսպել որ կամ հաւատքնին ուրանան ու իրենց առջի պատուոյն հասնին, և կամ մեռնին:

Հ. Նախարարները ասոնց երկուքէն ո՞րը յանձն առին.

Պ. Տեսնելով որ եթէ իրենք մեռնին Հայաստան ոտքի տակ կ'երթայ, զրուանց յանձն առին ու արևու երկրպագութիւն ըրին, և շատ մոգերով Հայաստան դարձան:

Հ. Հայերը երբոր լսացան մոգերուն գալը ինչ ըրին.

Պ. Սուրբ Ղևոնդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ Ժողովրդեան հետ միացած վրանին վազեցին ու լաւ մը ջարդ տալով լեղապատառ փախուցին մոգպետը իրեն մոգերովը:

Հ. Ի՞նչ կերպով հանդարտեցաւ ժողովուրդը.

Պ. Սուրբ Վարդան Յովսէփ կաթուղիկոսին ոտքը խնալով իրեն մեղացը Թողութիւն խնդրեց. իսկ Վասակ սուրբեամբ համոզեց քահանաները որ առ ժամն դէմ չդնեն մոգերուն՝ որպէս զի Յազկերտի առջև յանցաւոր չհեռուին, ու վերջը կամաց կամաց վճռեն:

Հ. Վասակայ աս խորհուրդը ինչ հետևանք ունեցաւ.

Պ. Նախարարները տեսնելով որ կամաց կամաց կրակապաշտութիւնը կը հաստատուի Հայաստանի մէջ ու Վասակ Պարսից հետ միացած չարիքներ կը հասցընէ Հայոց, վրան վազեցին փախուցին Պարսիկները ու զինքն ալ բռնեցին. բայց աւետարանին վրայ երդում ընելուն համար՝ նորէն ազատ Թողուցին:

Հ. Հայերը իրենց աս նեղութիւններուն մէջ ուրիշներէ օգնութիւն չուզեցին.

Պ. Յունաց Թէոդոս փոքր կայսրէն օգնութիւն խնդրեցին. բայց երբոր անիկայ մեռաւ, իր յաջորդը Մարկիանոս չօգնեց:

Հ. Երբոր Հայերը յոյսերնին կտրեցին Յոյներէն ինչ ըրին.

Պ. Հարիւր հազարի չափ մարդիկ Շահապիվան քաղաքը ժողվուելով իրեք գունդ բաժնեցին բոլոր զօրքը:

Հ. Ա գունդերուն զօրավար որո՞նք դրուեցան.

Պ. Պարսից դէմ կենալու գնդին զօրավար դրուեցաւ Ներշապուհ Արծրունի. երկրորդին Վարդան որ Աղուանից օգնութիւն գնաց. ու երրորդ

գունդը տուին Վասակայ Հայաստանը պահելու համար :

Հ. Վարդան Աղուանից երկիրը ինչ քաջութիւն ըրաւ.

Պ. Պարսից զօրքերը փախուց՝ մոգերը ջարդեց ու համարձակ քրիստոնէութիւնը պաշտել տուաւ:

Հ. Ան միջոցին որ Վարդան Աղուանից կողմերն էր, Վասակ ինչ կ'ընէր Հայաստան.

Պ. Հաւատքը ուրացած նորէն սկսաւ եկեղեցիները աւրել ու կրակապաշտութիւն խոթել Հայաստանի մէջ :

Հ. Յազկերտ տեսնելով Հայոց պատրաստութիւնները ինչ ըրաւ.

Պ. Մինչդեռ անոնով պարսիկ հազարապետը խաւրեց որ երթայ պատերազմը լմնցնէ, որուն կողմը անցաւ համարձակ Վասակ ու ինքը վրան առած պատերազմին հոգը ամէն չարիք կ'ընէր :

Հ. Հայերը վերջն պատերազմին ինչպէս պատրաստուեցան.

Պ. Վարդանայ հրամանաւը վեթասուն հազար հոգի ժողվուեցան, և պատերազմի պատրաստուեցան Աւարայր դեղին քովերը :

Հ. Ինչպէս լմնցաւ աս վերջն պատերազմը.

Պ. Մեծն Վարդան և իրեն ընկերները շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ Վարդան քաջութեամբ զարնուելով մեռաւ, և երկու հարիւր ինսնասուն հոգի ալ իր ընկերներէն մեռան նոյն օրը. բայց ամսնցմէ նոյն օրերը բոլոր հաւատքի և հայրենեաց վրայ մեռնողներուն թիւը եղաւ հազար երեսունը վեց հոգի (451) :

Հ. Վասակ ուրիշ ինչ չարիք հասուց Հայոց.

Պ. Զեռքը ինկածը կամ կ' սպաննէր և կամ հաւատքը ուրացընել կուտար. Նոյնպէս բռնեց ան պատուաւոր քահանաները որոնք սուրբ Վռնդի անունովը Վռնգեանք բսուեցան ու շղթայակապ կը պահէր, որ վերջը Պարսկաստան տարուելով հոն նահատակուեցան:

Հ. Վասակ երբեն չարութեան պատիժը ինչպէս գտաւ.

Պ. Յանցաւոր գտնուելով Յազկերտի առջև որ աս ամեն չարիքին եռքը չկրցաւ Հայերը արևապաշտ ընել, բանտը գրուեցաւ ուր որ որդնոտելով մեռաւ ու կորսուեցաւ:

ԴԱՍ ԺԳ.

Աւտրմիզդ և Աւտրշնասպ և Վահևևայ լրտես պատերազմները:

Հ. Վասակին տեղը ո՞վ գրուեցաւ մարզպան.

Պ. Աւտրմիզդ, որ խել մը քահանաներ բռնեց ու շղթայի զարկաւ:

Հ. Աւտրմզդայ առենը քրիստոնէութիւնը ինչ վիճակի մէջ էր.

Պ. Ա՛ւ ատոնք հրաման տուաւ որ ամենքը իրենց հաւատքը պաշտեն, Թէպէտ և կրակատուններն ալ պակաս չէին: Ա՛ս ընելով սկսաւ նախապարնները ատիպել որ Յազկերտին երթան առանց վախի՝ երդումննալով որ իրենց վտանգ մը չըլլար:

Հ. Նախարարները երբոր Պարսկաստան հասան՝ Յազկերտ ինչ կերպով ընդունեցաւ զնրենք.

Պ. Մեկէն բանտ դնել տուաւ ու սկսաւ զնրենք սոխպել որ հաւատքնին ուրանան. բայց և ոչ մեկը թուլցաւ հաւատքէն:

Հ. Նախարարները որչափ տաեն բանտը կեցան.

Պ. Երկար տաեն բանտը կենալէն և շատ տանջանքներ քաշելէն եաև՝ Ղազիշապուհ անունով իշխանին աղաչանքովը ազատեցան բանտէն ու Պարսկաստան կը կենային.

Հ. Դեռ որչափ տաեն ալ Պարսկաստան կեցան նախարարները.

Պ. Ութը տարի ալ կենալէն եաև երբոր Ասըրվըշնասպ մարզպան կուգար Հայաստան, իրենք ալ մեկտեղ եկան (464):

Հ. Ո՞վ էր մեծն Վահան.

Պ. Մեծին Վարդանայ Համայեակ եղբօրը մեծ որդին էր:

Հ. Ինչո՞ւ համար Վահան հաւատքը ուրացաւ.

Պ. Վահան զի իրեն անթիւ կառարելութիւններովը ամենուն սիրելի էր. ուստի Պարսկաստան գտնուող ուրացեալ նախարարները վրան նախանձելով զինքը ամբաստանեցին Պերոզի. Վահան ալ անոր աչքէն չկինալու համար հաւատքը ուրացաւ:

Հ. Վահան ինչպէս նորէն քրիստոնէութեան հաւատքը դարձաւ.

Պ. Լսելով որ Վախթանկ Վրաց Թագաւորը Պարսիկներէն ապստամբեր է, իրեն հետ եղած Հայերն ալ յորդորեց որ իրենք ալ ապստամբին ու նորէն քրիստոնէութեան համար պատերազմին:

Հ. Վահանայ ըրած առաջարկութիւնը յանձն առին.

Պ. Շահերը յանձն առին ու Վահանը ապարա- պեա դրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարզպան Արվճնասպայ տեղը՝ զոր որ պատերազմի մէջ ըս- պաննեցին (481):

Հ. Վահան երբոր ուրիշ նախարարներու ալ իմացուց իրեն ապստամբիլը ինչ ըրին անոնք.

Պ. Փոխանակ օգնելու՝ ուրիշ գայդներու ալ արգելք եղան ու եռանդն վազելով խափանեցին. բայց քանի մը հոգի իրեն հետ միաբան կեցան:

Հ. Պերոզ երբոր լսեց Վահանայ ապստամբիլը ինչ ըրաւ.

Պ. Աբրնեբսեհին ձեռքովը շատ գօրք խաւրեց ապստրելով որ Վահանը ողջ բռնեն:

Հ. Վահան Աբրնեբսեհին դէմ քանի հոգւով գնաց.

Պ. Խիստ քիչ հոգւով, Յովհան Մանդակունին ալ հետը առած. անոր համար քաջութեան հետ աստուածային գօրութիւնը և հաւատքը օգնական առած՝ մեծ ջարդ մը առաւ թշնամեաց բանա- կին:

Հ. Ո՞վ խաւրուեցաւ նորին Վահանայ դէմ.

Պ. Միհրանը, Հայոց և Վրաց Թա- գաւորին դէմ:

Հ. Վահան ինչո՞ւ համար Վրաստան գնաց.

Պ. Վասն զի Վրթանէս օգնութիւն ուզեր էր Հայերէն Պարսից դէմ գնելու. Վահան ալ գնաց իրեն խոստանալը դէմ չընելու համար:

Հ. Վախճանէ ինչ խարդախութիւն ըրաւ Վահանայ.

Պ. Մինրանայ հետ խօսքը մէկ ընելով, Վահանը անտեսնացուց այն տեղուանքը, ինչուան որ Մինրան իր անթիւ զօրքերովը հասաւ ու Վահան յանկարծակի գալով չկրցաւ պատրաստուիլ որով և յաղթուեցաւ:

Հ. Ի՞նչ երևելի մարդիկ մեռան առ պատերազմիս մէջ.

Պ. Սահակ Բագրատունին ու Վասակ Վահանայ եղբայրը. իսկ մնացածներէն շատը Մինրանայ կողմը անցան ու մնաց հարիւր հոգի որոնք Տայոց կողմերը փախան:

Հ. Մինրանին տեղ ո՞վ ապարապետ դրուեցաւ.

Պ. Զարմինր Հազարաւուխտ որ նոյնպէս չկրցաւ Վահանայ անպարտելի արուեստները յաղթել:

Հ. Վահան Հազարաւուխտին ձեռքէն ինչպէս ազատեցաւ.

Պ. Հազարաւուխտ իմանալով որ Վահան Դուինը փախեր է, գնաց Դուինը պաշարեց. Վահան չուզելով որ իր պատճառաւը քաղքին մէջ հասնի, իրեն քիչ մարդիկներովը ելաւ քաղքէն ու Պարսիկները ձղքելով գնաց Շաղագոմ գաւառը:

Հ. Հազարաւուխտին տեղը ո՞վ խրկուեցաւ.

Պ. Շապուհ Մինրանեան սպարապետը, որ իմանալով Վահանայ ուր տեղ ըլլալը՝ եկաւ պաշարեց:

Հ. Վահան ինչ կերպով ազատեցաւ Շապուհին ձեռքէն.

Պ. Խել մը գեղացոց ձեռքը վահաններ ու բահեր տալով իր կեցած տեղը չարեց, ու ինքը ուրիշ

ձամբով Պարսից վրայ վազեց պէշերանց, ու խռովութիւն ձգելով Պարսից բանակին մէջ վեց հարիւր հոգիի չափ մեռուց ու միացածներն ալ փախան :

Հ. Ահան ուրիշ ինչ քաջութիւններ ըրած ունի.

Պ. Անգամ մը երեսուն հոգւով Շապուհին դէմ ուրիշ մեծ յաղթութիւն մ'ալ ըրաւ նոյնպէս յանկարծակի վրանին վազելով երբոր անոնք անփոյթ կեցեր էին առնելով Ահանին զօրացը քիչութիւնը :

Հ. Պարսիկք ինչ կերպով Ահանայ հետ հաշտուեցան.

Պ. Երբոր Պերոզ մեռաւ ու Վաղարշ իր եղբայրը թագաւորեց, ասիկայ լսած ըլլալով Ահանայ քաջութիւնները ու իրեն արդար պահանջմունքը, ուզեց հաշտուիլ հետը. ուստի Նիխոր անունով խաղաղասէր մարդը խրկեց որ երթայ անդրանիկ կառարէ :

Հ. Ինչ կերպով կատարուեցաւ ան հաշտութիւնը.

Պ. Ահան դաշինք դրաւ Նիխորայ հետ, որոնց պէսաւորն էր թէ քրիստոնէութիւնը ազատ պաշտուի Հայաստանի մէջ ու Պարսիկք բնաւ չխառնուին : Նիխոր յանձն առաւ. ան ատեն Ահան գնաց Պարսից դուռը ու նորէն երդում առաւ թագաւորէն, և ընդհանուր ապարատիեա դրուելով դարձաւ Հայաստան :

Հ. Ինչպէս մարզպան եղաւ Ահան.

Պ. Երբոր Անդեկան մարզպանը Պարսկաստան դարձաւ այնչափ գովեց զԱհանը, որ Վաղարշ

ալ զինքը մարզպան դրաւ, ու Վահանին Վարդ եղբայրն ալ սպարապետ:

Հ. Ինչո՞ւ համար վերջը նորէն Վահանին տեղը Պարսիկ մարզպան դրուեցաւ.

Պ. Երբոր Վաղարշ մեռաւ, Պերոզին որդին Կաւատը թագաւորեց. ասիկայ մոգերէն յորդորուած Վահանայ տեղ Պարսիկ մարզպան մը խաւրեց և հետն ալ շատ քուրմեր. ասով նորէն խառնուածիւն ինկաւ Հայաստան:

Հ. Հայերը ընդունեցա՞ն նոր մարզպանն ու քուրմերը.

Պ. Վահան ուրիշ նախարարաց հետ միաբանելով վազեց նոր մարզպանին վրայ ու վռնտեց Հայաստանէն:

Հ. Վահան որչափ տաեն մարզպանութիւն ըրաւ.

Պ. Քսանըվեց տարի ամէն գովելի հանգամանքներով (491):

ԴԱՍ ԺԴ.

Վարդան հնչուտան Մամիկոնէի կիւրապաղատութիւնը:

Հ. Վահանին տեղը ո՞վ դրուեցաւ մարզպան.

Պ. Վարդ Վահանին պզտիկ եղբայրը որ չորս տարիէն մարզպանութենէն ինկաւ, վասն զի տուա ամբաստանութիւններ ընելնուն համար:

Հ. Վարդին տեղը ո՞վ դրուեցաւ.

Պ. Բուրղան անունով անպիտան պարսիկը որ իրեք տարի Հայերը շատ նեղեց:

Հ. Ի՞նչ մարդ է Մժեժ գնումն.

Պ. Կարի՛ մարդ մըն էր, որ երբոր Հոնք Հայաստանի վրայ վազելով աւերմունք կ՚ընէին, դէմերնին ելլելով յաղթեց անոնց ու վռնտեց Հայաստանէն:

Հ. Մժեժ իրեն աս արդեանցը համար ինչ փոխարէն ընդունեցաւ Կաւատէն.

Պ. Բուրղանին տեղը մարզպան դրուեցաւ՝ որն որ երեսուն տարի մարզպանութիւն ըրաւ.

Հ. Մժեժին տեղը որո՞նք մարզպան դրուեցան.

Պ. Դէնչապուհ պարսիկը որ Հայերը շատ կը նեղէր հաւատքի համար, որն որ Մովսէս կաթուղիկոսին աղաչանքովը փոխուեցաւ ու տեղը ուրիշ մը եկաւ. վերջը ղրկուեցաւ Սուրէն ձիւր որ Հայերը շատ նեղեց:

Հ. Ա՛ս միջոցներուն ինչ նշանաւոր փոփոխութեան բան եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մովսէս կաթուղիկոս Հայոց տօմարը նորոգելով նոր Թուական հաստատեց, ուսկից սկսեալ ինչուան հիմա 1309 տարի է:

Հ. Սուրէն մարզպանը ինչպէս սպաննուեցաւ.

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոնեանին Մանուէլ եղբայրը սպաննեց. Վարդան աս բանիս վրայ բարկացած՝ զօրք ժողվեց վազեց Դուին քաղքին վրայ ու քաղաքը առնելով Սուրէնը սպաննեց ու զօրքն ալ ջարդեց ու ցրուեց (364):

Հ. Երբոր Վարդանայ աս ըրած գործքը հասաւ

Խոսրով Պարսից Թագաւորին ականջը, ինչ ըրաւ Խոսրով։

Պ։ Շատ զօրք խաւրեց Վարդանայ վրայ։ բայց Վարդան վարպետութեամբ պատերազմելով յաղթեց անոնց ու ցրուեց։

Հ։ Երբոր Խոսրով աւելի մեծ բանակ մը խաւրեց, Վարդան ինչ ըրաւ։

Պ։ Տեսնելով որ իր քովիններէն շատը փախան գաղուեցան, ինքն ալ Սամսպօլ գնաց և Յուսաւինիանոս կայսրէն օգնութիւն ուզեց։ Յուսաւինիանոս ալ տուաւ։

Հ։ Վարդան Յունաց օգնութեամբը կրցաւ Պարսից յաղթել։

Պ։ Խոսրով ինքը անձամբ հարիւր քառասուն հազար զօրքով Վարդանայ և Յունաց վրայ եկաւ։ և երկու կողմէն ալ շատ ջարդ ըլլալէն եաև, Նորէն Պարսից ձեռքը միաց Հայաստան։

Հ։ Երբոր նորէն Պարսից ձեռքը միաց Հայաստան ով եղաւ մարզպան։

Պ։ Ձիհր Վշոն խաղաղասէր Պարսիկը՝ տասնը հինգ տարի։ Ասիկայ էն վերջի Պարսիկ մարզպանը եղաւ (578)։

Հ։ Ձիհր Վշոնին տեղը ով եղաւ մարզպան։

Պ։ Սմբատ Բագրատունի իրեն քաջութիւննե րուն համար, որն որ ութը տարի մարզպանութիւն ըրաւ։

Հ։ Իրեն ով յաջորդեց։

Պ։ Դաւիթ Սահառունի որ քսանըչորս տարի մարզպանութիւն ընելէն եաքը, վախնալով Պարսիկներէն Թողուց իշխանութիւնը և կոստանդնուպոլիս փախաւ։

Հ. Դաւիթ Սահառունիին առեւնը ինչ չափա-
սակի արժանի գործողութիւն եղաւ Հայաստանի
մէջ.

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանին և Գայլ Վա-
հանին պարսից հետ ըրած պատերազմները:

Հ. Ինչ պատճառաւ եղան այս պատերազմները.

Պ. Խոսրով պատճառաւ մը թշնամանալով Մու-
շեղայ հետ, վրան պատերազմի ելաւ. Մուշեղ ալ
երեն օգնութիւն կանչեց Վահան իր ազգականը,
որ իր վարպետութիւններուն համար Գայլ ըսուե-
ցաւ:

Հ. Գայլ Վահանին քաջութեանցը ու վարպե-
տութեանցը ո՞վ հետևող եղաւ.

Պ. Իր որդին Սմբատը որ Պարսից շատ անգամ
յաղթեց ու չորս երեսելի զօրավարներ սպաննեց:

Հ. Դաւիթ Սահառունիին տեղ ո՞վ մարզպան
դրուեցաւ.

Պ. Վարազտիրոց Սմբատ Բագրատունիին որ-
դին, որ եօթը տարի մարզպանութիւն ընելէն ետ-
քը իր ընտանիքովը Տառնոյ փախաւ:

Հ. Ո՞վ եղաւ առջի կիւրապաղատը.

Պ. Դաւիթ Սահառունին:

Հ. Ինչպէս եղաւ որ Դաւիթ կիւրապաղատ
խրկուեցաւ.

Պ. Ան միջոցներուն Պարսից մէջ խառնակութիւն
կսկսաւ, Հայերը Յոյներուն ապաւինեցան ու ի-
րենցմէ իշխան մը ուզեցին. անոնք ալ Դաւիթը
խաբեցին կիւրապաղատ անուանելով որ իշխա-
նութեան անուն մըն է. բայց չորս տարիէն նորէն
Հայերը վռնտեցին զԴաւիթը:

Հ. Պարսիկներէն զատ ուրիշ ինչ Թշնամի ակըռաւ վազել Հայաստանի վրայ առ միջոցներուն.

Պ. Հագարացիք՝ որ Պարսիկներէն առելի շատ չարիք հասուցին Հայոց:

Հ. Հագարացւոց արշաւանացը եղաւ նախապարներ որ դէմ գնեն.

Պ. Թէոդորոս Ռշտունի և Վահան Կամսարական ուղիղ հազար զօրքով (676):

Հ. Վահանին այսպիսի ազգասիրական գործողութեանը որո՞նք արգելք եղան.

Պ. Երբոր Հագարացւոց դէմ պատերազմի ելեր էր, Սահուռ Անձևացին և ուրիշները Հագարացւոց կողմը անցնելով ախան Տաճիկներուն հետ մեկտեղ Հայերը ջարդել և այսպէսով ցրուեցին Վահանայ զօրքերը:

Հ. Հագարացիք Վահանայ զօրքը ջարդելէն ետև ինչ ըրին.

Պ. Շատ մարդ Թրէ անցնելէն ետև, երեսունը հինգ հազար հոգի ալ դերի տարին:

Հ. Հագարացւոց առ ըրած ջարդէն ետև ո՞վ խըրկուեցաւ կիւրապաղատ Յունաց կողմանէ.

Պ. Վարազտիրոց որ տարին մը մեռաւ և իրեն յաջորդեց իր տղան Սմբատ:

ԴԱՍ ԺԵ.

Սմբատ կ՚իւրապաղատուի ինչուան Բագրատունեաց թագաւորութեան կանգնուիլը :

Հ. Սմբատին կ՚իւրապաղատուէին առեն Հայերը հանգիստ անցուցի՞ն.

Պ. Սմբատին կ՚իւրապաղատուէին երկոտ տարին Հագարացիք վազեցին Հայաստանի վրայ ու շատ կոտորածներ ըրին. նախարարները միաբան հնազանդեցան Հագարացւոց և Յունաց իշխանութենէն ելան, որուն Յոյները շատ նեղացան (683):

Հ. Սմբատին առեղը ո՞վ եղաւ իշխան.

Պ. Համազասպ Մամիկոնեան որ քիչ մը առենէն նորէն Յունաց հնազանդելով անոնցմէ պատրիկ ըսուած իշխանութիւնը առաւ: Ամիրապետը բոլոր իրեն քովն եղած Հայ պատանդները Թրէք անցնել տուաւ. անոր յաջորդին նորէն հնազանդեցան Հայերը, ու քիչ առենէն Համազասպն ալ մեռնելով իրեն առեղը պատրիկ դրուեցաւ իր եղբայրը Գրիգոր:

Հ. Գրիգոր ո՞րչափ առեն պատրիկ եղաւ ու իրեն ո՞վ յաջորդեց.

Պ. Քանըչորս տարի. ու վերջը պատերազմի մէջ մեռաւ: Երկու տարի տակն ու վրայ եղաւ Հայաստան, ինչուան որ Աչոտ Բագրատունին զօրանալով Թշնամեաց դէմ դրաւ Հագարացւոց հարկ տալով:

Հ. Աշոտ ծրչակ առեն պատրկուԹիւն ըրաւ.

Պ. Յոյները իմանալով որ Հայերը Հագարացւոց հարկատու եղեր են, շատ զօրք խաւրելով մեծամեծ աւերմունքներ ըրին Հայաստան. Հագարացիք ալ ընդհակառակն կարծելով որ Հայերը Յունաց հնազանդեր են՝ իրենք ալ նոյնպես շատ վնասներ հասուցին Հայոց. Աշոտ ատոնց դէմ դրաւ քաջութեամբ, բայց ինքն ալ զարնուելով մեռաւ իր տարի իշխելէն ետքը (692):

Հ. Աշոտին մեռնելէն ետև ո՞վ իշխեց Հայոց.

Պ. Հագարացիք, որոնք Քրիստոսի 693 Թուականին սկսան Հագարացի իշխան մը խաւրել Ոստիկան անունով, որոնց առջինը եղաւ Աբդլա:

Հ. Աբդլային առջի գործողութիւնը որն եղաւ.

Պ. Նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու Դամասկոս խաւրեց: Քիչ մը առենէն Սըմբատ Բիւրատեանը վռնատեց զինքը Հայաստանէն Յունաց օգնութեամբը:

Հ. Հագարացիք Սմբատայ ատ ըրած գործողութեան վրէժը ինչպես հանեցին.

Պ. Մահմատ անունով զօրավարը խաւրեցին որ շատ վնաս հասուց. ու վերջը Սահակ կաթուղիկոսին աղաչանաց ԹզլԹովը խաղաղութիւն ըրաւ ու գերիները ազատեց:

Հ. Նախարարաց ազատելէն ետև Կաշմ ոստիկանը ինչ չարիք հասուց Հայոց.

Պ. Նախարարները և ուրիշ ազգին մեծերը Նախջուանի եկեղեցւոյն մէջը այրել տուաւ (704):

Հ. Կաշմին ատեղը որո՞նք դրուեցան ոստիկան.

Պ. Վ.լիդ ու Մահմէտ, որոնք շատ չարիք հա-

սուցին. և Աբդալազիզ որ քաղցրութեամբ խնա-
մեց ազգը:

Հ. Ասոնց տեղն ալ որո՞նք դրուեցան ոստիկան.

Պ. Մրուան որ երկու տարիէն Աշոտը իշխան դնելով ինքը դնաց ամիրապետ եղաւ. բայց երբոր Մրուան մեռաւ, Աշոտին տեղը Եզիտ անունով չար մարդը ոստիկան դրուեցաւ որ Հայերը շատ նեղեց (758):

Հ. Եզիտին տեղը ո՛վ իշխեց Հայոց.

Պ. Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը պատրիկ դրուեցաւ, որուն վեցերորդ տարին Սիւ-
լէյմանը ոստիկան խրկուեցաւ. քիչ մը տաճկին եկաւ պէքիր անողորմ մարդը, ու վերջին ալ Հա-
սան՝ որ ամենէն աւելի նեղեց Հայերը:

Հ. Հասանին տաճկը Հայերը ինչ գործողու-
թիւն ըրին.

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանը Հասանին զօր-
քերը լաւ մը ջարդեց ու զինքն ալ Դուինէն փա-
խուց. նոյնպէս նաև Աշոտ Մսակեր իշխանը քանի մը անգամ յաղթեց Հագարացւոց, ինչուան որ Եզիտ Բ. շատ զօրքով նորէն նուաճեց Հայերը ու շատ չարիք հասուց որուն նմանը չէր եղած Հայաս-
տանի մէջ (787):

Հ. Եզիտէն ետքը Հայերը ինչ վիճակ ունեցան.

Պ. Քիչ մը հանգստացան, որովհետև որ խու-
զիմա և Հոլ ոստիկաններըը որ եւս եւս նստե-
ցան՝ այնչափ չնեղեցին զՀայերը:

Հ. Հոլին տեղը ո՛վ իշխեց Հայոց.

Պ. Նախարարաց աղաչանքովը պատրիկ դրուե-
ցաւ Բագարատ Բագրատունին, որ վերջէն տէ-

բութեան առջև յանկարծ գանուելով աչքէ ընկաւ :

Հ. Բագարատին տեղը ով խրկուեցաւ ոտիկան.

Պ. Ապուսէթ, որ Բագարատը բռնեց ու Դամասկոս խաւրեց : Ա բանիս բարկացած Սասունցիք՝ Ապուսեթին վրայ վազեցին ու սպաննեցին (849):

Հ. Ամիրապետը երբոր լսեց Ապուսեթին սպանուիլը՝ ինչ ըրաւ.

Պ. Իւղա ոտիկանը խաւրեց Հրաման տալով որ ձեռքէն եկած չարիքը հասցընէ Հայոց. որն որ բոլոր Հայաստան արիւն լուայ ըրաւ :

Հ. Նախարարներէն չեղաւ մարդ մը որ Իւղային ընդդիմանայ.

Պ. Աշոտ Արծրունին կ'ուզեր ընդդիմանալ. բայց տեսնելով որ ուրիշ նախարարները չեն օգներ, ինքն ալ շատ ընծաներով գնաց Իւղային սիրտը առնելու. բայց փոխանակ պատիւ ընդունելու տնով տեղով գերի գնաց :

Հ. Նախարարներէն ով եղաւ որ Իւղային աղաչեորդեց որպէս զի ինքը պատուոյ հանի.

Պ. Սմբատ սպարապետը. բայց Իւղա ամէն չարութիւն ընելէն եաքը փոխանակ պատուոյ հանցընելու չղթայի զարկաւ ու Պաղտատ գերի տարաւ, իր տեղը Շեխի անունով Պարսիկը ոտիկան գնելով :

Հ. Նախարարները և ուրիշ գերիները հոն ինչ եղան.

Պ. Ամիրապետին բռնութիւններէն ոմանք հաւատքնին ուրացան ու շատն ալ նահատակուեցան.

Սմբատ ալ մեղացը վրայ զղջալով բանտին մէջը մեռաւ ու խոստովանող ըսուեցաւ (856):

Հ. Հայոց այսչափ թշուառութեանց պատճառ որո՞նք եղան.

Պ. Ո՛չ այնչափ Յոյները և Պարսիկները կամ Հագարացիք, որչափ նոյն միջոցուան մեր ազգին նախանձու, առելութեան, անմիաբանութեան և որ մեծն է անկրթութեան և անձնասիրութեան զօրացած ախտերը: Առնցմէ ամէն կրթեալ ազգերը խորշելը են, ինչպէս նաև մեր ազգն ալ իրեն կրթութեան առենը:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ա Յ



ԴԱՍ Ժ.Զ.

Աշոտ Ա. և Ամբատ Ա.:

Հ. Բագրատունեաց իշխանութեան առջի թագաւորը ո՞վ եղաւ.

Պ. Աշոտ՝ Սմբատ Խոստովանողին որդին:

Հ. Ի՞նչ կերպով Աշոտ ատ իշխանութեան հասաւ.

Պ. Ճեխին ոստիկանութեան առենը Հայաստանի վրայ հոգ տանելով և Հագարացւոց հաւատարմութիւն ցուցընելով, Ճեխին տեղը վերակացու եղաւ Հայաստանի (859):

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Աշոտ.

Պ. Նախարարները Գէորգ կաթուղիկոսին հետ միաբանած ամիրապետէն խնդրեցին որ իրենց թագաւոր դնէ Աշոտը, խոստանալով որ հաւատարիմ կը կենան. ամիրապետը Աշոտին լաւութիւնները լսած ըլլալով կատարեց խնդիրքնին:

Հ. Աշոտ ի՞նչ պատիւ գտաւ Լևոն կայսերէն, ու ի՞նչպէս մեռաւ.

Պ. Հայաստանի ամեն կողմերը խաղաղընելէն ետքը Ստամպօլ գնաց Լէոն կայսեր յարգութեան համար, ուր որ մեծամեծ պատիւներ գտաւ. վերջը Հայաստան դառնալու առեներ Շիրակ հասնելով ծանր հիւանդացաւ, ու ամէն հոգևորական պատրաստութիւնները ընելով մեռաւ 71 տարեկան, 26 տարի իշխեցէն ու հինգ տարի թագաւորեցէն ետքը:

Հ. Սմբատ երբոր հօրը տեղը անցաւ, ոչ եղաւ որ թագաւորութեան աչք ձգէ.

Պ. Աբաս իր հօրեղբայրը շատ զօրք ժողված կուզէր ինքը թագաւորել. բայց երկու անգամ յաղթուեցաւ. Սմբատ Աբասին տեղը սպարապետ դրաւ իր Շապուհ եղբայրը:

Հ. Սմբատ Աբասը նուաճեցէն ետև ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ափշին Պարսից ոստիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ երեսուն հազար զօրքով վրան պատերազմի եկաւ. Սմբատ քաջութեամբ Ափշինին սիրտը իջեցուց ու հաշտուեցաւ հետը:

Հ. Ափշին որչափ տեն հաստատուն մնաց իր դաշինքին վրայ.

Պ. Խիստ քիչ. վասն զի գողալով ըրած հաշտութեանը վրայ, խաբէութեամբ Սմբատայ վրայ վազեց ու առնի բերան շատ չարիք հասուց. Սմբատ շատ զօրք ժողվեց ու փախուց Ափշինը:

Հ. Սմբատ Ափշինին յաղթելէն ետքը ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ահմատ Մելջագեստայ ոստիկանը, որուն հետ միացաւ նաև Գագիկ Արծրունին Սմբատայ ազգականներէն մեկը՝ ու Ահմատին առաջնորդ եղաւ.

Սմբատ Թէպէտ և յանկարծակիի եկաւ, բայց քաջութեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին ու փախուց իր տեղը:

Հ. Սմբատ Ահմատին ալ յաղթելէն ետքը հանդիսա մնաց.

Պ. Չէ. Վասն զի Ախշին նորէն պատերազմի ելաւ վրան, ու Սմբատ ալ անօգնական մնալով պատանդ տուաւ իր որդին. բայց Ախշին երբոր ուրիշ չարիք ալ կ'ուզէր հասցընել, ինքը սոսկալի մահուամբ մեռաւ, ու իրեն տեղը յաջորդեց Յուսուփ իր եղբայրը:

Հ. Սմբատ ոսկիականներուն բանտութենէն ազատելու համար ինչ ճար գտաւ.

Պ. Ամիրապետէն խնդրեց որ փոխանակ տուրքերը ոսկիականներուն ձեռքովը տալու, ուղղակի ամիրապետին խաւրէ ինքը:

Հ. Ինչո՞ւ համար Աբրնեսեհ վրաց Թագաւորը ու նախարարները Սմբատայ դէմ ելան.

Պ. Եգերացւոց կոստանդին Թագաւորը ապըստամբեր էր Սմբատէն. Սմբատ Աբրնեսեհին հետ մէկտեղ վրան պատերազմի ելաւ, ու զինքը Աբրնեսեհին ձեռքովը բռնել տալով Անիի ամրոցը դրաւ. չորս ամսէն վրան գթալով բանտէն հանեց ու արձակեց իր սերութիւնը: Ա բանս նախարարները իրենց նախատինք սեպելով ապստամբեցան:

Հ. Նախարարներուն ապստամբութիւնը ինչ վերջ ունեցաւ.

Պ. Ըրած դարանքնին պարապը ելլելով չարաչար յաղթուեցան. Սմբատ նախարարներուն շատին աչքը կուրցուց, ու Աբրնեսեհին վրայ գթալով ազատեց:

Հ. Սմբատ նախարարներուն յաղթելէն եաքը, ինչ նոր խռովութիւն ընկաւ Հայաստանի մէջ.

Պ. Գագիկ Արծրունի Սմբատայ քեռորդին ապստամբելով իրմէ, գնաց Յուսուփին քով. Յուսուփ ալ որպէս զի Հայաստանի մէջ խռովութիւն ձգէ՝ զինքը Թագաւոր ըրաւ (908):

Հ. Գագիկայ Թագաւորութենէն ինչ չար հետեւանքներ ելան.

Պ. Գագիկ և Յուսուփ միացած վազեցին Սմբատայ վրայ, որոնց կողմը անցան նաև նախարարներէն շատը. Սմբատ ալ տեսնելով որ մինակ դէմ չկրնար դնել, Գուգարացւոց երկիրը փախաւ:

Հ. Սմբատ Գուգարացւոց քովէն ո՞ւր գնաց քաշուեցաւ.

Պ. Երբոր տեսաւ որ իր Աշոտ ու Մուշեղ ազգաքն ալ յաղթուեցան Սևորդիներուն մասնութեամբը, ինքն ալ յուսահատած կապոյտ ըսուած ամուր բերդը գնաց քաշուեցաւ:

Հ. Յուսուփ ինչպէս առաւ կապոյտ բերդը.

Պ. Սմբատ տեսնելով որ իր պատճառաւը սասանիկ չարդ կ'ըլլայ, անձնասուր եղաւ Յուսուփին՝ երդումն առնելով որ իր անձին վնաս չհասցնէ:

Հ. Յուսուփ Սմբատայ ինչ ըրաւ.

Պ. Նախ դրսուանց պատիւ ցըցուց ու նաև ազատ ալ Թողուց. բայց վերջը նորէն խարդախութեամբ կանչելով սկսաւ տանջել ու չարչարել որ կամ հաւատքը ուրանայ և կամ մեռնի. ասկալն տանջանքներ տալէն վերջը մորթել ու գլուխն ալ կտրել տուաւ՝ տասնըչորս տարի Թշուառութեամբ Թագաւորելէն եաքը (913):

ԴԱՍ ԺԷ.

Աշոտ Բ. Երկար և Աբաս։

Հ. Սմբատին մեռնելէն ետքը Հայոց վիճակը ինչպէս եղաւ.

Պ. Յուսուփ Երնջակ ամուր բերդը առնելով, բնակիչներուն մեծ մասը ջարդեց ու շատն ալ գերի տարաւ. ու ասով բոլոր Հայաստանի տիրելով պահապաններ Թողուց ու ինքը Պարսկաստան դարձաւ։

Հ. Երբոր լսեց Աշոտ Սմբատայ տղան իր հօրը մեռնիլը ինչ ըրաւ.

Պ. Վեցհարիւր հոգւոյ չափ մարդիկ ժողվելով, վազեց Յուսուփին Թողուցած պահապաններուն վրայ ու սաստիկ ջարդ տալով զամէնքն ալ փախուց։

Հ. Հայերը Աշոտ երկաթին քաջութիւնները տեսնելով ինչ ըրին.

Պ. Միաբանեցան ու զինքը Թագաւոր դրին. բայց քիչ մը առենէն նախարարներէն ոմանք վրան նախանձելով, ապստամբեցան իրմէ ու նորէն խռովեցին աշխարհքը։ Ա բաներէս զօրացած Յուսուփ՝ շատ չարիք հասուց Հայոց։

Հ. Հայոց աս Թշուառութիւններուն մէջ, չեղաւ մէկը որ ողորմի ու խաղաղեցնել ջանայ.

Պ. Կոստանդին Պերփերուժին Յունաց կայսրը, որ լսելով Հայոց խեղճութիւնները Աշոտը Սամոսոլ կանչեց, ու շատ պատուէրէն ետքը՝ Յունաց

զօրքով զինքը իր թագաւորութեանը դարձուց (921)։

Ս. Աշոտ սահմանք փառքով Հայաստան դառնալէն վերջը կրցաւ խաղաղ թագաւորել.

Պ. Ձե. վասն զի Յուսուփ Աշոտ երկաթին հօր եղբօրը տղան Աշոտը թագաւորեցուց որ Բռնաւոր ըսուեցաւ. ասով նորէն խռովութիւն ընկաւ Հայոց մէջ. ու մասամբ ջարդեր եղան երկու կողմէն ալ, ինչուան որ Յովհաննէս կաթուղիկոս հաշտեցուց զնոսա։

Ս. Աշոտ երկաթ Աշոտ բռնաւորէն զատ ուրիշ ինչ թշնամիներ ունեցաւ.

Պ. Անկրթութեան և անկարգութեան հոգի մըտած ըլլալով, ամէնքը կ'ուզէին ինքնիշխան թագաւոր ըլլալ. ինչուան նաև Աբաս՝ Աշոտի եղբայրն ալ ապստամբեցաւ, ու պատերազմներ ըրաւ եղբօրը հետ. Աշոտ ալ յուսահատած գնաց Սևան կղզին քաշուեցաւ հարիւր հոգւով։

Ս. Աշոտ Սևան կղզին քաշուելէն առաջ ինչ քաջութիւն ըրաւ Ցլիկ Ամրամին դէմ.

Պ. Երբոր օր մը Աշոտ զուարճութեան համար Ուտէացւոց կողմը գնացեր էր, լսելով անոնց իշխանին Ցլիկ Ամրամին ապստամբութիւնը, Եգեբացւոց Թագաւորէն քիչ մը զօրք օգնութիւն առաւ ու գնաց ամուր բերդի մը մէջ պահուըտեցաւ. Ամրամ եկաւ պաշարեց զինքը. Աշոտին քովի մարդիկը տեսնելով որ խալըսում չկայ, մէջերնին որոշեցին որ Աշոտը բռնեն Ամրամին մատնեն ու իրենք ազատին. Աշոտ իմանալով անոնց չարութիւնը՝ գիշերանց ձի հեծաւ ու թշնամեաց մէջէն քաջութեամբ անցնելով փախաւ Սևան կղզին գնաց. ասոր նման շատ քաջութիւններ ըրաւ Աշոտ։

Հ. Երբոր Աշոտ Սևան կղզին քաշուեր էր, Հայաստան ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յուսուփ Նբար անուշով վերակացու մը խաբեց որ շատ չարիք հասուց Հայոց, իրենց անմիաբանութիւնը ցուցալի և արժանաւոր պատիժ:

Հ. Աշոտ երկաթ ինչպէս յաղթեց Բզնունեաց տանկանին.

Պ. Նբարին տեղը Բզնունեաց խրկուեցաւ. ասիկայ իմանալով որ Աշոտ Սևան կղզին քաշուեր է՝ ուզեց բռնել. բայց Աշոտ իրեն քիչուոր մարդիկը այլ և այլ նաւակներու մէջ բաժնելով նեռաձգութեամբ շատ մարդ սպաննեց, որով Թշնամիները սկսան փախչիլ. ինքն ալ եռանին խնալով հալածեց, ու դարձաւ իր տեղը:

Հ. Աշոտ ինչուան ե՞րբ Սևան կղզին քաշուած մնաց.

Պ. Տեսնելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն եկաւ իր թագաւորութիւնը ձեռք առաւ ու հաշտութիւն ըրաւ Աբաս եղբօրը հետ. և քանըչորս տարի ընդհատ ու անհանգիստ կերպով թագաւորելէն ետքը մեռաւ: Ասիկայ Շահընշահ (Թագաւորներու Թագաւոր) ալ ըսուեցաւ:

Հ. Աբաս եղբօրը տեղը յաջորդելով ինչ կերպով կառավարեց ազգը.

Պ. Ամենուն կարս դրաւ. իր զգօնութեամբը Թշնամիներուն յաղթեց ու խաղաղութիւն ըրաւ, որով Հայաստան սկսաւ ծաղկիլ:

Հ. Աբաս ինչ երևելի պատերազմ ըրած ունի.

Պ. Բեր Վրաց և Ափխազաց Թագաւորը պատերազմի ելաւ Աբասին դէմ, ու ծաղրելով պատգամ խաբեց որ Կարսին մայր եկեղեցին ինքը պիտի

գայ օրհնէ Վրաց Ծիսով. Աբաս դէմն ելաւ յաղթեց ու բռնեց և կարս բերելով ցրցուց ան եկեղեցին որ կ'ուզէր օրհնել, ու վերջը աչքերը կուրցուց:

Հ. Աբաս ո՞րչափ տաեն թագաւորեց.

Պ. Քսանըչորս տարի խելքով ու խաղաղութեամբ (953):

ԴԱՍ ԺԸ.

Աւրծրուհեաց կամ Վասպուրականի այիւարհին թագաւորութիւնը: Աշոտ Ողորմած ու Սրմաքաւ Բ:

Հ. Ո՞վ եղաւ Աւրծրունեաց առաջին թագաւորը.

Պ. Գագիկ, Սմբատ առաջինին քեռորդին, ինչպէս որ վերը ըսինք:

Հ. Գագիկին որո՞նք յաջորդեցին.

Պ. Իր որդին Աշոտ Դերենիկ 16 տարի. եաքը Դերենիկին սպուի եղբայրը Համազասպ Աբուսահլ, որուն յաջորդեցին իր երեք տղաքը Աշոտ, Գուրգէն, Սենեքերիմ. ասոնց Սենեքերիմը Սկիւթացւոց բռնութիւններէն ազատելու համար՝ ինքը Սեբաստիոյ գաւառը առաւ Յունացմէ ու վասպուրականը անոնց տուաւ 1021ին: Հոն երեն յաջորդեց իր որդին Դաւիթ, անոր ալ յաջորդեցին Ասոմ և Աբուսահլ որոնք երբոր մեռան 1080ին, բոլորովին վերցուեցաւ ան թագաւորութիւնն ալ:

Հ. Աշոտ Դերենիկին թագաւորութեան առնը ինչ յիշատակի արժանի գործ պատահեցաւ.

Պ. Ապլհարիպ Հաննունիին Դերենիկը մատնելը ու վերջին ըրած քաղաքականը։

Հ. Ապլհարիպ ինչո՞ւ համար Դերենիկը մատնեց Թշնամեաց ձեռքը.

Պ. Վասն զի Դերենիկ ուրիշներուն գրգռութեամբը Ապլհարիպը սպարապետութեան պաշտօնին ձգեր էր. Ապլհարիպ ալ առ բանիս վրէժը առնելու համար էր ու Զարևանդ դատաւորուն իշխանները պատերազմի յորդորելով անոնց ձեռքը մատնեց զինքը։

Հ. Ապլհարիպ էր ըրածին վրայ ինչպէս զղջաց.

Պ. Վանահայրները ու եպիսկոպոսները լսելով առ բանս նզովեցին Ապլհարիպը. ինքն ալ զղջաց իր յանցանացը վրայ. օր մը երբոր իշխանները դաշտի մը մէջ Դերենիկը կը չարչարէին հետը խաղալով, Ապլհարիպ իմացաւ ու հոն առղուանքը դադրան մատաւ և իշխաններէն ոմը սպաննեց ոմը փախուց էր քաղաքը, որոնք մեկէն քաղքին դռները գոցեցին. Ապլհարիպ այնպէս կատաղութեամբ զարկաւ որ սուրը երկրէ դրան մէջը խրեցաւ մնաց. և ասանկով ազատեց Դերենիկը (940)։

Հ. Աբասին մեռնելէն ետև Հայոց վիճակը ինչպէս եղաւ.

Պ. Նախարարները չվիաբանելնուն համար սպանը տարի առանց Թագաւորի մնաց Հայաստան. Թէպէտ և Աշոտ Աբասին որդին շատ ջանք ժողված խելքով ազգը կը կառավարէր ու Թշնամիները սիրտը վախ ձգեց իրեն քաջութիւններովը (952)։

Հ. Աշոտ Գ. ինչպէս Թագաւորեց.

Պ. Տեսնելով նախարարները Աշոտին կատարե-

լութիւնները՝ Թագաւոր օծեցին զինքը· ասիկայ իր ողորմածութեանը համար Աշօա Ողորմած ըսուեցաւ:

Հ· Աշօային ատենը ուրիշ ինչ Թագաւոր ալ կար Հայաստան.

Պ· Մուշեղ Աշօային եղբայրը գլուխ քաշելով Կարսի մէջ Թագաւորեց· Աշօա խռովութիւն չըլլալու համար ձայն չհանեց· ուստի Թագաւորական ան ձիւղն ալ քիչ մը ատեն գնաց ու վերջը Յուհաց անցաւ:

Հ· Աշօային յիշատակի արժանի գործողութիւնները որո՞նք են.

Պ· Իրեն խաղաղասէր խելացիութիւնն ու բարեպաշտութիւնը, որուն նմանը չէղաւ Բագրատունեաց մէջ: Ասիկայ Անին մայրաքաղաք ընելով զարդարեց:

Հ· Աշօա ինչ արդիւնք ըրաւ որ ամիրապետէն պատիւներ ընդունեցաւ.

Պ· Համուն Տաճիկներուն սպարապետը տալով տամբելով ամիրապետէն, Հայաստանի վրայ վազեց· Աշօա դէմը ելլելով զինքը սպաննեց:

Հ· Աշօային ո՞վ յաջորդեց·

Պ· Քանըվեց տարի սքանչելի կերպով կառավարելէն ետքը, սրբութեամբ մեռաւ· իրեն յաջորդեց Սմբատ իր անդրանիկը:

Հ· Սմբատ Բ· ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ·

Պ· Իր հօրը պէս խաղաղասէր ու շինութեանց եռանդ եղաւ, ու Տրդատ Ճարտարապետին ձեռքով շինել տուաւ Անիի մայր եկեղեցին և ուրիշ շատ շէնքեր:

Հ. Ինչուան եաքը իր բարեպաշտութեանը մէջ մնաց,

Պ. Ձկ. սկսաւ վերջերը եկեղեցական օրինաց դէմ բաներ ընել որով սատկի եղաւ. տասուերկու տարի Թագաւորելէն եաքը մեռաւ (988):

ԴԱՍ ԺԹ.

Գագիկ Ա. և Յովհաննէս Սմբատ:

Հ. Գագիկ Ա. ինչ կողմանէ անուանի եղաւ.

Պ. Թէ բարեպաշտութեամբ և Թէ քաղաքական հմտութեամբ հաղրատուներ երևելի ու գովելի Թագաւորներէն մէկը եղաւ. երեսուն տարի Թագաւորելէն եաքը մեռաւ. ասիկայ լմընցուց Անիին շինքերը:

Հ. Ո՞վ յաջորդեց Գագիկ Ա.ին.

Պ. Յովհաննէս Սմբատ որ Թէպէտ և խելացի էր, բայց գործունեայ և աշխոյժ չըլլալուն շատ չարիքներ հետևեցաւ Հայաստանի մէջ. նաև Աշոտ եղբայրն ալ ապստամբեցաւ իրմէ որ քալ ու տաք պլուխ երիտասարդ մըն էր:

Հ. Յովհաննէս՝ Աշոտին հետ ինչպէս հաշտուեցաւ.

Պ. Աշոտ Սենեքերիմ Վասպուրականի Թագաւորէն օգնութիւն առնելով եկաւ Անին պաշարեց. Պետրոս կաթուղիկոս ու Գորգի Վրաց Թագաւորը մէջ մտնելով հաշտեցուցին զիրենք:

Հ. Աշոտ իր խոստմանը մէջ հաստատուն մնաց.

Պ. Զղջալով ըրած խոստմանը վրայ, հիւանդ ձևացաւ. երբոր Սմբատ զինքը տեսնելու եկաւ, հոն որոգայթի մէջ բռնուեցաւ ու սկսաւ աղաչել Աշոտին որ իր կենացը խնայէ. Ապիրատ իշխանը բռնեց զՍմբատն ու ձևացուց թէ մեռցընելու կը տանի. բայց գնաց Անի՝ ու նորէն Սմբատը թագաւորեցուց և ինքը փախաւ գնաց:

Հ. Ի՞նչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Անին Յունաց վասիլ կայսեր խոստացաւ տալ.

Պ. Վասն զի իր թագաւորութեանը չորրորդ տարին Սկիւթացիք Հայաստանի վրայ վազելով շատ վնասներ հասուցին. ինքն ալ չկրնալով դէմ դնել՝ վասիլ կայսեր թղթով խոստացաւ որ իր մեռնելէն ետքը Անին Յունաց անցնի, միայն թէ վասիլ օգնէ իրեն Սկիւթացւոց դէմ (1024):

Հ. Սմբատին թղթով ըրած աս խոստմունքը ինչ հետևանքներ ունեցաւ.

Պ. Կոստանդին՝ վասիլ կայսեր եղբայրը՝ մեռնելու առեն, կիրակոս անունով հայ քահանայ մը կանչեց ու հետ տուաւ Անիին համար եղած դաչինքի նամակը: Ա՛ն անզգամ քահանան ալ պահեց թուղթը քովը, ու երբոր 1034ին Միքայէլ կայսրը նստաւ, տարաւ նորէն անոր տուաւ թուղթը. ու ինքը անոր փոխարէն շատ տակ առաւ. աս բանս պատճառ եղաւ որ Բագրատունեաց թագաւորութիւնը կործանեցաւ:

Հ. Սմբատ որչափ առեն թագաւորեց.

Պ. Քանի տարի ու անորդի մեռաւ: Ասոր թագաւորութեան վերջի տարիները Տուղրիլ Սկիւթացւոց իշխանը խիստ շատ վնաս ու աւերմունքներ ըրաւ Հայաստանի մէջ, որուն դէմ դրաւ քաջութեամբ քիչ մը առեն Վասակ Պահլաւունի,

Թէպէտ և վերջը ինքն ալ սպաննուեցաւ առանձնացած աղօթք ընելու առենը :

Հ. Վ առաքեալն գաւառին մէջ ամ միջոցներս ինչ անողորմութեան գործք եղաւ.

Պ. Խարիկ անունով Պարսիկը որ Բերկրին քաղաքապետն էր, Հայերէն հալածուելով ոխ պահեց. ու քանի մը ամիրաներու օգնութեամբը յաղթելով Հայոց, մարգաչափ խորութեամբ փոս մը փորել տուաւ, ու ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով արիւնով լեցուց փոսը, ու ինքը արիւնաբոյծ գազանի պէս մէջը մտնելով լուացուեցաւ :

ԳԱՍ Ի.

Գագիկ Գ. և Բագրատունեաց թագաւորութեան կործանիլը :

Հ. Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքը ինչ վիճակ ունեցաւ Հայաստան.

Պ. Երկու տարի անտէր մնալով Վեստ Սարգիս Սիւնեաց իշխանը զօրացաւ ամենուն վրայ և կ'ուզէր թագաւորել :

Հ. Ինչ հնարք բանեցուց Վեստ Սարգիս որպէս զի իր խռովասէր ու ամբարտաւան խորհուրդը առաջ տանի.

Պ. Երբոր լսեց Միքայէլ կայսրը որ Սմբատ մեռեր է, իրեք անգամ զօրք խաւրեց Հայոց վրայ որ երթան Անին առնեն. Վեստ Սարգիս ամենայն կէրպով անոնց օգնեց, որպէս զի Միքայէլ կայսեր առջևը արգիլնք մը ըրած ըլլայ :

Հ. Նախարարները Հայաստանի աւերմունքը տեսնելով ինչ ըրին.

Պ. Վահրամ Պահլաւունիին յորդորանքովը միաբանեցան ու Գագիկ Բը. Թագաւոր օծեցին. որն որ Յովհաննէս Սմբատին Աշոտ եղբօրը տղան էր՝ իմաստուն և շատ հնաշխարհիկ կառավարելու Թիւններով զարդարուած (1042):

Հ. Գագիկ Բ.ին առջի գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Վեստ Սարգիսը բռնեց ու կապած Անի բերաւ. բայց վերջը ուրիշներու միջնորդելովը ազատ Թողուց զինքը:

Հ. Գագիկ Բ. ուրիշ ինչ քաջութեան գործք ըրաւ.

Պ. Սկիւթացիք Հայաստանի վրայ վազեր էին. Գագիկ տանըվեց հազար զօրքով անոնց գէմ ելաւ ու վարպետութեամբ և քաջութեամբ պատերազմելով զամէնքն ալ փախուց:

Հ. Ուրիշ որո՞ւ հետ պատերազմ ըրաւ.

Պ. Մոնոմախոս՝ Միքայէլ կայսեր յաջորդը նորէն սկսաւ Անին ուզել. երբոր Գագիկ չանձ տաւաւ, Մոնոմախոս երկու անգամ վրան պատերազմի ելաւ, բայց յաղթուեցաւ. ասոր ամէն չարութեանց պատճառն էր Վեստ Սարգիս:

Հ. Վեստ Սարգիս երբոր տեսաւ որ Մոնոմախոս յաղթուելով իր խորհուրդը փուճ ելաւ, ինչ չարիք մտածեց.

Պ. Իրեն պէս քանի մը ազգատեաց վատամոլ ու չար նախարարներու հետ միացած, խորհուրդ տուաւ Մոնոմախոս կայսեր որ բարեկամութեամբ Սատմպօլ կանչէ Գագիկը, ու վերջը իրենք մատնեն Անին:

Հ. Գագիկ յանձն առաւ կայսեր հրաւէրքը.

Պ. Խմանալով կայսեր ու իր Թշնամեաց չար միտքը ամենևին յանձ չառաւ. բայց նախարարները սուտ երդում ընելով Թէ իրենք Անին կը պաշտպանեն՝ յորդորեցին զինքը որ կայսեր երթայ. ինքն ալ ելաւ գնաց, աւելի ձարը հասնելով քան Թէ համոզուելով:

Հ. Կայսրը ինչ կերպով ընդունեցաւ զինքը.

Պ. Նախ մեծ պատիւ ու սէր ցըցուց, բայց վերջը սկսաւ Անին ուզել. Գագիկ ամենևին կերպով մ՚ալ յանձն չառաւ. ան ատեն Վեստա Սարգիս ու իր հուսակիցները Անիին բանալինները կայսեր խըրկեցին:

Հ. Գագիկ երբոր տեսաւ Անիին բանալինները ինչ ըրաւ.

Պ. Կրքէն ու յուսահատութենէն Թագաւորութիւնն ալ ձգեց իրեք տարի իշխելէն ետքը. կայսրը սա բանիս վրայ ուրախացած՝ Գագիկին քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի տիրեց (1045):

Հ. Բագրատունեաց Թագաւորութեան կործանելէն ետքը, ինչ խեղճութիւններու հասաւ Հայաստան.

Պ. Ամէն տեսակ Թշնամի Հայաստանի վրայ վազելով մոքէ չանցած չարիքը հասուցին Հայոց, որոնց մէջ նշանաւոր եղան Տուղրիլ, Ալփասլան ու իր տղան Մէլիք շահ:

Հ. Ա միջոցներուն մէջ ինչ քաջութեան գործք կը պատմուի Թամթուլ սպարապետին վրայ.

Պ. Ասիկայ Տուղրիլին զօրացը դէմ ելլելով, շատ չարիք հասցընելէն վերջը, անոր իշխաններէն մէ-

կուն տղան վերաւորեց։ Երբոր Թաթուլը բռնուե-
լով Տուղլիլին դիմացը եկաւ, ըսաւ Տուղլիլ. « Թէ
որ ապրի տղան զքեզ ալ կը խալըսեմ »։ պատաս-
խան տուաւ Թաթուլ. « Թէ որ զարնուածքը խմա
է չապրիր »։ մեռաւ տղան, անոր համար զինքն
ալ սպաննեցին։

Հ։ Ալփասլան Տուղլիլին յաջորդելով ինչ չա-
րիք հասուց Հայոց։

Պ։ Երկար տաեն Անին պաշարելէն եաքը առաւ
ու սոսկալի կարդեր ըրաւ Անւոյ մէջ։

Հ։ Գագիկ Աբասեան ինչ հնարքով ազատե-
ցաւ Ալփասլանին հարուածէն։

Պ։ Սուգի լաթեր հագած Ալփասլանին դիմացը
եկաւ, ըսելով որ « Տուղլիլին մահուանը համար
սուգի մտեր եմ »։ Ալփասլան վրան խղճալով սի-
րով պատուեցաւ հետը ու չարիք մը չհասուց։

Հ։ Գագիկ Բ։ ինչու համար Թշնամացաւ Յու-
նաց հետ։

Պ։ Կապադովկիոյ Յոյները չարաչար կը նախա-
տէին զՀայերը։ ու կեսարիոյ մետրապոլիտն ալ
իր շանը անունը Արմէն գրեր էր, ինչպէս նաև ու-
րիշ շաաերը։

Հ։ Գագիկ Բ։ աս նախատանաց վրէժը ինչպէս
հանեց։

Պ։ Երբոր մետրապոլիտն քովը կերթակուրի գա-
ցեր էր, խնդրեց Գագիկ որ շունը կանչէ։ մետրա-
պոլիտն ալ Արմէն ըսելով կանչեց։ ան տաեն Գագ-
կայ ծառաները բռնեցին շունն ու մետրապոլիտը՝
ու պարկի մը մէջ դնելով սկսան շունը չարաչար
ծեծել։ ան ալ կատաղութեամբ այնչափ խածաւ
զմետրապոլիտը որ երկուքն ալ պարկին մէջ մեռան։

Հ. Յոյնք երենց վրէժը ինչպէս հանեցին Գագիկէն :

Պ. Երբոր անգամ մը Կիզևսառա բերդը գացած՝ պարտեզին մէջ կը հանդչէր, բերդին տէրերը, որոնք յոյն էին, դարան մտնելով բռնեցին զինքը ու սոսկալի տանջանքներով սպաննեցին. վերջը մարմինն ալ բերդին վրայ կախեցին : Թշուառութեամբ թագաւորեց ու ապրեցաւ, խեղճութեամբ մեռաւ (1079) :

Հ. Յոյները որչափ տաեն տիրեցին Հայաստանի.

Պ. Քիչ միջոց. վասն զի Մելիք շահ Յոյները վռնտեց ու ինքը տիրեց Հայաստանի :

Հ. Բագրատունեաց տէրութիւնը կործանելէն ետև, մեկալ ազատամէ կամ բռնաւոր թագաւորները քիչ եղան.

Պ. Ա միջոցներուն վերցուեցան անոնք ալ, որ էին Արծրունեաց ու Կարսի թագաւորութիւնը որն որ իրեք թագաւոր ունեցաւ Մուշեղ, Աբաս ու Գագիկ, որ իր տէրութիւնը Յունաց տուաւ և ինքը Ծամնդաւ բերդը քաշուեցաւ (1066) :

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ռ Ո Ի Բ Ի Ն Ե Ա Ն Ց

ԴԱՍ ԻԱ.

Ռոբերեան Ա. կոստանդիւն Ա. Թորոս Ա. Լեւոն Ա. Թորոս Բ. Մլեհ և Ռոբերեան Բ։

Հ. Ռուբինեանց Թագաւորութիւնը ինչպէս սկսաւ.

Պ. Բագրատունեաց տէրութեան կործանելէն երեսունըչորս տարի վերջը, Ռուբէն անունով իշխան մը Գադկայ ազգականութենէն, կիլիկիոյ կողմերը երթալով հոն տեղի Հայոց սիրտը վաստակեցաւ, ու խել մը կարիճ գլուխը ժողվելով քանի մը պզտիկ քաղաքներու տիրեց ու սկսաւ կառավարել զանոնք (1080)։

Հ. Ռուբէն ո՞րչափ տաեն իշխեց.

Պ. Գող վասիլ ըսուած իշխանին օգնութեամբը ուրիշ քաջութիւններ ալ ընելէն վերջը Յունաց դէմ, տասնուվեց տարի իշխելէն ետքը մեռաւ։

Հ. Ո՞վ յաջորդեց իրեն.

Պ. Իր որդին կոստանդին Ա. որ խելքով հինգ տարի կառավարեց տէրութիւնը, ու Լատինա-

ցաց՝ որ սուրբ երկիրը ազատելու կ'երթային օգ-
նեց· որոնցմէ վերջը շատ ընծաներ ու պատիւներ
առաւ:

Հ· Թորոս Ա· իր հօրը տեղը յաջորդելով ինչ
քաջութիւններ ըրաւ·

Պ· Յոյներէն պատերազմով Անարզաբա քաղա-
քը առաւ· Սկիւթացիները ու Պարսիկները որ
Հայաստանի վրայ կը վազէին ցրուեց ու փախուց·
Կիզևատոա բերդն ալ վարպետութեամբ առնելով
Գագիկը մեռցընողները սպաննեց: Թորոս քան-
ուիրեք տարի խլեց ու մեռաւ:

Հ· Թորոս Ա·ին ով յաջորդեց·

Պ· Իր եղբայրը Լևոն Ա· որ Մամեստիա և ու-
րիշ շատ քաղաքներ առնելով ամենուն սիրտը վախ
ձգեց՝ ինչուան նաև Յունաց ալ:

Հ· Լևոն Ա· ինչպէս բռնութեցաւ Պետևին Ան-
տիոքի կոմսէն·

Պ· Պետևին Լևոնին վրայ նախանձելով զինքը
սեղանի կանչեց ու բռնելով բանտը դրաւ· Լևոն
քանի մը քաղաքներ ու իր որդին պատանդ տա-
լով ազատեցաւ:

Հ· Լևոն աս նախատանաց վրէժը ինչպէս հա-
նեց·

Պ· Մէկէն զօրք ժողվեց ու տուած քաղաքները
եա առնելէն զատ, այնչափ նեղը խոթեց Պետևի-
նը, որ ինքը Լևոնին պատանդներ տալով հազիւ
խալըսեցաւ ձեռքէն:

Հ· Լևոն ինչուան վերջը կրցաւ խաղաղութեամբ
խլել·

Պ· Չէ· վասն զի Յովհաննէս Պերփեռուժէն ան-

համար զօրքով վրան պատերազմի ելաւ՝ նախանձելով ըրած քաջութիւններուն վրայ. Լևոն իշխաններուն անմիաբանութեամբը անօգնական մնալով յաղթուեցաւ, ու բռնուելով Ստամպօլ բանտ դրուեցաւ (1137):

Հ. Լևոն որչափ ատեն բանտը կեցաւ.

Պ. Տարի մը բանտը մնալէն վերջը՝ կայսրը վրան խղճալով բանտէն հանեց ու իր պալատը կը պահէր: Քանի մը տարիէն նորէն բանտը դրուեցաւ իր թորոս որդւոյն հետ մէկ տեղ, ուր որ սրտին ցաւէն մեռաւ:

Հ. Թորոս Բ. ինչ կերպով իշխանութիւնը ձեռք ձգեց.

Պ. Երբոր կիւ Մանուէլ կայսր եղաւ՝ թորոս որ արդէն բանտէն ելած էր, վախաւ ու Կիլիկիա գալով յայտնեց իշխաններուն իրեն ոմն ըլլալը. անոնք ալ միաբանեցան ու զինքը իշխան դրին իրենց վրայ, որ սկսաւ մէկէն քաջութիւններ ընել:

Հ. Կիւ Մանուէլ երբոր լսեց թորոսին քաջութիւնները ինչ ըրաւ.

Պ. Անդրոնիկոս զօրավարը խաւրեց շատ զօրքով որ երթայ թորոսը շղթայի զարկած Ստամպօլ բերէ:

Հ. Անդրոնիկոս կրցաւ կայսեր պատուէրքը կատարել.

Պ. Չէ. վրան ալ երբոր լսեց թորոս ասանիկ բարկանալով, անանկ քաջութեամբ պատերազմեցաւ, որ մեծ չարդ տալէն ետքը Յունաց, շատ իշխաններ ալ գերի բռնեց անոնցմէ:

Հ. Թորոս ինչ ըրաւ աս իշխանները.

Պ. Կայսրը խիստ շատ ստակով գնեց. Թորոս բոլոր առած ստակը զօրացը բաժնեց դեսպաննե-րուն առջին. երբոր անոնք զարմացան. ըսաւ Թո-րոս. « Կամաւ ըրի որպէս զի նորէն բանեն ձեր իշ-խանները » :

Հ. Ինչո՞ւ համար նորէն պատերազմ բացուե-ցաւ Հայոց և Յունաց մէջ.

Պ. Մտեփանէ Թորոսին եղբայրը ապստամբե-լով իրմէ՝ շատ չարիք հասուց Յունաց. անոնք ալ հնարքով մը զինքը բանեցով եռացեալ ջուրի մէջ սպաննեցին. ասով պատերազմ բացուեցաւ Յու-նաց ու Թորոսին մէջ :

Հ. Թորոս ատ պատերազմներուն մէջն ալ յաղ-թեց Յունաց.

Պ. Առջի բերանները միշտ յաղթեց. բայց եր-բոր տեսաւ որ կիւր Մանուէլ մեծ պատրաստու-թեամբ վրան կուգայ, հաշտութիւն ըրաւ կայսեր հետ, ու քանի մը տարիէն մեռաւ. քանը չորս տա-րի իշխեցին եղբը :

Հ. Ինչո՞ւ համար Թորոսին մեռնելէն եղբը խռո-վութիւն ինկաւ Հայոց մէջ.

Պ. Վասն զի Թորոսին տղան պզտիկ ըլլալով ի-րեն խնամակալ դրուեցաւ Թովմաս Պայլ որ ազ-գաւ Լատին էր : Մլեհ Թորոսին եղբայրը որ ար-դէն ապստամբած էր՝ Բերիայի ամիրային օգնու-թիւն առնելով եկաւ ու ինքը սկսաւ իշխել, շատ խռովութիւններ ըլլալէն եղբը :

Հ. Մլեհ ո՞րչափ տաեն իշխեց.

Պ. Հինգ տարի իշխելէն եղբը սպաննեցին զին-քը՝ իրեն անկարգութիւններուն համար, ու Ռու-բէն Ռ.Ը իշխան դրին (1174) :

Հ. Ռուբէն Բ. ինչպէս կատաւարեց իր պզտիկ տէրութիւնը.

Պ. Շատ մեծ խնամք ունեցաւ իր երկրին բարեաւութեանը վրայ. բայց ափսոս որ Հեթում Լամբրոնի իշխանը հետը թշնամացաւ, պատճառաւ որ Ռուբէն Տարսոնը Յունաց ձեռքէն առեր էր:

Հ. Ի՞նչ հետեւանք ունեցաւ ասոր երկու իշխանաց թշնամութիւնը.

Պ. Պատերազմի ելան իրարու դէմ, ու Հեթում յաղթութեամբ տիրութիւն կանչեց Պեմոնդ անուն Անտիոքայ լատին կոմսը. Պեմոնդ ալ բարեկամութիւն ձեւացընելով Ռուբենին հետ, բռնեց զինքը ու շղթայի զարկաւ:

Հ. Ի՞նչ կերպով ազատեցաւ Ռուբէն բանտէն.

Պ. Լեւոն Ռուբենին եղբայրը լսելով ասոնք՝ շատ զօրքով սաստիկ նեղը խոթեց Հեթումին ու Պեմոնդը, ու իր եղբայրը ազատելով բերաւ աթոռը նստեցուց:

Հ. Ռուբէն Բ. ո՞րչափ տաեն իշխեց.

Պ. Տասնմէկ տարի իշխելէն ետքը վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ, ու Լեւոնը իր տեղը իշխեցուց:

ԴԱՍ ԻԲ.

Լևոն Բ. Փիլիպպոս ու Հերոմ Ա. Լևոն Գ.:

Հ. Լևոն Բ. ինչ բաներով երևելի եղաւ.

Պ. Իրեն իմաստութեամբը, քաջութեամբը ու ան ամէն կատարելութիւններով որ Թագաւորի մը հարկաւոր են. որով նաև իր տէրութիւնը ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց:

Հ. Ի՞նչպէս Թագաւոր եղաւ Լևոն Բ.

Պ. Երուսաղեմի վրայ գացող խաչակիր զօրաց օգնելով անունը Եւրոպա հռչակուեցաւ, ու Փրեդերիկոս Գերմանացւոց կայսրն ալ Թագ խոստացաւ. բայց ինքը մեռնելով իրեն յաջորդը Հենրիկոս և Կեղեստինոս Պապը կատարեցին Փրեդերիկոսի խոստումնքը Թագ ու դրօշ խաւրելով. Լևոն ալ Սսոյ մէջ Թագաւոր օծուեցաւ Դրիգոր կաթուղիկոսէն (1198):

Հ. Լևոն Թագաւոր օծուելէն եաքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Քայքաուզ Իկոնիոյ ամիրային յաղթեց, Թէպէտ և սկզբան յաղթուեցաւ իշխաններուն չանդըզնութեանը պատճառաւ. նոյնպէս նաև Բէրիոյ ամիրային ալ յաղթեց, ուսկից շատ աւար առաւ ու անոր իրմէ պահանջած հարկը՝ ինքը անկէ առաւ:

Հ. Լևոն Բ. որչափ տարի Թագաւորեց.

Պ. Երեսունըչորս տարի. ու բարի անուամբ մեռաւ:

Հ. Լևոն Բ.ին տեղը ո՞վ անցաւ.

Պ. Մանչ տղայ չունենալով Զապէլ անունով աղջիկը տեղը անցաւ: Իշխաններըը միացան ու Զապէլը Փիլիպպոս անունով լատինի մը հետ կարգեցին որ մօր կողմանէ միայն հայ էր. ասիկայ երկու տարի իշխելէն ետքը սկսաւ Սսոյ հարստութիւնները Անախոք կրել. ասոր բանիս բարկանալով իշխաններըը բանտը դրին զինքը՝ ուր որ մեռաւ քիչ առենէն:

Հ. Փիլիպպոսին տեղը ո՞վ յաջորդեց.

Պ. Հեթում Ա.որ Զապելին հետ կարգուելով ինքը թագաւոր եղաւ ու շատ զարդարեց Հայաստանը:

Հ. Ինչո՞ւ համար Հեթում թաթարաց Մանգոյ խանին գնաց.

Պ. Տեսնելով որ թաթարները շատ չարիք կը հասցընեն Հայաստանի, ու կրնան նաև իր երկրին վնաս ալ գալ, ելաւ թաթարաստան գնաց որպէս զի խանին աղաչէ որ ետս չընեն Հայոց: Մանգոյ խանը սիրով ընդունեցաւ զինքը և խնդիրքը կատարեց:

Հ. Հեթում թաթարաստանէն դառնալէն ետքը ի՞նչ պատերազմներ ըրաւ.

Պ. Ակոնիոյ ամիրան վրան նախանձելով պատերազմի ելաւ, բայց յաղթուեցաւ: Նոյնպէս նաև Կոստանդնի Լամբրոնի իշխանը ապստամբելով Ակոնիոյ ամիրային հետ միաբանած վրան պատերազմի ելաւ. բայց երկուքն ալ յաղթուեցան:

Հ. Հեթում վերի ըսած թշնամիներէն զատ ուրիշ ի՞նչ նոր թշնամի ունեցաւ.

Պ. Փնտուխտար Եգիպտոսի ամիրան, որ Սկիւ-

Թագաւոց և ուրիշ շատերուն յաղթելէն ետքը, դեսպան խրկեց Հեթումին որ Եգիպտացւոցմէ առած քաղաքները ետ տայ. Հեթում յանձ չառաւ առնել ու իր երկու որդիքը Լևոն և Թորոսը Թողլով անոր դէմ, ինքը գնաց որ Թաթարներէն օգնութիւն առնէ:

Հ. Թորոս և Լևոն կրցա՞ն փնտռտուքին յաղթել.

Պ. Թորոս պատերազմի մէջ մեռաւ: Լևոնն ալ պերն ինկաւ. ասով բոլոր երկիրը Թշնամիներէն կոխկռտուեցաւ:

Հ. Հեթումն ետ դառնալով ինչպէս գտաւ կիլիկիան.

Պ. Ամէն բան տակն ու վրայ ու աւերակ դարձած. և տեսնելով որ գարման չկայ ետ Ճամբեց վարձուոր զօրքերը, ու աղաչանքով և շատ տակ տալով Լևոնը գերութենէ ազատեց:

Հ. Լևոնին դառնալէն ետքը, դեռ ծրչափ տարեն ալ Թագաւորեց Հեթում.

Պ. Փիչ մը տարինէն Լևոն որդւոյն յանձնեց Թագաւորութիւնը ու ինքը Դրազարկ վանքը քաշուելով բարի մահուամբ մեռաւ քառասունըհինգ տարի Թագաւորելէն ետքը:

Հ. Լևոն Գ. ինչպիսի՞ մարդ էր.

Պ. Խոհեմ, բարեպաշտ և ուսումնասէր, որով մեկէն սկսաւ գպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցընել, որպէս զի ազգութեան, նախանձու, առելութեան և վատամոլութեան անիծեալ շաւաղիղները ջորցնէ. բայց ափսոս ինչպէս որ կ՚ուզէր վախճանին չհասաւ (1269):

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Լևոն միաքը դրածը չկրցաւ առաջ տանիլ.

Պ. Իշխաններէն ոմանք հետը Թշնամանալով գացին Փնտուխտաորը Լևոնին դէմ գրգռեցին. ան ալ անթիւ բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկաւ. Լևոն անօգնական մնալով փախաւ պահուըռեցաւ, որով Թշնամիք ամէն չարիք հասուցին:

Հ. Լևոն տեսնելով Կիլիկիոյ աւերմունքը ի՞նչ ըրաւ.

Պ. Եկաւ պահուըռած տեղէն ու քիչ մը զօրք ժողվելով Սմբատ եղբօրը հետ միացած վռնռեց Եգիպտացիները, ու յաղթեց նաև Իկոնիոյ ամիրային: Տաճկինը տարի Թագաւորելէն ետքը մեռաւ:

ԴԱՍ ԻԳ.

Հեթում Բ. Հռ Լևոնեան Թագաւորութեան Կործանիլը:

Հ. Հեթում Բ. ինչո՞ւ Թագաւոր չօծուեցաւ.

Պ. Վասն զի սաստիկ կրօնասէր ու բարեպաշտ ըլլալով, չէր ուզեր արտաքին բաներու խառնուիլ. անոր համար ալ չորս տարի իշխեցին եղբայրը Թագաւորեցուց (1293):

Հ. Թորոս Գ. որչա՞փ տեւեն Թագաւորեց.

Պ. Իրեք տարիէն Թագաւորութիւնը ձգեց ու ինքն ալ վանք մը քաշուեցաւ, ստիպելով որ նոյնէն Հեթումը գայ Թագաւորէ:

Հ. Ա՛ս միջոցներուն ինչ խռովութիւն եղաւ կի-
լիկիոյ մէջ.

Պ. Մարիամ կայսրուհիին աղաչանքովը (որ ի-
րենց քոյրն էր) Հեթում ու Թորոս Սահմպօղ
գացին. ան միջոցին Սմբատ մեկալ եղբայրնին՝ իշ-
խաններուը համոզելով ինքը թագաւոր օծուեցաւ.
ու երբոր անոնք կը դառնային դէմերնին ելլելով
երկուքն ալ բռնեց, Հեթումը կուրցուց ու Թորոսը
սպաննեց:

Հ. Սմբատ կրցա՞ւ հանգիստ թագաւորել.

Պ. Չէ. վասն զի Կոստանդին մեկալ եղբայրնին
աս բանիս վրայ բարկանալով, շատ զօրքով Սմբա-
տին վրայ եկաւ ու յաղթելով անոր՝ բռնեց զանի-
կայ ու բանտ դրաւ, և ինքը անոր տեղը թագաւո-
րեց: Հեթումն ալ բանտէն հանած հանդիստ կը
պահէր:

Հ. Կոստանդին ե. ո՞րչափ տաեն թագաւորեց.

Պ. Երկու տարիէ չափ. վասն զի երբոր հրաշ-
քով մը Հեթումին աչքերը բացուեցան, ամէնքը
սկսան ուզել որ նորէն Հեթում թագաւորէ. բայց
երբոր Կոստանդին աս բանիս վրայ սկսաւ խռո-
վութիւն հանել, Հեթում ալ բռնեց զինքը և Սմբ-
բատն ալ մէկտեղ Սահմպօղ խաւրեց:

Հ. Հեթում ե. երրորդ անգամ թագաւորե-
լուվ ինչ ըրաւ.

Պ. Այլ և այլ անգամ Եգիպտացւոց ու Ա՛ի-
կայոնացւոց յաղթելէն վերջը, իր Թորոս եղբօ-
րը տղան Լեւոնը իր տեղը թագաւորեցուց ու ինքը
նորէն առանձնացաւ վանքը. բայց միշտ խորհըր-
դով կ'օգնէր Լեւոն Դ.ին, որն որ խելացի ու բարե-
պաշտ էր:

Հ. Լևոն Դ.ին առևնը ինչ նոր խռովութիւն ինկաւ Կիլիկիոյ մէջ.

Պ. Լևոն Դ. Գրիգոր Անաւարզեցի կաթուղիկոսին յորդորելովը Սսոյ մէջ եկեղեցական ժողովք մը ընել տուաւ, որուն մէջը շատ բան փոխեցին ծէսերու վերաբերեալ. խել մը խռովարար ու անկարգ մարդիկ աս բանիս վրայ բարկացած մեծամեծ խռովութիւններ հանեցին Կիլիկիոյ մէջ, ու ատոնք ալ բաւական չտեսնելով, անզգամութեամբ գացին թաթարաց Պիլղար իշխանը, որ Անարզաբա կը նստէր, Լևոնին դէմ գրգռեցին:

Հ. Պիլղար ինչ չարիք հասուց Լևոնին.

Պ. Խարդախութեամբ Լևոնը երեն կանչեց, իբրև թէ խորհուրդ հարցնելու համար. ան ալ շատ իշխաններով ու հեթումեան ալ մեկտեղ առած եկաւ գնաց. Պիլղար նախ սիրով ընդունեցաւ ու վերջը զամինքն ալ Թրէ անցուց (1308):

Հ. Լևոն Դ.ին ո՞վ յաջորդեց.

Պ. Օշին հեթումին եղբայրը շատ զօրք ժողված՝ Պիլղարին զօրքերը ցրուեց փախուց ու ինքը թագաւոր եղաւ, սակայն որ Սսոյ ժողովքին կանոնները պահուին: Օշին գրեթէ աստուածային հրաշքով մը նըսը Եգիպտոսի ամիրային ալ յաղթեց որ շատ զօրքով վրան եկեր էր. տասուերկու տարի թագաւորեց ու լաւ մահուամբ մեռաւ:

Հ. Լևոն Ե. իր հօրը տեղը յաջորդելով ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Ռուբինեանց թագաւորներուն մէջ գրեթէ ամենէն աւելի անգութ և անկարգ կեանք անցնողը ինքը եղաւ, որով իր կինը, եղբայրը ու Օշին Պայլ փեսան սպաննել տուաւ անիրաւութեամբ:

Հ. Լևոն Ե.ին առենը օտար Թշնամիները ինչ չարիք հասուցին Կիլիկիոյ.

Պ. Եգիպտոսի Սուլթանը, Թաթարներն ու Թուրքերը շատ անգամ Կիլիկիոյ վրայ վազելով շատ վնասներ հասուցին, միշտ պատճառ բերելով որ Հայերը Լատինացւոց հետ Թղթակցութիւն ու վերաբերութիւն ունին ու զանոնք կը գրգռեն Երուսաղեմի վրայ գալու:

Հ. Լևոն Ե. որչափ առեն Թագաւորեց.

Պ. Քսանըմէկ տարի. շատ անհանգիստ ու խեղճ կերպով:

Հ. Ո՞վ յաջորդեց Լևոն Ե.ին.

Պ. Յովհաննէս Պայլ ազգաւ լատին. ասիկայ տարիէ մը սպաննուեցաւ իշխաններէն իր հայատեցութեանը համար:

Հ. Յովհաննեսին ո՞վ յաջորդեց.

Պ. Եղբայրը Գուիտոն որ երկու տարիէն սպաննուեցաւ, Լատինի ծէս ազգին մէջ խոթել ուզելուն համար:

Հ. Կոստանդին Գուիտոնին տեղը յաջորդելով ինչ ձամբայ բռնեց.

Պ. Թէպէտ և ազգաւ լատին էր, բայց խելքով կառավարեց ազգը տասնըւրեք տարի: Նոյնպէս աստր առենն ալ Եգիպտոսի ամիրան շատ զօրքով Կիլիկիոյ վրայ եկաւ. բայց չարաչար յաղթուեցաւ Կոստանդինէն:

Հ. Լևոն Զ. ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Երկու տարի աթոռը առանց Թագաւորի մնալէն վերջը իշխաններուն փառամոլութեանը

համար, ընտրուեցաւ Թագաւոր Լևոն Զ. որուն մայրը միայն հայ էր. խելացի ու բարեպաշտ ըլլալով շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց ափսոս ժամանակին պարագաները չթողուցին (1365):

Հ. Ռուբինեանց Թագաւորութիւնը ինչպէս կործանեցաւ.

Պ. Լևոն տասնըմէկ տարուան Թագաւորութեան մէջ շատ անգամ Եգիպտացիներէն յաղթուեցաւ, Եգիպտոսի Սուլթանը Էշրէֆ Շապան անհամար զօրքով վրան եկաւ ու երկար տաեն պաշտերազմեցաւ եօքը բռնեց Լևոնը ու չղթայի զարնելով Եգիպտոս տարաւ, որով վերջացաւ Հայոց Թագաւորութիւնը Քրիստոսի 1375 Թուականին:

Հ. Լևոն Զ. ինչ եղաւ Եգիպտոս.

Պ. Եօթը տարի բանտը կեցաւ հաւաստը չտալնալուն համար. վերջը Սպանիացւոց Յովհաննէս Թագաւորին աղաչանքովը՝ գերութենէ ազատեցաւ ու Եւրոպա գնաց:

Հ. Լևոն գերութենէ ազատելէն եօքը ո՞ւր գնաց.

Պ. Նախ Երուսաղէմ, ուր իր ընտանիքը Թողուց և ինքը անցաւ Հռոմ. վերջը Յովհաննէս Սպանիոյ Թագաւորը իրեն բնակութեան տեղ տուաւ:

Հ. Ո՞ւր մեռաւ.

Պ. Փարիզ. երբոր գացեր էր հոն Ճամբորդութեան համար՝ մեռաւ 1393ին, նոյեմբերի 19ին վաթսուն տարուան, ու Թաղեցաւ Կեղեսաւինեանց վանքին մէջը, ուր որ ինչուան հիմա կայ իր գերեզմանը:

ԴԱՍ ԻԴ.

Ռուբինեանց տէրութեան կործանելէն ինչուան մեր առանի եղած դիպուածները։

Հ. Լանկլիմուր ինչ չարիք հասուց Հայաստանի.

Պ. Ռուբինեանց Թագաւորութեան կործանելէն առաջուերկու տարի չափ ետքը Լանկլիմուր Իօզպէք Թամթարաց Թագաւորը շատ տեղերու մը բելով Հայաստանի վրայ եկաւ, շատ տեղ այրեց աւերշակեց ու շատ ալ արիւնհեղութիւններ ը բաւ, մանաւորապէս Սեբաստիոյ մէջ (1387)։

Հ. Ինչ մարդ էր Պեղկինէ Ուռպելեան.

Պ. Քաջ և խոհեմ մարդ մըն էր որ Սիւնեաց գաւառին մէջ (Խափանի կողմերը) հինգ վեց հազարի չափ Հայերու վրայ կ'իշխեր հայրաբար, ու զամէնքը կը խնամէր։

Հ. Ո՞րչափ տեւեց ասոր իշխանութիւնը.

Պ. Վրաց Թագաւորը վրան նախանձելով Ամիրադին անունով անզգամ և շահասէր Հայու մը ձեռքով թոյն խմցնել տուաւ ու մեռուց. Թէպէտ և վերջը Ամիրադինն ալ չարաչար մահուամբ սպանուեցաւ (1438).

Հ. Ինչ չարիք հասուց Հայոց Շահաբաս Պարսից Թագաւորը.

Պ. Սոսկալի արիւնհեղութիւններ ընելէն ետքը, հազարաւոր ընտանիք Պարսկաստան տանելով նոր Ջուղան շինել տուաւ ու հոն բնակեցուց. բայց

ան Ձամբորդութեան մէջը խիստ շատ մարդիկ խեղ-
ճաբար մեռան, ու միւսացածները հատան տասնե-
կու հազար տուն (1604):

Հ. Ի՞նչ դիտեցիք կայ Դաւիթ Սիւնի իշխանին
վրայ.

Պ. Խելացի ու կարիճ մարդ ըլլալով Սիւնեաց
աշխարհքին կողմերը շատ զօրացաւ ասկէ 140 տա-
րի մը առաջ՝ իր քանի մը կարիճ նեռովը, ու չորս
տարի Տաճկներուն դէմ պատերազմեցաւ քա-
ջութեամբ: Իրեն հետ էին Մխիթար, Տէր Աբե-
ղիք և Մելիք Բարսադան կարիճ հայերը (1724):

Հ. Դաւիթ ո՞րչափ տաեն իշխեց.

Պ. Վեց տարի. շատ յաղթութիւններ ընելէն
ետքը մեռաւ չիտունըչորս տարուան ու իրեն յա-
ջորդեց Մխիթար:

Հ. Մխիթարին իշխանութիւնը ո՞րչափ տաեն
տևեց.

Պ. Խիստ քիչ. վասն զի քովի մարդիկը զինքը
անօգնական ձգելով փախան ցրուեցան, ու վերջը
զինքն ալ սպաննեցին: Առնցմէ վերջը Հայոց վրայ
իրենց ազգէն իշխող մը չեղաւ, բայց՝ ի գեղերու վե-
րակացուներէն. Հայաստան ալ Պարսից և Օսմա-
նեանց և վերջը Ռուսաց իշխանութեան տակն ան-
ցաւ: Շատ թշուառութիւններէ ու խեղճութիւն-
ներէ վերջը հիմայ կրթութեամբ, պիտութեամբ և
հայրենասէր անձանց չանքով ազգերնիս յառա-
ջադիմութեան մէջ է:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Կ Ա Զ Ա Ն Ց

ԳԱՍ Ա.

Մեր ազգին սկիզբը. Հայկայ ապստամբութիւնը, Բելայ հետ ըրած պատերազմը, և իրեն կառավարութիւնները ու մահը:

1. Մեր ազգը Նոյ նահապետին Յաբեթ որդիէն կ'ակսի ըլլալ քիչ վերջը: Երբոր Նոյայ որդիքը ան ատեն բազմացան Հայաստանի կողմերը որ տեղերնին քիչ գալով սկսան ազգին անդին երթալ, ա գնացողներուն հետ մէկտեղ գնաց նաև Հայկ անուանով մէկը որ Յաբեթին երրորդ սերունդն էր, այսինքն Յաբեթին տղ. Ն Գամերին,

1. Մեր ազգը ո՞ր ատենէն կ'ակսի, և ո՞վ է մեր ազգին նախահայրը.

Ի դիւրութիւն ուսանողաց և քան խնդրոյ ոմանց՝ ի բաբեկամաց այս երկրորդ մասիս մէջն ալ հարկ սեպեցինք հարցմունքներ դնել:

Գամերին աղուն Թորգոմին տղան էր : Ա՛ս գաղթականները երթալուատեն մէկ մեծ դաշտի մը հանդիպեցան Սենաար բսուած տեղը և հոն ամբարտաւանութեամբ ուզեցին բարձր աշտարակ մը շինել, ինչպէս որ սուրբ գիրքը կը պատմէ, բայց Աստուած բարկանալով լեզուները խառնակեց ու զանոնք ալ ցիր ու ցան ըրաւ :

2· Սենաարայ դաշտին աշտարակը շինել ուզող հսկաներուն մէջ Բէլ անունով մէկը ուրիշներէն աւելի զօրաւոր գտնուելով, կէս մը բռնութեամբ կէս մ՚ալ խոստմունքով անոնցմէ շատը իրեն հնազանդեցուց և կ՚ուզէր Աստուծոյ պէս պաշտուիլ ամենէն և անոնց Թագաւոր եղաւ : Ա՛ս բանս երբոր լսեցաւ Հայկ՝ չուզեց Բէլայ հնազանդիլ *· ուստի ժողվեց տղաքն ու Թոռները, որ իրեք հարիւրի չափ կային, և իրեն ուրիշ ծառաները ու եկաւ նորէն Հայաստան գարձաւ· հոն իրեն առջի բնակութեան տեղին անունը Հարք դրաւ և շինած քաղքին անունն ալ Հայկաշէն· և բոլոր ան կողմի բնակիչները սիրով հնազանդեցան աս կարիճ և վեհանձն հսկային (2107) :

3· Բէլ երբոր լսեց Հայկայ ապստամբութիւնը՝ իսկոյն պատգամաւոր խաւրեց եռւէն որ գայ նորէն իրեն հնազանդի, Թէ չէ՝ անով տեղով կը ջնջէ զինքը· բայց Հայկ աներկիւղ վստահութեամբ մերժեց Բէլայ անիրաւ սպառնալիքը ու խաւրած պատգամաւորները եռ գարձուց· ասով Բէլ մեծ ու ա-

2· Հայկ ինչպէս ապստամբեցաւ Բէլէն·
3· Հայկ ինչպէս սպաննեց Բէլը·

* Մեր Վարդան պատմիչը կը զուգէ Թէ Հայկ ճշմարիտ աստուածպաշտութեամբ Բէլայ արձանը չպաշտելու համար ապստամբեցաւ Բէլէն :

հեղ պատրաստութեամբ Հայկայ վրայ պատերազմի ելաւ:

Հայկ փոխանակ վախնալու ժողվեց իրեն Թաւներն ու տղաքը և ուրիշ հաւատարիմ մարդիկը, ու զանոնք յորդորելով վ.անայ ծովուն քովերը պատերազմի պատրաստուեցաւ: Բէլ իրեն ուժին վրայ վստահացած ու ամբարտաւանութեամբ լըցուած, առանձին խումբով մը զաւուած եկաւ Հայկայ բանակը դիտելու: Քաջաղեղն Հայկ ասիկայ յարմար առեն սեպելով զօրքերը շարեց ու պատերազմիլ սկսաւ, և այնպէս քաջութեամբ պատերազմեցաւ իրեններովը՝ որ Բէլ զարհուրած ուղեց եա դառնալ, ինչուան որ իրեն մեկալ զօրքերը օգնութիւն հասնին. բայց Հայկ Բէլայ յանդգնութենէն իրեն օգուտ քաղելով, քաշեց աղեղը ու այնպէս Թափ անցուց նետը Բէլայ կուրծքին, որ երկաթը չերտաչերտ զրահներուն միջէն անցնելով կռնակէն դուրս ելաւ ու ան ահագին և վիթխարի հսկան գետին պառկեցուց: Հայկ վսեմ խորհրդով Բէլայ մարմինը առաւ ու զմռսել տալով բարձր տեղ մը Թաղեց. որպէս զի ամենուն ցուցընէ Աստուծոյ դէմ ապստամբողին ու հպարտութեամբ լցուած մարդուն վիճակը. և յաւիտենական յիշատակ Թողու ապագայից որ զնոյնք այսպիսի բռնաւորէ մը խալսեց. իսկ պատերազմին տեղւոյն անունը Գերեզմանք դրաւ:

4. Ա բաներուս մէջ աղէկ կը տեսնուի Հայկայ հոգւոյն կատարելութիւնները: Վեհանձնութիւնը կը տեսնուի, որ երբոր Բէլ անհամար բազմութեամբ վրան պատերազմի ելաւ, Հայկ ազատութեան և իր որդւոցը սիրոյն համար լաւ համարեցաւ պատերազմով մեռնիլ քան Թէ բռնաւորի մը տակ գերի ըլլալ: Խոհեմութիւնն ու խելացիու-

թիւնը կը տեսնուի անով որ այնչափ քիչ մարդով անթիւ բազմութեան յաղթեց յարմար ժամանակը, դիրքը և տեղը ընտրելով։ Քաջութիւնը նոյն իսկ իրեն ըրած պատերազմը կը քարոզէ. իսկ անհպարտ կամ անաշխարհակալ հոգին անկէ կ'իմացուի, որ եթէ ինքն ալ ուզենար՝ կրնար Բելայ պէս բռնութեամբ ուրիշներուն վրայ տիրել, որուն ամենևին բան մը չէր պակսեր, մանաւանդ ան աստեն որ Բելայ յաղթեց, կրնար զանոնք հալածել ու իրեն թագաւորութիւնը մեծցնել, ինչպէս ըրած են բոլոր աշխարհակալները. իսկ ընդհակառակն ինքը թշնամին վռնտելէն վերջը դարձաւ իրեն տունը՝ առանց վրայ ուրախացած, որ աշխարհքիս վրայէն ջնջեց Աստուծոյ, և մարդկան և իրեն անձին թշնամին։

5. Տարակոյս չկայ որ Հայկայ արուեստին տեսքն ու գեղեցկութիւնն ալ համեմատ էր հոգւոյն կատարելութիւններուն, որով և մեր Մովսէս Խորենացին Մարիբասայ դրուագքէն հանելով կ'ըսէ. «Ա յս Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստատազուկ». ասոնք բառերով յայտնի կը ցուցընէ Հայկայ մարմնոյն արուեստին գեղեցկութիւնը ու պատշաճ հասակը. և ինչպէս որ Խորենացին կը զրուցէ, նոյն առեղծուան հակայից և դիւցազանց մէջը քան զամենը աւելի երևելի էր. ուրեմն պէտք է աղէկ ձանչնանք այսպիսի նահապետի մը յարդը ու մեզն պարծանք սեպենք իրեն անունը մեր վրայ կրելը։

6. Հայկ հայրաբար կառավարեց իր տէրութիւնը ու շատ կարգեր կանոններ դրաւ և չինութիւններ ըրաւ։ Պատմութիւնը որոշ բան չզուրցեր Հայ-

5. Հայկայ արուեստին տեսքը ինչպէս էր.

6. Հայկ ինչպէս կառավարեց իր տէրութիւնը ու ո՞րչափ տևրեցաւ.

կայ մահուանը վրայ · բայց հաւանական է որ չորս հարիւր տարիէ չափ տպրած ըլլայ · որովհետեւ տուրբ դրոց խօսքերուն նայելով՝ նոյն միջոցներուն մարդիկ ինչուան 400 տարի կ՚ապրէին · խաղաղութեամբ մեռաւ Հայկ իր ազգին իշխանութիւնը յանձնելով Արմենակ որդւոյն (2027) :

Հայկայ իշխանութեան տեւողները Նոյ և իրեն նեմզար կամ Նոյեմզարա կոչը մեռան · Նոյ նը պատ լեռան վրայ Թաղուեցաւ կ՚ըսեն , ու Նոյեմզարա ան լեռան մօտիկները Մարանդ ըսուած տեղը :

ԳԱՍ Բ ·

Հայկայ յաջորդները մինչուան Ադամ :

1 · Արմենակայ վրայ պատմութիւնը երկայն չէ · շատակութիւն չըներ : Միայն կ՚աւանդէ Թէ որովհետեւ կ՚ուզէր որ Հայաստանի ամէն կողմը մարդաբնակ ըլլայ , ուսակ իր Մանաւազ ու Խոռ եղբայրները Հալք գաւառը Թողուց ու ինքը Հայաստանի հիւսիսային կողմը գնաց , ուր որ իր բնակութեան տեղին անունը Արտագծ դրաւ : Իսկ Խոռ , Մանաւազ և Բազ եղբարքը երեքով բնակութեան տեղերնին բազմանալով , ցեղերնին ալ երեքով անուամբը Խոռխոռունիք , Մանաւազեանք ու Բզնունիք ըսուեցան : Արմենակ քառասունըվեց տարի իշխեցէն վերջը խաղաղութեամբ մեռաւ՝ իր Արամայիս որդւոյն յանձնելով ազգին իշխանութիւնը :

1 · Արմենակայ վրայ պատմութիւնը ինչ չիշատակութիւն կ՚ընէ ·

2. Նոյնպէս Արամայիսի վրայ ալ մասնաւոր բան մը չպատմուիր, բայց միայն թէ իր անունովը Արմաւիր քաղաքը շինեց (1975), որ վերջէն Թագաւորանիստ քաղաք եղաւ, և քառասուն տարի իշխեցէն վերջը մեռաւ հանդարտեամբ: Կ'ըսեն թէ Արամայիս շատ տղաք ունի եղեր՝ որոնց մէջէն Ընդա անունով մէկը սաստիկ շատակեր ըլլալով Արամայիս Երասխ գետին քովի դաշտերը կը խաւրէ զինքն որ բերքի ըլլալով հանդարտեամբ ապրի հոն. ուստի իրեն անունովը ան տեղերն ալ Հայրակ ըսուեցան: Ակէ ելած է ան առածը որ ինչուան Խորենացւոյն ատենը կ'ըսեն եղեր շատակեր մարդկանց. « Թէ քո Ընդայն որկորն է, մեր Հայրակայ ամբարքն չեն »:

Ամասիա Արամայիսին որդին իշխեց անոր տեղը ազգին վրայ երեսունուերկու տարի. եաքը Գեղամ Ամասիային անդրանիկ որդին՝ որ Յիսուն տարի իշխեց ու իրեն անուամբը կոչուեցաւ Գեղարքունի գաւառը ու Գեղամայ ծովը: Եաքը Հարմա Գեղամայ որդին երեսունըմէկ տարի իշխանութիւն քաշեց, իր Արամ որդւոյն յանձնելով ազգին կառավարութիւնը (1827):

2. Արամայիսի վրայ ինչ կը պատմուի ու անոր ալ յաջորդեց.

ԳԱՍ Գ.

Աբրամ և իրեն քաջութիւնները:

1. Որովհետև առեն անցնելով Հայկայ քաջութիւնները մոռցուեր էին, ուստի Հարմայեն վերջի տարինները այլ և այլ Թշնամիներ Հայաստանի վրայ վազել սկան ու զանազան մասերուն տիրեր էին, ասով պէտք եր որ մէկ ուրիշ Հայկայ պէս քաջ մ' ալ ելլելով նորէն Թշնամիները վախցնէր. և ահա ասիկայ եղաւ Աբրամ որ հօրը տեղ նստելուն պէս հարկ եղաւ որ աս Թշնամիները Հայաստանէն դուրս հանէ. շուտ մը զօրք ժողվեց, քաջութիւնը ու իրեն բնական խելացիութիւնը և պատերազմի յարմարութիւնը սկսաւ բանի բերել. որով չէ թէ միայն Թշնամիները իր երկրէն հանեց, հապա նաև հեռաւոր աշխարհքներ հալածեց, և կամ բռնելով սպաննեց:

2. Ա՛ս Թշնամիներուն առջինն ու աւելի զօրաւորն եր Նիւքար անուանով Մարայ իշխանը որն որ հպարտ մարդ մըն եր, ու Հարմայեն վերջի տարինները Հայաստանի մէկ կողմին վրայ վազելով հարկատու ըրեր էր. և որովհետև Հարմա նոյն տարինները մեռաւ, ուստի ասիկայ երկու տարիվ չափ տիրեց ան մասին: Աբրամ հօրը տեղն անցնելուն պէս յիսուն հազար զօրք ժողվեց կայծակի պէս վրայ հասաւ. չարդեց անոր զօրաց բազմութիւնը, գինքն ալ բռնեց Արմաւիր բերաւ, և նոյն ժամա-

1. Աբրամ ինչպէս Հայաստանը իրեն Թշնամիներէն խալըսեց.

2. Աբրամայ առաջին Թշնամին ով եր.

նակի քաղաքականութեանը համեմատ, հրաման տուաւ որ բարձր աշտարակի մը ծայրը հանելով երկաթէ ցիցով Ճակտէն գամեն ազգին անիրաւ թշնամին. և նիւքարին ըրած առջի անիրաւութեանը փոխարէն՝ անոր երկրին մէկ մասը հատուցուի ըրաւ:

3. Արամայ երկրորդ թշնամին էր Բարշամ Բաբելացւոց իշխանը որն որ քառասուն հազար հեծեալով և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վրայ վազեց, նիւքարին պէս ուզելով որս մը ձեռք ձգել. բայց Արամ աս բանս իմանալուն պէս մեկէն զօրքերը ժողվեց և շուտով մը վրան հասաւ, թշնամւոյն զօրքերուն կէսը կոտրեց, կէսն ալ ցրուեց ու զինքն ալ բռնելով սպաննեց. աս էր պատճառ Արամին երկրորդ յաղթութիւնը:

4. Արամայ քաջութիւններուն համբաւը մերձակայ ազգերուն սիրտը վախ ձգած ըլլալով, երբոր Կապադովկացւոց Պայապիս անունով իշխանը լսեց որ Արամ քառասուն հազար զօրքով իր երկրին մօտերը եկեր է, վախնալով որ չըլլայ թէ Կապադովկիոյ ալ տիրէ, բոլոր ուժովը Արամայ դէմ պատերազմի ելաւ. բայց Արամ վրան հասաւ սաստիկ կոտորածով քշեց հալածեց զինքը ու Միջերկրական ծովուն կղզիներուն մէկուն մէջը փախուց: Իսկ Պայապիսին երկրին տիրելով Մշակ անունով Հայ մարզպան մը դրաւ ան տեղերուն՝ տասը հազար զօրք տալով իրեն. բայց ասկէ հրաման հանեց որ ամէնքն ալ հայերէն խօսին:

Իսկ Մշակ մարզպանը Կապադովկիայի մէջ քաղաք մը շինեց ու իրեն անունովը Մշակ անուա-

3. Արամ ինչպէս յաղթեց ու սպաննեց Բարշամ Բաբելացւոց իշխանը.

4. Արամ դեռ ուրիշ ինչ քաջութիւններ ըրաւ.

նեց*· բայց բնակիչները չկրնալով աղեկ հնչել Մա-
ժակ կը զրուցէին · վերջէն աս քաղաքը Հռովմայե-
ցւոց Յուլիոս Կեսար ինքնակալէն նորոգուելով
Կեսարիա ըսուեցաւ, որ է հիմակուան Ղայսերի
ըսուածը:

5· Արամ բոլոր Թշնամիները Հայաստանէն վա-
նելէն վերջը՝ երբոր տեսաւ որ ամէն կողմանէ ա-
պահով է, սկսաւ բարեկարգել Հայաստանը կար-
գեր կանոններ դնելով, և այնչափ երևելի եղաւ ու
անունը օտարաց մէջ տարածեցաւ որ բոլոր ուրիշ
ազգերը մեր ազգը իրեն անուամբը սկսան Արա-
մեան կամ Արմէն կոչել, ինչպէս նաև ինչուան
հիմա նոյն անունը կուտան մեզի իրենք:

6· Ա մինչոյն Աորեստանեայց Նինոս Թագա-
ւորը կարդալով իրմէ առաջ եղած քաղերուն պատ-
մութիւնը, կ'ուզէր որ անոնց նմանի ու միայն ի-
րեն անունը յիշուի աշխարհքիս վրայ· աս խոր-
հըրդով բոլոր իրմէ առաջ եղած քաղերուն պատ-
մութիւնները այրել տուաւ· ու ինքն ալ շատ զօրք
ժողվելով այլ և այլ տեղերու տիրեց, առաւ Ե-
գիպտոսը ու անոր շրջակայ սահմանները: Անցաւ

5· Արամ իր ըրած բարեկարգութիւններովը
ու քաղութիւններովը ինչ համբաւ ստացաւ օտար
ազգաց մէջ·

6· Արամայ քաղութիւններուն համբաւը ինչ
ազդեցութիւն ըրաւ Նինոս Աորեստանի Թագա-
ւորին վրայ·

* Ա պատճառաւ Յոյները փոքր Ասիային աս մասը
Արմենիա անուանեցին. իսկ Հայերը Առաջին Հայք դրին
ան մասին անունը, ու անկե վերջը Հայոց տիրած տեղե-
րուն անունը Երկրորդ Հայք, Երրորդ Հայք· Իսկ Չորրորդ
Հայքը աստոց մասը չէ, հապա բուն Հայաստանին հնգե-
տասան նահանգներէն մէկն է որ աստոց սահմանակից
ըլլալով, Չորրորդ Հայք ըսուեր է:

անկէ Հնդկաստան, բայց հոն չարաչար յաղթուե-
լով ետ դարձաւ։ Նոյնպէս պատմութիւններուն
մէջ կարդալով որ Հայկ զԲէլը սպաններ է, ուզեց
Արամէն վրէժը առնել. բայց Արամայ քաջու-
թիւնները վախնալով ետ կեցաւ իր խորհուրդէն.
հաշտութիւն խօսեցաւ Արամայ հետ և Թոզ տը-
ւաւ որ մարգարտէ պսակ գործածէ։

7. Խորենացին Արամայ վրայ խօսելու առեն
ասանկ կը զուրցէ Մարիբասայ խօսքերէն հանելով.
« Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որ-
պէս ցուցանէ նոյն պատմագիր, (այսինքն Մարի-
բաս Կաթինա) լաւ համարէր զմեռանիլն՝ի վերայ
հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտա-
րածնաց կոխելով զսահմանս հայրենիս, և հարա-
զատից արեան նորա սիրել արանց օտարածնաց »։
Յիրաւի կարճ և քիչ բան կը դնէ, բայց ան կա-
տարելութիւններն ու առաքինութիւնները են ո-
րով ազգին Թշնամիներուն յաղթեց և իրեն անու-
նը անմահացուց, ազգին սիրելի ու միանգամայն
պատկառելի ըրաւ զինքը, և կարգաւորեց տերու-
թիւնը՝ կարգեր կանոններ դնելով։ Ա՛ն գլխաւոր
առաքինութիւններէն զատ կը տեսնուի Արամայ
վրայ ան կատարելութիւններն ալ. բարեխառն
կեանք, հմտութիւն պատերազմական բաներու
մէջ, աշխարհակալութեան անյագ սիրոյն չափ
դնել, արագութիւն՝ի գործս և ուրիշ կատարե-
լութիւններ։ Պատերազմական հմտութիւնը կ՚ի-
մացուի իրեն պատերազմներու մէջ յաղթելէն, և
այնպիսի Թշնամեաց, որոնք նոյն առեն շատ ե-
րեւելի էին, մանաւանդ Բարշամը որ Խորենացւոյն

7. Մովսէս Խորենացին ինչ գովեստ կուտայ
Արամայ վրայ և իրեն գլխաւոր կատարելութիւն-
ները որոնք են.

ըսածին նայելով, Ասորիք երկար ատեն պաշտե-
ցին զինքը իրեն քաջութիւններուն համար:

Արամայ աշխարհակալութեան սկիզբը ամենևին անոնց պէս չէր որոնք շատ անգամ օձար ազգե-
րուն վրայ կը յարձակէին առանց իրաւանց, միայն իրենց անյագ փափաքը լեցնելու համար. Արամ անոնց երկրին միայն սիրեց որոնք որ ուզեցին իրեն և կամ իր հայրենեացը ինաս մը հասցնել. որ ամենայն կերպով արդարացի է: Դարձեալ ե-
րբոր իր թշնամիներուն յաղթեց՝ ալ անկէց վերջը փոյթ չըրաւ աշխարհակալութեան: Ահա այսպիսի պեղեցիկ կառավարութիւններով զարդարուած էր առ մեծ մարդը, որ յիսունըրութը տարիի չափ ի-
խեչն վերջը՝ խաղաղութեամբ մեռաւ, յանձնե-
լով կառավարութիւնը իր Արայ որդւոյն:

ԴԱՍ Դ.

Արային Շամիրամայ հետ ըրած պատերազմը, ու Շամիրամայ գործքերը:

1. Արայ Նինոսի վերջին տարիները իր հօրը յա-
ջորդելով նոյն պատիւը ունեցաւ Նինոսէն, ինչ որ ունեցեր էր Արամ իր հայրը. ասիկայ գեղեցկու-
թեանը համար Արայ Գեղեցիկ ըսուեցաւ: Իշխան նստելուն պէս մեկնեն Նինուէիներու եռանդ սկը-
սաւ ըլլալ և ան պատճառաւ Արմաւիր քաղաքը իրեն ջրկակայ տեղերովը Արարատ կամ Այրա-
րատ ըսուեցաւ:

2. Երբոր Նինոս Ասորեստանցւոց Թագաւորը

1. Արամի ոմվ յաջորդեց.

2. Ինչքն ըսուեցաւ Արայի Շամիրամայ հետ ըրած պատերազմը ու ինչ վերջ ունեցաւ.

մեռաւ, Ջամիրամ * իր կինը տեղը յաջորդեց· ու լսելով Արային գեղեցկութիւնը ուզեց կարգուիլ հետը, խոստանալով Արային որ իրեն հետ մէկ տեղ Ասորեստանի վրայ ալ թագաւորէ: Բայց Արայ խմանալով Ջամիրամայ անկարգ ու չար միտքը, մերժեց իրեն խնդիրքը, և աւելի յանձն առաւ պատերազմով մեռնիլ քան թէ իրեն առաքինութիւնը ու բարեխառնութիւնը ոտքն տակ առնել: Փուճ տեղը չատ աշխատեցաւ Ջամիրամ համոզելու զինքը այլ և այլ անգամ պատգամաւորներ խաւրելով, և ամէն անգամ իրեն աներեսութիւնը խաղք եղաւ, բայց դիմացինին համեստութենէն չամչցաւ· վերջապէս յուսահատութեամբ ու բարկութեամբ լցուած պատերազմով Արայի վրայ եկաւ ու Այրարատայ դաշտին մէջ պատերազմի պատրաստութեան երկու կողմէն: Ջամիրամ իրեն զօրացը և զօրավարներուն խստիւ ապզիլեց որ զԱրան չսպաննեն, հապա ողջ բռնեն· բայց պատերազմին տաք միջոցները Արան զարնուելով մեռաւ, որ շատ աւելի մեծ յաղթութիւն էր քան թէ Ջամիրամայ անկարգ հաճոյքը կատարելը ու հարբեցաւոր տարի ալ թագաւորութիւն ընելը:

3· Ջամիրամ երբոր իմացաւ Արայի մեռնիլը շատ ցաւեցաւ որ իր գէշ կամքը չկրցաւ կատարել, ու իրեն ամպարիշտ ախտովը կուրցած, կ'ուզէր դիւթութեամբ ողջընցընել· բայց որովհետև գին սկսաւ հոտիլ և Հայոց զօրքն ալ Արային մահուանը վրայ բարկացած կ'ուզէին նորէն պատե-

3· Ջամիրամ ինչ վարպետութիւն բանեցուց Հայերը խաբելու համար·

* Ասիկայ եղաւ աշխարհքիս մէջ առջի թագուհին որ թագաւորեց, և միանգամայն էն կոյրճը ու էն երևելին:

բաղմ բանալ, Շամիրամ իրեն մարդիկներէն մէկը, որ քիչ մը Արայի կը նմանէր, զարդարելով ձայն հանեց Հայոց գօրաց մէջ որ ասոնցածները Արան լըզելով ողջացուցին: Իսկ Արայի մարմինը խորունկ վիհ մը նետել տուաւ, որպէս զի Հայերը չգտնան. ասով Թէպէտ և բոլոր Հայերը չհաւատացան, բայց գօրաց մէջ չիոնթունիւն կնայելով Շամիրամայ դէմ չդրին, ու անով Շամիրամ Հայաստան մտաւ (1743):

4. Արայի վրայ ունեցած դիւսաւոր տեղեկութիւննիս ասե է, և խորենացին ուրիշ բան չպատմեր վրան. բայց ստրակոյս չկայ որ բոլոր աշխարհքի սիրելին շատ աւելի վեր է իրեն հաւատացեան առաքինութիւնը. մանաւանդ այնպիսի գաղտ և կռապաշտութեան խաւարին մէջ: Արայ ընդ ամենը 26 տարի իշխեց ազգին վրայ իրեն յաջորդ Թողով իր Կարդոս որդին:

5. Ինչպէս որ Խորենացին կը զուրցէ, ամառ աաեն ըլլալով Շամիրամայ Հայաստան մտնելը, Շամիրամ տեսնելով օդին մաքրութիւնն ու զովութիւնը, գիւղին աղօտրութիւնը, աղբիւրներուն ու գետերուն շատութիւնն ու յատկութիւնը, ուզեց իրեն ամառուան բնակութեան տեղ մը շինել Հայաստանի մէջ. ուստի աս բանիս համար ընտրեց Աղթամարայ ծովուն եղերքը ու հոն քաղաք մը շինեց որ իրեն անուամբը Շամիրամակերտ ըսուեցաւ ու վերջէն Վան. աս շէնքիս համար քանուերկու հազար գործաւոր ու վեց հարիւր Հարտարապետ կ'աշխատին եղեր: Շամիրամ Արային սիրոյն համար անոր տասուերկու տարուան

4. Ասկէց դուրս Արայի վրայ ուրիշ բան մը կը պատմուի.

5. Շամիրամ իր մեծագործութեանը ինչ յիշատակ մը Թողուց Հայաստանի մէջ.

Կարդոս որդին յաջորդ նահեցուց անունն ալ Ա-
բայ դրաւ, և ինքը ամառը կուգար Հայաստան կը
բնակէր, իրեն տեղը փոխանորդ դնելով Զրադաշտ
անունով մոգը որ Մարտց իշխան էր: Բայց Շա-
միրամայ որդիքը չկրնալով իրենց մօրը անկարգու-
թիւններուն դիմանալ, զինքը այլ և այլ անգամ
խրատեցին. երբոր իմացաւ Շամիրամ որ զինքը
կ'ուզեն սպաննել, ինքը փութաց ու բոլոր որդիքը
Թրէ անցուց, բայց 'ի պզտի տղէն որ Նինուսաս կ'ը-
սուէր:

6. Ատեն անցնելով Զրադաշտ Նինուսային հետ
միացած պատերազմի ելաւ Շամիրամայ դէմ. պա-
տերազմը երբոր սաստկացաւ՝ Շամիրամ Հայաս-
տան փախաւ ու Կարդոսին հետ միանալով անոնց
դէմ պատերազմի ելաւ. բայց Յաղթուեցան ու
երկուքն ալ պատերազմի մէջ ընկան մեռան, Շա-
միրամ վախճանուելիկու տարուան ու Կարդոս
երեսուն տարուան, տասնըուրթը տարի իշխելէն
վերջը: Նոյն պատերազմին մէջը գերի ընկաւ նահ
Կարդոսին Անուշաւան որդին որ տասնըչորս տա-
րուան էր, ու աս պատճառաւ քիչ մը տաեն Հայ-
աստան Նինուսայ իշխանութեան տակը մնաւ.
ուսոր քիչ մը տաեն Հայերը առանց իշխանի ձնա-
ցին, ինչուան որ Անուշաւան մեծցաւ ու պալա-
տին մէջն եղած մեծերուն շատին սիրելի ըլլալով,
անոնց միջնորդութեամբը ու ազաչանքովը Հայաս-
տանին մէկ մասին տիրեց խոստանալով որ տա-
րուէ տարի տուրք տայ. բայց վերջէն իրեն խոհե-
մութեամբը մէկալ մասերուն ալ տիրելով, բոլոր
Հայաստանի բացարձակ տէր եղաւ. շատ բարե-

6. Հայաստան ինչպէս Նինուսայ իշխանու-
թեանը տակ մնաւ ու հոգը նորէն ինչպէս խալը-
սեցաւ.

կարգութիւններ ըրաւ ու վանքաւնութիւնք տարի իշխելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ։

7. Ա փառաւոր իշխանին վրայ Թէպէտ և քիչ պատմութիւն ունինք, բայց Խորենացին աղէկ կը համառօտէ իր արժանաւոր գովեստը և կատարելութիւնները սա երկու տողովս. « Արայեանն Ա-բա մեռանի ընդ Շամիրամայ, Թողուլ արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և 'ի բան զԱնուշաւանն »։ Բայց 'ի Խորենացւոյն սա մեծ գովեստէն, իրեն խելացիութիւնը յայտնի կը տեսնուի իր գործողութեանը մէջ ալ որ այնպիսի մեծ տէրութեան մը ձեռքէն հայրենական ժառանգութիւնը առաւ առանց արիւնհեղութեան, և ինչպէս որ Խորենացւոյն վերի դրած խօսքէն կ'իմացուի, բոլոր իրեն քաղցրաբանութեամբը։ Կ'ըսէ Խորենացին որ երբոր ծնաւ Անուշաւան՝ Կարդաս իր հայրը նուիրեց զինքը ան Սօսեաց անտառին որն որ անկած էր Արմենակ. ասկէ Անուշաւանը Սօս կամ Սօսանուէր կոչուեցաւ։ Կը կարծէին Հայերը որ սատուածներ կը բնակին ան անտառին մէջ, որով անոր նուիրուողը անարատ, կարիճ ու սուրբ կը համարուէր (1685)։

7. Անուշաւան ինչ կոչմանէ երեւելի եղաւ.

ԴԱՍ Ե·

Պարեւտեան սկսեալ ի Հնչուտան մեծն Տիգրան:

1· Որովհետեւ Անուշաւանին ցեղէն իշխանու-
թեան օրինաւոր յաջորդ չէր մնացած, ուստի
հարկ եղաւ որ Հայկայ մեկալ որդւոցը ցեղէն Պա-
րթեւ անունով իշխանը տիրէ Հայոց վրայ· որուն
վրայ երկայն ծանօթութիւն չունինք, բայց միայն
գիտենք որ շատ պատերազմներ ըրեր է յիսուն
տարի իշխելով Հայոց վրայ: Ակկէց սկսեալ են-
չուան Պարոյր առաջինին միջոցները, Խոր.ենացին
բան չպատմեր աս իշխաններուն վրայ, հապա ազ-
գին Թագաւոր ունենալուն վրայ ուրախութեամբ
լցուած մեկէն Թագաւորութեան սկսելուն վրայ
կը խօսի, մեկալնունք զանց առնելով*: Միայն ա-
ռոնցմէ մեկ քանիին վրայ համառօտ տեղեկութիւն-
ներ ունինք:

1· Անուշաւանին մեռնելէն վերջը ոմվ իշխեց
Հայոց վրայ:

* Անուշաւանէն վերջը կարգաւ եւեւէ նստած իշ-
խաններուն անուններըը ատոնք են. Պարէտ, Աբբակ, Ջա-
ւան, փառնակ Ա., Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ,
Ամբակ Ա., Առնակ, Շաւարշ Ա., Նորայր, Վասակ, կար,
Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ, Հօրդ, Ջարմայր, Շա-
ւարշ Բ, Պերճ Ա., Աբբուն, Պերճ Բ, Բազուկ երկայնա-
կեաց, Հոյ Հրաշակերտ, Յուսակ, Ամբակ Բ, Կայպակ,
փառնաւազ, փառնակ Բ, Սկայորդի ու իրեն տղան Պա-
րոյր:

2. Կը զուրցեն մեր պատմիչները որ Զարմայր նահապետը Տրոյիոյ մեծ պատերազմին առենը Տրոյացւոց Պրիամոս Թագաւորին օգնութիւն գնացեր է ու հոն շատ քաջութիւններ ընելէն վերջը պատերազմին մէջը մեռեր է. Խորենացին կը զուրցէ ասոր համար: « Մեռանի՛ ի քաջացն Եղլենացւոց ». Նոյնպէս նաև կը տեսնուի որ Սկայորդին ալ քաջ մարդ եղած պիտի ըլլայ ինչպէս որ Խորենացւոյն խօսքէն ալ կ'իմացուի որ զինքը « Քաջ նախնին մեր » կ'անուանէ. բայց վրան ամենևին բան չպատմեր (749):

3. Բաց ՚ի գլխաւոր ատ երկուքէն մէկալնոնց վրայ որոշ տեղեկութիւն մը չունինք. բայց յայտնի կը տեսնուի որ անոնց մէջն ալ շատ քաջ մարդիկներ եղած պիտի ըլլան, ինչպէս որ իրենց անուններէն կամ քովի դրած մակդիրէն կ'իմացուի, ինչպէս Սուր, Վաչտակ, Առնակ, Կար, Հրանտ, Պերճ, Բազուկ, Հոյ հրաշակերտ և այլն: Ատ անունները որոնք նշանակութիւն ունին, կը տեսնուի որ իւրաքանչիւր մարդուն կատարելութեանը համեմատ դրուած են, և ոչ երէկ ըստ դիպաց. զարձեալ՝ գրեթէ հազար տարուան միջոց է այսչափ իշխանաց եռանդ եռանդ յաջորդելը, որոնց ատենը Հայաստան ամենևին գերութեան տակ չմըտաւ՝ Թէպէտ և հարկատու եղաւ այլ և այլ անգամ. այս բանս յայտնի կը տեսնուի պայազատներուն շարունակութենէն որոնց անունները վրը դրինք:

4. Պարոյր իր հօրը Սկայորդւոյն տեղը յաջոր-

2. Զարմայր Նահապետին ու Սկայորդւոյն վրայ ինչ մանաւոր բան մը կը պատմուի.

3. Մեկալ իշխաններուն քաջութեանը ինչ բան կրնայ իրրև ապացոյց նշան մը սեպուիլ.

4. Պարոյր Վարդակեսին օգնելով ինչ պատիւ ունեցաւ.

գելով հինգ տարի աղքը կառավարեց ամէն տեսակ բարեկարգութիւն ընելով։ Նոյն միջոցին Աորեստանի վրայ կը թագաւորէր Սարդանաբաղ որ զեղծ ու անխելք մարդ մը ըլլալուն համար, իշխաններէը իրմէ ապստամբեցան Վարբակէս անունով իշխանին առաջնորդութեամբը։ Վարբակէս իրեն կողմը զօրացընելու համար Պարոյր մեր նահապետը որոշց, խոստանալով որ եթէ Սարդանաբաղին յաղթեն, գինքը թագաւոր ընէ Հայաստանի։ Ա պատճառաւ ժողվեց Պարոյր իրեն քաջ ու ազեղնաւոր զօրքերը ու Վարբակէսին օգնութեան գնաց. հոն Սարդանաբաղին յաղթելով Վարբակէս բոլոր Աորեստանի թագաւոր եղաւ, ու ինչպէս որ խոստացեր էր, Պարոյրին ալ թագ կապեց ու թագաւորական գաւազան տուաւ։

5. Պարոյր ուրախութեամբ Հայաստան դառնալով քառասունը ուղիը տարի խաղաղութեամբ թագաւորելէն վերջը մեռաւ։

Պարոյրի տեղն Սենեքերիմին երկու տղաքը Ադրամելէք և Սանասար հայրերնին սպաննելով Հայաստան փախան, զորոնք ընդունեցաւ Պարոյր մեծ հիւրասիրութեամբ։ Առնցմէ սերեցան Սանասունք կամ Սասուն ըսուածները և Արծրունիք ու Գնունիք։ Հոս պատմութիւնը նորէն կ'ընդհատի, որովհետև որ Պարոյրէն սկսեալ ինչուան մեծին Տիգրանայ Թագաւորութիւնը գրեթէ ամենևին պատմութիւն չունինք. վասն զի Խորենացին համառօտութեան համար բոլոր ան թագաւորներուն ըրած գործքերը ձգելով միայն անուններին կը յիշէ ու մեկէն մեծին Տիգրանայ քաջութիւնները կ'սկսի պատմել։ Բայց այսու ամենայնիւ իրեն մեծ

5. Պարոյր ընդ ամէնը քանի՞ տարի թագաւորեց ու իրեն միջոցը ուրիշ ինչ նշանաւոր դիպուած մըն ալ հանդիպեցաւ.

համարմունքը կը ցուցընէ Հայոց Թագաւորու-
Թեան առ մասին վրայ առ խօսքովը. « Սիրելի էր
ինձ յայնժամ գալ Փրկչին և զնա դնել, և առ նո-
քօք յաշխարհ զմուան իմ առնել, և նոցա տեսու-
Թեամբն խրախճանիլ » : Բազմիմաստ ու շատ նշա-
նաւոր է Խորենացւոյն այս խօսքը, որն որ ազգին
այլ և այլ առենուան վիճակները աղէկ ըմբռնե-
լէն վերջը, առ միջոցս ուզեր է աշխարհ գալ : Իսկ
Թագաւորները առնք են. Պարոյր, Հրաչեայ,
փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս, Հայկակ,
Երուանդ ու Երուանդայ տղան Մեծն Տիգրան :
Առնց մէջ միայն Հայկակին վրայ դիտելիք մը կայ
Թէ Նաբուգոդոնոսորայ հետ մէկտեղ պատերազ-
մի գնաց Երուսաղէմի վրայ. երբոր յաղԹեցին ու
ետ սլիտի գառնար Հայկակ՝ խնդրեց Նաբուգոդո-
նոսորէն որ Հրէից գերիներէն ուզածը առնէ. ուս-
տի Շամբատ անունով իշխանը առաւ ու իրեն ըն-
տանիքովը Հայաստան բերաւ. վերջը Վաղարշա-
կայ առեն Բագարատ երևելի նախարարին անու-
նովը բոլոր ցեղն ալ Բագրատունիք ըսուեցաւ
(580) :

ԴԱՍ Չ.

Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւնները :

1. Մեծն Տիգրան Երուանդայ որդին պարծանք մեր Թագաւորութեանը և պայծառացուցիչ ազգին, մեր ամէն Թագաւորներէն աւելի երևելի ու անուանի եղաւ՝ չէ Թէ միայն իրեն արտաքին քաջութիւններովը, հապա նաև իրեն հոգւոյն կատարելութիւններովը : Խորենացին ալ բոլոր Հայկազանց պատմութեան մէջ, մեծին Տիգրանայ մասը ամենէն ընդարձակ կը պատմէ. անոր համար կ'արժէ որ մենք ալ քիչ մը ընդարձակ խօսինք ասոր վրայ :

Խորենացին միայն ձաշակ մը կուտայ Տիգրանայ առաջին քաջութիւններուն վրայ, առանց պատմելու Թէ որոնց յաղթեց և Թէ ան պատերազմներուն մէջը ինչ կերպ բռնեց. ուստի ասանկ կը զուրցէ. « Ապանց կացեալ գլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զընդ լծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բաղմաց » : Ակնէց բնականապէս կրնանք մակաբերել Թէ շատ քաջութիւններ ըրած պիտի ըլլայ, և ատ բանս յայտնի կը զուրցէ որ Յոյները նուաճեց և Հայաստանի առաջին սահմանները նորոգեց :

1. Ո՞վ է մեծն Տիգրան և ինչ քաջութիւններ ըրած ունի.

2. Կիւրոս Պարսից Թագաւորը լսելով Տիգրանայ քաջութիւնները՝ ուզեց անոր հետ բարեկամութիւն հաստատել. արդէն Տիգրան ալ կ՚ուզէր Կիւրոսին բարեկամութիւնն ու օգնութիւնը, անով մէջերնին բարեկամութիւն հաստատեցին: Ա բանս երբոր իմացաւ Աժդահակ Մարաց Թագաւորը, որ նոյն օրերը Կիւրոսի հետ Թշնամացեր էր՝ կասկածի գնաց որ չըլլայ Թէ աս երկուքը միաբանելով իրեն դէմ պատերազմի ելլեն: Քանի որ աս վախտս կը ծփէր, գիշեր մը սաստիկ խռոված երազ մը տեսաւ որ ձիւնով ծածկած բարձր լեռան մը ծայրը, կին մը նստած իրեք դիւցազն ծընաւ. առաջինը աւիւծի վրայ նստեցուց զինք արեւմտեան կողմը կը վազէր. երկրորդը ընձու վրայ նստած հիւսիսային կողմը կը նայէր, իսկ երրորդը վիշապի վրայ հեծած իր Թագաւորութեան վրայ կը վազէր: Երբոր իր խորհրդականներն ու պաշտօնեաները լսեցին աս բանս՝ խորհուրդ տուին իրեն որ այլ և այլ ազգերէ զօրք ժողվելով անոնց դէմ պատերազմի ելլայ. բայց Աժդահակ դիտնալով Տիգրանայ քաջութիւնները, վախցաւ անոր դէմ պատերազմի ելլելու. հապա վարպետութեամբ մտածեց որ նախ զՏիգրանը սպաննէ ու վերջը Կիւրոսին դէմ պատերազմի ելլէ. աս պատճառաւ խաբէութեամբ՝ Տիգրանայ Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, որպէս զի անոր ձեռքովը սպաննել տայ զՏիգրանը: Ա ամէն բաներս ընելէն վերջը սկսաւ Տիգրանուհիին յայտնել իրեն սրտին չարութիւնները, ըսելով որ Տիգրան նախանձելով իր մեծնալուն վրայ, միացեր է Կիւրոսին հետ ու կ՚ուզէ նախ Թագաւորութիւնը ձեռ-

2. Աժդահակ լինչէն Թշնամացաւ Տիգրանայ հետ ու ինչ վարպետութիւն բանեցուց զինքը սպաննելու.

քէն առնել մեռցնել զինքը ու վերջը զՏիգրանուհին. ուստի պէտք է որ եղբայրդ մէջ առղէն վերցուի որպէս զի մեր կեանքը ապահովեայ ըսաւ, ապա թէ ոչ զքեզ սիկնուէնէ կը ձգեմ:

3. Ա բաներս փոխանակ վախցնելու զվեհմախոհ Թագուհին, աւելի քաջալերեցին զինքը որ ինքն ալ ուրիշ որոգայթներ լարէ Աժդահակայ դէմ:

Ուստի խմանալով որ եթէ չհաւանելու կերպ ցուցընէ աս բանիս մէջ՝ գէշ բաներ կրնան հետևիլ, անոր համար առջի բերան չէ թէ միայն համոզուիլ ցըցուց, հապա նաև ինքն ալ վրայ տուաւ. բայց վերջը վարպետութեամբ մը խմացուց իր եղբօրը՝ Աժդահակայ սրտին չարութիւնը: Նոյն միջոցին Աժդահակ ալ խարդախութեամբ Տիգրանայ պատգամաւոր խաբեց որ իրեն տեսութեան գայ Մարաց երկրին սահմաններուն մօտիկ. բայց Տիգրան գիտնալով Աժդահակայ դաւաճանութիւնը, ետ խաբեց պատգամաւորները ըսելով որ ի բաց ընէ կուգայ, բայց չէ թէ տեսութեան՝ հապա պատերազմելու, ու մէկէն կիւրոսին խմացուց. և դեռ ան չեկած՝ Տիգրան ժողվեց Հայոց, Կապադովկացւոց, Աղուանից ու Վրաց աշխարհքին զօրքերը ու Մարաց կողմերը գնաց: Հոն հինգ ամիսէ չափ պատերազմը ուշացուց որպէս զի կիւրոս օգնութեան գայ, ու Տիգրանուհին ալ խաղըսէ առանց ընտրուելու: Ետեմ ու քաջ Թագաւորին վարպետութեամբը երկուքն ալ եղաւ. Տիգրանուհին խաղըսեցաւ, ու հինգ ամիսէն վերջը կիւրոս ալ օգնութեան եկաւ հասաւ: Մէկէն Տիգրան պատերազմը սկսաւ, ու պատերազմին սաստկութեան առենը Տիգրան և Աժդահակ իրարու հան-

3. Տիգրանուհին երբոր եղբօրը մահուան խորհուրդը լսեց ինչ ըրաւ, ու Աժդահակ ինչպէս մեռաւ.

դիպելով, Տիգրան այնպէս ուժով խոթեց իրեն սեգը Աժդահակայ սիրտը, որ դուրս հանելու առն Թոքն ալ հետը դուրս հանեց: Ընկաւ Աժդահակ ու հոգին փչեց. բայց Տիգրան պատերազմը առաջ տանելով վանեց Թշնամիները, ու տասը հազար հոգիի չափ գերի բռնելով յաղթութեամբ Հայաստան դարձաւ: Ա պատերազմիս մէջ գրե. Թէ բոլոր յաղթութիւնը Տիգրան ըրաւ. վասն զի ինչպէս որ Խորենացին կը զրուցէ, քանի քանչի հանդիպելով պատերազմը անպարտելի կը ճնար, ինչուան որ Տիգրան զարկաւ մեռցուց Աժդահակը: Նորէն ա գործողութեանս մէջն ալ Հայոց գիւցազնին պահուած էր ընկերու աշխարհքիս վրայէն Ատուծոյ օծեալին և աշխարհքիս Թշնամին, որն որ Թէպէտ Կիւրոսին բազուկն ալ կարող էր ա բանս ընելու, բայց տարակոյս չկայ որ քանզի նին պահուած էր ա պարծանքս՝ երկնաւոր կանխագիտութեամբ: Ակի վերջը երբոր Կիւրոս Բաբելացւոց վրայ պատերազմի ելաւ, իրեն օգնութեան գնայ մեր Տիգրան Թագաւորն ալ, որոնք երկուքը միհատ Բաբելոնը առին ու յաղթութեամբ իրենց տեղը դարձան: Տիգրան այսպիսի փառաւոր յաղթութիւններով քառասունըհինգ տարի Թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ, իրեք որդի Թողուվ որ են Բաբ, Տիրան ու Վաչագն:

4. Խորենացին Տիգրանայ համար կը զուրցէ Ճշմարիտ և իրաւացի կերպով գովելով: Առաջին գովեստը ա է. « Ամենեցուն որ առ իւրովքն էին ժամանակօք նախանձելի, և յետնոցս ըղձալի՝ ինքն և ժամանակ իւր »: Ա խօսքերէս վերջը կը դնէ Հայաստանի երկանիկ վիճակը, Թէ աղգը ինչ հա-

4. Տիգրանայ կառավարութիւնները Խորենացին ինչ գովեստներով դուրս կը ցառկեցնէ.

*ըլսաուԹեան մէջ էր, զինուորուԹիւնը ինչ ասՙ ուխտեան առաջ գացած էր, արդարուԹիւնն ու խաղաղուԹիւնը որչափ ծաղկած էին, որոնք աղէկ բացատրելու համար այսպէս կը ղրուցէ. « ԽաղաղուԹեան և չինուԹեան բերող, իւղով և մեղու ըզհասակս ամենայն պարարեալ »: Ասոնցմէ զատ կը դնէ նաև այնպիսի գովեստներ ալ որ ամենայն կատարելուԹեամբ զարդարեալ մարդու մը հարկաւոր են. « Զորմէ ասէին 'ի հինան մեր որք բամբասանքն երգէին՝ լինել սմա և 'ի ցանկուԹիւնս մարմնոյն չափաւոր. մեծիմաստ և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկուԹեանս պիտանի »: Խորենացւոյն այսպիսի նշանաւոր և գեղեցիկ գովեստներուն ՀնմարտուԹեանը վրայ չենք տարակուսիր. միայն ատ բանիս իրաւունք ունի ցաւելու մարդ, որ այսպիսի ընտիր, խելացի, ազատամիտ, վեհանձն ու ազգասէր Թագաւորի մը բարեհնամ հովանաւորուԹիւնը քառատունըհինգ տարի վայելեր է Հայաստան. որն որ եԹէ հազարաւոր տարի ալ վայելեր՝ միշտ գոհ, միշտ ուրախ և միշտ շնորհակալ պիտի ըլլար զինքը պարգևողին:

ԴԱՍ Ե·

Վահագնու ևւոր յաջորդևևլրը: — Հայկազևց թագաւորութևան վերջևևալը:

1· Տիգրանայ երեք որդւոցը մէջ Վահագն թէպետ ամենէն պզտիկն էր, բայց ուրիշներէն աւելի զօրաւոր գտնուելով Հայոց վրայ իշխեց: Ասկայ խիստ քաջ մարդ էր, որուն վրայ Հայերն ու Վրացիք այլ և այլ երգեր չինելով կ'երգեն եղեր: Ինչուան նաև Խորենացւոյն աւեններն ալ, որ կ'ըսէ նաև ասոր համար թէ Վրացիք արձանը կանգնելով երկար աւեն պաշտեցին զինքը: Ասոր ցեղը Վահունիք ըսուեցաւ, որ քրմութեամբ երեն պաշտամանը նուիրուած էին:

Վահագնէն վերջը եաւէ եաւ յաջորդեցին հինգ վեց Թագաւոր ալ, որոնց վրայ պատմութիւն չունենալով կ' առիպուինք միայն անուններն յիշելով անցնելու, որ են ասոնք· Առաւան, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Բայգամ ու Վան՝ որ Շամիրամայ կերտ քաղաքը նորոգելով իր անունովը Վան կոչեց (352):

2· Վանայ որդին Վահէ հօրը տեղը անցնելով շատ քաջութիւններ ըրաւ երեն Թշնամիներուն դէմ՝ որոնք կ'ուզէին Հայաստանի տիրել: Նոյն միջոցներուն Ալեքսանդր Մակեդոնացւոյ Թագաւո-

1· Տիգրանէն ինչուան Վահէ որոնք յաջորդեցին·

2· Վահէ ով է ու ինչպէս վերջացաւ Հայկազանց Թագաւորութիւնը·

ըը սաստիկ զօրացած ըլլալով Պարսից վրայ պա-
տերազմի ելաւ։ Վահէ օգնութիւն խնդրեց անոնց,
բայց տեսնելով որ Պարսիկք չարաչար յաղթուե-
ցան և Աղեքսանդր իր վրայ պիտի գայ, սպրդիչն
անդիչն զօրք ժողվեց ու Աղեքսանդրի դէմ ելաւ,
և պատերազմի մէջ մեռնելով՝ բոլոր զօրքերը ցրուե-
ցան և Աղեքսանդր Հայաստանի տիրեց (327)։

Ահա այսպիսով վերջացաւ Հայկազանց Թագա-
ւորութիւնը որ 1800 տարի դիմացեր էր։ Անկէց
ետքը 300 տարիի չափ Հայերը երբեմն Սելևկիա-
ցւոց կողմանէ խրկուած կուսակալներու, երբեմն
ալ Հայ իշխաններու կը հնազանդէին։

3· Այս Հայ իշխաններուն մէջ երևելի եղան
քանի մը հոգի, և ամենէն երևելին Ադուարդ Սիւ-
նեաց նախարարը, որ Կապադովկացւոց Թագաւո-
րին Արիոբէոս տղուն խորհրդովը ապստամբեցաւ
Մակեդոնացւոց տէրութենէն։ Ա բանս երբոր
լսեց Պերդիկկաս, նմանեցաւ անուանով իշխանը Ա-
դուարդին վրան խնդրեց, որ Ադուարդին հետ դա-
շինք դրաւ ու հաշտութիւն ըրաւ։ Ադուարդ խա-
զաղութեամբ երեսունուվերեք տարի իշխեց ու մե-
ռաւ։ Երկրորդ՝ անուանի եղաւ Արտաւազդ Հայոց
մեծ իշխանը, որ Սելևկիացւոցմէ ապստամբելով
ինքնագլուխ սկսաւ Հայաստանի տիրել· բայց եր-
բոր Անտիոքոս շատ զօրքով վրան վազեց, Արտա-
ւազդ վախնալով դէմը ելլելու՝ ընծաներ խնդրեց
Անտիոքոսին ու սիրտը առաւ խոստանալով որ բո-
լոր հարկը վճարէ· ասիկայ չիսուն տարի իշխե-
ցին վերջը մեռաւ (212)։

4· Արտաւազդին տեղը մեծ Հայոց վրայ կուսա-

3· Ադուարդ՝ Սիւնեաց նախարարին ու Արտա-
ւազդայ վրայ ինչ գիտելիք կան·

4· Արտաշիսեան ժիջոց ինչ նշանաւոր բան մը
հանդիպեցաւ ու իրեն որո՞նք յաջորդեցին·

կալ դրաւ Անտիոքոս՝ Արտաշիսա անունով իշխանը, որուն տեղը Աննիբաղ Հայաստան փախաւ: Արտաշիսա անոր խորհրդովը Արտաշատ քաղաքը շինեց, ու ինքնագլուխ սկսաւ Թագաւորել: Երբոր լսեց աս բանս Անտիոքոս Եպիփան, վրան պատերազմի ելաւ, ու յաղթելով անոր՝ բռնադատեց որ սովորական հարկը տայ:

Արտաշիսա կ'ուզէր փոքր Հայոց վրայ ալ իշխել, որուն կուսակալն էր Զահրատ անունով մէկը· բայց մահը վրայ գալով չկրցաւ առաջ տանիլ իր խորհուրդը, և իր տեղը յաջորդեց Արտաւազդ որդին, որ տասը տարի իշխեցէն վերջը՝ Արշակ Պարթևաց Թագաւորը վրան պատերազմի ելլելով զինքը վռնտեց, ու իր Վաղարշակ եղբայրը Հայոց Թագաւոր դրաւ, ուսկից սկսաւ Արշակունեաց Թագաւորութիւնը (149):

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ր Շ Ա Կ Ո Ի Ն Ե Ա Ց

ԳԱՍ Ը.

Արշակունեաց թագաւորութեան սկիզբը։ — Վաղարշակ, Արշակ Ա։

1. Երբոր Սելևկիացիք Մակեդոնացւոց ձեռքովը արևելեան ազգերուն մեծ մասին տիրեցին, այսինքն Պարսից, Մարաց, Հայոց և Պարթևաց վրայ, երկար տաեն կուսակալներու ձեռքով տա ազգերը կառավարեցին։ Բայց Քրիստոսէ 247 տարի առաջ Պարթևաց մէջէն Արշակ անունով քաջ իշխանը տատիկ զօրանալով տպետամբեցաւ Սելևկիացւոցմէ ու շատ երկիրներու տիրեց։ Ուրիշ շատ մեծամեծ յաղթութիւններ ալ ընելով այլ և այլ զօրաւոր ազգերու դէմ, շատ երևելի եղաւ ու ամէն տեղ անունը հռչակուեցաւ։ Ատոր թոռը Արշակ Բ. նոյնպէս քաջութեամբ շատ տեղերու տիրելէն վերջը, եկաւ Հայաստանի վրայ ալ՝ երբոր Հայոց վրայ կուսակալ էր Արտաւազդ իշխանը, հալածեց զինքը հոնկէց, ու Հայոց վրայ իր

1. Արշակունեաց թագաւորութիւնը ինչպէս սկսաւ ու ո՞վ է Վաղարշակ։

Վաղարշակ եղբայրը թագաւոր դրաւ։ Աւիկայ ազգին վրայ սաստիկ սէր կապելէն վերջը՝ մանաւոր չանքով ուսումնասիրութեան եւևէ եղաւ։ ազգին պատմութիւնը գտնելու առանձին փոյթ ունեցաւ, քաղաքական կարգերն ու կառավարութիւնը շատ ծաղկեցուց, և ազգին ամէն տեսակ յառաջադիմութեանը վրայ հոգ ունեցաւ։ Ա մէն բաներս ըրաւ առանց քաջութիւնը ձեռքէ ձգելու։ Եւ տարակոյս չկայ որ այսպիսի կերպով սկսած թագաւորութիւն մը շուտով պիտի զօրանար ու շուտով ալ պիտի ծաղկէր, ինչպէս եղաւ Արշակունեաց թագաւորութիւնը։

2. Վաղարշակ աթոռը Մծբին դրաւ՝ ինչպէս որ իրեն եղբայրը ապստրեր էր. բայց իմանալով որ Մորփիւղիկէս անունով իշխան մը փոքր Հայոց տիրեր է, շատ մը զօրք ժողվեց ու անոր վրայ գընաց, երբոր անիկայ բոլոր Պոնտոսի ազգերուն առաջնորդ եղած առաջ կուգար։ Պատերազմի առեն, որովհետև Մորփիւղիկէս քաջ մարդ էր, շատ կարգ ընելով Վաղարշակայ վրայ կատաղաբար վազեց, բայց Վաղարշակայ քովի կարճ հայերը անոր վրայ վազեցին զարկին ու գետինը պառկեցուցին զինքը. ասով մեկալ զօրքերն ալ սիրտ առնելով յարձակեցան Մորփիւղիկէսին մնացած զօրացը վրայ ու այնպէս չարաչար կոտրեցին, որ անձրևի հեղեղի պէս արիւնը կը վազեր, ինչպէս կ'ըսէ Խորենացին։ Ա պատերազմէն վերջը տիրեց Վաղարշակ ան կողմի ազգերուն, ու անոնց առջևը ահաւոր եղաւ։

3. Տեսնելով Վաղարշակ Հայոց աս աստիճան

2. Վաղարշակ ինչպէս յաղթեց ու սպաննեց Մորփիւղիկէսը.

3. Ինչէն դրդուեցաւ Վաղարշակ Հայկազանց պատմութիւնը գրել տալու.

ակրասերութիւնը և ուրիշ կատարելութիւնները և Հայաստանի ծաղկած վիճակը, երբեմն աշխարհս բարքովը բնական հետաքրքրութիւն մը ունեցաւ թէ արդեօք ո՛վ եղեր է առ ազգին գլխաւորը, որ՝նք իրմէն առաջ թագաւորեր են, և արդեօք ինքը քանչերո՞ւ տեղ կը թագաւորէ՝ չէ նէ վատերու. ուստի առ բանիս համար Մար Աբաս Կատինա անունով Ասորի մը գտաւ, և անոր ապսպրեց որ Հայոց պատմութիւնը գրէ: Մար Աբաս Կատինա երբոր Հայաստանի մէջ ամբողջ պատմութիւնը չգտաւ: Վաղարշակայ հրամանովը Նինուէ գընաց, ու հոն թագաւորական գրատան մէջ գիրք մը գտաւ որ բոլոր ազգերուն պատմութիւնը կը գրէր, ու Մեծին Աղէքսանդրի հրամանովը յունարէն թարգմանուած էր. անոր մէջէն հանեց բոլոր Հայոց պատմութիւնը՝ Հայկէն ինչուան Վահէ: Վաղարշակ տեսնելով առ բանս՝ առատիկ ուրախացաւ որ քաջ մարդկանց տեղ ու քաջերու վրայ կը թագաւորէ. և իբրև իրեն ամենէն աւելի մեծ հարստութիւնը ըլլալ այն մատեանը՝ իր գանձատան մէջ պահեց: Ա՛ս պատմութեան վրայ աւելցուց Մար Աբաս Վաղարշակայ և անոր որդւոյն Արշակայ գործքերը:

4. Ամէն կողմանէ եղած յաջողութիւնները տեսնելով Վաղարշակ, սկսաւ ուրիշ բարեկարգութիւններու ալ ձեռք զարնել. քանի մը հարկաւոր օրէնքներ դրաւ. նախարարութիւններ բաժնեց, զինուորութեան կարգ դրաւ, ամէն բանի պաշտօնատէրներ որոշեց, և արհեստաւորներու կարգ կանոն դրաւ: Բայց ամենէն աւելի Վաղարշակայ խելացի գործքը և իրեն հոգին յայտնողը առ եղաւ որ օրէնքն է որ դրաւ. մէկու մը իշխանութիւն

4. Վաղարշակայ ըրած բարեկարգութիւնները որո՞նք են.

տուաւ՝ որ երբոր Թագաւորը անիրաւ դատաստան մը կամ հրաման մը հանէ, իրեն իմացընէ տուած հրամանին անիրաւութիւնը. իսկ ուրիշն մը իշխանութիւն տուաւ որ եթէ Թագաւորը անհոգ ըլլայ չարագործները պատժելու՝ միտքը ձգէ: Բագատուած անունով իշխանին ալ Արշակունեաց Թագաւորներուն Թագադիր ըլլալու պատիւը տուաւ: Որդւոցը մէջէն միայն անդրանիկը քովը պահեց, ու մէկալնոնք բոլոր Թագաւորական ընտանիքով Հաշտենից գաւառը խաւրեց: Ան կարգը պահեցին ինչուան վերջը Արշակունեաց Թագաւորները: Վաղարշակ ասանկ խելքով քանուերկու տարի Թագաւորեցին վերջը խաղաղութեամբ մեռաւ:

5. Մեր ազգին երևելի մարդկանց մէջ առաջին աստիճանի յիշատակի արժանի մարդիկներէն մէկն է Վաղարշակ, որ հաստատուն հիմ մը դրաւ կոչծանեալ տէրութեան մը, որ մէկէն զօրացաւ և ամէն բանի մէջ, ժամանակին համեմատ, չափէն դուրս աւելի առաջ գնաց: Վաղարշակայ գործքերէն յայտնի կ'իմացուի իրեն բնութիւնը, մանաւանդ պարզ կը տեսնուի ուսումնասիրութիւնը, խաղաղասէր և աշխարհաշէն հոգին. դարձեալ կը տեսնուի այնպիսի վեհանձնութիւն մը որուն նմանը պատմութիւններու մէջ քիչ կայ. աւելի դուրս կը ցատքէ ան կարգադրութեան մէջ որ մանաւոր պաշտօնատէր կարգեց իրեն տուած անիրաւ հրամանները միտք ձգելու համար: Ան բանիս մեծութիւնը ամէն մարդ կրնայ իմանալ մտածելով՝ թէ որչափ ծանր բան է Թագաւորի մը լսել իրեն ըսած խօսքին ծռութիւնը, տուած հրամանին անիրաւութիւնը՝ մանաւանդ որ հին աեւնը Թագաւորին խօսքերը պատգամի տեղ կ'ընդունէին հպա-

5. Ի՞նչ կատարելութիւններով Վաղարշակ մեր ազգին երևելի մարդկանց մէջ կը սեպուի.

տակները : Արդարութիւնն ալ նոյնպէս կը փայլի աս երկու մարդկանց իշխանութիւն տալուն մէջ, որուն վախճանն է անկրաւ գործողութիւն մը չընել :

6 · Վաղարշակայ տեղը յաջորդեց իր անդրանիկ որդին Արշակ Ա· որ հօրը առաքինութեանցը նմանելով անոր պէս քաջ ու խելացի, և ինչպէս որ Խորենացին կը զրուցէ, շատ բարեկարգութիւն ներ ըրաւ :

Աւոր առենը Պոնտացիք ապստամբելով Հայերէն՝ պատերազմ բացին · բայց Արշակ իրենց չարաչար յաղթեց, և ծովեզերքը իրեն ըրած յաղթութեանը նշան՝ կոթող մը անկեց : Կ'ըսեն թէ Արշակ նիզակ մը ունի եղեր օձի արիւնով ջուր առած · անգամ մը աս նիզակը անանկ ուժով նետեց կոթողին վրայ որ մէջը գնաց խրեցաւ : Աս կոթողը երկար առեն պաշտեցին Պոնտացիք իբրև Աստուծոյ գործ· բայց երբոր իր տղան Արտաշեսին հետ նորէն պատերազմ բացուեցաւ՝ բարկանալով ծովը նետեցին :

Արշակ կռոց սաստիկ պաշտօնեասէր ըլլալով Բագրատունեաց մէջէն երկու հոգի նահատակեց կուռք չպաշտելնուն համար · մէկալնոնք ալ սպասպեց որ թլփատութիւնը ձգեն, շաբաթ օր որսի և պատերազմի երթան և ուրիշ խարական օրէնքները Թողուն · անոնք ալ յանձն առին աս բաներս՝ բաց 'ի կուռք պաշտելէն : Արշակ տասուվրեք տարի թագաւորելէն վերջը մեռաւ, ու իրեն տեղը անցաւ Արտաշէս (114) :

6 · Վաղարշակայ ոմն յաջորդեց ·

ԴԱՍ Թ.

Արտաշէս Ա.

1. Արտաշէս Ա. քնութեամբ կորիճ, պատերազմող ու աշխարհակալութիւն սիրող ըլլալով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, շատ երկիրներ ու տիրեց ու Հայաստանը ընդարձակեց, և գրեթէ բոլոր աշխարհք դողացուց: Ինչուան իր առաջնը Պարսից Թագաւորը աթոռով պատուով ու մծծութեամբ առաջին կը սեպուէր, ու Հայոցը երկրորդ. բայց Արտաշէս Պարսիցը երկրորդ ըրաւ ու Հայոցը առաջին: Պարսկաստանի տիրեց, իր անունովը ստակ կոխել տուաւ ու հոն ալ իրեն արքունիք շինեց: Իր Տիգրան անունով որդին՝ Վարաժ ըսուած իշխանին յանձնեց, որ զինուորական արհեստ սորվեցընէ, որով ան իշխանին ցեղին անունն ալ Վարաժնունիք ըսուեցաւ: Իսկ Արտաշատ ալ Միհրդատայ տուաւ, որ Պարսից Դարեհ Թագաւորին նախարարներուն ցեղէն էր ու Վրաց բդեաշխ, և զինքը բոլոր Պոնտոսի կողմերուն կուսակալ դրաւ իրեն քաջութեանը համար:

2. Թէպէտ և մանրամասնաբար չենք գիտեր Արտաշէսին ըրած պատերազմները, բայց Խորենացին կ'ըսէ թէ արևելքէն ու արևմուտքէն այնչափ զօրք ժողվեց՝ որոնց և ոչ թիւը գիտեր: Առանկ բազմութեամբ բոլոր Յունաստանի տիրեց և զամէնքը վախցուց. Միջերկրական ծովուն մէջ շատ

1. Ո՞վ է Արտաշէս Ա.

2. Արտաշէս Ա. ինչ քաջութիւններ ըրած ունի.

նաւերով կղզիները ու ծովերը, և ուրիշ շատ աշխարհակալութիւններ ըրաւ։ Կ'ըսէ Խորենացին թէ երբոր բազմութեամբ զօրաց քալոտ տեղէ մը կ'անցնէին, հրաման կուտար Արտաշէս որ ամէնքը մէյմէկ քար նետեն, և անոնցմով բլուր մը կը ձեւանար։ Նոյնպէս նաև արեւու տաճն էթէ ամէնը մէկէն նետ նետէին՝ բոլոր դեռինը շուք կ'ըլլար կ'ըսէ։ Այսչափ անթիւ բազմութեամբ շատ յաղթութիւններ ընելէն ետքը մեծ փառքով ու յաղթանակով Հայաստան դարձաւ. բայց որովհետեւ կ'ուզէր Պարսկաստանի բոլորովին տիրել, ինքը հոն գնաց թագաւորելու, և իր Տիգրան որդին թագաւոր դրաւ Հայաստանի վրայ։ Բայց անկէց ալ նորէն զօրք ժողվեց ու դէպ'ի արեմտեան կողմերը սկսաւ արշաւել։ Արտաշէս Յունաստանէն գառնալու տաճը Արտեմիսի, Հերակլէի ու Ապողոնի պղնձէ արձանները գաւ ու իրենց քուրմերովը Արմաւիր խաւրեց։ Չգիտցուիր ինչ պատճառաւ զօրացը մէջ խռովութիւն հնչալով զօրքերէն սպանուեցաւ, քանըհինգ տարի թագաւորելէն վերջը։

3. Աղեկ գիտնալով Խորենացին որ օտարազգի մը բերնէն ելած գովեստը աւելի զօրաւոր և աւելի յարգի է, քան թէ համազգի մը բերնէն, թէպէտ և ճշմարտախօս ըլլայ, անոր համար Յունաց մատենագիրներուն տուած գովեստը առաջ կը բերէ, որոնց մէջէն մէկ երկուքը դնենք հոս. « Վեհ ինձ Արտաշէս պարթեւ քան զմակեդոնացին Աղեքսանդր. զի կալով յիւրում աշխարհին, իշխեաց Թեբայ և Բաբելոնի.... Աւար բազում. միայն թէ 'ի տէրութեանն և ոչ 'ի փախստեան էր վախճանեալ »։ Ա՛ս խօսքս կը գրուցէ Պողիկրատէս յոյն պատմագիրը։ Նոյնպէս նաև Փլեգոնիոս պատմա-

3. Օտար ազգաց մատենագիրներն ինչ գովեստներ կուտան Արտաշէս Ա.ին վրայ.

պիրը կ՚ըսէ. « Ամենայն Թագաւորաց հուժկու է ղեալ պարթեւն Արտաշէս ... յԵղբեսպոնտոս և՚ի Թրակէ զտարերացն փոխեաց զբնութիւն. ծովացնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հեւեւակելով ... առ հասարակ նմա Ելլադա մատուցանէր զահն » :

Բայց անաչառ խօսիլ ուզելով չենք կրնար չպարսաւել Արտաշէսի աշխարհակալութեան հոգին, որ ըստ ինքեան անիրաւութիւն ու բռնաւորութիւն է, և կրթեալ ու քաղաքականացեալ Թագաւորի մը չվայելեր. բայց աս ալ խոստովանելի է որ հին աեւնը իրաւունք ազգաց ըսածը և արդարութեան սահմանները ինչպէս որ պէտք է չէին հասկըցած, աս պատճառաւ է որ Արտաշէսներ, Կիւրոսներ ու Աղեքսանդրներ ամէն հին ազգի մէջ աւելի գտնուած են, քան թէ աս վերջի աեւներուն. և ըսածներնուս մեծ ապացոյց մը կրնայ ըլլալ Հռովմէական հզօր պետութիւնն որ անիրաւ աշխարհակալութեամբ, այսինքն ըստ արդի իրաւանց ազգաց՝ բռնաւորութեամբ, այնչափ մեծցաւ, գիրացաւ ու պարարտացաւ :

4. Արտաշէսի իր զօրքերէն ապանուելուն վրայ որոշ բան մը չենք կրնար ըսել, որովհետեւ որչափ որ իր բռնաւորութեանը համար կրնան ապանուած ըլլալ զինքը, նոյնչափ ալ կրնան ըրած ըլլալ զօրքերը աս բանս իրենց անկրթութենէն, և կամ նաև առանձնականաց չարութենէն :

Աղէկ ճանչցեր էր Արտաշէս որ աշխարհակալութիւնն ընելէն վերջը՝ պէտք է նաև պահել և օգտուը քալել. և թէ ազգին հանդերձեալ վիճակին հաստատուն օգուտ մը չունի. անոր համար ըսաւ. « Աւար փառացս անցաւորի » : Ա պատ-

4. Արտաշէսի մահուանը պատճառ ինչ բան կրնայ ըլլալ և ո՞րն է իրեն մէկ երևելի խօսքը.

Ջառաւ Արտաշէս անվոյթ չեղաւ ազգին քաղաքական կառավարութեանը և ապագայ բարւոյն վրայ, հապա ան մտածելով ուզեց որ իր Տիգրան որդին աղէկ կրթուի, ու չեղաւ ան աշխարհակալ ներուն պէս որ իրենց մեռնելովը՝ տէրութիւնն ալ մեռուցին և կամ ասատիկ տկարացուցին:

ԴԱՍ Ժ.

Տիգրան Բ. և իրեն քաջութիւնները:

1. Յոյները և ուրիշ հարկատու ազգեր լսելով Արտաշէսի մահը և իրեն քովի եղած զօրաց ցրուիլը, սկսան ապստամբիլ և Հայաստանի վրայ վազել. Տիգրան որ երկու տարիէ 'ի վեր Թագաւորած էր, միանգամայն պատերազմական բաներու վարժ ըլլալով և հօրը պէս քաջ պատերազմող, մէկէն զօրք ժողվեց և Միհրդատայ հետ մէկտեղ վրանին պատերազմի ելաւ, զամէնքը ցրուեց հալածեց, և սրտերնուն մէջ իր հօրը տպաւորած վախը ժամանակ չթողուց որ հանեն, հապա աւելի հատատեց:

Անկէց դառնալու առեն կեսարիա հանդիպելով տիրեց բոլոր փոքր Ասիոյ, և բոլոր ան կողմերը Միհրդատայ յանձնեց ու Պոնտոսի Թագաւոր անուանեց զինքը, որպէս զի ուրիշ անգամ չկարենան ապստամբիլ: Այլ և այլ պատերազմներով ուրիշ շատ ազգերու ալ տիրեց, և ամէն պատերազմներու մէջ քաջութեամբ յաղթող գտնուեցաւ. իր անունէն գրեթէ բոլոր աշխարհք կը գո-

1. Տիգրան Բ. Արտաշէսի յաջորդելով իր քաջութիւններովը ինչպէս փառաւորուեցաւ.

զար, անանկ որ շատ օտարազգի պատմիչներ կար-ծեցին Թէ Հայոց Թագաւորութիւնը Տիգրանէն սկսած ու Տիգրանով լմնցեր է: Հռոմայեցւոց պատմիչներէն շատը կ'ըսեն Թէ խել մը գերի Թագաւորներ կը ծառայէին իրեն, որոնց մէջէն չորսը միշտ քովէն էին, և երբոր ձիով տեղ մը երթար, անոնք իրենց Թագաւորական զգեստովը ոտքով կ'երթային չորս դիէն. նոյնպէս նաև ամէն դատաստանական և քաղաքական հանդէսներու մէջ դիմացը ոտքի վրայ կը կենային:

2. Տիգրան առ պատերազմներէն վերջը Հայաստան դառնալով, մեհեաններ չինեց, և Յունաստանէն բերած Արամազդայ, Աթենասայ, Արտեմեայ, Ափրոդիտեայ և Հերակլեսի արձանները այլ և այլ քաղաքներ դրաւ, նախարարներուն ալ խրատու ապազրեց որ կուռքերուն աղէկ պատիւ տան. և որովհետև Բագրատունիք առջի բերան յանձն չառին կռապաշտութեան բաները, անոր համար Աստղ անունով նախարարին լեզուն կտրել տըւաւ, աստուածները նախատելուն համար. ատով ձեռացածները յանձն առին զոհեալ խոզն ուտել:

3. Առ միջոցներուս գրգռուեցան ան սոսկալի ու երկարատև պատերազմները որ Մհերդատ ու Տիգրան ըրին Հռոմայեցւոց դէմ. վասն զի Մհերդատ որ Պոնտոսի Թագաւոր էր՝ Տիգրանայ օգնութեամբը շատ Թագաւորութիւններու տիրեց, և ինչպէս որ Հռոմայեցւոց պատմիչները կը գրուցեն, քանուերկու Թագաւոր կը ծառայէին իրեն

2. Տիգրան Բ. ինչ կարգաւորութիւններ ըրաւ նաև կրօնքի նկատմամբ.

3. Տիգրան ու Մհերդատ մէկմէկու հետ միանալով ինչ յաղթութիւններ ըրին Հռոմայեցւոց վրայ.

և ամենուն հետ իրենց լեզուովը կը խօսէր. անոնց մէջ գտաւ ախրեց նաև Կապադովկիոյ, և հան Թագաւոր դրաւ իր Արիարաթ որդին, ու Արիոբարզանը որ Հռովմայեցիք Թագաւորեցուցեր էին՝ վռնտեց: Բայց որովհետև ուղիղ տարեկան էր Արիարաթ, Գորդիաս անուամբ իշխան մը խնամակալ դրաւ անոր:

Կապադովկացիք Հռովմայեցւոց ապաւինեցան որպէս զի գան ազատեն զիրենք Միհրդատայ ձեռքէն. անոնք Կուռնելիոս Սիլլա քաջ զօրապետը խաւրեցին, որ եկաւ Արիարաթը հաստատեց անկէ, ու Արիոբարզանը նորէն Թագաւորեցուց:

Սաստիկ բարկանալով Միհրդատ՝ Տիգրանայ իմացուց, որպէս զի օգնութիւն խաւրէ իրեն. Տիգրան ալ իր երկու եղբայրները խաւրեց, որոնց գալը երբոր լսեց Արիոբարզան՝ Հռովմ փախաւ, որով դիւրաւ տիրեցին Հայերը, և նորէն Արիարաթը Թագաւորեցուցին Կապադովկիոյ: Ապա առնելով Միհրդատ սիրտ առաւ, և բազմութեամբ զօրաց ու շատ նաւերով սկսաւ վանել Հռովմայեցիները և ուրիշ Թշնամիները և տիրել շատ տեղերու. բայց Հռովմայեցիք նորէն երկու հարիւր հազարի չափ զօրք խաւրեցին Միհրդատայ վրայ, որոնք շատ հեղ յաղթուեցան, և Միհրդատ անոնց Ակիւղաս անուամբ զօրապետը բռնեց ու բերնէն վար հալած ոսկի լեցնելով մեռուց, ուզելով ցուցնել Թէ ինքը քան զՀռովմայեցիները աւելի ճոխ ու առատաձեռն է: Նոյնպէս նաև Տիգրան ուրիշ տեղեր մեծամեծ ջարդեր ըրաւ Հռովմայեցւոց զօրացը վրայ, ինչուան որ եկաւ Լուկուլլոս:

4. Երբոր Տիգրան Հռովմայեցւոց պատերազմին բէն քիչ մը դադրեցաւ, Սեվևկիացւոց Թագաւո-

թուԹեան մէջ խռովուԹիւն կ՚ընալով իշխանները ուզեցին որ Տիգրանայ յանձնեն իրենց ԹագաւորուԹիւնը: Տիգրան շատ զօրքով գնաց Անտիոքոսը վռնտեց հոնկէ, և գրեԹէ բոլոր Ասորւոց երկրին տիրեց, և Անտիոքիայի մէջ իրեն տեղապահ գրաւ Մազդաա անունով իշխան մը (79):

Ասորւոց Թագուհին բոլոր Ասորիները գրգռեց որ Տիգրանէն ապստամբին. բայց Տիգրան շուտ մը անհամար զօրքով վազեց Ասորւոց վրայ, առաւ Պաղեստինը և Սելեւկ Թագուհին բռնեց ու սպանեց: Երբոր լսեցին Հրեայք որ Տիգրան ան կողմերն է, վախնալով որ չըլլայ Թէ Հրեաստանի վրայ ալ վազէ՝ դեսպան խաւրեցին Տիգրանայ որ գԹայ իրենց վրայ և չարիք մը չընէ. ան բանիս համար մանաւանդ աղաչանքներ ըրին Բագրատունիք ալ, և Տիգրան խոստացաւ չարիք մը չընել իրենց Աղեքսանդրա Թագուհւոյն:

5. Տիգրան Սելևկիացւոց տիրելէն վերջը երբոր լսեց Սիլլայի մահը՝ շատ զօրքով վազեց Կապադովկիայի վրայ, և տիրեց բոլոր աշխարհքին. Միհրդատայ ալ մանաւանդ գունդ խաւրեց, որ անոնցմով շատ տեղերու տիրեց Ասիոյ մէջ. բայց երբոր Կիլիկոն քաղաքը պաշարեր էր՝ զօրաց պաշարը լմնալով յաղԹուեցաւ Լուկուլլոսէն. դարձեալ ուրիշ անգամ մը պատերազմի առեն զօրքին մէջ խռովուԹիւն կ՚ընալով զօրավարներէն շատը Հռովմայեցւոց կողմը անցան. ասով Միհրդատ հարկադրեցաւ Տիգրանայ քովը փախչիլ, որուն վրայ աւաւիկ բարկացաւ Տիգրան, ու երկու տարի չուզեց տեսնել:

6. Լուկուլլոս իմանալով որ Տիգրան Միհրդա-

5. Տիգրան երբոր լսեց Սիլլայի մահը ինչ ըրաւ.

6. Հռովմայեցիք Տիգրանակերտին ինչպէս տիրեցին ու ինչպէս նորէն առին Թողուս.

ոայ բարկացեր է, դեսպան խրկեց Տիգրանայ որ Մհերդատը իրեն մատնէ. բայց Տիգրան որ աղէկ գիտէր բարկութեան ժամանակը և չափը, եա ձամբեց դեսպանը. Մհերդատայ ալ տասը հազար զօրք տալով Պոնտոս խաբրեց: Նոյն միջոցին Լուկուլլոս պաշարեց Տիգրանակերտը, որուն վրայ եկաւ Տիգրան իրեք հարիւր հազար զօրքով. բայց տեսնելով Հռովմայեցւոց սակաւութիւնը, արհամարհելով ըսաւ. « Թէ որ դեսպան են եկեր՝ շատ են, իսկ Թէ որ Թշնամի՝ քիչ ». ոս ըսելով անհոգ եղաւ պատերազմի պատրաստուելու, որով Հռովմայեցիք սիրտ առին ու յանկարծակի վազեցին Հայոց վրայ, և Տիգրանը փախցընելով Տիգրանակերտն ալ առին: Տիգրան խմանալով իրեն ամբարտաւանութեան սխալմունքը, մեկէն հեծելազօրքը խաբրեց Լուկուլլոսի եռւէն. անոնք ձամբան Հռովմայեցւոց հեծելազօրացը հանդիպելով չարաչար կոտրեցին: Տիգրան ուրիշ շատ տեղեր ալ յաղթելով Հռովմայեցւոց, Հայաստանէն դուրս հանեց ու Ինչուան Կապադովկիա հալածեց: Վերջը նորէն սպարապետ դրաւ Մհերդատը, որ Հռովմայեցիներէն վրէժ առնելով շատ անգամ յաղթեց անոնց և բոլոր առջի կորնցուցած տեղերուն տիրեց. նոյն միջոցին Տիգրան ալ Կապադովկիոյ վրայ վազելով հոնկէց ալ հալածեց Հռովմայեցինները ու նորէն տիրեց Կապադովկիոյ:

7. Տիգրանայ ու Մհերդատայ ըրած յաղթութիւնները լսելը երբոր Հռովմ հասաւ, սաստիկ շփոթեց ու բարկացուց Հռովմայեցիները, որոնք Լուկուլլոսը ետ կանչելով տեղը Պոմպէոսը խաբրեցին: Մհերդատ շատ անգամ անոր դէմ ալ պատերազմ ընելով երբեմն յաղթեց՝ երբեմն յաղթուեցաւ. բայց իր կատաղ անուշով նախարարը

Հռովմայեցւոցմէ կաշառք առնելով ապստամբեցաւ իրմէ. նոյնպէս նաև իր փառամոլ և ինքնահաւան փառնակ անուամբ որդին ապստամբեցաւ, և Հռովմայեցւոց օգնութեամբը հօրը տեղ Թագաւոր եղաւ: Միհրդատ որ բերդի մը մէջ ամրացեր էր՝ վախնալով որ չըլլայ Թէ Հռովմայեցւոց ձեռքը կանայ, բոլոր ընտանեացը Թոյն տուաւ, ինքն ալ իր Թուրին վրայ կինալով մեռաւ:

8. Ան միջոցին որ փառնակ Միհրդատէն ապըստամբեր էր, Տիգրանայ Տիրան որդին ալ իր հօրմէն ապստամբելով Պարսից Թագաւորին օգնութեամբը եկաւ Արտաշատ քաղաքը պաշարեց. բայց Տիգրան հալածեց զՏիրանը, ան ալ նեղը մըտնելով գնաց Պոմպէոսի ապաւինեցաւ և անոր առաջնորդելովը Հայաստան մտաւ Պոմպէոս: Ան ձախորդութիւնները տեսնելով Տիգրան՝ խնացաւ որ դժուարին է Պոմպէոսի դէմ գնել, ուստի հաշտութիւն ըրաւ հետը՝ այլ և այլ տեղեր տալով Հռովմայեցւոց:

9. Տիգրան իր տեղը Թագաւորեցուց իր Արտաւազդ որդին, Թագաւորութեան երեսուն և երրորդ տարին: Պոմպէոսի տեղը խաբեցին Հռովմայեցիք Գաբինոսը. և Տիգրան Հռովմայեցւոցմէ վրէժ առնելու համար Գաբինոսին վրայ պատերազմի ելաւ, ու շատ տեղեր նորին ձեռքէն առաւ. Գաբինոս հաշտութիւն խոսեցաւ, և ծածուկ եաս տուաւ Միհրդատայ տղաքը ու ինքը Եգիպտոս գնաց:

Հռովմայեցիք խնամնալով Գաբինոսի յաղթուի-

8. Տիգրան Ինչու հաշտութիւն խոսեցաւ Պոմպէոսին հետ.

9. Տիգրան Ինչ յաղթութիւններ ըրաւ Գաբինոս և Կրասոս Հռովմայեցւոց զօրավարներուն դէմ.

լը և խարդախութիւնը, Կրասոսը խաւրեցին. անկայ նախ Երուսաղէմի վրայ երթալով անբաւ հարստութիւն առաւ Երուսաղէմէն, ու Տիգրանայ վրայ սկսաւ գալ. բայց Տիգրան Պարսից հետ միաբանած քաջութեամբ պատերազմելով Կրասոսը մեռուցին և բոլոր զօրքը ցրուեցին, հետը ունեցած հարստութիւնները առին: Անոր տեղը Ասրեսանի կուսակալ դրին Հռովմայեցիք նախ Կասիոսը, վերջը Բիբուղոսը, որոնց հետ շատ պատերազմներ ըրին Հայերը ու շատ անգամ յաղթեցին. բայց վերջապէս Հռովմայեցիք տիրեցին Ասորեստանի մեծ մասին, որովհետև Տիգրան ալ ծերացեր էր:

10. Մինդրատ մեռաւ, և Տիգրան տեսնելով որ իր որդին Արտաւազդ իրեն հոգին ու քաջութիւնը չունի, ուզեց Պարսից Արշէղ Թագաւորին հետ հաշտութիւն ընել և անոր հետ միկտեղ Հռովմայեցիները հալածել. բայց որովհետև առանց նախագահութիւնը անոր տալու չէր կրնար ըլլալ աս բանս, և տեսնելով որ իր մեռնելէն վերջը նախագահութիւնը պիտի առնեն Պարսիկք, իր կամքը վը տուաւ նախագահութիւնը Արշէղին, որ շատ ջօրք օգնութիւն խաւրեց Տիգրանին. ան ալ զօրավար դրաւ Ռշտունեաց Բարզափրան անունով քաջ նախարարը. ասիկայ բոլոր Ասորւոց երկիրը նուաճեց, եաքը Անտիգոնոսին հրաւիրելովը Հրէաստան գնաց, և հոն Անտիգոնոսի խոստացած պարգևին սիրոյն համար Հիւրկանոսը և Փասայելոսը, որ նոյն միջոցին Հրէաստանի կը Թագաւորէին, երդմնեքով և մեծամեծ դաշինքներով կանչեց ու խարդախութեամբ բռնեց, որպէս զի Անտիգոնոս կարենայ Թագաւորել. անկէ վերջը բոլոր Հիւր-

10. Տիգրան Ինչու նախագահութիւնը Պարսից տուաւ.

կանոսի հարատեւութիւնն ալ կոչտպահեցին : Բար-
զափրան գնել անունով քալ զօրավարը բաղմու-
թեամբ զօրաց հոն թողլով ինքը Հայաստան դար-
ձաւ, ու հետը բերաւ Հիւրիանոսը և շատ գերի-
ներ : Վերջէն Հռովմայեցիք նորէն զօրք խաւրե-
լով՝ Հայերը երբեմն յաղթեցին երբեմն յաղթուե-
ցան, ինչուան որ բոլորովին Հռովմայեցիք տիրե-
ցին Հրէաստանի :

11· Տիգրան յիսունըչորս տարի թագաւորեցին
վերջը՝ ութսունըհինգ տարեկան մեռաւ, բոլոր
կեանքը պատերազմով անցընելով : Իր կենացը մէջ
կը տեսնուի անպարտելի արիութիւն, անխոնջ աշ-
խատասիրութիւն, վեհանձնութիւն մտաց, ինչ-
պէս ցըցուց՝ Միհրդատը Թշնամւոյն ձեռքը չտա-
լուն մէջ· խոհականութիւն՝ որով գիտեր ըստ
տեղւոյն և ըստ պարագային նաև Թշնամւոյն խո-
նարհիլ, ինչպէս Պոմպէոսի հետ հաշտութիւն խո-
սելու մէջ և Արշեգին նախագահութիւնը տալու
առեն· կրօնից սէր, և ուրիշ գովելի կատարելու-
թիւններ : Տիգրանայ ըրած սխալմունքներն ան
էին՝ որ երբեմն չափէն աւելի իր վրան վստահա-
նալով պատշաճ զգուշութիւնները չընաւ, և քիչ
մը առեն իր մեծ փառքովը շլացաւ :

Եթէ Տիգրան կենացը մէջ Թշուառութիւն մը
ունեցաւ՝ իրեն արժանաւոր յաջորդ չունենալն է :
Թէ որ յաջորդը չկրցաւ իրեն քաջութեամբը կեն-
դանի պահել Տիգրանայ արդիւնքը, ազգը իրեն
երախտագիտութեամբը պարտական է կենդանա-
ցընել իր անմահ արդիւնքները :

11· Տիգրան քանի՞ տարի թագաւորեց և ինչ
կատարելութիւններ վրան կը վայլեն·

ԴԱՍ ԺԱ.

Արտաւազդ Ա. ոչ Արշամ:

1. Տիգրան երկրորդին յաջորդեց Արտաւազդ որ հօրը պէս քաջութեան եւեւէ ջըլլալով ինքզինքը կերուխումի և զբօսանաց տուաւ. ան պատճառաւ բոլոր ժշնամիները սկսան զօրանալ, մանաւանդ Հռովմայեցիք, որ Անտոնիոսի առաջնորդութեամբը Ասորւոց երկրին և ուրիշ շատ տեղեր տիրեցին: Ա տեսնելով ազգը սկսաւ արտքինքալ. անով Արտաւազդ խելքը քիչ մը գլուխը ժողվեց, և ասդիէն անդիէն զօրք ժողվելով դէմ դրաւ Հռովմայեցւոց. բայց որովհետև հաստատուն քաջութեան և արիւթեան սիրտ չունէր, անոր համար ալ չկրցաւ ինչուան վերջը պաշտպանել իրեն ժառանգութիւնը: Երբոր Անտոնիոս ուղեց Պարսից վրայ պատերազմի երթալ՝ օգնութիւն խնդրեց Արտաւազդէն. Արտաւազդ թէպէտ և արտաքուստ օգնեց Անտոնիոսին, բայց ծածուկ սէրն Պարսից կողմն էր, որով Անտոնիոս չարաչար յաղթուեցաւ ու Եգիպտոս փախաւ: Վերջէն Անտոնիոս խնամալով Արտաւազդայ ըրած խաբէութիւնը, շատ զրքով վրան պատերազմի ելաւ. բայց փոխանակ քաջութեամբ պատերազմելու՝ վատութիւնը ձեռք առնելով երդմունքով ու խարդախութեամբ կանչեց զԱրտաւազդը ու ոսկի շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ ու հոն Կղէոպատրա թագուհւոյն տուաւ. վերջը ինքը Հայ-

1. Անտոնիոս ինչպէս դերի բռնեց Արտաւազդը ու Հայաստանի տիրեց.

աստան գառնալով Սաորին Հայքը իր Ալէքսանդր տղուն յանձնեց, վերինն ալ Մարաց տուաւ, և էրեն անուանուելն ալ ատակ կոխեց վրան ասանկ գրուածմած։ Ինքնին Յաղնեղ Հայոսպանէ։

2։ Արտաւազդ քիչ ատեն մնաց գերութեան մէջ։ վասն զի երբոր Անտոնինոս երկու երեք տարիէն Օգոստոսէն յաղթուելով ինք զինքը սպանեց, ատ բանիս կղէոպատրա ատատիկ տրտմած կառաղութենէն Արտաւազդայ գլուխը կտրել տրաւաւ։ Իրաւ Արտաւազդ քիչ թագաւորութիւն ըրաւ, բայց իրեն մեղկութեամբը ազգին անանկ վնաս մը ըրաւ որ ինչուան վերջը մնաց։ այսինքն հարկատու ըրաւ ազգը Հռովմայեցւոց և զինքն ալ մշանջենաւոր գերի։ Խորենացին, որուն ճշմարտասիրութիւնը ամենուն յայտնի է՝ այսպէս կը գրուցէ։ « Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եղոյց։ այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով (որսալով)։ զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և սարսուկ արդարև որովայնի լինելով» :

3։ Արտաւազդայ վրայ Հռովմայեցւոց պատմիչները շատ գովեստով կը խօսին յիշելով իրեն լեզուագիտութիւնն, ոտանաւորներն ու ճարտասանական քանի մը ճառերն, որոնց համար կ'ըսէ Պլուտարքոս թէ ինչուան իր ատենը կան եղեր։ Ա վկայութիւնս Խորենացւոյն խօսքին դէմ կ'ելլէ, ինչպէս որ յայտնի է վերի առաջ բերած խօս-

2։ Արտաւազդ ինչպէս մեռաւ ու ինչ վնաս ըրաւ ազգին իր մեղկութեամբը։

3։ Արտաւազդայ վրայ ինչ գովեստի բան մը կը յիշատակեն Հռովմայեցի պատմիչները։

քերէն. բայց տարակոյս չկայ որ Խորենացին ա-
տոնք կ'ըսէ Արտաւազդայ Թագաւորութեան մի-
ջոցին համար. իսկ օտար պատմչաց Արտաւազ-
դայ ուսումնասիրութեանը համար տուած գովես-
տը խիստ հաւանական է որ Արտաւազդ իրեն գե-
րութեան առեներ առացած ըլլայ առ գովելի յատ-
կութիւնը, իբրև իրեն դառն գերութեանը միակ
մխիթարութիւն ու զեղեցիկ պարապմունք մը,
ինչպէս առ բանիս օրինակը ունինք այլ և այլ Թա-
գաւորաց վրայ: Առով Խորենացւոյն տուած պար-
առաւանքը՝ օտար պատմչաց դէմ չելլեր, որով և
Արտաւազդ պատմութեանց մէջէն իր արտառաւոր
անունը սրբելով, վերջի խնամտութեան գնաց քո-
վը գիւցաղն և վհհանձն հօր որդի ըլլալը կը յու-
ցընէ:

ԴԱՍ ԺԲ.

Աբշամ, և Աբգարու գործքերը:

1. Երբոր Արտաւազդայ գլուխը կտրեցին, Աբ-
շամ Տիգրանայ եղբօր որդին Հռոմայեցւոց ձեռ-
քէն փախչելով Պարսից Արշէզ Թագաւորին հետ
միաբան Մարերը վռնտեց և Հռոմայեցւոց ալ մեծ
կարգ մը տուաւ. առով Արշէզ վերին Հայոց տի-
րեց, Աբշամ ալ Ստորին Հայոց մինչև Կեսարիա
և Առրուց մեկ մասին:

2. Աբշամ լսելով թէ Հռոմայեցւոց վրայ Թա-

1. Աբշամ ինչ կերպով կրցաւ Ստորին Հայե-
րը Հռոմայեցւոց ձեռքէն խալըսել.

2. Հայաստան ինչու Հարկատու եղաւ Հռո-
մայեցւոց ու Աբշամայ գլխաւոր արդիւնքը որն է.

գաւորել է Օգոստոս կայսր, զեսպան խաւրեց որ Արտաւազդայ երկու տղաքը եւս տայ. բայց երբոր տեսաւ թէ լսելի չեղաւ իրեն խնդիրքը, նորէն զեսպան խաւրեց՝ խոստանալով որ տարուէ տարի հարկ տայ, ու ասիկայ եղաւ Հայոց հարկատուութեան սկիզբը. Օգոստոս յանձն առաւ ասոր գալչինքը: Քանի մը տարի վերջը երբոր Արտաւազդ կերկրին եկաւ, վերին Հայոց բնակիչները ձանձրացած Պարսից ըրած բռնութիւններէն, Օգոստոսէն խնդրեցին որ Արտաւազդայ որդին Տիգրանը իրենց թագաւոր դնէ, ինչպէս որ կատարեց Օգոստոս: Արշամ Բագրատունեաց մէջէն մէկը նահատակեց, մեկալնոնք ալ սոխպեց որ կռապաշտութիւնը յանձն առնուն. անոնք մահուընէ ազատելու համար յանձն առին բոլոր ընտանիքով: Արշամ քանուխրեք տարի թագաւորելէն վերջը մեռաւ: Արշամ եղաւ մեր այնպիսի թագաւորներէն մէկը որ իրեն ըրած բարիքովը բոլոր Հայոց սիրոյն, համարմանը ու երախտագիտութեանը արժանաւորեցաւ. վասն զի ամբողջ ազգի մը գերութեան կապերը խզեց քակեց ու իրեն առջի երջանկութեան ու փառաւորութեան մէջ հաստատեց. ու ասանկ բանս այնպիսի կերպով մը ըրաւ որ գովութեան ու զարմացման արժանի է. նախ լաւ ընտրեց թէ որո՞ւ հետ բարեկամութիւն պիտի ընէ ու ինչ կերպով. երկրորդ՝ աղեկ գիտցաւ քիչ մարդով ու քիչ արիւնհեղութեամբ մեծ գործողութիւն ընել. եաքը մեծ խոհեմութեամբ թշնամին բարեկամ գարձուց, և ըրած ապստամբութիւնը օրինաւոր երեցուց. որով և կրցաւ խաղաղութեամբ վայելել և վայելցընել իր յաջորդներուն ան մեծագոր աէրութեան ժառանգութիւնը:

3. Արշամայ յաջորդեց իր որդին Աբգար, ո-

3. Աբգար ո՞վ է ու ինչ նշանաւոր բան հանդիպեցաւ իրեն թագաւորութեանը միջոց.

բուն վրայ շատ գովեստներ կուտան Յունաց և Լատինացւոց մատենագիրները. անոր համար Հայերն ալ Աւագ այր ըսին իրեն, բայց Յոյներն և Լատինները չկրնալով շետակ հնչել՝ Ապակար կամ Աբգար կ'ըսէին, ուակից սովորութիւն ճնաց Աբգար ըսելու: Աբգարու Թագաւորութեան առջի տարիները Ջրհատոս Տէրն մեր Ծնաւ Հրեաստանի մէջ. նոյն միջոցին Օգոստոս կայսրն ալ Հրաման հաներ էր աշխարհագիր ընելու բոլոր իր տէրութեան մէջ. միանգամայն Հրաման հանեց որ ամէն մեհեաններուն մէջ դրուի իր արձանը. Հերովդէս որ Հրեից կը Թագաւորէր ուղեց որ իր արձանն ալ մեկտեղ կանգնուի Հայոց սահմաններէը, բայց Աբգար յանձն չառնելով սաստիկ պատերազմ ըրաւ Հերովդեսի եղբօր որդւոյն հետ, որ իրեն դեմ եկեր էր, ու բոլոր ջարդեց անոր զօրքերը: Նոյն օրերը մեռաւ Հերովդէս, ու տեղը անցաւ Արքելայոս:

4. Հերովդեսին կուսակիցները տեսնելով որ Աբգարու պատերազմով չկրցան յաղթել, ուղեցին վրան ամբաստանութիւններ ընելով Օգոստոսի աչքէն հանել. բայց Աբգար Հռոմ գնաց, և հոն իրեն սիրելի և խնամատուն կերպովը անանկ հաճոյ եղաւ ամենուն, և մանաւանդ Օգոստոսի որ զբաժուարաւ Թողուց զինքը իր հայրենիքը դառնալու: Պրոկոպիոս յոյն պատմագիրը կը պատմէ Թէ Աբգար այսպիսի վարուեստութիւն մը բանեցուցած ըլլայ որպէս զի Օգոստոս զինքը ազատ Թողու: Օր մը Աբգար իր ծառաներովը որսի կ'երթայ, ու խել մը ողջ վայրի կենդանիներ բռնելով Հռոմ կը բերէ, և իւրաքանչիւրին բռնուած տեղն մէյմէկ քիչ հող ալ հետերնին կ'առնէ: Եր-

4. Աբգար ինչու Հռոմ գնաց ու Պրոկոպիոս ինչ կը պատմէ իրեն վրայ.

բոլ իրիկունը Օգոստոս Թէաորոն մտաւ, Աբգար հրամայեց ծառաներուն որ բերած հողերնին զատ զատ դնեն ու վերջը կենդանիները միաբան արձակեն. երբոր ատ բանս ըրին՝ մկկէն իւրաքանչիւր կենդանի ինչ հողն վրայ որ մեծցած ու սնած էր՝ հոն գնաց անշփոթ. զարմացաւ Օգոստոս ատ բանիս վրայ ու պատճառը հարցուց Աբգարու. և իմանալով հանձարեղ Թագաւորին միտքը՝ հրամայեց տուաւ որ պատուով իր տեղը դառնայ, Թէպէտև մեծ վնաս եղաւ ատ բանս Օգոստոսի:

5. Օգոստոսի մեռնելէն վերջը երբոր Տիբեր տեղը անցաւ, Աբգար խնդակցութեան դեսպան խրկեց իրեն. բայց անիկայ փոխանակ դեսպաններըը պատուելու՝ պատժեց: Ա բանիս վրայ սաստիկ նեղացած Աբգար՝ սկսաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել, ու Եգեսիան ամրացընելով հոն փոխադրեց աթոռը. բայց ատ դիտաւորութեանը արգելք եղաւ Պարսից Արշաւիր Թագաւորին մահը, որուն տղոցը մէջ խառնութիւն կընալով հարկ եղաւ որ Աբգար Պարսկաստան երթայ զնրենք խաղաղցընելու համար: Սիայն Արտաբացոց Աբեա Թագաւորին օգնեց, որով ան ալ Հերովդէս Ջորջորդապետին յաղթեց:

6. Պարսկաստան Աբգարու վրայ բորոտութիւն եկաւ, և երբոր ամէն տեսակ մարդկային հնարքներէ յոյսը կտրեց՝ լսելով Քրիստոսի հրաշքները, դեսպան խրկեց իրեն՝ աղաչելով որ գայ զինքը բժշկէ: Իսկ իրեն Քրիստոսէ հետ ծանօթանալը ատ կերպով եղաւ:

Երբոր Հերովդէս Արետէն յաղթուեցաւ Աբգա-

8. Աբգար Հռոմայեցւոց հետ բնչպէս ապրուեցաւ.

6. Աբգար Քրիստոսի հետ բնչպէս ծանօթացաւ ու բորոտութիւնը բնչպէս անցաւ.

բաւ օգնութեամբը, Հերովդէս ուզելով Աբգարէն
աս բանիս վրէժը առնել՝ զրպարտութիւններ ընե-
լով ամբաստանեց զինքը Հռովմայեցւոց առջև: Աբ-
գար ինք զինքը արդարացընելու համար դեսպան-
ներ խաւրեց Երուսաղէմի մէջ եղած Հռովմայե-
ցւոց զօրավարին. հոն դեսպանները տեսան ու լսե-
ցին Քրիստոսի ըրած հրաշքները, ու դարձան ե-
կան պատմեցին Թագաւորին: Աբգարու երկնային
ու երկրաւոր խնամատարութեամբ լցուած սիրտը՝ ծա-
գեց մէկէն աստուածային հաւատոյ պայծառ լոյ-
սը, որով իսկոյն հաւատաց Յիսուս Քրիստոս ըսած-
ներն՝ կամ Աստուծոյ որդի է և կամ երկնային բա-
րերար աստուածներէն մէկը որ իրեն ըրած գերա-
ծայրեալ բարիքներովը զմարդիկ Աստուծոյ հետ
պիտի միաւորէ: Ուստի Թուղթ մը գրեց Քրիս-
տոսի, ու իր Անանէ սուրհանդակին ձեռքովը խաւ-
րեց, աղաչելով որ գայ զինքը բժշկէ ու Եդեսիա
բնակի հանդիստ. դեսպանին հետ պատկերահան
մ՚ալ խաւրեց, որ եթէ Քրիստոս չգայ՝ դէմքը
օրինակէն ու բերէն: Դեսպանները հասան Երու-
սաղէմ ու կ՚ուզէին Քրիստոսի հետ տեսնուիլ ան
օրը՝ որ Քրիստոս յաղթանակով Երուսաղէմ կը
մտնէր. ուստի Փիլիպպոս առաքելոյն քովը մօտե-
նալով խնդրեցին որ Քրիստոսի հետ տեսնուին.
Քրիստոս մեծ ուրախութիւն ցուցընելէն եաքը՝
հրամայեց Թովմաս առաքելոյն որ Աբգարու Թուղ-
թին պատասխանը տայ, որուն մէջ նախ իրեն
հաստատուն հաւատքը գովելէն եաքը՝ խօսք կու-
տայ որ իր յարութենէն վերջը առաքեալներէն
մէկը կը խաւրէ զինքը բժշկելու համար: Ան միջո-
ցին պատկերահանը անկիւն մը քաշուած նուէր էր
Քրիստոսի դէմքը օրինակելու. բայց երկար տեսնն
աշխատելէն վերջը չկրցաւ օրինակել. ան տեսնն
կանչեց Քրիստոս զպատկերահանը, ու ձեռքը լաթ
մը առած՝ երեսին վրայ բռնեց. մէկէն տպաւո-

յուեցաւ իր ասուածային ու լուսաւոր դէմքը լանջին վրայ։ Դեսպաններըը մեծ ուրախութեամբ դարձան, ու Թագաւորին հետ մէկտեղ կ'ապաւէին խոստացուած առաքելոյն գալստեանը, որն որ քիչ առնէն եկաւ, և էր Թադէոս առաքեալը։ Երբոր Թադէոս առջի անգամուն ձեռքը դրաւ Աբգարու վրայ, մէկէն սրբեցաւ Թագաւորին բորոտութիւնն ու բոլորովին բժշկեցաւ. վերջը մկրտեց զԹագաւորն ու բոլոր եղեսացիքը և իրեն տեղը եպիսկոպոս դնելով Ադդէ անունով մէկը՝ որ Թագաւորին խոյրարարն էր, ինքը գնաց որ Հայաստանի մէկալ տեղերն ալ քարոզէ քրիստոնէական հաւատքը (32)։

7. Աբգար քրիստոնեայ ըլլալէն եաև երկու իրեք տարի ալ ապրեցաւ ու մեռաւ խաղաղութեամբ, երեսունուերք տարի Թագաւորելէն վերջը։ Այնպիսի յիշատակ մը Թողուց Աբգար որ մէկ Թագաւոր մը չէ ունեցած։ Աբգարու հեզութիւնը, խոհեմութիւնը, իմաստութիւնը, պարկեշտ վարքը և ուրիշ առաքինութիւնները կը քարոզեն իրեն պատմութիւնը և իրեն վախճանը, որով երկրաւոր Թագաւորութենէն երկնաւոր փառքը և յաւիտենական ուրախութիւնը հրաւիրուեցաւ։

7. Աբգար քանի՞ տարի Թագաւորեց ու ինչպէս.

ԴԱՍ ԺԳ.

Անանէ, Սանասարուկ, Երուանդ և Արտաշէս Բ:

1. Աբգարու մեռնելէն վերջը Թադաւորութիւնը երկու բաժնուելով՝ մեծ շփոթութիւն ընկաւ աղգին մէջ, վասն զի Անանէ Աբգարու որդին՝ Հայաստանի մէկ մասին տիրեց, և Սանասարուկ Աբգարու քեռորդին մէկալ մասին տիրեց մի և նոյն ժամանակի մէջ, իրարու հակառակ: Անանէ որ հօրը տեղը Եդեսիա Թագաւորեց՝ քրիստոնէութիւնը վերցուց ու սկսաւ մեհեաններըը բանալ և քրիստոնեաները մարտիրոս ընել, ինչպէս Աղդէ հայրապետը և ուրիշները: Բայց ինքն ալ Աստուծմէ իրեն պատիժը գտաւ. վասն զի իր նոր շինած պալատին մէջ սիւն մը կանգնել տալու ատեն՝ սիւնը վրան կնաալով մեռցուց զինքը:

2. Սանասարուկ լսելով Անանէի մահը՝ մեծ ուրախութեամբ մէկէն զօրք ժողվեց ու սկսաւ Եդեսիոյ վրայ գալ. երբոր լսեցին ասանիկ Եդեսացիք գեսպան խաւրեցին ըսելով որ սիրով կ'ընդունին զինքը թէ որ իրենց քրիստոնէական հաւատքին չի գալչի. ասանիկ երդմունքով յանձն առաւ Սանասարուկ, բայց եաքէն երդմանը դէմ ըրաւ ու նահատակեց Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները, և իր աղջիկը Սանդուխտ կոյսը, որ առաջին մարտիրոս կոյսը եղաւ, և ուրիշ շատ մարդիկ:

1. Անանէ ոմն է ու ինչպէս մեռաւ.

2. Սանասարուկ խարդախութեամբ Եդեսիա մտնալով ինչ անգթութիւններ ըրաւ ու ինչ պատահեցաւ կայ Հեղինէ Թագուհիին վրայ.

Բոլոր Աբգարու ընտանիքն ալ Թրէ անցուց, և միայն աղջիկներն ու Աբգարու կինը որ Հեղինէ կ'ըսուէր և իրեն ալ շատ բարիքներ ըրած էր, ապրեցուց: Ասոր համար կ'ըսեն Թէ շատ բարեպաշտ ըլլալով չուզեց կռապաշտից մէջ բնակիլ. ուստի Երուսաղէմ գնաց ու հոն սովի մը առեն բոլոր ունեցածը ծախելով բնակչաց ցորեն կը բաժնէր: Ա՛ս ըրած բարեացը համար գերեզման մը շինեցին Հրեայք Երուսաղէմայ դրան առջև:

3. Սանատրուկ Թէպէտև քրիստոնեաները հալածեց, բայց շատ շինուածներ ալ ըրաւ ընդհանուր Հայաստանի՝ մանաւանդ Մծբնայ մէջ. վասն զի ան քաղաքը երկրաշարժէ մեռած ըլլալով, բոլոր քաղաքը փլցուց ու նորէն շինեց շատ գեղեցիկ. և քաղքին մէջ իր արձանը կանգնել տուաւ, ձեռքն ալ դրամ մը, ըսել ուզելով Թէ բոլոր ունեցածը ծախեր է քաղքին շինուածները համար և միայն ան մնացեր է: Սանատրուկ երեսունը չորս տարի Թագաւորեցէն վերջը որսի մէջ պատահմամբ նետով զարնուելով մեռաւ: Կը տեսնուի որ Սանատրուկ մանաւանդ ախորժակ ունի եղեր քաղաքական շինուածներ: Բնուածեամբ խոտամանկ և ձարտար եղած պիտի ըլլայ որ կրցեր է այնչափ տարի Թագաւորել իրեն երդմանը դէմ ընելէն վերջը: Բայց Սանատրուկոյ մեծ անարդանք է իրեն երդմանը վրայ Հայաստան չկենալը, անդրմուածեամբ Աբգարու ցեղը Թրէ անցընելը, և իր աղջիկը սպաննելը (67):

4. Սանատրուկէն ետքը քիչ մը տեղ շփոթե-

3. Սանատրուկ ինչ շինուածներ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

4. Սանատրուկին մեռնելէն ետքը ինչպէս շփոթեցաւ Թագաւորութեան յաջորդութիւնը ու ով է Երուանդ.

ցաւ բուն օրինաւոր թագաւորութեան յաջորդութիւնը. վասն զի Սանասարկոյ առնը Արշակունի կին մը երկու որդի ունէր Երուանդ ու Երուազ անուններով: Երուանդը կարիճ, հակայ, անուշ բարքով ու ճարտար մարդ մըն էր, որ Սանասարկոյ առնը շատ քաջութիւններ ըրած ըլլալով ամենուն սիրելի եղած էր. ուստի երբոր Սանասարուկ մեռաւ՝ քաղցր կերպերով և առատաձեռնութեամբ բոլոր նախարարներուն սիրտը իրեն քաշեց և թագաւոր եղաւ Հայոց վրայ, առանց Բագրատունի ասպետէ պահպանելու: Բայց վախնալով որ չըլլայ թէ Սանասարուկին տղաքը իրեն թագաւորութեանը արգելք ըլլան՝ զամէնքն ալ Թրէ անցուց, բայ'ի պզտիկ տղէ մը որ Սմբատ Բագրատունին մեծ գժուարութեամբ Պարսկաստան փախուց, և տղուն անունն էր Արտաշէս. բայց Երուանդ խմանալով աս բանս և միշտ վախի մէջ ըլլալով որ օր մը չըլլայ նէ օր մը թագաւորութիւնը կրնայ ձեռքէն առնել, շատ թղթեր դրեց Պարսից Դարեհ թագաւորին և Սմբատին, որ Արտաշէսը մեռցընեն, ըսելով որ Մարի տղայ է ու Արշակունի չէ. բայց խնդիրքը ըսելի չեղաւ:

5. Երուանդ բարակամիտ և կանխատես մարդ ըլլալով յայտնի կը գուշակէր թէ քանի որ Արտաշէս ողջ է՝ անկարելի է իրեն թագաւորութեան հաստատութիւնը, անոր համար սկսաւ պատրաստութիւններ տեսնել. աս պատճառաւ օգտակար սեպեց բոլոր ազգին իշխանութիւնը իրեն ձեռքը առնել: Մինչդեռ այց երկիրը՝ որ Հայաստանէն դուրս էր՝ Հռոմայեցւոց տուաւ ու ինքը վերին Հայքը առաւ. և որպէս զի Հռոմայեցիները իրեն

5. Երուանդ իր թագաւորութիւնը ապահովցընելու համար ինչ գործութիւններ ու պատրաստութիւններ ըրաւ.

բաբելամ ընէ՝ աւելի հարկ տալ խոստացաւ. արքունիքը փոխեց Արմաւիր տարաւ աւելի ամրոյ Թեանը համար. Երասխ գետին վրայ ալ շինեց Բուանդաշատ քաղաքը, որ ինչպէս կը տորպռէ Խորենացին՝ Հայաստանի գեղեցիկ, զուարճալի ու ամուր քաղաքներէն մէկը եղաւ: Նոյնպէս շինեց Ախուրեան գետին վրայ Բագարան անունով քաղաք մը ու բոլոր կուռքերը հոն փոխադրեց, և քրմապետ դրաւ իր Երուազ եղբայրը: Երուանդայ բոլոր առ ամէն պատրաստութիւնները պատրաստ ելան. վասն զի Սմբատ առպետը իրեն լաւ բարուքը և շատ քաջութիւններ ընելով Պարսից նախարարներուն առջև, ամենուն սիրելի եղաւ. ուստի Պարսից նախարարները աղաչեցին Դարեհին որ Սմբատ ինչ բան որ խնդրէ՝ կատարէ Թագաւորը: Սմբատ ալ խնդրեց որ Արտաշէսը հաստատէ իր Թագաւորութեանը մէջ՝ օգնութիւն տալով Արտաշէսին որ կարենայ յաղթել Երուանդայ: Յանձն առաւ Դարեհ օգնելու. ուստի շատ մը զօրք տուաւ Սմբատայ ու Արտաշէսի և Երուանդայ վրայ խաւրեց:

6. Երուանդ Ուտէացւոց վրայ պատերազմի գացեր էր՝ երբոր լսեց Արտաշէսի գալը. հոն պահապան Թողուց զօրաց մէկ մասը և նախարարներէն շատը, ու ինքը գնաց առատ վարձքով զօրք ժողվելու Վրաց, Միջագետաց և Կեսարիոյ կողմերէն:

Արտաշէս առանց գիտնալու Թէ Երուանդ Ուտէացւոց աշխարհքէն հեռացեր է՝ ան կողմերը գնաց բոլոր զօրքովը. երբոր իմացան տեղացիք և Երուանդայ ձգած զօրքերն ու նախարարները Արտաշէսի գալը, բոլոր իրեն կողմը անցան. ասանկ նաև Երուանդայ քովի եղած նախարարներուն

6. Արտաշէսի և Երուանդայ մէջի պատերազմը ինչպէս եղաւ ու Երուանդ ինչպէս մեռաւ.

միաքը պղտորեց, որոնցմէ շատը կ'ուզէին Արտաշէսի կողմը անցնիլ: Արտաշէս և Սմբատ տեսնելով Երուանդայ զօրաց բազմութիւնը՝ ամենևին չէին վախնար, միայն մեծ վախ ունէին Արգամ նախարարէն, որովհետև կորիճ մարդ էր և տեղաւոր զօրաց մեծ մասը իր ձեռքն էր. անոր համար պատերազմին առաջ ծածուկ խնայուցին Արգամայ որ եթէ իրենց կողմը անցնի, Երուանդայ տուած պատիւները պահելէն զատ՝ կրկին պատիւ և կրկին հարստութիւն կուտան իրեն: Ա պատճառաւ պատերազմին սկիզբը մեկին Արգամ Արտաշէսի կողմը անցաւ, և Սմբատայ գնդին հետ միացաւ, և երկու գունդը մեկտեղ յարձակեցան Երուանդայ բանակին վրայ. պատերազմին տաքցած միջոցը Երուանդայ բանակին մեկ մեծ մասը Արտաշէսի կողմը անցնելով անոր զօրացը հետ միաբան սկսան ջարդել Վրացիքը և ուրիշ վարձուոր զօրքերը. բայց որովհետև Երուանդ Տուրացւոց շատ պարգևներ խոստացեր էր՝ որ Արտաշէսը մեռցընեն, երբոր անոնք կատաղաբար Արտաշէսի վրայ կը վազէին՝ Գիսակ անունով քաջ նախարարը առաջ նետուեցաւ ու արդիլեց իրենց յարձակմունքը, ու ինքը դեղեցիկ ու գովելի տիրասիրութեամբ մեռաւ՝ գլխուն կէսը կորնցընելով. ասանկ կորձուածքով ինչուան իրիկուն պատերազմելով՝ բոլոր Երուանդայ զօրքը ցրուեցին. իսկ ինքը Երուանդ հազիւ կրցաւ Երուանդաշատ փախչելով ազատիլ: Երկրորդ օրը հրաման ըլաւ Արտաշէս որ մեռելները թաղեն. և քիչ մը զօրքերը հանգչեցընելէն ետքը գնաց Երուանդաշատի վրայ ու քաղաքը առաւ: Երուանդ իր որդւոյ Թաւրոսի պալատին մէջ պահուըտած ըլլալով, զինուոր մը գաւաւ զինքը ու զարկաւ սպաննեց քանի տարի թագաւորելէն վերջը: Ասանկով լմընցուց Երուանդ իր թագաւորութիւնը, որուն վրայ

յայանի կը տեսնուի որ անիրաւութեամբ Թագաւոր եղողը ոչ երբեք կրնայ խաղաղութեամբ Թագաւորել, թէպէտ և գէշ մարդ ալ չըլլայ ու շատին սիրելի, ինչպէս էր Երուանդ· Արտաշէս փառաւոր գերեզման չունեցաւ Երուանդայ վրայ՝ մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար (89)։

7· Երուանդայ մեռնելէն վերջը Սմբատ Թագաւորական գահոյքին մէջ փնտռելով գտաւ Սանատրուկայ Թագը, ու բոլոր Հայոց վրայ Թագաւոր սկսաւ կոչել զԱրտաշէսը· Արտաշէս Թագաւոր ըլլալուն պէս՝ Մարաց և Պարսից զօրքերը եաս խաւրեց շատ պարգեւներ տալով անոնց· Արքային ալ, ինչպէս որ խոստացեր էր, իրեն երկրորդը ըրաւ, ուրիշ շատ պատիւներով ու հարստութիւններով։ Նոյնպէս Սմբատն ալ շատ պատիւներով մեծարեցին եաքը՝ ընդհանուր սպարապետ անուանեց, հազարապետ տան արքունի և ամէն պաշտօնատեարց վերակացու· ուրիշ ամէն իրեն բարերարներուն ալ իրենց արժանացը համեմատ պատիւներ ու պարգեւներ տուաւ։

8· Անկէց եաքը Արտաշէս հրամայեց Սմբատայ որ երթայ Երուանդայ Երուազ եղբայրը սպաննէ· Սմբատ ալ կատարեց հրամանը, ու բոլոր անոր ունեցած հարստութիւնները Արտաշէսի բերաւ· Արտաշէս ալ անոնց վրայ շատ անգին բաներ աւելցընելով Սմբատայ տուաւ որ Դարեհի տանէ՛ի շնորհակալութիւն և՛ի փոխարէն անոր ըրած բարեացը։

7· Արտաշէս ինչպէս Թագաւոր պսակուեցաւ ու ինչ փառքի հասուց զՍմբատ և իրեն ուրիշ սիրելիները·

8· Երուազ ինչպէս մեռաւ·

9· Արտաշէս երբոր իրեն աղնիւ բնութեամբը ամենուն սիրելի եղաւ և ամէն բան կարգի դրաւ, սկսաւ ուսումնական և արուեստին բաներուս ուշ գնել· Երասխ և Մեծամոր գետերուն քով Արտաշատ քաղաքը մեծցուց ու զարդարեց, մեծամեծ պալատներ շինելով, և հոն փոխադրեց իր աթոռը: Ինչուան իր առեները, ինչպես կ'ըսէ Խորենացին, կամուրջ, նաւակ և ուրիշ սոնց նման բաներ խիստ անկատար էին· բոլոր Արտաշէս շինել տըւաւ, վարձ խոստանալով անոնց որ նոր նոր գիւտեր գտնան: Այլ և այլ տեղերէ գաղթականներ բերելով բոլոր Հայաստանը բազմամարդ ըրաւ· երկրագործութեան վրայ ազգին մէջ այնպիսի սէր ձգեց, որ ինչպես կ'ըսէ Խորենացին՝ Հայաստանի մէջ ափ մը տեղ չկար Արտաշեսի ժամանակ որ մշակած չըլլար, ինչուան նաև լեռներուն վրայ ալ, բոլոր երկիրը այլ և այլ սահմաններ բաժնեց՝ սահմանագլուխները կոթողներ կանգնելով: Ամէն գիտութեանց և արհեստներու վարժարաններ բացաւ· և ահա աս բաներովս ոչ իր ազգին միայն սիրելի եղաւ, հապա նաև Պարսիկք, Մարք և ուրիշ ազգերը լսելով կը նախանձէին Հայաստանի սքանչելի վիճակին վրայ, և շատերն ալ Հայաստան կուգային:

10· Երբոր Արտաշէս այսպիսի բարեկարգութեանց եռանդ էր, Ալանները ուրիշ լեռնցի ազգերու հետ միաբանած Հայաստան վազեցին· բայց Արտաշէս բազմութեամբ զօրաց վրանին ելլելով, պատերազմի առեն Ալանաց թագաւորին որդին

9· Արտաշէս ինչ բարեկարգութիւններով զարդարեց զՀայաստան ու ինչ փոյթ ունեցաւ ուսմանց և արուեստից·

10· Ալաններուն ինչպես յաղթեց Արտաշէս ու ինչ կերպով հաշտութիւն ընելու գնաց·

գերի բռնեց · ասա պատճառաւ սկսան հաշտութիւն խնդրել Ալանները Արտաշեսին · բայց անիկայ չանձն չէր առներ, ինչուան որ Ալանաց Թագաւորին Սանդինիկ անուշով աղջիկը աղաչելով Արտաշեսի սիրտը վաստրկեցաւ · որով Արտաշես հաշտութիւն ընելով արձրկեց Թագաւորին որդին, ու իրեն Թագուհի ըրաւ Սանդինիկը :

11 · Արտաշես որչափ որ կը ջանար ուրիշի Թըշուառութեան պատճառ չըլլալ, այնչափ ալ ինքը վշաեր ունեցաւ իր որդւոցը կողմանէ · վասն զի վեց որդի ունէր՝ որ են Արտաւազդ, Վրոյր, Մաժան, Տիրան, Զարեհ, Տիգրան · ասոնք ընդհանրապէս իրարու և ուրիշներու պատուոյն վրայ նախանձելով խռովութեանց պատճառ եղան · բայց ամենէն աւելի Արտաւազդը բնութեամբ տաքբիւն, հպարտ ու նախանձոտ ըլլալով Արքամայ վրայ ամբաստանութիւններ ըրաւ ու անիրաւ տեղը սպանել տուաւ, բոլոր անոր ցեղին երևելի մարդիկը Թրէ անցուց, ու ինքը առաւ անոր իշխանութիւնը : Նոյնպէս նաև Սմբատայ վրայ նախանձելով կ'ուզէր սպանել · ասա բանս երբոր լսեց Արտաշես՝ սաստիկ խռովեցաւ և չէր գիտեր ինչ ընելիքը · բայց հայրենասէրն և մեծախորհուրդն Սմբատ իր կողմանէ յօժարամիտ հրաժարելով սպարապետութեան պաշտօնէն ամենայն խռովութեանց առաջը առաւ, և Արտաւազդ իր ամբարտաւանութեան վախճանին հասնելով Սմբատին տեղը սպարապետ եղաւ : Տեսնելով ասա բանս մեկալ եղբայրները սկսան նախանձիլ Արտաւազդայ վրայ · Արտաշես ալ ասա իրենց նախանձը և խռովութիւնը դադրեցընելու մտքով, Վրոյրը որ խելացի մարդ էր, Թագաւորական տանը հաշա-

11 · Արտաւազդ քանի որդի ունեցաւ ու ինչ վշաեր քաշեց անոնցմէ :

բռնեա դրաւ, Մաժանը քրմապետ. իսկ զօրքը պնեաւոր չորս գունդ բաժնեց. Արևելեան՝ որ Արտաւազդայ յանձնեց, Արևմտեան՝ որ Տիրանայ տուաւ, Հարաւային՝ որ Սմբատայ յանձնեց, ու Հիւսիսայինը Զարեհի:

12. Երբոր տեսաւ Արտաշէս որ ամէն բան կարգի մէջ է՝ չուզեց վհատիլ Հռովմայեցւոց տօնական հարկը, այս պատճառաւ բարկացաւ Տրդատեան ու շատ զօրք խաւրեց Հայոց վրայ: Առաջ Արտաւազդ դիմացնին ելաւ արևելեան ու հիւսիսային զօրքովը, բայց չկրնալով դէմ դնել Հռովմայեցւոց՝ երբոր սասակ ալիան յաղթուեր՝ պատերազմին վերջերը հասաւ Սմբատ հարաւային գնդովը, ու քաջութեամբ պատերազմելով յաղթեց Հռովմայեցւոց, և անոնց եռանդն ինալով հալածեց Հայաստանէն դուրս: Երբոր աս բանս լմնցաւ Տրդատեան կայսրը, անթիւ զօրքով սկսաւ անձամբ Արտաշէսի վրայ գալ. ուստի մեկէն Արտաշէս փութաց շատ ընծաներով դիմացը ելաւ և Տրդատեան ցասումը խնդեցուց՝ բոլոր հարկը տալով:

13. Անկէ քանի մը տարի ետքը Արտաշէս Մարաց կողմերը գացած ըլլալով հիւանդացաւ. անոր համար մեկէն Բակուրակերտ տանը դարձաւ, ու չկրնալով աւելի առաջ գալ՝ մեռաւ հոն քառասունըմեկ տարի թագաւորելէն ետև: Փառաւոր հանդէսներ ըրին Արտաշէսի թաղմանը՝ ինչպէս որ կ'աւորպէրէ Խորենացին Արիստոն Փիլադելփիացիին խօսքերէն առնելով. «Դագաղքն էին ոսկեղինք, գահոյքն և անկողինք բեհեզեայ, և պատմուճանն

12. Ի՞նչ պատերազմի առիթ ունեցաւ Արտաշէս Հռովմայեցւոց հետ ու ինչպէս նորին հաշտուեցաւ.

13. Արտաշէս ինչպէս մեռաւ ու ի՞նչ հանդիսաւոր թաղումն ըրին իրեն.

որ զմարմնոյն՝ ոսկեթել. Թագ կապեալ՝ ի գլուխն, և զէնն ոսկով առաջի եդեալ» : Անկէց վերջը կ՚սորագրէ պաշտօնատեարդ կարգը, և թէ ինչպէս բոլորը ազգին թէ ազնուականաց և թէ ռամկաց առ հասարակ մեծ տրտմութեան պատճառ եղաւ Արտաշեսի մահը, և թէ ինչպէս շատ մարդիկ իրենք զիրենք կամաւորապէս զոհ ըրին՝ ողջ ողջ Արտաշեսի գերեզմանը նետուելով: Անկարելի բան է որ մարդ առ պատմութիւնը կարդալէն վերջը կարենայ իր ազգին հետ մէկտեղ վշտակից ու ցաւակից չըլլալ որ այսպիսի թագաւորէ մը զրկուեր է, որ ամենուն իրաւցընէ հայր, Հայաստանի բարերար, ազգին պարծանք, ամենուն վշտակից, ամենուն երջանկութեանը պատճառ եղեր է:

14. Արտաշեսի հետ մէկտեղ գովութեան արժանի է նաև Սմբատ Բագրատունի սպասեալը, որ շատ երևելի եղաւ իրեն քաջութեամբը, ինչպէս որ տեսնուեցաւ պատմութեան մէջ: Սմբատայ ախթասիրութիւնը, հասարակաց օգուտը մտածելը՝ առանց իր շահը մտածելու, որով սպարապետութենէն կամաւ հրաժարեցաւ, որպէս զի խռովութիւն չըլլայ. հաւատարմութիւնը, վեհանձնութիւնը, և ուրիշ կատարելութիւնները ոչ միայն իր յիշատակը անմահացընելու արժանի կ՚ընեն, այլ և աշխարհքիս մեծամեծ մարդկանց ու մեծանունն սպարապետաց կարգը կ՚անցընեն զինքը: Սմբատ ինչուան խոր ծերութիւն ապրելով խաղաղութեամբ մեռաւ (128):

14. Ի՞նչ առանձին գովեստից արժանի է նաև Սմբատ Բագրատունին.

ԴԱՍ ԺԴ.

Թագաւորք վերին Հայոց :

1. Թէպէտ և վերին Հայոց Թագաւորութիւնը պզտիկ և մանաւանդ բան ըլլալով, մեր ազգին պատմութեանը հետ խիստ այնչափ վերաբերութիւն մը չունի, բայց եղած գործողութիւնները Հայաստանի մէկ մասին մէջ ըլլալով, ան պատճառաւ համառօտ յիշատակութեան մը արժանի են. մանաւանդ որ Հռովմայեցւոց պատմիչները Հայոց պատմութեան աւելի ան մասին վրայ տեղեկութիւն ունենալով, վերին Հայոց դէպքերը բուն մեր պատմութեանց հետ կը շփոթեն, որով մեծամեծ սխալանաց մէջ կ'ինկան: Ուստի ան ուղղագրէրս տարուան պատմութեան ծուծը գիտնալը հարկաւոր է՝ անոնց սխալը ուղղելու համար :

2. Երբոր Անտոնիոս Հայաստանի սիրեց՝ վերին Հայքը Մարաց տուաւ, ինչպէս որ առաջ ալ ըսինք: Արշաւիր Պարթից Թագաւորը Արտաշիսա անունով փոխարքայ մը դրաւ ան կողմերուն, որուն բռնութիւններուն չդիմանալով Հայերը Օգոստոսէն խնդրեցին որ Արտաւազդայ տղան փոքր Տիգրան ըսուածը իրենց Թագաւոր դնէ. Օգոստոս կատարեց խնդիրքնին. բայց երբոր Տիգրան մեռաւ, Հռովմայեցիք անոր Երուազ եղբայրը խաւ-

1. Մեր ազգին պատմութեանը հետ ինչ վերաբերութիւն ունի վերին Հայոց Թագաւորութիւնը.

2. Անտոնիոսի Հայաստանի սիրելէն ետքը ո՞րնիք Թագաւորեցին վերին Հայոց յաջորդաբար ինչուան Չենոն.

ըեցին. Հայերը չընդունելով զանիկայ՝ տեղը Տիգրան անունով ուրիշ իշխան մը դրին, որ Տիգրան կրտսեր ըսուեցաւ: Իրեք տարիէն Տիգրան կըրտսերն ալ վռընտեցին ու Ապրսամ անունով Արծրունին Թագաւորեցուցին, որ ամենուն սիրելի և հաճոյ եղաւ: Երբոր ան ալ մեռաւ Պարսից Թագաւորը իր Արշէղ որդին Թագաւորեցուց, բայց Հռովմայեցւոց կամացը դէմ ըլլալով Հռովմայեցիք հալածեցին զինքը ու Պոնտոսի Թագաւորին Զենոն որդին Թագաւորեցուցին՝ որ ինչուան իր մահը խաղաղութեամբ Թագաւորեց:

3. Զենոնին մեռնելէն ետքը Արտաշէս Պարսից Թագաւորը իր Արշակ անունով տղան Թագաւոր դրաւ Հռովմայեցւոց կամացը դէմ. անոր համար Տիբեր կայսրը Վրաց Թագաւորին Միհրդատ եղբայրը յորդորեց որ Արշակը վռընտէ ու ինքը Թագաւորէ վերին Հայոց: Միհրդատ առակ կերցընելով սպաննել տուաւ Արշակը ու ինքը տեղն անցաւ. բայց քանի մը տարիէն Հռամիզդ իր եղբօրը տղան՝ նախարարաց սիրտը իրեն քաշելով, ու հօրմէն ալ օգնութիւն առած, եկաւ Միհրդատը իր ընտանեօքը սպաննել տուաւ ու ինքը անգթութեամբ Թագաւորեց: Երբոր լսեց աս եղած բաները Դարեհ Պարսից Թագաւորը, շատ զօրքով Հռամիզդին վրայ եկաւ, ու զանիկայ վռընտեց և իր Տիրիթ եղբայրը տեղը դրաւ: Հռամիզդ եռանէ եղաւ նորէն Պարսիկները հալածելու, բայց նեղը մնալով հազիւ կրցաւ փախչիլ իր Զենոբիա կնիկոջը. բայց Զենոբիա տղաբերքի մէջ ըլլալով ճամբան սաստիկ ցնաստեցաւ, որով ալ չէր կրնար առաջ երթալ. ուստի խնդրեց Հռամիզդէն որ զին-

3. Միհրդատ Արշակայ յաջորդելէն ետքը ինչպէս յաղթուեցաւ Պարսիցմէ ու ինչ պատահեցաւ կայ Զենոբիային վրայ.

քը սպաննէ. Հռամիզդ ալ վախէն ու յուսահատութենէն խենդեցածի պէս ըլլալով, զարկաւ սրտը ու վիրաւորելով գետը ձգեց զինքը. իսկ ինքը փախաւ գնաց Վրաստան: Հոն մօտիկները գրաւած քանի մը գեղացիներ տեսնելով կիսամեռ զՋէնոբիան, հանեցին գետէն ու վերքը պատելով առողջացուցին. վերջը Տիրիթին տարին՝ որ մեծ նուաստ խնամքով կը պահէր զինքը: Ա դէպքս Եւրոպացւոց խիստ ծանուցեալ ըլլալով, կը կարծեն որ Զէնոբիա մեր Արշակունի Թագուհինեըն մէկն ըլլայ:

4. Ներոն կայսրը լսելով Պարսից տիրելը վերին Հայոց վրայ, Կորբուղոն անուանով զօրավարը խաբեց շատ զօրքով որ Տիրիթը վռնտէ հոնկէ. Կորբուղոն եկաւ յաղթեց Պարսից, Տիրիթն ալ փախուց ու անոր տեղը Տիգրան կրտսերին եղբօրորդին Թագաւոր դրաւ, որ ըսուեցաւ Տիգրան կըրտսեր Պատգոյն. իսկ ինքը Թողուց վերին Հայքը ու Ասորեստան գնաց: Դարեհ նորէն շատ զօրք ժողված վազեց վերին Հայոց վրայ ու շատ յաղթութիւն ներ ընելով սկսաւ առաջ երթալ. ան ատեն կայսրը Ռեոտա անուանով քաջ զօրավարը խաբեց որ պատերազմը ընդհատէ: Ասիկայ Կորբուղոնին հետ միացած երկար ատեն պատերազմեցաւ Դարեհի հետ. բայց վերջապէս զօրուն չկրնալով ելլել յաղթութեացաւ ու հաշտութիւն ըրաւ Պարսից հետ, ասպայմանով որ վերին Հայքը Պարսից ձեռքը մնայ, միայն թէ Թագաւորը՝ կայսրը անուանէ քնակիչներըը զոր որ ուզեն: Ասոր նորէն Տիրիթ Թագաւորեց ու Հռոմ գնաց. ուր որ կրկին անգամ Թա-

4. Ի՞նչ պատերազմներ ըրաւ Ներոն կայսրը Պարսից հետ վերին Հայոց Թագաւորութեանը համար ու ինչպէս հաշտութիւն եղաւ մէջերնին.

գաւոր պատկուեցաւ Ներոն կայսրէն մեծ հանդէսով ու փառաւորութեամբ:

Տիրիթ ինը տարի թագաւորելէն ետքը երբոր ինքը մեռաւ՝ վերին Հայոց թագաւորութիւնն ալ վերջացաւ. վասն զի Երուանդ Միհրդատքը Հռովմայեցոց տալով, ինքը վերին Հայոց թագաւորութիւնը առաւ ու իր մասին հետ միացուց:

ԴԱՍ ԺԵ.

Արտաւազդ Բ. Տիրան Ա. Տիգրան Գ. և վաղարշ:

1. Արտաւազդայ խիստ և կառավղի բնութիւնը որ արդէն հօրը կենդանութեան առեն ալ տեսնուէր էր՝ թագաւորելովը ամենևին տարբերութիւն մը չըրաւ: Եղբայրները Այրարատեան գաւառէն վռընտեց, միայն Տիրանը քովը պահեց՝ որովհետև ինքը տղայ չունէր: Արտաւազդ տասնկով երկու տարի թագաւորելէն վերջը, օր մը որսի մէջ կառավարար ձին վազցընելու առեն խոտունկ փոսի մը մէջ ընկաւ ու կորսուեցաւ:

2. Աստր վրայ առասպել մը հանեցին որ կ'ըսէին Թէ, Արտաշէսի Թաղման առեն երբոր շատ հոգի իրենք զիրենք կամաւորապէս Արտաշէսի գերեզմանը կը նետէին՝ ըսեր է Արտաւազդ հօրը, «Դու գնացիր և բոլոր երկիրը և մարդիկները քեզի հետ

1. Արտաւազդ ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը ու ինչպէս մեռաւ.

2. Արտաւազդայ մահուանը վրայ ինչ առասպել եղաւ Հայոց մէջ.

ժարիը, ես աւերակներու Թագաւորեմ» : Ա պատճառաւ անիծեր է Աբոտաչէս զինքը ըսելով· « Եթէ դու յորս հեծցիս յազատն 'ի վեր 'ի Մասիս, զքեզ կալցին քաչք, տարցին յազատն 'ի վեր 'ի Մասիս, անդ կացցես, և զոյս մի տեսցես » : Ակէ կը կարծէ եղեր ռամիկը Թէ Աբոտաւազդ մուԹ այրի մը մէջ շղԹաներով կապած է, քովը երկու շուն կեցած՝ միշտ կը կրծեն շղԹաները որ Աբոտաւազդ ելլէ ու աշխարհքս կործանէ· բայց դարբիններուն կռանահարուԹեան ձայնէն կը զբանան եղեր շղԹաները : Ա պատճառաւ ինչուան նաև Խորենացւոյն ժամանակը ոգէտ դարբիններ կիրակի օրերն ալ չորս հինգ անգամ սալը կը ծեծէին որ ան շղԹաները չԹուլնան :

3· Տիրան որ Աբոտաւազդայ քոյին էր՝ եղբօրը տեղը յաջորդեց, բայց անոր պէս ԹագաւորուԹեան բաներուն անփոյԹ ըլլալով, աւելի զբօսանքի և որսի ետևէ եղաւ, մանաւանդ որ լաւ ձի հեծնել գիտէր : Երևելի գործք մը չըրաւ, ու քանիմէկ տարի խաղաղուԹեամբ Թագաւորելէն վերջը, Ճամբան երԹալու ատեն ձեան հիւս մը վրան էյնալով տակը մնաց ու խղդուեցաւ :

4· Տիրանայ տեղը յաջորդեց Տիգրան Գ· իր պզտիկ եղբայրը Պարսից Պերոզ Թագաւորին հաՃուԹեամբը : Երբոր Անտոնիոս Պիոս Հռովմայեցւոց կայսրը մեռաւ, Պերոզ ու Տիգրան միաբանած՝ Ասորւոց երկիրը եղած Հռովմայեցւոց վրայ վազեցին ու մեծ կոտորած ըրին· անկէ կ'ուզէին Կապադովկիոյ վրայ ալ վազել : Սևերիանոս Կապադովկիոյ կուսակալը, վախնալով պատերազմին անյաջողուԹենէն՝ պատգամ հարցուց· քրմապե-

3· Աբոտաւազդայ ՈՎ յաջորդեց·

4· Տիգրան Գ· ՈՎ է ու ինչ պատերազմ ունեցաւ Հռովմայեցւոց հետ·

ալ ամէնայն կերպով բարեյաջողութիւն պատե-
րազմի դուշակեց. անով զօրացաւ Սևերիանոս,
աներկիւղ ու թեթև պատրաստութեամբ Հայաս-
տան վազեց. բայց Հայերէն ու Պարսիկներէն չա-
րաչար յաղթուելով ինքն ալ սպաննուեցաւ: Ա-
րեղիոս կայսրը երբոր լսեց Հռոմայեցւոց կրկին
անգամ յաղթուիլը, Ղուկիոս իր կայսերակիցը
խաւրեց մեծ պատրաստութեամբ. բայց անիկայ
դեռ չհասած՝ Տիգրան փութաց փոքր Հայոց ա-
րեւելու. հոն կնկան մը շողոքորթութիւններէն խա-
բուելով գերի բռնուեցաւ, ինչուան որ Ղուկիոս
եկաւ ու բոլոր թշնամիները սարսափեցուց. վեր-
ջը տեսնելով զՏիգրան՝ որ գերի ընկեր է, խղճայ
վրան և ազատեց զինքը: Ղուկիոս Տիգրանայ կեր-
պին և գեղեցկութեանը հաւնեցաւ, խիստ սիրեց
զինքը ու հետը կապուեցաւ սիրտը. անոր համար
նորէն թագաւորեցուց ու շատ պատուով Հայաս-
տան դարձուց: Ղուկիոս իրեն սիրոյն նշան Ռոմի
անունով աղջիկը, որ իր ազգականներէն մէկն էր,
Տիգրանայ կնութեան տուաւ: Դարձեալ ատ բա-
ներուս յիշատակը պահելու համար ատակ կոխել
տուաւ ատ կերպով. ինքը Ղուկիոս գահը նստած՝
Տիգրանը թագաւոր կը պսակէ Հայոց. վրան ալ
ատանկ գրած. « Թագաւոր Հայոց տուեալ »: Տիգ-
րան Հայաստան գառնալով, խել մը ատեն ալ ապ-
րեցաւ ու քառասունըմէկ տարի թագաւորելէն
ետքը մեռաւ, տուանց քաջութեան յիշատակ մը
ձգելու (193):

5. Տիգրան Գ.ին յաջորդեց անոր պզտիկ որդին
Վաղարշ, որ առջի իրեքին պէս զբօսանաց եաւէ
չընտրելով շատ շինութիւններ ըրաւ, միանգամայն
հայրենասէր ու քաջ եղաւ. Վաղարշեան քա-

5. Տիգրան Գ.ին ոմն յաջորդեց ու ինչ կոմա-
նէ երևելի եղաւ Վաղարշ.

ղաքը չինեց ան տեղը՝ ուր ինքը ծներ էր մօրը Ճամբայ ընելու առենը. Վարդգես առանը պարսպով պատեց ու աթոռը հոն փոխադրեց, անունն ալ Վաղարշապատ դրաւ: Առր Թագաւորութեան քառներորդ տարին Հիւսիսային ազգերը սկսան բազմութեամբ Հայաստան վազել. Վաղարշ ալ ժողվեց բոլոր իր զօրքերը և քաջութեամբ պատերազմելով հալածեց զանոնք խել մը տեղ՝ շատ մարդ կարդելով, բայց Թշնամիները նորէն միաբանած՝ աւելի կատաղութեամբ վազեցին Հայաստան: Հայերը սաստկապէս պատերազմելով նոյնպէս երկրորդ անգամուն ալ վանեցին ան վայրենի ազգերը. բայց ափսո՛ս որ Վաղարշ զարնուելով մեռաւ՝ զոհ ըլլալով իր ազգին օգտին համար, որով անունն ալ անմահացաւ, ինչպէս նաև կ'ըսէ Խորենացին. Թէպէտ և ինքը մեռաւ, բայց դեռ կենդանի է իրեն բարի անուանքը:

ԳԱՍ ԺԶ.

Խոսրով Ա.:

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս ուզեց իր հօրը մահուան վրէժը առնել Հիւսիսային ազգերէն. ուստի բոլոր զօրքերը ժողվեց և անոնց վրայ պատերազմի ելաւ, բոլորովին ընկճեց ան զօրաւոր ազգերը. անոնց ընտիրներուն մէջէն հարիւրին մէկ պատանդ առաւ, իրեն քաջութեանը չափ շատակ յոնարէն դրաւ արձան մը կանգնեց, ու այնպէս փառաւոր յաղթութեամբ Հայաստան դարձաւ: Խոսրով ազգը ծաղկեցընելու Ջանքով

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս ինչ ըրաւ.

լցուած՝ սկսաւ շատ շինքերով զարդարել Հայաստանը, և ան շինքերուն համար քրիստոնեաները կ՚աշխատցնէր. շատ քրիստոնեաներ ալ հատատքի համար նահատակեց:

2. Ան միջոցին Անտոնիոս կարակալլա Հռովմայեցւոց կայսրը Միջագետաց կողմերն եկած ըլլալով, խոսրով առջի բարեկամութիւնը հաստատելու մտքով անոր հետ տեսնուելու գնաց. բայց կայսրը քովը պահեց զինքը որպէս զի դիւրաւ կարենայ Հայաստանի տիրել: Հայերը լսելով սա բանս՝ անանկ բարկացան որ մէկէն պատերազմի պատրաստուեցան. վախցաւ Կարակալլա, ու շատ պատուով արձակեց քովէն Խոսրովը:

3. Խոսրովու թագաւորութեան առեներ Պարսից վրայ կը թագաւորէր Արտաւան, որ աղգաւ Արշակունի ըլլալով մանաւանդ սէր և բարեկամութիւն ունէր Խոսրովու հետ: Արտաշիր անունով Պարսից նախարարներէն մէկը ուրիշ նախարարները իր կողմը քաշեց, շատ զօրքով Արտաւանին վրայ պատերազմի եկաւ, և տարին մը չափ պատերազմելէն վերջը սպաննեց զինքը: Ա՛ս բանս երբոր իմացաւ Խոսրով շատ ցաւեցաւ Արտաւանին մահուանը վրայ, և կը մտածէր որ վրէժը առնէ Արտաշրէն. մէկէն զօրք ժողվեց Աղուանից, Վրաց, Լփնաց, Կասպից կողմերէն, ու անթիւ բազմութեամբ Արտաշրին վրայ պատերազմի եկաւ: Միշտ յաղթող գտնուեցաւ մեծն Խոսրով, տասը տարին չափ պատերազմելով ինչուան Հնդկաստան վռնտեց Արտաշիրը. գրեթէ բոլոր Պարսկաստանի տէ-

2. Խոսրով Կարակալլային ձեռքէն ինչպէս խաբուեցաւ.

3. Ի՛նչէն ծագեցաւ Խոսրովին Պարսից հետ ունեցած պատերազմը, ու Խոսրով ինչպէս յաղթեց.

ըեց, Արտաւասականի մէջ ալ քաղաք մը չինեց՝ Դավրէժ անունով, այսինքն դա՛ ի՛ Հրէից Արտաշէսի (253):

4· Արտաշէս փորձով տեսնելով թէ չկրնար Խոսրովու յաղթել, և գիտնալով թէ քանի որ Խոսրով կենդանի է՝ իր թագաւորութիւնը և կեանքը հանգստութիւն պիտի չգտնէ, մեծամեծ պարգևներ ու պատիւներ խոստացաւ ան մարդուն որ զԽոսրով սպաննէ: Նախարարներէն մէկին ալ չհամարձակեցաւ աս բանս յանձն առնելու· միայն Անակ անունով նախարարը, որ ազգաւ Պարթև էր, սիրով յանձն առաւ կատարել Արտաշէսի կամքը· ուստի տեղով Հայաստան եկաւ, ըսելով թէ Արտաշէսին ձեռքէն փախայ և Խոսրովու կ'ապաւինիմ: Անակ իր կեղծաւորութեամբը ամենուն սիրելի ըլլալով, շատ մեծ պատիւներ գտաւ Խոսրովէն և շատ բանի մէջ անոր հետն էր· անգամ մըն ալ որսի ատեն Անակ և իր եղբայրը մեկտեղ խօսք դրած՝ զարկին Խոսրովը չարաչար վիրաւորեցին, և իրենք ձիերնին հեծան ու սկսան փախչիլ· մեկէն հասնին ընկան Խոսրովի մարդիկը, և երբոր զանոնք պիտի բռնէին, անոնք իրենք զիրենք գետը նետեցին ու խղդուեցան: Խոսրով դեռ չմեռած՝ հրաման տուաւ որ Անակայ ընտանիքը բոլոր Թրէ անցընեն՝ որոնցմէ միայն երկու տղայ ազատեցաւ, մեկը Սուրէն՝ որ Պարսկաստան փախուցին, մեկալը մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչը որ կեսարիա տարին: Այսպէս Խոսրով քառասունը ուղիղ տարի թագաւորելէն վերջը, բոլոր Հայերը մեծ սուգի մէջ թողլով մեռաւ (258):

5· Արտաշէս լսելով Խոսրովու մահը շատ ու-

4· Արտաշէս ինչպէս կրցաւ Խոսրովը սպաննել տալ·

5· Արտաշէս ինչպէս Հայաստան մնաւ·

թախացաւ, մեծամեծ հանդէսներ կատարեց, ու շատ զօրքով Հայաստանի վրայ վազել սկսաւ։ Նախարարները երբոր լսեցին որ Տրդատ մահուանը վրայ արտասած ու շփոթած, մէկէն չկրցան Արտաշէսին դէմ դնել, բայց գովելի միաբանութեամբ մը շուտով օգնութիւն ուղեցին Հռովմայեցւոց Վաղերիանոս կայսրէն։ Հռովմայեցւոց զօրքը Հայաստանէն դուրս այլ և այլ երկիրներ տապատակութիւն ընելով ուշացան Հայոց օգնութեան գալ։ ան միջոցին ալ Վաղերիանոս մեռաւ, որով յուսահատեցան Հայերը Հռովմայեցւոց օգնութենէն, Արտաշէր ալ առանց շատ դժուարութեան Հայաստան մտաւ։ Մէկէն հրաման տուաւ որ Խոսրովու ցեղը Թրէ անցընեն։ անոնց մէջէն միայն Տրդատ անունով տղան ազատեցաւ։ Արտաւազդ Մանդակունին զՏրդատը կեսարիա մեծցընելէն վերջը՝ Հռոմ տարաւ։ Նոյնպէս ազատեցաւ նաև Տրդատայ Խոսրովիդուխտ անունով քոյրը՝ Օտա նախարարին ձեռքովը։

6։ Արտաշէր ընդհանրապէս նախարարները իրենց պատուոյն մէջը պահեց։ բայց Մանդակունեաց ցեղը բոլոր Թրէ անցընել տուաւ՝ իմանալով որ Տրդատը փախցընողը Մանդակունի է։ Ասանկով քանի տարի ալ Հայոց վրայ Թագաւորեցին վերջը մեռաւ Արտաշէր, ու տեղը անցաւ իր Շապուհ որդին, ինչուան որ Տրդատ եկաւ Հռովմայեցւոց զօրքովին ու նորէն տիրեց իր հայրենի ժառանգութեանը։

6։ Արտաշէր Հայոց հետ ինչպէս վարուեցաւ ու քանի՞ տարի Թագաւորեց։

ԴԱՍ ԺԷ.

Տրդատայ քաջութիւներն ու թագաւորելը։

1. Տրդատ երբոր Հռոմէ գնաց, Լիկիանոս անունով մեծ իշխանին ծառայութեան մէջ մնաւ՝ առանց իմացընելու իրեն ով ըլլալը. հոն շատ քաջութիւններ ընելով և միշտ հաւատարիմ գտնուելով Լիկիանոսին շատ սիրելի եղաւ։ Իր գլխաւոր քաջութիւնները, որով թագաւորութեան արժանի եղաւ ատոնք են։ Անգամ մը ձիընթացի առեն թշնամւոյն կառքը վարպետութեամբ մը առաջ անցնելով, ընկերը կառքէն վար ձգեց. Տրդատ մէկէն վազեց հասաւ կառքին եռւէն ու բռնեց կառքը կեցուց։ Անգամ մ՚ալ երկու վայրենի ցուլերու հետ կռուելու առեն ելլի ընկերէն բռնեց թօթվեց ու փրցուց։ Պոռոտս կայսեր զօրքը երբոր ապըստամբեցան առվի պատճառաւ պատերազմի առեն, ու զինքը և իշխանները սպաննեցին, Տրդատ Լիկիանոսի դրանն առկը կեցած՝ չթողուց որ մէկը ներս մանէ։ Պատերազմի առեն ձիերուն խոտը ընցած ըլլալով, Տրդատ պարսպէն անդին անցաւ, ու հոն տեղն դիզած խոտերը՝ պահապաններով ու շներով մէկտեղ պարսպէն ապին նետեց։

Դիոկղետիանոս Գողթացւոց Հոչէ Թագաւորին դէմ պատերազմի ելեր էր, որ խիստ քաջ և ուժով մարդ էր. Հոչէ առաջարկեց Դիոկղետիանոսի որ երկուքը առանձին մենամարտութիւն ընեն և ով որ յաղթէ՝ յաղթութիւնը անոր կողմը ե-

1. Հռոմայեցիք զՏրդատը իրեն ինչ քաջութիւն-ներուն համար Թագաւորեցուցին։

պուի: Դիոկղետիանոս ինքը անձամբ չէր կրնար Հռչէին դիմացը ելլել, և ոչ բոլոր զօրացը մէջ ալ գտնուեցաւ մարդ մը որ կարող ըլլար անոր դիմացը ելլել. ան ատեն Լիկիանոսի խորհրդովը Տրդատ Հռչէին հետ պատերազմելով՝ բռնեց զինքը ու կապած Դիոկղետիանոսին դիմացը բերաւ: Դիոկղետիանոս տեսնելով Տրդատայ քաջութիւնը՝ ուզեց մեծ պատուոյ մը հասցընել զինքը. և երբոր իմացաւ թէ Խոսրովու Հայոց թագաւորին որդին է, մէկէն թագաւոր անուանեց զՏրդատ, ու շատ ընծաներ տալէն վերջը բազմութեամբ զօրաց Հայաստան խաւրեց որ երթայ իր հայրենական թագաւորութիւնը ժառանգէ:

2. Տրդատ երբոր կեսարիա հասաւ, մէկէն իմացուց նախարարներուն իր գալուստը. ուստի նախարարներուն շատը եկան կեսարիա գնացին, ու զինքը փառաւորապէս ընդունելով կրկին անգամ պսակեցին Սմբատ Բագրատունիին ձեռքովը (286):

Տրդատ կեսարիայէն բոլոր նախարարներով Երզնկայ եկաւ, ուր մանաւոր շնորհակալութիւն ըրաւ Անահտայ որ ան կռապաշտութեան ատենը Հայաստանի պաշտպան սեպուած էր, և սակայն նաև զաւրքն Դրիդոր Լուսաւորիչը որ նոյնպէս Անահտայ նուէրք տայ. երբոր անիկայ յանձն չառաւ, Տրդատ շատ չարչարանքներ տուաւ սրբոյն Գրիգորի. վերջը երբոր իմացաւ թէ անիկայ իր հայրը սպաննող Անակին որդին է, Արտաշատու մէջ խոր վիրապ մը կար՝ հոն նետել տուաւ. իսկ իր բարերարներուն՝ այսինքն Արտաւազդ և Օտա նախարարներուն՝ հազարապետութեան պատիւ

2. Տրդատ ինչ կերպով Հայաստան մտաւ ու ինչպէս Պարսից ձեռքէն խլեցաւ Հայաստանի այլ և այլ քաղաքները.

առաւ: Վէրջը նախարարներէն ու Հայաստանի զանազան կողմերէն շատ ղօրք ժողվելով, Հռոմ մտնելուց զօրացը հետ մէկ տեղ Հայաստանի այլ և այլ քաղաքներուն վրայ գնաց ու առաւ Պարսիկ իշխաններուն ձեռքէն. իրեք անգամ ալ Շապուհին հետ պատերազմելով բոլորովին վռնտեց հանեց զինքը Հայաստանէն: Անկէց ետքը սկսաւ ամէն բան կարգի կանոնի դնել ինչպէս էր առաջ, և բոլոր ազգը մեծ ուրախութեան մէջ էր՝ տեսնելով իր օրինաւոր կուիռ Թագաւորը:

3. Տրդատ այսպիսի փառաւոր յաղթութիւններով ուրախացած՝ հրաման խաւրեց ամէն կուսակալներուն ու քուրմերուն որ զոհերով նուէրներով պատուեն աստուածները, և ամէն տեղ գրանուած քրիստոնեաները կամ տանջելով սպաննեն և կամ հաւատքնին ուրացընեն: Երբոր ամէն տրամաները կատարուեցան, ուզեց իրեն Թագուհի առնել Աղանաց Թագաւորին Աշխէն անունով աղջիկը. սա բանիս համար հարմնախօսութեան ղրկուեցաւ Սմբատ Բագրատունի սպասպետը. անիկայ ալ գնաց բերաւ զԱշխէնը: Տրդատ նախ հրամայեց որ Արշակունի գրեն զինքը, վերջը Արշակունի Թագուհիներուն Թագն ու ծիրանինները հագցընելով հետը ամուսնացաւ, և հարսնեաց հանդէսը շատ շքեղ եղաւ:

4. Ան միջոցին որ Տրդատ սաստիկ հրաման հաներ էր քրիստոնեաները հալածելու՝ Դիոկղետիանոս կայսրէն Թուղթ մը եկաւ իրեն, որուն մէջ կ'իմացընէր կայսրը Հռիփսիմէ կուսին և իր ընկերաց Հայաստան փախչիլը, և կրկին կրկին կը յանձ-

3. Տրդատ իրեն փառաւոր յաղթութիւններէն վերջը ինչ ըրաւ.

4. Տրդատ զՀռիփսիմէն ինչու սպաննեց ու իր վրայ ինչ կերպարանափոխութիւն եղաւ.

նէր Տրդատայ որ փնտռէ գանոնք, և թէ որ Հռիփսիմէին գեղեցկութեանը հասնի՝ իրեն կնու-
թեան առնէ, ապա թէ ոչ Հռոմի խաբէ: Սկիզբն ամէն տեսակ հնարք՝ի գործ դրաւ Տրդատ ու տեղ
չձգաց որ խնդրակներ չխաբէ. ուստի քիչ առե-
նէն գոան ան կուսանքը որ այգիի մը մէջ քաշուած
կը ճգնէին վաղարշապատի քովերը: Տրդատ եր-
բոր տեսաւ Հռիփսիմէին գեղեցկութիւնը չհագաւ,
և շատ եռեռ եղաւ որ կարենայ Հռիփսիմէն համո-
զել իրեն կին ըլլալու. բայց ամէն չանքը պարա-
պը եղաւ, և ուզեց տանջանքով իրեն չար կամացը
խոնարհեցընել զկոյսը. և չկրնալով միտքը դրածը
առաջ տանիլ՝ բարկութենէն անողորմաբար մեռցը-
նել տուաւ Հռիփսիմէն և եօքը անոր ընկերներն
ալ: Բայց անոր վրայ մեծ ցաւի ու տրտմութեան
մէջ ընկաւ, և տեսնելով որ չկրցաւ աղջկան մը
յաղթել և իր փափաքին հասնիլ, քանի մը օրէն
արտմութիւնը փարատելու համար որսի ելաւ. և
երբոր կառքով կ'երթար՝ յանկարծակի դիւահա-
րեցաւ ու խոզն կերպարանք մտնելով կառապու-
թեամբ կառքէն վար ընկաւ և սկսաւ ինք զինքը
խածնել, և անասպատ անմարդաբնակ տեղեր քա-
շուելով՝ չէր ուզեր որ քովը մարդ մտնէնայ. նոյն-
պէս նախարարներէն ումանք ալ հարուածեցան՝
նոյնպիսի պատիժներով:

5. Երբոր բոլոր Հայաստան սուգի ու տրտմու-
թեան մէջ էր աս երկնառաք պատիժներուն հա-
մար, և սարսափած չէին գիտեր ընելիքնին, օր մը
հրեշտակ Աստուծոյ երևցաւ Տրդատայ խոստովա-
նութիւն քրօջը, և խնացուց իրեն որ ինչուան Անա-

5. Գրիգոր Լուսաւորիչ ինչպէս եղաւ և իրա-
պէն, ինչպէս զմոգաւորը և հարուածեալ նա-
խարարները բժշկեց ու ինչպէս սկսաւ քրիստո-
նէութիւն խոթել Հայոց մէջ.

կայ որդին Գրիգորը խոր վիրապէն չելլէ՝ չեն կըրնար հոգւոյ և մարմնոյ բժշկութիւն առանալ: Ա տեսիլը ամենուն ծաղրելի երեւցաւ. բայց երբոր երկու օրուան մէջ հինգ անգամ նոյն բանը կըրկնուեցաւ, ան ատեն Օտա նախարարը խաւրեցին որ երթայ Գրիգորը վիրապէն հանէ (301):

Անհաւատ ու հեռաքրքիր մարդիկ անթիւ բազմութեամբ վիրապին չորս դին ժողվուած կ'սպասէին առ նոր տեսարանիս վերջը տեսնելու. և ահա խոյին իրենց անհաւատութիւնը հաւատքի փոխուեցաւ, երբոր տեսան ու խմացան որ Գրիգոր՝ վիրապին մէջ երկրնցուցած չուանը բռնելով շարժեց, և տասնըչորս տարի անբարբառ անլուր մնացած ձայնը հնչեցուց թէ «Ողջ եմ»: Դուրս հանեցին զինքը, մէկէն բզքտած ու մքլոտած դուռանները փոխեցին, սևացեալ մարմինը լուացին ու մաքրեցին. երբոր Վաղարշապատ կը բերէին, Թագաւորն ու հարուածեալ նախարարները սըրբոյն Գրիգորի դէմն եկան և բժշկութիւն կը խընդրէին. սուրբն Գրիգոր հոն մէկէն աղօթքի կեցաւ և զամէնքն ալ իրենց ախտերէն բժշկեց: Անկէ առաջ երթալով գնաց Հռիփսիմեան կուսանաց նահատակութեան տեղը. անոնց սուրբ մարմիններուը դիպակներով պատեց որ ինն օր բացօթեայ մնացեր էին առանց ապականելու: Վաթսուն օր միակերպ ամենուն քրիստոնէական կրօնքը քարոզեց, ու անկէ ետքը ան սուրբ կուսանաց համար մատուռներ շինել տուաւ, որոնց համար Տրդատ անձամբ լեռնէն մեծամեծ քարեր կը բերէր. իսկ Աշխէն ալ կիներն ու խոտրովիդուխտ հող և ուրիշ նիւթեր կը կրէին:

Ա բաներս լմնցընելէն վերջը՝ նորէն սուրբն Գրիգոր աղօթքի կեցաւ հարուածեալներուն համար որ բոլորովին բժշկուեցան. որովհետև առջի անգամուն զգաստացեր էին, իսկ երկրորդ անգա-

մուն մարմիններունուն այլանդակութիւնները ալ անցան : Եաքը սուրբն Գրիգոր ու Տրդատ գացին միաբան մեհեաններն ու կուռքերը կործանեցին , և ամէն տեղ քրիստոնէութիւնը հաստատեցին . և սուրբն Գրիգոր կեսարիա երթալով Ղևոնդիոս պատրիարգէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ :

Երբոր կեսարիայէն ետ կը դառնար , Դեմետր , Գիսանէ և ուրիշ շատ չաստուածներու կռատունները կործանեց . և Վաղարշապատ գալով մկրտեց զՏրդատ , որ Յովհաննէս կոչուեցաւ : Վերջը շինեցին էջմիածնայ տաճարը և ուրիշ շատ եկեղեցիներ :

6 . Ան միջոցներուն Հռովմայեցւոց Կոստանդիանոս թագաւորն ալ սրբոյն Սեղբեստրոսի ձեռքովը քրիստոնեայ եղած ըլլալով , Տրդատ և սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հռոմ գնացին խնդակցութեան համար . հոն շատ պատիւ գտան երկուքն ալ Կոստանդիանոս թագաւորէն և Սեղբեստրոս պապէն , ու մէջերնին սիրոյ և բարեկամութեան դաշինք հաստատեցին գրով . եաքը սուրբն Սեղբեստրոս Գրիգոր Լուսաւորչին աթոռը պատրիարգական աթոռ անուանեց պատուոյ համար :

7 . Տրդատայ իր թագաւորութենէն հեռանալը լսելով Շապուհ Պարսից թագաւորը , յարմար առաւն սեպեց Հայերէն վրէժը առնելու . անոր համար շատ զօրք ժողվեց ամէն կողմէն , և Հիւսիսային ազգերը գրգռեց որ իրեն հետ մեկտեղ Հայաստանի վրայ վազեն : Տրդատ հազիւ թէ Հռովմէն դարձաւ , տեսաւ որ ամէն դիաց պաշարեր են Հիւսիսային ազգերը , որով առանց աղէկ մը պատրաս-

6 . Տրդատ ու Գրիգոր Լուսաւորիչ ինչո՞ւ Հռովմ գացին .

7 . Տրդատայ Հայաստանէն հեռանալը ինչ գէշ հետևանք ունեցաւ .

տուելու հարկադրեցաւ պատերազմի ելլելու, և յաղթեց Սկիւթացւոց Գեղեհոն զօրավարին որ քաղուելեան կոմսանէ շատ անուանի էր։ Երկրորդ անգամուն պատերազմելով Գեղեհոնն ալ սպանեց, և այնպէս ուժով իջեցուց Թուրը որ մէկ հարուածով երկու կաւոր ըրաւ զօրավարը ձիովը հանդերձ։

Տրդատ Հիւսիսային ազգերը վանելէն վերջը շատ պատերազմներ ալ ըրաւ Շապուհին հետ ու միշտ յաղթող դառնուեցաւ, եաքը հաշտութիւն ըրաւ հետը ու խաղաղութեամբ թագաւորեց։

8. Ինչպէս որ յայտնի է՝ բոլոր ան պատերազմներուն մէջ մեծ գործողութիւն ընողը Տրդատ էր, որուն քաջութիւնը շատ բանակիներու տեղ կը բռնէր. և ինչպէս որ պատմութենէն յայտնի է՝ իրեն պէս կարիճ մարդ խիստ քիչ տեսնուեր է աշխարհքիս մէջ. բայց աւելի զարմանալին աս է որ այսպիսի թագաւոր մը քրիստոնեայ ըլլալէն վերջը սքանչելի բարեպաշտութեամբ մը զարդարուեցաւ, այնչափ որ անուղղայ և զեղծ նախարարները համարձակ կը խրատէր որ հեթանոսական մոլութիւններէն ետ կենան։ Բայց որովհետև ծանր է ճշմարտութեան ձայնին մտիկ ընելը, անոնք ոչ միայն չզգաստացան, այլ նաև Տրդատայ դէմ ապստամբութիւններուն սկսեցաւ, որով Տրդատ ալ զնոսենք խրատելէն ձանձրացած՝ թագաւորութիւնը թողուց և Լուսաւորչայ բնակած այրը քաշուեցաւ։ Նախարարները քանի մը անգամ կանչեցին զինքը որ գայ նորէն թագաւորութիւնը ձեռք առնէ. բայց երբեք Տրդատ յանձն չառաւ, թունաւորելով մեռուցին զինքը յիսունըվեց տարի թագաւորելէն վերջը, ուԹսունըհինգ տարուան (341)։

8. Տրդատ ինչո՞ւ թագաւորութիւնը թողուց առանձնացաւ ու ինչպէս մեռաւ.

9· Տրդատայ անպարտելի ուժին հետ զարմանալի է հոգւոյն զօրեղութիւնը, անընկճելի արիութեան հետ հաւատքն ու չերմեռանդն բարեպաշտութիւնը· ահեղ և պատկառելի դէմքին հետ նեղոսմիտ զիջողութիւնն ու հեզաբարոյութիւնը, քաջ պատերազմող բարուցը հետ բարեկարգութիւն ու շինութիւն սիրող հոգին· վեհանձնութեան հետ վսեմ խոնարհամտութիւնը, և ուրիշ ասոնց նման գեղեցիկ առաքինութիւններ: Խորհնացին ալ տեսնելով որ Տրդատայ վայելուչ ու լրատացի գովեստը համառօտ պատմութեան մը մէջ ամբողջ բովանդակելը շատ դժուարին է, այսպէս կը ջանայ արդարացընել ինք զինքը, կամ թէ սանձել իր եռանդուն փափաքը զՏրդատ գովելու· « Պատմութեանց, կ'ըսէ, և ոչ գովեստից է ժամանակս »:

10· Որչափ որ հայրենասիրի մը սիրտը ուրախութեամբ կը լեցուի Տրդատայ և ուրիշ իրեն պէս առաքինազարդ թագաւորներ ունենալնուս վրայ, որ մեր արքունական թագին վրայ մէյմէկ անգին ու անգնահատ ակունք եղան, նոյնչափ ալ ան ուրախութեան վրայ սգաւոր քօղ մը կը ծածկուի՝ երբոր յիշէ թէ այսպիսի ամենայն պատկառանաց ու սիրոյ արժանի թագաւոր մը անանկ վերջ ունեցեր է քանի մը անկարգ մարդկանց պատճառաւ· քանի մը կ'ըսեմ, վասն զի անկարելի է որ բոլոր ազգը միաբանած ըլլայ ասա գործողութեանս մէջ, ուրեմն և շատ բարեպաշտ մարդիկ ու նախարարներ ալ կային որ թագաւորին գեղեցիկ սկզբանցը

9· Տրդատ իր զօրաւոր ուժէն դուրս ուրիշ ինչ կատարելութիւններ ու բարեմասնութիւններ ալ ունէր·

10· Տրդատայ մահը ինչէն աւելի ցաւալի է հայրենասիրի մը սրտին·

մանակից ու գործադիր էին. բայց ափսոս որ գէ-
ղերուն չարութիւնը ան դիպուածին մէջ ալ ար-
գարներուն քաղցրութեամբը զեղծաւ, որով և ան
սոսկալի ոճիրը գործեցին՝ իրենց անձանց յաւի-
տենական նախասիրնք և ազգին անդարմանելի վը-
նաս: Ա՛ս իրաւ է որ ամէն ազգի մէջ ալ քիչ կամ
շատ թագաւորներ և իշխաններ զոհ եղած են հաւա-
տոյ հաւատոյ. և կամ մեծամեծաց չար կամքը չկա-
տարելուն պատճառաւ. ուստի ասոր նման քանի
մը դիպուածի համար պէտք չէ ազգը նախատել և
ուրիշ ազգերէն աւելի վար ու անարդ սեպել, և
կամ առանձնականաց պակասութիւնը ընդհա-
նուրի տալով բոլոր ազգը ազգատեաց, տիրա-
տեաց, անօրէն կոչել. բայց փափաքելի էր որ մեր
ազգին խաղաղասէր ու խոհեմ կառավարութեանց
պատմութեանը մէջ այսպիսի պարսաւելի դի-
պուածներ ամենևին չգտնուէին:

ԴԱՍ ԺԸ.

Խոսրով Բ. Տիրան, Արշակ Բ:

1. Որովհետև Տրդատայ որդին Խոսրով երկրորդ
տկար և թոյլ մարդ էր, չկրցաւ մէկէն թագաւո-
րութիւնը ձեռք առնել, ու իրեք տարին չափ թա-
գաւորական աթոռը պարապ մնաց, որով շատ
գէշ հեռանքներու պատճառ եղաւ: Վ՛ասն զի ո-
մանք քրիստոնէութենէ թուլնալով ուզեցին Լու-
սաւորչայ Թոռները սպաննել որպէս զի ուզածնին

1. Տրդատայ մահուանէն ետքը թագաւորական
աթոռին պարապ մնալը ինչ գէշ հեռանքներ ու-
նեցաւ.

ընեն: Ասով սուրբ Արիստակէսը՝ որ Լուսաւորչայ կրտսեր որդին էր՝ զիրենք յանդիմանելուն համար՝ սպաննեցին. զսուրբն Գրիգորիս որ Աղուանից կաթուղիկոս և Լուսաւորչայ Թոռն էր՝ ձիու պոչն կապած վազցնելով մեռցուցին, նոյնպէս նաև զսուրբն Վրթանէսը կ'ուզէին մեռցնել, բայց ան նիկայ մէջերնէն անվնաս անցնելով ազատեցաւ:

Քաղաքական վիճակն ալ հոգևորին պէս մեծ խեղճութեան մէջ էր. վասն զի մեկ քանի խոռվարար և փառասէր նախարարներ առեն գտնելով սկսան իրարու հետ կռուիլ պատուոյ և իշխանութեան համար, որով իրարու ցեղն ալ բոլորովին ջնջեցին, ինչպէս Բզնունիք, Մանաւազեանք և Որդունիք ըսուած նախարարութիւնները. Աղուանք ապստամբեցան, և Արշակունեաց ցեղէն Սանատրուկ անունով մեկը ինքնագլուխ թագաւորեց՝ Պարսից Շապուհ թագաւորին օգնութեամբը. նոյնպէս նաև Աղձնեաց բդեաշխը Բակուր ապըստամբեցաւ Պարսից օգնականութեամբը:

2. Նախարարներէն շատը տեսնելով աս անկարգութիւնները, և թէ ասոնց վախճանը ազգին կործանումն պիտի ըլլայ, միաբանեցան մէջերնին և սրբոյն Վրթանէսի քովը ժողովելով, խորհուրդ ըրին որ Կոստանդ կայսեր օգնութեամբ թագաւոր դնեն իրենց՝ զԽոսրով Ե: Ա բանիս համար նախարարներէն երկու հոգի ղրկեցին Կոստանդնուպոլիս, որ երթան Կոստանդ կայսեր հաճութիւնը առնեն Խոսրովը թագաւորեցընելու համար: Կայսրը շատ հաւնեցաւ Հայոց հաւատարմութեանը ու մէկէն Անտիոքոս անունով իր պալատան հազարապետը շատ զօրքով խաւրեց, որ եկաւ Խոսրովը թագաւորեցուց Հայոց վրայ, ու

2. Խոսրով Ե. ինչպէս թագաւորեց ու Պարսիկք ինչպէս յաղթուեցան Հայոցմէ.

ինքը նորէն Պօլիս դարձաւ : Գվնասուր նախարարները միաբանելով մէջերնին՝ ամէն բան կարգի դրին , ապստամբները ընչեցին և եկեղեցական բարեկարգութիւններուն ալ հոգ ունեցան : Բայց ոչ ոքովհետև Խոսրով բնութեամբ ակար և անկարող մարդ էր , ինչպէս որ ըսինք , Շապուհ և Սանատրուկ որ արդէն գիտէին , գրգռեցին Հիւսիսայինն ազգերը ու անոնց հետ Հայաստանի վրայ սկսան վազել : Խոսրով նախ ինքը անձամբ պատերազմի գնաց ու չարաչար յաղթուեցաւ , անանկ որ Թշնամիները ինչուան Վաղարշապատ հասան . ան միջոցին վրայ հասան Վահան և Բագարատ երևելի սպարապետները , և մեծ ջարդ տալով վանեցին Թշնամիները :

3 . Խոսրով ինը տարի Թագաւորելէն վերջը մեռաւ . տեղը յաջորդեց իր որդին Տիրան , որ հօրմէն աւելի Թոյլ եղաւ , և ամէն տեսակ անզգամութիւն ըրաւ : Սրբոյն Վրթանէսի հետ մէկտեղ Պօլիս գնաց ու Թագաւոր պսակուեցաւ Կոստանդ կայսրէն . և երբոր ինքը դեռ հոն էր՝ Շապուհ իր Ներսէհ եղբայրը խաւրեց որ երթայ Հայաստանի տիրէ : Արշաւիր կամսարական , որուն յանձնուած էր Հայաստանի պահպանութիւնը , ուրիշ նախարարներու հետ մէկտեղ դիմացը ելաւ ու ցրուեց բոլոր Պարսից բանակը , Թէպէտ և Հայերէն ալ մեծամեծ նախարարներ մեռան : Տիրան Թագաւոր պսակուած Հայաստան դարձաւ , բայց իրեն անկարգ գործողութիւններովը անունը և արքունական ծիրանին արատաւորեց : Ընդդէմ իրեն դաշնցը և երդմանը որ ըրեր էր Շապուհի հետ՝ Յուլիանոս ուրացողին օգնեց որ Պարսից դէմ պատերազմի կ'երթար . և անոր խաւրած պատկերը՝ ո-

3 . Տիրան ով է ու ինչ անգթութիւններ ը-
րաւ :

րուն վրայ Յուլիանոսի դէմքը քաշուած էր, երբ որ կ՚ուզէր մայր եկեղեցւոյն մէջ կախել, սուրբն Յուսիկ ան պատկերը ձեռքէն յափշտակեց ու ոտքին տակը առնելով կտոր կտոր ըրաւ: Բայց Տիրան փոխանակ խրատուելու այնչափ ծեծել տըւաւ սուրբը հայրապետը՝ որ ծեծի տեղն մեռաւ. նոյնպէս խղդել տուաւ նաև Դանիէլ սարկ. սուրբը ծերունին՝ զինքը խրատելուն համար: Ա անգթութիւնները ընելէն վերջը անով տեղով չնչեց Ուշտունեաց ցեղը. վասն զի Տիրանին հրամանովը Չորրայ Ուշտունեաց նահապետը որ Յուլիանոսին օգնութիւն գնացեր էր մանուածոյ պնդով, տեսնելով Յուլիանոսի անօրէնութիւնները բոլոր զօրքովը փախեր էր քովէն. Տիրան ալ Յուլիանոսին կամքը կատարելու համար՝ չնչել տուաւ Ուշտունեաց նախարարութիւնը, և միայն մէկ տղայ մը ազատեցաւ որ դայեակները փախուցին:

4. Երբոր Յուլիանոս Պարսկաստան պատերազմի մէջ վիրաւորուելով սատկեցաւ, Շապուհ Տիրանայ ըրած խարդախութեան վրէժն ուզեց առնուլ. ուստի բարեկամութիւն ձևացընելով կանչեց զինքը Պարսկաստան ու աչքերը կուրցուց՝ տասնըմէկ տարի թագաւորելէն վերջը: Շապուհ վախնալով որ չըլլայ թէ Հայերը սատկիկ սրդոլին Տիրանայ աչքերը փորելուն համար, մէկէն անոր Արշակ որդին հօրը տեղը թագաւոր դրաւ, որ ան ալ հօրը պէս և աւելի անկարգ և անօրէն կեանք ունեցաւ (363):

5. Թէպէտ և սա միջոցներուս եռևէ եռև անպիտան թագաւորներ ունեցեր ենք, բայց Ա-

4. Տիրան ինչ մահ ունեցաւ ու երեն ով յաջորդեց.

5. Ո՞վ է Մեծն Ներսէս ու ինչ կարգաւորութիւններ ըրաւ Հայաստանի մէջ.

տուած բոլորովին երեսէ չձգելով Հայաստանը՝ ան անդգամ Թագաւորներուն տեղը այնպիսի հայրապետներ տուաւ որ Թագաւորաց ընելու օգուտներն ու բարեկարգութիւնները իրենք կ'ընէին. ազգին խեղճութեանը կ'օգնէին և վշտակից կ'ըլլային, ըլլալու չարիքները ըստ կարի կը խափանէին, գեղծումնքներն ու անկարգութիւնները կ'արգիլէին, վերջապէս ազգին հոգևոր և մարմնաւոր պիտոյքը կը հոգային, ինչուան նաև Թշնամեաց բարկութիւնը իրենց՝ միջնորդ ըլլալով Հայոց Թագաւորին և օտար Թագաւորաց մէջ: Ա սուրբ հայրապետաց մէջ գլխաւորն է Մեծն Ներսէս որ անթիւ օգտակար բարեկարգութիւններ ըրաւ Հայաստանի մէջ, աղքատանոցներ, հիւանդանոցներ և դպրոցներ բացաւ, և անոնց համեմատ կարգեր դրաւ. իսկ Արշակ ընդ հակառակն անփոյթ ըլլալով ասոր բարեկարգութիւններուն՝ արգելք ալ եղաւ անոնց գործադրութեանը, որով մեծամեծ վնասներու և գրեթէ Թագաւորութեան կործանմանը պատճառ եղաւ. ուստի չենք կրնար չափսոսալ որ այսպիսի անպիտան Թագաւորներ յաջորդաբար Հայոց գահը ելլելով պղծեցին զանիկայ ու խարխլեցին որ այնչափ քաջ, առաքինի և խելացի Թագաւորներով անուանի եղեր էր ու ազգին ուրախութեանը պատճառ:

6. Երբոր Վաղենտիանոս գեսպան խրկեց Արշակայ որ Պարսից հարկ տալը դադրեցընէ, Արշակ գեսպանները նախատելով վռնտեց, և հարկ տալը դադրեցուց: Ա բանիս վրայ սաստիկ բարկացաւ Վաղենտիանոս, ու Արշակին Տրդատ եղբայրը՝ որ քովը պատանդ կեցած էր՝ մեռցնել տը-

6. Վաղենտինիանոս Արշակայ դէմ ունեցած բարկութենէն իւնչպէս զինքը իւնչէն սկսաւ Տիրիթ Գնեայ վրայ նախանձիլ.

ետ, ու Թէոդոս սպարապետը շատ զօրքով Արշակայ վրայ խաւրեց: Արշակ ասոր բանէն սարսափած՝ աղաչեց սրբոյն Ներսեսի որ միջնորդ ըլլայ Թէոդոսին ու կայսեր բարկութիւնը իջեցնէ: Երբոր լսեց Վաղենտիանոս սրբոյն Ներսեսի միջնորդութիւնը՝ իրաւ բարկութիւնը և փնտռտս մը չըրաւ Արշակայ· իսկ Տրդատայ որդւոյն գնելին հիւպատոսութեան պատիւ տուաւ շատ ալ ընծաներ՝ իր հօրը անիրաւ տեղը սպանուելուն համար: Ա բանիս տասնիկ նախանձեցաւ Տիրիթ Տիրանին Թոռը՝ ու առիթի մը կ'սպասէր որ ասոր իրեն նախանձոտ տեղութիւնը յագեցնէ: Երբոր գնել իր պապուն քովը գնաց որ Կուաշ աւանը կը նրսատէր, պատմեց իր հօրը Տրդատին Թշուառ մահը՝ որուն վրայ խիստ շատ ցաւեցաւ Տիրան· և ուզելով իր Թոռը մխիթարել, որով և ինքն ալ մխիթարուիլ, բոլոր իրեն ունեցած ժառանգութիւնները ու կալուածները ալ գնելին տուաւ· ասով աւելի զայրացաւ Տիրիթին նախանձը, մանաւանդ երբոր փառանձեմն ալ իրեն կին առնելով Թագաւորավայել հարսնիք ըրաւ, որով շատ մեծամեծ ներու հաճոյ ըլլալով անոնց սիրելի եղաւ: Տիրիթին համար շատ զօրաւոր պատճառ եղան ասոնք գնելայ կեանքը կարճեցընելու համար, ուսոր Վարդան անունով Մամիկոնեան նախարարի մը հետ միացած՝ գնելին վրայ ամբաստանութիւն ըրին Արշակայ առջև Թէ գնել կ'ուզէ Թագաւորել Հայոց վրայ, անոր համար եռւէ է նախարարները սիրտը իրեն քաշելու որուն համար ամենայն ջանք կ'ընէ կ'ըսէին: Արշակ որ առիթ կ'սպասէր, Այրարատայ գաւառէն վռնտել տուաւ գնելը· ասոր բանիս խիստ նեղանալով Տիրան յանդիմանութեան Թուղթ մը գրեց Արշակայ· Արշակ ալ անզգամութեամբ ծածուկ խղդել տուաւ Տիրանը:

7 · Անգամ մը Արշակ Վարդանայ ու Տիրիթի հետ Ծաղկոան ըսուած լեռան գովերը որսի ելեր էր · երբոր Արշակ կը պարծէր որսերուն ու առլոյն գեղեցկութեանը : Տիրիթ ու Վարդան սկսան վար զարնել, ըսելով Թէ գնեղին որսի անասուն գով բան մը չէ : Մեկէն Արշակայ նժոյգը շարժեցաւ և ուղեց հոն որսի երթալ · շուտով Թուղթ մը գրեց որ ամէն բան պատրաստ ըլլայ , ու ինքն ալ անդանդաղ եհաւ ձամբայ եկաւ որ եթէ պատրաստ չգտնայ զինքը , իբրև յանցաւոր սպաննել տայ · երբոր եկաւ ու տեսաւ որ ամէն բան պատրաստ է , ձայն չկրցաւ հանել , բայց նախանձը աւելի շարժելով ծածուկ ապրեցաւ Վարդանայ որ նեռով սպաննէ · ան ալ մեկէն կատարեց · եաքը իրեքը մեկէն սկսան լաց ու ողբ ձևացընել իբրև Թէ դիպուածով եղած ըլլայ · վերջը մեծահանդէս յուղարկաւորութիւն ըրին զուրկ ները խաբելու համար , բայց անօգուտ · վասն զի ամէնքը իմացան ու սուրբ Ներսէս խստիւ յանդիմանեց Արշակը և նզովեց զինքը ու իրեն գործակիցները սա անզգամութեան համար :

8 · Շապուհ Յունաց վրայ պատերազմի երթալու առեն կերակուր ուղեց Տիգրանակերտ քաղաքին բնակիչներէն · անոնք դռները գոցեցին ու արհամարհեցին զինքը · ուստի Շապուհ Յունաց հետ ունեցած պատերազմը լմնցնելով ետ դառնալու առեն՝ առաւ Տիգրանակերտը ու մեծ կարգ տուաւ քաղաքացւոց , մնացածներն ալ գերի ըրաւ :

9 · Նոյն միջոցներուն Արշակ ալ քաղաք մը շինեց իր անզգամութեանը յիշատակ , և անունը Ար-

7 · Գնել ինչպէս մեռաւ ·

8 · Տիգրանակերտը ինչպէս առնուեցաւ ·

9 · Արշակաւան քաղքին վրայ ինչ գիտեմնք կայ ·

շակաւան դրաւ. և որպէս զի քաղաքին բնակիչ-
ները շատնան՝ հրաման հանեց որ եթէ յանցաւոր
մը փախչի հոն, պատժէ ազատ ըլլայ. ասպա-
ճառաւ ամէն տեսակ անզգամներով լեցուեցաւ
քաղաքը՝ ուստի բոլոր նախարարները միաբան բո-
ղոքեցին Արշակայ որ ասանկ բանիս դարման ընէ.
բայց երբոր անիկայ մտիկ չըրաւ, օգնութիւն կան-
չեցին Շապուհ Պարսից Թագաւորը որ գայ իրենց
հետ միաբանի Արշակաւանը կործանելու համար.
Արշակ երբոր լսեց ասանկ՝ վրայ ապաւինե-
ցաւ: Ան միջոցին որ Արշակ վրացւոց օգնու-
թիւն առնելու գնացեր էր, նախարարները տիրե-
ցին Արշակաւանին ու բոլոր մէջի բնակիչքը թրէ
անցուցին բայց 'ի կաթընկեր ազգմէ՝ որ սրբոյն
Ներսեսի աղաչանքովը ազատեցան:

Արշակ վրացւոց օգնութեամբը նախարարնե-
րուն վրայ պատերազմի ելաւ ու երկու տարիի չափ
պատերազմելով՝ երկու կողմանէ ալ շատ մարդիկ
կարդուեցան: Ահա այսպիսի անպիտան Թագաւո-
րի մը ըրած չիշատակի արժանի գործողութիւն-
ները ասոնք են, որ բոլոր խռովութեանց, անիրա-
ւութեանց պատճառ եղաւ:

10. Երբոր Արշակ նախարարաց հետ կը պա-
տերազմէր, Վաղէս կայսրն ալ լսած ըլլալով որ
Արշակ օգներ է Շապուհին, նորին Թէոդոսը շատ
զօրքով վրան խաւրեց: Արշակ երբոր տեսաւ Թէո-
դոսի գալը բոլորովին անձրկիեցաւ և նորէն սուրբ
Ներսեսի ապաւինեցաւ որ ասանկ բաներուն դարման
տանի. ան սքանչելի ու հայրենասէր անձն ալ գը-
նաց շատ գժուարութեամբ հաշտեցուց նախարար-
ները Թագաւորին հետ, և վերջը Թէոդոսի բար-
կութիւնը իջեցուց պատանդ տալով Արշակայ Պապ

10. Ս. Ներսէս իմնչպէս աքսորուեցաւ, ու Ար-
շակ իմնչ վերջ ունեցաւ.

որպէն. խակ ինքը սուրբն Ներսէս Թէոդոսի խոր-
հըրդովը Սատնպօլ գնաց Վաղեսին բարկութիւնն
ալ հանդարտեցընելու համար. բայց Վաղես ա-
բիսեան ըլլալով մեկէն սուրբ Ներսէսը քշել տը-
ւաւ: Արշակ երբոր լսեց սրբոյն Ներսէսի քշուիլը
նորէն իր առջի ընթացքը սկսաւ բռնել. քանի մը
նախարարներ անկրաւ տեղը սպաննել տուաւ,
կամսարականաց ցեղը բոլորովին ջնջեց, բայց ի
Սպանդարատէն որ իր տղոցմովը փախչելով ազա-
տեցաւ: Նախարարները աս բաներս տեսնելով
առիթի մը կ'սպասէին որ Արշակայ չարութեյը վրէ-
ժը հանեն. ուստի նոյն միջոցներուն Շապուհ պա-
տերազմ բացած ըլլալով Արշակայ դէմ, նախա-
րարները միաբանեցան Պարսից հետ ու այնչափ
նեղը խոթեցին զԱրշակը որ անճնաոուր եղաւ,
ու Շապուհ ալ զինքը Այրուշ ըսուած բերդը խաւ-
րեց (380):

11. Հազիւ թէ ազգը Արշակայ բռնութիւննե-
րէն խալըսեցաւ, ահա անոր տեղը ելաւ ուրիշ ազ-
գատեաց մը՝ ազգին հիմը քանդող ու վնասակար,
որ է Մերուժան Արծրունեաց նախարարը. ասի-
կայ անափառութեամբ կ'ուզէր Հայոց Թագաւոր
ըլլալ. սակայ հաւատքը ուրացաւ և Պարսից կրօն-
քը ընդունեցաւ, որպէս զի անոնց օգնութեամ-
բը Թագաւորէ. ուստի Արշակայ բռնուելէն վերջը
ասիկայ շատ զօրքով Հայաստանի վրայ եկաւ, ու
մեծամեծ վնասներ հասցուց ազգին, շատ քաղաք-
ներ աւերեց աւրշրկեց ու անասլատ դարձուց:
Արշակ աս բաներս լսելով և յուսահատելով իր
վիճակէն, անգամ մը կերակուր ուտելու առեն
զարկաւ մեռցուց ինք զինքը: Այսպիսի Թշուա-
ռութեամբ կորսուեցաւ գնաց, առանց բարի յի-
շատակ մը Թողլու՝ որուն մահուանը վրայ և ոչ

11. Ո՞վ է Մերուժան Արծրունին.

մեկը լացաւ. ուրեմն տես թէ որչափ տարբերու-
թիւն կայ ան թագաւորին մէջ որ մեռնելովը բո-
լոր աշխարհք սուգի և ողբի մէջ կը ձգէ, և անոր՝
որուն մահուանը վրայ կ'ուրախանան աւելի քան
թէ կը տրտմին,

ԴԱՍ ԻԹ.

*Մերուժան Արծրունիին ըրած անզգամութիւնը
ևնրև ոչ մահը. Պարպայ և վաթազդատայ
թագաւորկլը:*

1. Շապուհ ուզելով որ Հայաստանի մէջ նո-
րէն կռապաշտութիւն խոթէ, խոստացաւ Մերու-
ժան Արծրունիին որ եթէ կարենայ առաջ տանիլ
աս բանս, զինքը Հայոց թագաւոր կը դնէ. ուստի
բազմութեամբ զօրաց և շատ մոգերով Հայաստան
խաւրեց որ երթայ խոստացածը արդեամբք՝ ի գործ
դնէ: Մերուժան բռնութեամբ Հայաստան մտաւ
և շատ մարդ նահատակեց, եկեղեցիները կռաւոուն
շինեց, բոլոր Յունարէն գրով գտնուած գրքերը
այրեց և արգիլեց որ Յունարէն չսորվին: Ա՛ս բա-
ներս լսելով սուրբ Ներսէս որ աթոռանիքէն դաս-
նալով դեռ Սամոսիոլ էր, աղաչեց Թէոդոս կայ-
սեր որ Պարսից թագաւոր դնէ Հայոց վրայ և Հայաս-
տան խաւրէ, որպէս զի քրիստոնէութիւնը պաշտ-
պանէ Պարսից և Մերուժանայ դէմ. Թէոդոս ալ
զինքանելով սրբոյն Ներսէսի աղաչանացը կատարեց
իրեն խնդիրքը օգնական տալով Տերենտիանոս զօ-

1. Ի՞նչպէս կրցաւ Մերուժան բռնութեամբ
Հայաստան մտնալ ու ի՞նչ վնասներ ըրաւ.

բավարը: Մերուժան լսելով Պապայ գալը մեկնի Պարսկաստան փախաւ հրաման տալով որ նախապարագ կանայքը բերդերէն կախեն. աս երբոր տեսան նախարարները կասղեցան ու բերդերուն վրայ վազելով սկրեցին անոնց ու մեջի Պարսիկ պահապանները ջարդեցին:

2. Մերուժան նորէն այլ և այլ ազգերէ զօրք ժողված վազեց Հայաստանի վրայ. նոյնպէս նաև Տերենախանոս ալ շատ զօրք ու շատ պատերազմական գործիքներ բերել տուաւ Ադդէ զօրավարին հետ մեկտեղ Պօլսէն: Երբոր պատերազմը սկսան սուրբ Ներսէս Նպատ լեռան վրայ ելաւ ու բազկատարած սկսաւ աղօթել պատերազմին յաջողութեանը համար. և որովհետև արևը Հայոց բանակին դիմացէն էր և զներենք կը նեղէր՝ սրբոյն աղօթքովը ամպ մը եկաւ ու արևը ծածկեց. նոյնպէս նաև հով մը ելլելով Պարսից նետերը իրենց վրայ կը դարձընէր: Ասով սիրտ առած Հայերը սկսան կատաղաբար ջարդել Պարսիկները, ու Սպանդարատ Կամսարականը մեկ զարնելով սպաննեց Ղեկաց Շերգիր Թագաւորը որ արդէն առիւծի պէս մարդ մը ըլլալով, և չորս դին ալ կորիճ զինուորներով պաշարուած անհնարին ջարդ կուտար Հայոց բանակին: Նոյնպէս նաև Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Կարէն քաջ սպարապետը սպաննեց ուրիշ շատ քաջութիւններ ընելով:

3. Պատերազմին տաքցած միջոցները Մերուժանին ձին վիրաւորուելով չկրցաւ Պարսից զօրաց հետ փախչիլ ու եաև մնաց. աս բանս տեսնելով Սմբատ Բագրատունին եաևէն վազեց ու հասնելով

2. Հայերը ինչպէս հրաշքով և իրենց քաջասիրտ արիութեամբը յաղթեցին Պարսից.

3. Մերուժանը ին սպաննեց.

բանեց ու կ'ուզէր բանակը բերել· բայց երբոր մը-
տածեց որ եթէ սուրբ Ներսէս իմանայ պիտալով
վրան կ'արձակէ զինքը, ուզեց հոն սպաննել· և
չորս գին նայելով տեսաւ որ հոն մօտիկները վա-
ղաբնակ գիշուններ կրակ վառած միս կը խորովեն
շամփուրով· ուստի քովերնին մօտենալով կըր-
ցուց շամբուրը ու կրակի պէս տաքցընելով Մե-
րուժանայ գլուխը դրաւ՝ ըսելով· « Որովհետև
կ'ուզեիր Հայոց Թագաւոր ըլլալ, ահա ես կը պատ-
կեմ զքեզ իմ հայրենական իշխանութեամբս » ու
այնպէսով սատկեցաւ: Ահա ատ է աղգատեաց,
փառամոլ ու շահասէր մարդուն վախճանը, որուն
սակէց աւելի գեղեցիկ փոխարէն չէր կրնար դըր-
նուիլ իր անթիւ չարեացը համար, և ոչ սակէ ա-
ւելի արժանավայել Թագով պսակուիլ (381):

4· Երբոր այսպիսի փառաւոր յաղթութեամբ
լմնցաւ պատերազմը, Պապ շատ ընծաներով Յու-
նաց զօրքը ետ խաբրեց, և Տերենտիանոսի ալ շատ
պարգևներ տալով, Հայաստանի մէջ բնակեցուց:
Իսկ սուրբ Ներսէս՝ նախարարները և Թագաւորը
մէկ տեղ ժողվելով զամենքը յորդորեց որ ա-
ռուածպաշտութեամբ կեանքերնին անցընեն, Թա-
գաւորին հաւատոքիմ ըլլան, ու Թագաւորն ալ
զնրենք հօր պէս արդարութեամբ խնամէ ու պահ-
պանէ: Այսպէսով քիչ մը խաղաղացաւ աշխարհ-
քը և Պապ քանի մը նախարարներուն իրենց քա-
ջութեանցը համեմատ պարգևներ ու պատիւներ
տուաւ:

5· Ա՛ս խաղաղութեան զինադադարումը ափսո՛ս
որ երկար չտևեց, վասն զի Պապ Թէպէտ և ար-

4· Ա՛ս պատերազմէս ետքը ի՞նչպէս քիչ մը ա-
տեն խաղաղացաւ Հայաստան·

5· Պապ ի՞նչու Թունաւորեց զսուրբ Ներսէս ու
ինքը ի՞նչ մահ ունեցաւ·

ապքուսա լաւ կը ձևանար, բայց ծածուկ անկարգ ու անառակ կեանք կ'անցընէր. ասոր բաներուս համար սուրբն Ներսէս միշտ կը խրատեր զինքը. բայց Պապ ձանձրանալով անոր սքանչելի խրատներէն ծածուկ թոյն տուաւ ու զրկեց զՀայաստան ան հրաշալի և սքանչելի հօրէն, որուն հայրապետի խնամոցը կը վկայէին մարգկանց հետ նաև անբան անասուններն և անշունչ արարածները: Պապ ասոնց անօրէնութիւնս ընելէն եառքը իրեն ախտերովը և ամբարտաւանութեամբը կուրցած ուզեց Թէոդոս կայսրէն ապստամբիլ. ուսոի Տերենտիանոսը Հայաստանէն վռնտեց ու սկսաւ պատերազմի պատրաստուիլ. բայց Թէոդոս շատ զօրք և հրաման խնդրեց Տերենտիանոսին որ Պապայ հետ պատերազմի, որ բռնեց զինքը և շղթաներով կապած Պօլիս Թէոդոսին դիմացը հանեց: Թէոդոս ալ հրամայեց որ սակրով գլուխը կարեն իրեն չարութեանցը փոխարէն, իրեք տարի Թագաւորելէն վերջը:

6. Պապայ տեղը Մեծն Թէոդոս Վարազդատ արշակունի իշխանը Հայոց Թագաւոր դրաւ, որ որ խիստ շատ քաջութիւններ ըրած էր ոլիմպիականի խաղերուս մէջ, և ամէն տեղ իրեն քաջութեան անունը հռչակուած էր: Գլխաւոր քաջութիւնները որոնք կը պատմէ Խորենացին ասոնք են. Թէատրոնի մը մէջ քանի մը առիւծներու դէմ ելլելով յաղթեց անոնց ու սպաննեց: Անգամ մը երբոր Լոնգոբարտացւոց դէմ պատերազմի գացեր էր, ինքը միևնակ հինգ Լոնգոբարտացիի դէմ մենամարտութեան ելաւ. հինգն ալ հոն եռևէ եռև սպաննեց ու ինքը չվնասուեցաւ. գարձեալ ուրիշ անգամ մ' ալ վազեց կատաղաբար բերդի մը վրայ,

8. Վարազդատ ոմվ է ու ինչ քաջութիւններ կը պատմուին վրան.

ու այնպիսի արագութեամբ և յաջողութեամբ պատերազմեցաւ որ քանի մը վայրկենի մէջ բոլոր պարսպին վրայի եղած պահապանները նետով սպաննեց, որոնք տասնըեօթը հոգի էին: Վերջի բայց գրեթէ ամենէն մեծ քաջութիւնը սա եղաւ՝ որ երբոր Թագաւորութիւնը առած Յունաց զօրքով Հայաստան կուգար, Ճամբան ասորի սպաղակներու հանդիպեցաւ, որոնց եռևէն վազելով հալածեց զիրենք. անոնք երբոր նեղը մտան, Եփրատա գետէն անցնելով վրայի կամուրջի տեղ դրուած գերանը գետը ձգեցին: Արագագաս կատղեցաւ սա բանիս և անանկ ուժով ցաթիկեց գետին վրայէն, որ կարծես թէ սասակ բռնութեամբ ձգուած մեծահասակ քարի մը պէս մէկ մաներ. կմորդի մէջ գետին անդին կողմը ինկաւ, որուն լայնութիւնը քսանուերկու կանգնաչափ էր. երբոր տեսան սա բանս սպազակները մէկէն զէնքերնին ձգեցին ու անձնատուր եղան: Արագագաս Թագաւորութիւնը առնելէն վերջն ալ շատ քաջութիւններով բոլոր Թշնամիները վախցուց. բայց քանի մը տարիէն չկրնալով Յունաց զօրավարներուն ամբարտաւանութեանը դիմանալ ուզեց Յոյներէն ապստամբիլ և Պարսից հարկատու ըլլալ. բայց երբոր խմացաւ Թէոդոս կայսրը Պօլիս կանչեց զինքը. ան ալ յուսալով որ եթէ անձամբ երթայ կրնայ ինքզինքը արդարացընել երթաց. բայց Թէոդոս առանց երեսն ալ տեսնելու Թուլիս կղզին քշեց, չորս տարի Թագաւորելէն վերջը:

ԴԱՍ Ի.

Սրչակ Գ. Վաղարշակ Բ. Խոսրով Գ. Վռամշապուհ։

1. Թէոդոս տեսնելով որ Հայոց Թագաւորները կ՚ապստամբին իրմէ, մտածեց որ երկու Թագաւոր դնէ, որպէս զի չկարենան միաբանելով ապստամբիլ։ Ուստի Պապայ երկու տղաքը Արշակն ու Վաղարշակը Թագաւորեցուց Հայոց վրայ։ Արշակ Դուին նստեցաւ ու Վաղարշակ Եկեղեաց, որ տարի մը չԹագաւորած մեռաւ։ Իմանալով Շապուհ որ Մեծն Թէոդոս մեռեր է, ու տեղը Արկադիոս որդին յաջորդեր է, որ տակաւ մարդ մըն էր, ուզեց հաշտութիւն ընել որպէս զի Հայաստանին մէկ մասն ալ Պարսից հարկատու ըլլայ. ուստի որոշեցին որ արեւմտեան մասը Յունաց հարկատու ըլլայ և արեւելեանը Պարսից. ան պատճառաւ Արշակ, որ արեւելեան մասին Թագաւոր էր, չուզեց անհաւատ Պարսից տակն ըլլալ, արեւմտեան կողմը եկաւ, աթոռը Երիզա քաղաքը դրաւ, հեռու ալ շատ նախարարներ մէկտեղ եկան՝ իրենց կալուածները Թողլով։

2. Շապուհ իր մասին վրայ Թագաւոր դրաւ

1. Թէոդոս ինչու երկու Թագաւոր դրաւ Հայոց վրայ ու իրեն մեռանելէն ետքը ինչ փոփոխութիւններ ըրին Պարսիկք և Յոյնք Հայաստանի նկատմամբ.

2. Արշակայ ու Խոսրովու մէջն եղած պատերազմը ինչէն բացուեցաւ.

Խոսրով երթորդը, և Արշակայ հետ գնացող նշխաններուն ալ Թուղթ գրեց, յորդորելով որ դառնան գան, և թէ իւրաքանչիւրին երեն կը դարձընէ առջի ունեցած կալուածները. ասոնք պատճառաւ նախարարներէն շատը նորէն եկան գնացին Պարսից մասը՝ բայց՝ ի մէկ քանիէն: Առնք երթալու առեննին Արշակայ գանձերն ալ կողոպտեցին՝ Խոսրովու տարին. Արշակ դեսպան խրկեց Խոսրովին որ գանձերը ետ դարձընէ. բայց երբոր ա նիկայ չտուաւ, պատերազմ բացուելով մէջերնին՝ շատ արիւնհեղութիւն ըլլալէն ետքը Արշակ սասանիկ յաղթուեցաւ և Երզնկայ դառնալով հիւանդացաւ ու մեռաւ՝ հինգ կամ եօթը տարի Թագաւորելէն վերջը:

3. Կայսրը յոյն կոմս մը դրաւ Արշակին տեղը. անոր համար նախարարները բարկանալով Խոսրովին մասը գացին. և Խոսրով խոստանալով կայսեր Յունաց մասին հարկն ալ տալու՝ ան մասին ալ Թագաւորութիւնը ինքը առաւ ու բոլոր Հայաստանի տիրեց: Բայց քանի մը նախարարներ մանաւոր Թշնամութիւն ունենալով Խոսրովու հետ, անխնչքութեամբ յարմար առենի մը կ'սպասէին որ մէնաս մը հասցընեն Խոսրովու. ուստի երբոր Աապուրակէս կաթուղիկոսին մեռնելէն վերջը մեծն Սահակ Պարթևը կաթուղիկոս դրուեցաւ, գնացին ասոնք ամբաստանութիւն ըրին Շապհոյ Թէ Հայերը կ'ուզեն ապստամբիլ, և ահա տասը նշան՝ առանց Պարսից Թագաւորէն հրաման առնելու կաթուղիկոս դրին: Շապուհ հաւատալով ասոնց՝ դեսպան խրկեց Խոսրովու որ իրեն գայ. բայց Խոսրով յանդիմանեց դեսպանները և բանի տեղ չեանգեց Շապհոյ հրամանը: Շապուհ ասոնք

3. Խոսրով իւնչու համար Անյուշ բերդը վախուեցաւ, ու ո՞վ են Շաւարշ ու Պարգև.

նիս վրայ շատ նեղացած՝ իր Արտաշէր որդին շատ զօրքով Հայաստանի վրայ խրկեց: Խոսրով յուսահատած՝ ելաւ Արտաշէրին գնաց, որ չղճանելով կապեց վինքը ու տեղը անոր Վռամշապուհ եղբայրը Թագաւոր դրաւ. զուրբն Սահակ կաթուղիկոսութենէ ձգեց, և Գաղաւոն նախարարը՝ որ ան տեննելը խիստ երևելի էր՝ խարդախութեամբ քովը կանչելով բռնեց ու չղճայի զարկաւ: Նոյն իրիկունը Գաղաւոնին եղբայրը Շաւարշ և Պարգև Ամատունին եօթը հարիւր կարճ մարդիկներով գնացին որ Խոսրովին ու Գաղաւոնը ազատեն, բայց դժբաղդութեամբ հնարքնին չյաջողելով հարկադրեցան Պարսից հետ պատերազմելու. իրաւ է որ իրենց քիչութիւնեանը համեմատ՝ շատ հռոմայեցներ ըրին Պարսիկներէն, բայց ափսոս որ Շաւարշ մեռաւ, Պարգևն ալ բռնուելով Արտաշէրին դիմացը տարուեցաւ, որ հրամայեց կաշին ափիկ հանել. իսկ զԽոսրով Պարսկաստան տանելով Անյուշ բերդը դրաւ և դիմացը կայնեցուց Պարգևին կաշիէ տիկը: Ահա բարբարոսութեան դառն պտուղներէն մէկը (392):

4. Վռամշապուհ իր եղբօրը տեղը յաջորդելով, ուսումնասէր ու հանդարտաբարոյ և խոհեմ բնութեամբը մեր անուանի Թագաւորներէն մէկը եղաւ, Թէպէտ և քաջութեան կողմանէ մանաւանդ բան մը չունի: Ըստ ամենայնի Պարսից հպատակութենէն ցուցընելով սիրելի եղաւ Պարսից Վռամկըրման Թագաւորին, անոր համար Կրման ուղեղով Վռամշապուհին հաճոյական բան մը ընել՝ Խոսրովը Անյուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր: Վռամշապուհ ասանկ խաղաղութեամբ և հանդարտութեամբ քսանուերկու տարի Թագա-

4. Վռամշապուհ ինչ կերպով ըրաւ իրեն Թագաւորութիւնը և վերատոր արդիւնքը ո՞րն է.

ուրեքէն վերջը մեռաւ, իր բարի անունը յիշատակ կանգնելով ազգասիրաց սրտին մէջ, երախտագիտութեան անմահական արձանը:

Վ. Համշապհոյ գեղեցիկ արդիւնքներէն մէկն է իր ուսումնասէր բարքը, որ Հայաստանի ուսմանց ոսկեդարեան տաճարին ոսկեձոյլ սիւներէն մէկն եղաւ Սահակայ, Մեսրոպայ ու Խորենացւոյն հետ: Իր տաճը գտնուեցան մեր գեղեցկահիւս երկնապարգև գրերը, իրեն հովանաւորութեամբն ու եռանդեամբը ան գրերուն արդիւնքը երևցաւ, որով այնպիսի պքանչելի գրաւորական ճոխութեան ժառանգորդ եղանք: Վ. Համշապհոյ միայն գործակից, քաջալերիչ ու օգնական եղաւ, իսկ մեկնաւնք գործն և արդիւնք, որով կ'իմացուի թէ որչափ աւելի երախտագէտ պիտի ըլլանք անոնց որ այսպիսի անհամեմատ բարեաց պատճառ եղան, և առանձինն հայկական տառից գիւտովը, որ ասանկ հրաշալի կերպով եղաւ:

Ե. Վ. Համշապհոյ Թագաւորութեան ժամանակը մեծ անուն հանած էր Մեսրոպ վարդապետը Տարոն գաւառէն իրեն սրբութեամբն ու իմաստութեամբը, և մեծին Ներսեսի աշակերան ըլլալով անոր հայրենասիրութեան ու բարեպարութեան հոգին զգեցած էր: Երբոր ինքը անապատ քաշուած կը ճգնէր, լսեց սրբոյն Սահակայ համբաւը, քովը եկաւ ու վարդապետութեան պատիւ առնելով անկէ՝ սկսաւ ամէն տեղ քարոզութիւն ընել քանի մը աշակերտներով, և եռանդ ըլլալ գիտութիւնները ծաղկեցընելու. բայց տեսնելով մեր ազգին յառաջանալուն միտքները և առնով ուսմանց յառաջանալուն գժուարը ըլլալը, երկուքը միաբան սկսան եռանդ ըլլալ գիր գտնելու.

Ե. Հայկական տառից գիւտը որո՞ւն ձեռքովը եղաւ ու ինչպէս.

բայց չատ աշխատելէն եռքը երբոր մարդկային հնարքներէ յոյսերնին կտրեցին՝ աղօթքի սպասինեցան: Սուրբն Մեսրոպ քանի մը աշկերտներով ելաւ Եգեսիա գնաց՝ Պզատոս անունով մեծատունն փիլիսոփայի մը քով որ չատ հռչակուած էր աս տեսակ բաներու ճարտար ըլլալուն համար. բայց յոյսը պարապ ելլելով, անկէ Սամոսատա գնաց՝ Հռուփանոս անունով ուրիշ փիլիսոփայի մը քով, որ նոյնպէս ան ալ մեծ անուն ունէր. բայց անօգուտ եղաւ ան ճամբորդութիւնն ալ, որովհետեւ լոյս մը չկրցաւ առնել իր խնդրոյն վրայ: Տեսնելով սուրբն Մեսրոպ աս դժուարութիւնները՝ նորէն Աստուծոյ առջեւ սպրածեց իր սրտանուչ մաղթանքները. և ահա յանկարծ տեսիլք մը տեսաւ, որով սրտին մէջ տպաւորուեցան աստուածապարգեւ լեզուին գրերը. տեսիլքն որ անցաւ՝ սուրբն Մեսրոպ գրեց տառերը ու փորձեց տեսաւ որ լեզուին բոլոր յատկութեանցը յարմար էին, ան գրերը կարգի դնելով մեր այբուբենքը ձեւացուց: Ա՛ս գրերով հայերէն առակին գրքուածքը եղաւ՝ Սողոմոնի Առակաց գրքին թարգմանութիւնը, որ երբոր տեսաւ ըստ ամենայն մասանց յայտնած՝ առաւ մեծ ուրախութեամբ Հայաստան բերաւ: Մէկէն թագաւորը սրբոյն Սահակայ և սրբոյն Մեսրոպայ հետ միաբան, դպրոցներ ու արհեստանոցներ բանալ տուաւ և մեծ չանք ունեցաւ անոնց յառաջադիմութեանը. որով քիչ միջոցի մէջ ամէն բան առաջ երթալով, ունեցաւ Հայաստան ալ՝ թէպէտ սակաւատաւ՝ բայց գեղեցիկ սկիզբ մը՝ իր գրականութեանը պարծանք:

6. Որովհետեւ վռամշապուհին որդին Արտաշէս գեռ պզտիկ էր, նախարարները խնդրեցին Յաղկէտէն որ զխոսրով երրորդը նորէն իրենց թա-

գաւոր նսաեցնէ· բայց խօսքով հազիւ թէ տալի մը թագաւորեց՝ մեռաւ, և նորէն Հայաստան տակն ու վրայ եղաւ, այնպէս որ ինչուան թագաւորութիւնն ալ կործանեցաւ: Վասն զի Յազկերտ ուզելով որ Հայերը արևապաշտ ընէ, փոխանակ մեր ազգին մէկը թագաւոր դնելու՝ իր Շապուհ որդին թագաւորեցուց, Հայոց վրայ, որ կը չանար պարսկական ծոներ, հանդէսներ ընելով կամաց կամաց Հայերը ընտանեցընէ արևապաշտութեան· իսկ Հայերը իմանալով Յազկերտին միտքը սկսան արհամարհանօք վարուիլ Շապուհին հետ:

7· Անգամ մը Շապուհ Հայոց նախարարներուն հետ մեկտեղ որսի գնացեր էր, անոնց հետն էր նաև Առոմ Մոկացի քաջ նախարարը· ասոնք հեռուէն վայրի էշերու երամակ մը տեսնելով սկսան եռնուն խնալ ու հալածել· երբոր վայրի էշերը քարոտ ու ժայռոտ տեղեր ելլելով իրենց որջերը քաշուեցան, նախարարները ուզելով իրենց քաջութիւնը ցուցընել Շապուհին, սկսան ժայռերէն վեր արշաւել· բայց Շապուհ վախկոտ ու միանգամայն անվարժ ըլլալով մեկդի քաշուեցաւ· ան ատեն Առոմ Մոկացի նախատեց զինքն ու ըսաւ· « Ինչո՞ւ վատութեամբ կեցեր ես ով Պարսից աստուածորդի, չվազե՞ս դուն ալ թէ որ մարդ ես ու մարդու քաջութիւն ունիս »: Պատասխան ըսաւ Շապուհ· « Սատանաները միայն կրնան ատանկ քարոտ տեղերէ վեր ելլել, ու ոչ եթէ մարդիկ »· որով նախարարները սատանայի տեղ դրաւ: Առոմ ան նախատինքը միտքը պահեց ու առթի մը կ'սպասէր որ ան խօսքին վրէժը հանէ Շապուհէն: Ուստի երբոր ուրիշ անգամ մը կինձ

7· Հայերը ինչ դիպուածներու մէջ իրենց ընդդիմութիւննին ցցուցին Շապուհին դէմ ու Շապուհին տեղ վնասմ գրաւ·

որսալու գայեր էին, ինչպէս որ սովորութիւն էր, եղեգնուտին կրակ տուին. Ջապուհ դանդաղելով չկրցաւ եղեգնուտէն դուրս ելլել ու կրակը չորս դին առաւ: Առովմ իմանալով որ Ջապուհ վտանգի մէջ ու օգնութեան կարօտ է, մօտեցաւ Ջապուհին քովէն ու ծաղը ընկելով ըսաւ. « Ահա քու հայրդ ու աստուածդ, ինչո՞ւ կը վախես »: Ջապուհ նեղանալով ըսաւ. » Կատակի առեն չէ հիմայ. շուտով անցիր ու դուրս ելլիր որ ես ալ կարենամ եւէդ գալ, որովհետեւ ձիս խրտան է »: Առովմ աւելի համարձակութիւն առնելով Թագաւորին վախկոտութենէն ըսաւ. « Գիտցիր չափդ ու անկէ աւելի մի յոխորտար. Թէ որ դուն Մոկացիները սատանայի որդի կը կոչես, ես ալ զՊարսիկները կնամարդի ու վատ կը կոչեմ »: Ա՛ս ըսելն վերջը զարկաւ ձիուն, անցաւ կրակին մէջէն և Ջապուհը ազատեց: Բայց գիտնալով որ ատ երեն համարձակախօսութիւնները Ջապուհին ծանր եկած են, Թողուց Հայաստանն ու իր Մոկաց աշխարհը քաշուեցաւ: Ատոր նման ուրիշ քանի մը նախատական դէպքերով այնչափ բարկացուցին զՋապուհ, որ առթի մը կ'սպասէր Պարսկաստան փախչելու. ուստի լսելով որ Յազկերտ իր հայրը հիւանդացեր է, Ջամբայ ելաւ Պարսկաստան երթալու: Ջապուհ երթալու առեն հրաման տուաւ իր զօրագլխին որ վերջը Հայոց նախարարները բռնէ ու իր եւէդն Պարսկաստան խաբէ. բայց հազիւ Թէ ինքը Պարսկաստան հասեր էր՝ հայրը մեռաւ, ինքն ալ իր քովի մարդիկներէն սպանուեցաւ: Նախարարները իմանալով Ջապուհին հրամանը՝ ամէնքը միաբան Պարսից զօրքը հալածեցին Հայաստանէն, ու շատ մարդ ալ սպաննեցին: Բայց վախնալով Պարսից վրէժ Թագաւորէն՝ ամէնքն ալ երենց բերդերը քաշուեցան, ու Պարսիկները շատ նեղութիւն տուին երենց մօտին

մէջն եղած Հայոց : Վռամ տեսնելով որ առանց մէկ գլխի մը չկրնար ժողվել տվօրական հարկը, հաշտութիւն ըրաւ նախարարներուն հետ, ու Վռամշապուհին որդին Արտաշէս երրորդը Թագաւորեցուց որ տասներուքը տարեկան էր : Առջի բերան ուրախանալով գոհ եղան նախարարները. բայց քիչ ատենէն տեսնելով Արտաշէսին անկարգութիւնները՝ զզուեցան իրմէ և կ'ուզէին Թագաւորութիւնը Պարսից տալ. աս բանիս չատ դէմ կեցաւ սուրբն Սահակ, գիտնալով որ ազգին կորընաքանը և մեծամեծ վնասներու պատճառ է. բայց նախարարները ձանձրացած ըլլալով անանկ անկարգ Թագաւորներէ՝ մինչ կ'երթին սրբոյն Սահակայ խրատին ու դացին Վռամէն խնդրեցին որ Թագաւորութիւնը վերցընէ ու անոր տեղը Պարսիկ իշխան մը դնէ :

8. Վռամ նախարարներուն խնդիրքը լսելով կանչել տուաւ զսուրբն Սահակ ու զԱրտաշէս : Արտաշէս թէպէտ և ինքզինքը արդարացուց ըսելով որ տերութեան դէմ յանցանք մը ըրած չունի, բայց Վռամ ուզելով Թագաւորութիւնը վերցընել՝ զսուրբն Սահակ բանտ դրաւ, Արտաշէսի ալ Պարսկաստանի ներսերը քշեց ուր իրեք չորս տարի ալ ապրեցաւ ու մեռաւ, վեց տարի Թագաւորելէն ետքը : Ահա աս կերպով վերջացաւ Արշակունեաց հզօր Թագաւորութիւնը Ք. ի. տոսի 428 Թուականին, 580 տարի դիմանալէն ետքը :

9. Արշակունեաց Թագաւորութեան վերջանալուն բոլոր պատճառները հոս շարելը աւելորդ կը սեպենք, որովհետև պատմութեան ետին աւելի


8. Արշակունեաց Թագաւորութիւնը ինչպէս վերջացաւ.

9. Արշակունեաց Թագաւորութեան վերջանալուն պատճառները որո՞նք եղան.

ընդարձակ խօսած ենք. հոս հասնելու մը կ'ուզենք յիշել նախապարագայ անխոհեմ գործողութիւնը, որով մեր Արշակունեաց թագաւորութիւնը կործանեցին: Գործողութեան պախարակելի ըլլալը ամենուն ալ յայտնի է. վասն զի մարդուս ևս առաւել ազգի մը ազատութիւնը առաւածային առըք ըլլալով, առուղը միայն կրնայ վերցընել առ գերեզիկ ձիրքը ան իշխանութեամբը՝ որով առեր է. ուսոի ով որ պատճառ կ'ըլլայ վերնալուն և կամ ինքը կը վերցընէ, իրաւամբք առելի է ամենուն ու Աստուծոյ պատիժը կը սպասուի: Եթէ թագաւորը գէշ էր, կրնային զինքը թագաւորութենէն զրկել, թէ որ ազգին ու հասարակաց օգուտը անանկ պահանջէր. որով ոչ միայն կ'արդարանար իրենց գործողութիւնը, հապա յաւիտենական օրհնութիւն կը ժառանգէին. իսկ հիմայ փոխանակ օրհնութեան անէծք կը ժառանգեն, որովհետև որչափ թագաւորին գէշութիւնը՝ նոյնչափ ալ իրենց անկրթութիւնը, հասարակաց բարին չմտածելը, ու ասոնցմէ առաջ եկած չարիքներուն պատուղներն են, որով իրենց կրնցը զոհ ըրին այնչափ ժողովուրդ գերութեան մատնելով. և այնպիսի սոսկալի գերութեան մը մատնեցին ան գեղեցիկ ձիրքերով զարդարուած ազգը, որ բոլոր ունեցած օքանչելի ու օտարաց նախանձելի առաքինութիւնները խանգարուելով, այնչափ թշուառութեանց մէջ ընկաւ՝ որ պատմութեան յաջորդ թերթերուն մէջը պիտի տեսնենք ու լսենք:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ա Յ



ԴԱՍ ԻԱ.

Վ. Եհմիհրշապուհ առաջին մարզպան, և Վարդանանց պատերազմը :

1. Արշակունեաց Թագաւորութենէն վերջը մարզպան դրուեցաւ Վ. Եհմիհրշապուհ անունով պարսիկ իշխան մը, որ բնութեամբ խաղաղասէր և ազնիւ մարդ ըլլալով շատ լաւ կառավարեց Հայաստանը տասնըչորս տարի. և երբոր ինքը մեռաւ՝ տեղը անցաւ Վ. Սահակ Սիւնի, փառասէր, անհաւատ, նախանձոտ, ազգաւեաց նախարարը, որ փոխանակ ազգին ուրախութեան և երջանկութեան պատճառ ըլլալու իբրև Հայ, թշուառութեան և մեծ տրտմութեան պատճառ եղաւ Հայաստանի :

2. Յաղկերտ երկրորդ Պարսից Թագաւորը ուզելով որ ամէն իրեն հարկաւոր ազգերը արևա-

1. Արշակունեաց Թագաւորութեան կենալէն առքը ազգերնիս ինչ վիճակ ունեցաւ.

2. Յաղկերտ ինչ հնարք մտածեց Հայերը ա-րևապաշտ ընելու.

պաշտ ըլլան, ամէն ձար մտածելէն վերջը՝ մոգե-
րուն խորհըրդովը հրաման խաւրեց Հայոց, Աղուա-
նից, Վրաց, որ մէյմէկ բազմաթիւ գնդեր խաւ-
րեն, որպէս զի կարենայ ազգին երեւելի զօրավար-
ներն ու նախարարները հեռացընել ու մնացած-
ները դիւրաւ արեւապաշտ ընել: Ազգին վրայ ալ
սէր ցուցընել ուզելով, նախարարներէն մէկ քա-
նին պատուեց ինչպէս Վասակայ Սիւնեաց նախա-
րարին մարզպանութիւն տուաւ, և Վարդան Մա-
միկոնեանին ընդհանուր սպարապետութեան պա-
տիւը (442):

Հայերը խորհուրդ ըրին մէջերնին ու բազմա-
թիւ գունդ մը խաւրեցին՝ շատ քահանաներով ու
բազմութեամբ նախարարաց, որպէս զի անհատա-
տարմութեան կասկած մը չտան Յազկերտին. ա-
նոնց հետ մէկտեղ գացին նաև Վասակ ու Վար-
դան. նոյնպէս Աղուանից և Վրաց զօրքերն ալ ե-
կան: Յազկերտ երկու տարի Հոնաց դէմ պատե-
րազմ ընելէն վերջը երբոր չկրցաւ յաղթել՝ դար-
ձաւ Պարսկաստան, ու սկսաւ նախարարները յոր-
դորել և սոխել որ արեւուն երկրպագութիւն ը-
նեն: Նախարարները միաբան դէմ կեցան Յազ-
կերտի, ոմանք ալ նահատակուեցան, ինչպէս Գա-
րեգին, Առոմ Գնունի ու Մանաճիհր Ռշտունի
իրենց զօրքովը. մէկալ նախարարներն ալ շատ
սոխելէց, բայց չկրցաւ մոքերնուն հաստատու-
թիւնը խախտել:

3. Նոյն միջոցին Յազկերտ Դենշապուհ անու-
նով մարզպան մըն ալ Հայաստան խաւրեց որ եր-
թայ ծանր տուրքերով և ուրիշ նեղութիւններ
տալով Հայերը դարձընէ. խակ նախարարները

3. Ի՞նչպէս սկսաւ Պարսից կրօնքը Հայաստա-
նի մէջ տարածուիլ ու ի՞նչ դիտելիք կայ Վարդա-
նայ ու Վասակ Սիւնիին վրայ.

սաստիկ բանակ մը մէջ գրած կը նեղէր, ըսելով որ եթէ հաւատքին ուրանան՝ զիրենք ազատ կը թողու: Նախարարները տեսնելով որ առանց իրենց Հայաստան ոտքի տակ պիտի երթայ, մոտածեցին՝ անգամ մը արտաքուստ ուրանալ հաւատքնին, որպէս զի գերութենէն ազատելով կարենան օգնել ամբողջ աշխին. այսպէսով մէջերնին միաբանելով արևու և կրակի երկրպագութիւն ըրին. վերջը Յազկերտէն պատիւ գտած Հայաստան դարձան եկան. անոնց հետ մէկտեղ եկան խել մը մոգերու բազմութիւն, որպէս զի Հայերը կրակապաշտութեան մէջ կրթեն: Երբոր տեսան Հայերը սա մոգերը, սրբոյն Ղևոնդի և ուրիշ սուրբ քահանայից առաջնորդութեամբը մոգերուն վրայ վազեցին, շատ մարդ մեռուցին շատն ալ վիրաւորեցին, մնացածներն ալ լեղապատառ փախուցին: Վարդան որ արտաքուստ միայն ուրացեր էր, տեսնելով որ մոգերը վռնտուեցան Հայաստանէն, մէկէն եկաւ Յովսէփ կաթուղիկոսին և ուրիշ քահանայից ոտքը ընկաւ, թողութիւն խնդրելով ա կատայ ուրացութեանը: Իսկ վասակ արտանց ուրացած ըլլալով չէր ուզեր որ մոգերը երթան Հայաստանէն, ուստի խաբէութեամբ կ'ըսէր որ առժամն ընդունին մոգերը, որպես զի Յազկերտ վրանին չբարկանայ, ու վերջը կամաց կամաց դուրս հանեն զիրենք. ասով շատին միտքը համոզուեցաւ, մանաւանդ Թուրհասանները, և շատ տեղ կրակապաշտութիւնը սկսաւ տարածուիլ՝ մանաւանդ մեծամեծաց տները:

Մեծն Վարդան տեսնելով սա չարիքը և չկրնալով դարման մը ընել, սրտին ցաւէն եկաւ Հայաստանէն և գնաց՝ ի Յունաց մասը սկսաւ երթալ. բայց մէկալ նախարարները երբոր լսեցին Վարդանայ երթալը՝ շատ աղաչանքներով եղան գարձուցին զինքը, և իրեն հետ միացած՝ տներէն վռնտեցին

մոգերը, վերջը Պարսից զօրաց վրայ յարձակելով, որ Վասակայ առաջնորդութեամբը Խոզրևանդ Ժողովուրդ էին, մեծ կարդ ըրին, և շատ մարդ բռնեցին, որոնց հետ էր նաև Վասակ: Հայց սասանիկ աղաչելուն և աւետարանին վրայ երդում ընելուն համար նորին ազատ Թողուցին զինքը:

4. Յազկերտ Աղուանից երկիրն ալ շատ մոգեր խաւրեր էր որ զանոնք ալ արևապաշտ ընեն. անոնք չկրնալով դէմ դնել՝ Հայերէն օգնութիւն ուզեցին, անոր համար հարկ եղաւ որ բոլոր զօրքը իրեք բաժնեն. առջինը տուին Ներշապուհ Արծրունիին որ Պարսից դէմ դնէ. երկրորդը Վասակայ՝ Հայաստանը պահելու համար. երրորդ գունդն ալ տուին Վարդանայ որ Աղուանից օգնութեան երթայ: Ճամբան Վարդանայ զօրաց դէմ ելաւ Պարսից զօրքը՝ որոնք մեծ կարդ կերան Հայերէն: Վարդանին զօրքերը Աղուանից երկիրն որ հասան՝ բոլոր մոգերը կոտրեցին, կրակատուներըը կործանեցին և Պարսից զօրքերը հալածեցին անկէ: Երբոր Վարդան Աղուանից երկիրը ասանկ քաջութիւններ կ'ընէր, անզգամ Վասակը իրեն երդմնոր վրայ հաստատուն չկենալով հաւատքը ուրացաւ ու նորէն սկսաւ մոգերը Հայաստան մտցընել, կրակատուներըը բանալ, ու քահանաները և ուրիշ շատ մարդիկ չարչարել. իրեն հետ միաբանեցան մէկ քանի Թուլահաւատ մարդիկ ալ: Քաջն Վարդան երբոր լսեց Վասակայ նորէն ըրած դաւաճանութիւնը, մէկէն իր զօրքովը անոր վրայ հասաւ, և հետը ուրացող միաբանողներուն մեծ կարդ տուաւ: Վերջը Յազկերտին դեսպան խրկեց, որ եթէ զերծենք ազատ Թողու որ քրիստոնէութիւն-

4. Վարդան Աղուանից ինչ օգնութիւն ըրաւ ու Վասակ իր անօրէնութիւններովը ինչ չարիք հասուց դարձեալ Հայաստանի.

նին պաշտեն՝ իրեն սիրով կը ծառայեն։ Յաղկերտ Թէպէտ և հրաման տալ ձեւացուց, բայց միտքը խարդախութիւն ըլլալով՝ Հայերը խմացան, և իրենց կերպը չփոխեցին։ Յաղկերտ Հայոց հաւատքը ներելուն վրայ հաստատութիւնը տեսնելով յուսահատեցաւ զիրենք շահիլէն, ու Միհրներսեհ հազարապետը խաբեց շատ զօրքով։ Միհրներսեհ տեսնելով Վասակայ հաստատուն և անդրդուելի չարութիւնն ու անզգամութիւնը, բոլոր զօրքը անոր յանձնեց և ինքը դարձաւ Յաղկերտին քով, օգնական տալով Վասակայ Մուշկան Նիւսալաւուրը։

Յ. Տեսնելով արին Վարդան Վասակայ մեծամեծ պատրաստութիւնները, ամէն տեղ Հայերուն գեսպան խրկեց որ ուզողը իր քովը գայ. ասով Արտաշատու մէջ վաթսունըվեց հազար հոգի ժողվուեցան, ամէնն ալ կորիւ հաւատոյ համար պատերազմելու վառուած. մէջերնին կային նաև քանի մը եպիսկոպոսներ ու շատ քահանաներ։ Իսկ Վասակ մէկ քանի տուտ քահանաներու ձեռքով շատ մարդ խաբեց՝ իր կողմը ձգեց, ըսելով որ հրաման եկեր է Յաղկերտէն համաձակ քրիստոնէութիւնը պաշտելու. ասով ինչուան Վրաց ինեն ու Աղուանները Հայոց միաբանութենէն բաժնեց։ Երբոր երկու կողմն ալ պատերազմի պատրաստուեր էին, Հոգեգալստեան վեցերորդ կիրակունը, որ երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար, ամէնն ալ խոստովանելով հաղորդուեցան, որպէս զի հոգւով և մարմնով զօրանան։ Երկրորդ առաւօտը սկսաւ պատերազմը խիստ կատաղաբար, և պատերազմին սկիզբները հինգ հազար հոգւոյ չափ Վասակայ կողմը անցան, ինչպէս որ

Յ. Վարդանանց պատերազմը ինչպէս եղաւ ու ո՞րչափ քաջեր զոհ եղան Հայոց կողմանէ.

առաջուց խօսք տուեր էին, ու մեծ չփոթութիւն պատճառեցին: Մեծ քաջութեամբ պատերազմեցան Վարդանանք. բայց երբոր սուրբն Վարդան առիւծի պէս ասպին անդին վազելով մեծամեծ քաջութիւններ կ'ընէր՝ վերաւորուելով ընկաւ մեռաւ, ինչպէս նաև ուրիշ խել մը նախարարներ և երկու հարիւր վաթսունվեց հոգի. միացածներն ալ տեսնելով Վարդանայ մահը, ցիր ու ցան եղան, և իրենց բերդերուն մէջը ամրացան: Բայց Պարսիկները վերջէն Հայոց այլ և այլ գունդերուն հետ ալ պատերազմելով ուրիշ եօթը հարիւր հոգւոյ չափ ալ մեռուցին, որով Վարդանանց նահատակաց թիւը եղաւ հազար երեսուն ու վեց: Իսկ Պարսից կողմանէ մեռան նոյն օրը իրեք հազար հինգ հարիւր հոգի: Ասակ ասպ ամէն չարիքներով չկշտանալով խաբէութեամբ շատ մարդ բռնեց ու սպաննեց, և Վահնդեանք ըսուած սուրբ քահանաներն ալ բռնեց շղթայի զարկաւ (451):

6. Վարդանայ հետ միաբանած նախարարները գունդ գունդ ձեւացած՝ սկսան Պարսից քաղաքներուն ու բերդերուն վայ յարձակիլ ու վնասներ հասցընել. անոր համար Յազկերտ Աւրոմիզդ անունով մէկը գրաւ Հայոց վայ որ նախարարները խաբէութեամբ բռնէ ու իրեն խաբէ: Նախարարները թէպէտ և իմացան Աւրոմիզդին միտքը, բայց մարտիրոսութեան փափաքով վառուած՝ փոյթ չըրին, ու եկան Աւրոմիզդին քովը գնացին. ան ալ զամէնքը բռնեց և Վահնդեանց հետ մէկտեղ Յազկերտին խաբեց, ու հրաման տուաւ Հայոց որ ամէն մարդ իր կրօնքը պաշտէ:

7. Վասակ ասպ ամէն չարութիւններն ընելէն

6. Մէկալ միացած նախարարները ինչ եղան.

7. Վասակ ինչպէս իրեն անօրէնութեանց պատիժը գտաւ և ինչ տառապութիւն կ'ընէ իրեն մահուանը մեր Եղիշէ պատմագիրը.

վերջը յանցաւոր գտնուեցաւ Յազկերտին առջև, և անոր հրամանովը իր ամէն իշխանութիւնն ու հարստութիւնը առին և սոսկալի բանտի մը մէջ դրին: Վասակ իր անմտութեամբն ու փառամոլութեամբը չկրցաւ իմանալ թէ ազգասէաց անձնասէր և անմիաբանասէր մարդուն վախճանը սոսկալի մահ է: Մերուժանայ չարաչար մահը երեն իսրատ չեղաւ, անոր համար քան զան ալ աւելի գէշ և սարսափելի մահ ունեցաւ: Որչափ տարբերութիւն կայ սա երկու զօրավարաց, այսինքն Վարդանայ և Վասակայ մէջ· Վարդան բարեբար և հայր աշխարհի, իսկ Վասակայ սևացեալ ձակտին վրայ որոշ կը տեսնուի իր թշուառութեանը պատճառը, այսինքն նախանձ, փառամոլութիւն, ազգասէցութիւն և անմիաբանասիրութիւն: Վարդանայ պէս անմահ բարերարներուն անունը մարմարիոն քարերու վրայ գրելն ալ ոչ ինչ է· վասն զի այնպիսւոյն արժանաւոր տեղը մարդուս գերազանց միտքը ու սատուածանման հոգին է: Իսկ Վասակայ պէս ազգասէաց մարդիկներուն անունը տղմի վրայ գրելն ալ շատ է թէպէտ և ոսկեայ կոխան ըլլան· վասն զի այնպիսիներուն անունը մարդկանց անուններուն կարգէն դուրս հանելու էր՝ թէ որ երեսնց գէշ վարքը ուրիշներուն խրատի համար միայն հարկաւոր չըլլար: Լսելու արժանի է Վասակայ որդնալից ցաւալի մահուն ստորագրութիւնը որ կ'ընէ մեր Եղիշէ քալ և ճարտասան պատմիչը·

« Օր ըստ օրէ բերէին երբև զգէշ [illegible]նուէն 'ի մեծ հրապարակին, ձաղէին և այ[illegible]էին, և սեպհական ամենայն կարաւանին զնա առնէին··· Եւ երբև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս գժնդակս անդէն 'ի կապանն: Չեռաւ փոր նորա, և հարան և տրտրեցան գոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նո-

լա: Եռացին օդդունք ընդ աչս նորա, և՝ի վայր սրբեցին ընդ անդունս նորա. խայտ լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար ջրծունք նորա. լուծան կնդք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կըր-կունք ոսկց նորա: Բղխեաց՝ի նմանէ հոտ մահու, և փախատական եղեն՝ի նմանէ ձեռնասուն ծա-ռայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի՝ի բե-րան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն՝ի շըր-թունս նորա: Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ՝ի գժոխս անհնարին դառնութեամբ: Ոանհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յապեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա: Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղաք՝ Հայոց աշխարհին, ոչ երևեցաւ տեղւն գերեզմանի նորա. քանզի երբև զշուն մեռաւ և երբև զգէշ (կամ զէշ) քարշեցաւ . . . : Ոչ ինչ եթող չարիս զոր ոչ գոր-ծեաց՝ի կեանս իւր. և ոչ ինչ միաց՝ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա՝ի մահուան նորա »:

ԴԱՍ ԻԲ.

Ա. տրվհնասպայ վարդապետութիւն և վ ահանայ պատկերազրն:

1. Ա տրոմիզդ բոլոր նախարարներըը բռնած Պարսկաստան խաւրեց, հոն Յազկերտին հրամա-նով բոլորն ալ բանտ դրուեցան՝ իսկ քահանանե-րը քիչ մը ատենէն ծածուկ սպանուեցան: Նա-խարարներըը չորս տարի բանտը կենալէն վերջը

1. Վարդանանց պատերազմէն ետքը նախարար-ներըը ինչ վիճակ ունեցան.

Ղեմիշապուհ իշխանին աղաչանքովը ազատեցան բանտէն, բայց Պարսկաստան մնացին. երբոր յաջորդ տարին մեռաւ Յազկերտ, տեղը Պերոզ որդին անցնելով՝ ուղիղ տարի նախարարները իրեն գործօղութիւններուն ծառայեցուց. բայց երբոր Աղուէնատպ մարզպանը Հայաստան կ՚երթայ՝ զինքնիք ալ անոր հետ մէկտեղ դարձուց իրենց հայրենիքը (464):

2. Երբանիկ նախարարները Հայաստան որ դարձան՝ սկսան խաղաղութեամբ կառավարել իրենց երկիրները: Ան միջոցներուն մեծին Վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին Վահան՝ իրեն քաջութեամբն ու խելացիութեամբը շատ սիրելի եղաւ բոլոր Պարսից մեծամեծներուն և նաև Պերոզայ: Ա բանիս նախանձելով մէկ քանի ուրացող նախարարներ, որ դեռ Պարսկաստան կը գտնուէին, չարախօսութիւններ ըրին Վահանայ վրայ. Վահան ալ վախնալով որ Պերոզին աչքէն չինայ՝ հաւատքը ուրացաւ, Թէպէտ և վերջէն սաստիկ զղջաց:

3. Քրիստոնեայ նախարարները շատ անգամ նախատելով ուրացող նախարարներէն՝ առիթ մը կ՚ապահէին որ աս նախատանաց վրէժը առնեն. ուստի երբոր Հեփթթաղներուն պատերազմէն կը դառնային՝ լսելով որ Վրաց Վախտանկ Թագաւորը ապստամբեր է Պարսիկներէն, իրենք ալ միաբանեցան մէջերնին ու Վահանը իրենց զօրագլուխ դնելով գացուեցան Պարսից բանակէն: Աղուանից նահապետ երբոր լսեց աս բանս՝ վախնալով սկսաւ Պարսկաստան փախչիլ. ան ատեն եաւնէն գնացին Վահանեանք և խել մը հոգի ջարդեցին: Ա

2. Վահան ինչու հաւատքը ուրացաւ.

3. Ի՞նչ կերպով սկսաւ Վահանանց պատերազմը.

պզակ յաղթուելէն վերջը Դուին դառնալով Սմբատ Բագրատունին մարզպան դրին, Վահանն ալ ընդհանուր սպարապետ. և երբոր Արվինասպ նորէն եկաւ եօթը հազար զօրքով, Վահան չորս հարիւր հոգի միայն ունէր. զանոնք չորս գունդ բաժնելով Ակռաի մօտ պատերազմի պատրաստուեցաւ. պատերազմին սկիզբը գարշելով նախարարը իրեն հարիւրովը թշնամեաց կողմը անցաւ. բայց սա բանս փոխանակ զերծնելու աւելի զօրացուց, որով սաստիկ յարձակ մը տուին Պարսից. և իրենք ուրախութեամբ Դուին դարձան:

4. Վահան որչափ որ կրնար նէ կը ջանար բոլոր նախարարները միաբանել որպէս զի աւելի զօրանալով կարենան քաջութեամբ դէմ դնել թշնամեաց և բոլորովին հալածել զանոնք, բայց սա իրեն փափաքանացը չհասաւ. վասն զի նախարարներէն ոմանք արտաքին շահու և փառասիրութեան համար հաւատքնին ուրացած՝ Պարսից կողմը անցեր էին, ոմանք ալ իրենց քաղաքը քաշուելով հանգիստնին կը նայէին. Թէպէտ և կային նաև ոմանք որ հասարակաց օգուտը մոռնալով իրեն քովը եկած իրեն հետ միկտեղ սիրով կը պատերազմէին: Իսկ Վահան թէպէտ և քիչ զօր էր, բայց միշտ յաղթող դանուեցաւ, և չորս հինգ տարի միակերպ պատերազմելով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ Պարսից դէմ: Պարսիկք չորս հինգ զօրավար փոխեցին քիչ աւելի մէջ, բայց ամէնքն ալ յաղթուեցան: Ա՛ս պատերազմներուն մէջ աղէկ կը տեսնուի Վահանայ անպարտելի արութիւնը, վեհանձնութիւնը, հաստատուն հաւատքը և առ Աստուած յոյսը: Երբոր Պարսիկք Շապուհ Սիւրանեան մարզպանը խաբեցին Վահանայ վրայ, անիկայ սաստիկ կատղած Վահանայ ըրած յաղ-

4. Որոնք միաբանեցան Վահանայ հետ.

Թուլթիւններուն վրայ, միտքը դրեր էր որ կամ յաղթէ Վահանայ ու զինքը մեռցնէ, և կամ յաղթուելով ինքը մեռնի. ՝աս մտքով պատերազմի պատրաստուեցաւ: Վահանին քովիններէն որ հաւիւր հոգիի չափ կային՝ տեսնելով Պարսից բազմութիւնը և իրենց քիչուորութիւնը՝ շատը ելան ցրուեցան, և միայն երեսուն հոգի մնացին. Պարսիկք Վահանայ խումբին քիչուորութիւնը տեսնելով երբոր անհոգ կեցեր էին, ասոնք յանկարծակի վազեցին Պարսից վրայ, և մեծ շփոթութիւն ձգելով բանակին մէջ՝ սասակ չարդ տուին Պարսից զօրաց և իրենցմէ միայն չորս հոգի մեռան:

5. Նոյն միջոցին Պերոզ Պարսից Թագաւորը մեռաւ, ու տեղը անցաւ իր Վաղարշ եղբայրը, որ քննելով Վահանայ քաջութիւնները և անոր ապրատամբելուն պատճառը՝ իրաւունք տուաւ Վահանայ, և ուզեց հետը հաշտութիւն ընել, որպէս զի նաև կարենայ անվրէպ ժողվել Հայաստանին հարկը: Վաղարշ աս բանիս համար մարզպան խրկեց Նիխոր Վշնասպատ անունով խաղաղաւէր մարդը: Նիխոր երբոր Վահանայ մարդ խրկեց հաշտութիւն ընելու համար, անիկայ աս իրեք պայմանս դրաւ. Ա, Քրիստոնէութեան բաներուն Պարսիկք չխառնուին. Բ, Արժանաւոր և հատաւտարիմ մարդիկ միայն պատուոյ հասնին. Գ, Ինչուան որ երկու կողմի պատճառները չլսեն՝ դատաստան մը չկարուի: Ա իրեք խնդիրքին ալ հաւանեցաւ Նիխոր, ու անկէց վերջը գնաց Վահան Նիխորին քով, որուն հետ շատ սիրով տեսնուեցաւ, ու մէջերնին դաշինք հաստատեցին: Վերջը Պարսից դուռն ալ երթալով իրեն ձեռս մը չբնե-

6. Վահան ինչպէս Պարսից աչքը մտաւ ու Հայաստան ինչպէս դարձեալ իրեն քրիստոնէական կրօնքը ստացաւ.

լու և դաշինքին վրայ հաստատուն կենալու երդմունք առաւ Վաղարշէն, և սպարապետութեան պատիւը առած՝ դարձաւ եկաւ Վաղարշապատ քաղաքը: Երբոր Անգեկան անունով մարզպանը քիչ մը առեն կենալէն ետքը հարկաւոր գործողութեան մը համար ետ կանչուեցաւ, անանկ գովեց զՎահանը Պարսից դրան առջև որ Վաղարշանոր լաւութեանը փոխարէն մարզպանութեան պատիւը տուաւ: Վահան ալ խնդրեց որ իր Վարդ եղբայրը սպարապետ ըլլայ: Բոլոր ազգին մեծ ուրախութիւն եղաւ ասանկնուներելի յաջողութիւնը: Ետքը ընդեց Վահան բոլոր կրակատուններըը, և անոնց տեղը եկեղեցիներ շինելով սկսաւ այլ և այլ բարեկարգութիւններ ընել (484):

6. Վահանին մարզպանութեան առենը մեռնելով Վաղարշ՝ տեղը նստաւ Կաւատ, որ Թէպէտ և առջի բերան Վահանին մարզպանութիւնը հաստատեց, բայց վերջը քուրմերուն խորհրդովը Պարսիկ մարզպան մը խաւրեց, հետն ալ շատ քուրմեր, որոնք եկան նորէն սկսան կրակատուններ շինել ու արևապաշտութիւն սորվեցընել: Ա ե ղած անկարգութեան չդիմանալով Վահան՝ մեկ քանի նախարարաց հետ միաբանեցաւ, ու Պարսից վրայ վազելով ջարդեցին զնրենք և կրակատուններըը աւրեցին: Բայց որովհետև Կաւատ Յունաց դէմ պատերազմի կ'երթար՝ ան պատճառաւ հաշտութիւն ըրաւ Հայոց հետ, շատ զօրք առնելով Հայերէն:

Վահան ան միջոցներուն մեռաւ քանըվեց տարի մարզպանութիւն ընելէն վերջը, որուն յիշատակը անկարելի է որ հայու մը մտքէն ջնջուի, որ ազգին հանգստութեանը համար իր ամէն հան-

6. Կաւատին միջոց մինչ հանդիսեցաւ ու Վահան երբ մեռաւ.

գըտաւելիւնն, հարստութիւնն, փառքը, իշխանութիւնը կորնչուց, ինչուան որ գտաւ բոլորն ալ նախ իր ազգին և վերջը իր անձին համար, և իրաւցընէ իրեն անուանը համեմատ Վահան եղաւ ազգին բոլոր թշնամիներուն դէմ:

ԳԱՍ ԻԳ.

Վահանայ մեռնիլեն ինչուան Հազարաւոյ Հայաստանի տիրելը:

1. Վահանին տեղը մարզպան դրուեցաւ Վարդ իր պզտի եղբայրը, որ հազիւ թէ չորս հինգ տարի մարզպանութիւն ըրաւ. վասն զի քանի մը անպիտան մարդիկ նախանձելով իրեն պատուոյն, վրան ամբաստանութիւն գրեցին. անոր համար Կաւատ ալ մարզպանութիւնը ձեռքէն առաւ ու Բուրզան անունով անզգամ Պարսիկ մը տուաւ որ շատ չարչարեց զազգը: Ա տեներս Հոնք Հայաստանի վրայ վազեցին ու շատ չարիք հասուցին ազգին. անոնց դէմ եղաւ Մժեժ Գնունին իր զօրքովը, և թշնամիները հալածելէն վերջը՝ ուրիշ քանի մը նախարարներու հետ միաբանելով ազգը հանդարտեցուց: Մժեժին հաւատարմութիւնը երբոր լսեց Կաւատ՝ զինքը մարզպան դրաւ, որ երեսուն տարի մարզպանութիւն ըրաւ (548):

2. Մժեժին տեղը եաւէխ եաւս չորս հինգ Պարսիկ

1. Վահանէն եաքը ոմվ եղաւ մարզպան ու ինչ պիտեվնք կայ Մժեժ Գնունիին վրայ.

2. Մժեժէն եաքը եղած մարզպանները ինչպէս կառավարեցին զՀայաստան ու ինչ է Մեծ Թուական ըսուածը.

մարզպաններ գրուեցան, այսինքն Դենշապուհ, Վչնասպ Վահրամ, Վարազդատ, Սուրէն Ճիհր: Առնցմէ ոմանք զգեզ նեղեցին հաւատքի համար, ոմանք ալ խաղաղութեամբ կառավարեցին: Առնց առենը Մովսէս կաթուղիկոս Հայոց ասմունքը նորոգեց, և Մեծ Թուական բառածը դրաւ. որ Թուականութիւն Հայոց կ'բառի (351):

3. Վարդան երկրորդ Մամիկոնեան առնալով Պարսից ըրած բանութիւնները, մանաւանդ Սուրէն Ճիհր մարզպանին ըրածը, որ իր Մանուէլ եղբայրը մեռցընել տուեր էր, խօսք դրաւ քանի մը նախարարաց հետ որ ապստամբին Պարսիկներուն. ուստի Յուստինիանոս կայսեր խոստացան հարկատու ըլլալ՝ թէ որ իրենց օգնէ. անոր խոստումնքներուն վրայ վստահանալով վազեցին Դուին քաղքին վրայ. Սուրէնը ապաննեցին, մոգերն ալ ջարդեցին: Խոտրով ասր բանխ վրայ բարկացած՝ շատ զօրք խաւրեց Հայոց վրայ. բայց Վարդան նորէն յաղթեց Պարսից, և գրուեց զնրենք: Բայց ինքը կասկած առնելով քանի մը նախարարաց մահնութեանը վրայ, եկաւ Պօլիս գնաց և Յուստինիանոսէն օգնութիւն առնելով՝ եկաւ Պարսից վրայ, յաղթեց անոնց ու բանակին գրուեց: Խոտրով ինքը անձամբ եկաւ Հայոց և Յունաց վրայ, շատ անգամ մեծամեծ պատերազմներ ըլլալէն վերջ՝ նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան, ուր մարզպան դրին Ճիհր Վշն անունով Պարսիկ իշխանը որ տասնըհինգ տարի խաղաղութեամբ կառավարեց Հայաստանը:

4. Ան առենները անուանի եղաւ Սմբատ Բագ-

3. Վարդան Բ. Մամիկոնեան ինչ յաղթութիւններ ըրաւ Պարսից դէմ ու վերջը ինչպէս յաղթուեցաւ.

4. Ինչ դիտելիք կայ Սմբատ Բագրատունիի ու իրեն յաջորդ մարզպաններուն վրայ.

մայալթ իշխանը. վասն զի Պարսից Խոսրով Թագաւորին զօրավարներէն մէկը իրմէ ապստամբելով երբոր կը հալածէր զինքը, Խոսրով օգնութիւն ուղեց Մօրիկ կայսրէն, որ շատ զօրք խաբրեց, և անոնց զօրավարներն էին Մուշեղ Մամիկոնեան, Ներսէս Բասենցի, և Սմբատ Բագրատայալթ. սոնք շատ քաջութիւններ ընելէն վերջը՝ ապստամբը սպաննեցին ու Խոսրովը նորէն Թագաւորեցուցին: Խոսրով սոնց ըրած բարեացը փոխարէն Սմբատը Պարսից զօրավար անուանեց, ու Մուշեղը Ազատ իշխան: Բայց Սմբատ ուրիշ շատ քաջութիւններ ալ ընելուն համար մարզպան դրուեցաւ Վրկանի կողմը, և ուրիշ տարի մարզպանութիւն ընելէն վերջը մեռաւ, ու շատ քաջութեան, բարեկարգութեան, բարեպաշտութեան և ազգասիրութեան յիշատակներ թողուց: Սմբատէն վերջը մարզպան դրուեցաւ Դաւիթ Սահառունի, որ քանըչորս տարի մարզպանութիւն ընելէն վերջը՝ Կոստանդնուպոլիս փախաւ. տեղը մարզպան դրուեցաւ Վարազտիրոց Սմբատ Բագրատայալթին որդին, որ նոյնպէս ուրիշ տարի մարզպանութիւն ընելէն վերջը Կոստանդնուպոլիս փախաւ (605):

5. Վարազտիրոցին մարզպանութեան տեւողութիւնը Խոսրով Պարսից Թագաւորը Թշնամացաւ Մուշեղ Ազատ իշխանին հետ ու վասն պատերազմի խաբեց իր Մեհրան քեռորդին տասը հազար զօրքով, որուն բացարձակ իշխանութիւն տուած էր որ կրցած չարիքը հասցընէ Մուշեղայ. բայց որով հետև Մուշեղ ծերացած էր ու չէր կրնար ինքը մինակ դէմ դնել Պարսից, քովը կանչեց իր Վա-

5. Գայլ Վահան իրեն կարճութեամբը ու արթուն հնարագիտութեամբը ինչ որոգայթներու մէջ ձգեց Պարսիկները ու ինչպէս յաղթեց.

հան անուանով ազգականը որ չատ հնարագէտ ու ձարտար մարդ ըլլալուն Գայլ Վահան կ՚ըսուէր, և ալաչէց անոր որ աս պատերազմը ինքը վրան առնէ, և անոր խոստացաւ տալ իր ունեցած հարստութիւնները ու տացուածքը: Վահան սիրով յանձն առաւ, որովհետև քաջ և միանգամայն խորագէտ մարդ էր, և գրեթէ վստահ էր պատերազմին յաջողութեանը վրայ, մանաւանդ որ իբրև հաւատոյ պատերազմ՝ Աստուծոյ վրայ յոյսը դրած էր: Վահան որչափ որ աներկիւղ և վստահ էր յաղթութեան վրայ, այնչափ ալ չանաց առանց արիւնհեղութեան ու քիչ մնաւով գործողութիւնը լմնցընել. ան պատճառաւ սկսաւ հնարքներ գիւտեր մտածել՝ որ թշնամին որոգայթի մէջ ձգելով ուզածը առանչ տանի. ուստի առաջ մարդ խաւրեց Մխիթանայ՝ խոստանալով որ Մուշեղը կը մատնէ Պարսից՝ թէ որ իրեն տան Տարօնոյ երկիրն ու Մուշեղայ ուրիշ հարստութիւնները. Մխիթան մեկէն հաւանեցաւ, ու դարձաւ Մուշ քաղաքը եկաւ, որ արդէն ձմրայ եղեր էր ուրիշ տեղ երթալու: Վահան բարեկամութիւն ձևացընելով Մխիթանայ քովը գնաց ու համոզեց զինքը որ իրեն չորս հազար հոգւոյ չափ Պարսիկ զօրք տայ, որ երթայ Մուշեղը բռնէ: Վահան իր հետը առաւ ան չորս հազարը, խարճ գեղը եկաւ, հոն յիսուն հոգի միայն թողուց, ու մէկալնոնք Օձ քաղաքը խաւրեց. վերջը ապաստրեց ան յիսուն հոգիին որ եթէ ինքը մարդ խաւրէ իրենց՝ իր անունովն ու նշանովը գործողութեան յաջողութեանը վրայ, երթան Մխիթանին լմնցընեն ու անկէ ուրիշ զօրք առնելով իրեն գան: Ա բանս յարմարցընելէն եաքը եկաւ Օձ քաղաքը մնացած զօրայ քով. անոնց ալ ապաստրեց որ զէնքերնին իրենց հագուստներուն տակը պահեն, բարեկամական կերպով քաղաքը մտնեն, և երբոր ինքը նշան

սայ՝ անխնայ ջարդեն քաղաքացիքը առանց մեկու
մը խնայելու։ Քիչ քիչ սկսաւ քաղաքը մոցընել
զանոնք, ու ինչպէս որ առաջուց որոշած էր՝ բոլորն
ալ բաժնեց ան աներուն մէջ, ուր զինեալ մար-
դիկ պահուըտած՝ ներս մտածը կը խղդէին, որով
ամէնքն ալ սպաննեց։ Վերջը մեկէն մարդ խաւրեց
ան Իսմունին որ երթան ուրիշ երկու հազար հո-
գի ալ օգնական բերեն։ Ան միջոցին որ մեկալնոնք
գացեր էին օգնութիւն կանչելու, քաղաքացւոց
հաղցընել տուաւ Պարսից զօրաց հագուստները,
ու բոլորն ալ քաղքին դրան դիմացը շարել սը-
սաւ։ Երբոր ան երկու հազար Պարսիկները սկսան
տեսնուիլ, հրաման տուաւ դրան քովի Հայ զօր-
քերուն որ քաղաքը մտնեն վրդ զարնելով, նը
թէ քաղաքը առին։ Հասան քիչ առենէն Պարսիկ-
ներն ալ և ուրախութեամբ քաղաքը մտան, բայց
Հայերը զներնք մէջ առնելով զամէնն ալ թրէ ան-
ցուցին։ Ա՛հան նոյնպէս առանց հագուստն ալ
Հայոց հագցուց, և ուղը հարիւր կարիճ հեծը ա-
ռած Մեղոի ըսուած կրճին քով դարանի դրաւ,
իսկ ինքը եկաւ Մխիթարայ քովը գնաց ու սկսաւ
գանգատիլ իրեն տուած զօրքերուն վատութեանը
վրայ։ ան պատճառաւ ուրիշ երկու հազար հոգի
ալ ուզեց Մխիթարէն, և ան Մեղոեայ կրճին քո-
վերը բերելով դարանամուտները վրանին վազե-
ցին ու զամէնն ալ թրէ անցուցին։ Երբոր աս հը-
նարքն ալ յաջողեցաւ, մեկէն Ա՛հան աւետաւոր
խաւրեց Մխիթարայ թէ ամէն բան յաջողեցաւ,
Մուշեղ բռնուած է ու քիչ առենէն ինքն ալ ա-
մէն բան կարգի դրած կուգայ։ պատգամաւորին
հասնելէն քիչ մը ետքը ինքն ալ եկաւ հասաւ, ու
Մխիթարը հիւանդ գտնելով մխիթարեց զինքը և
ուրախացուց՝ ըսելով թէ քիչ առենէն Մուշեղը
կապած դիմացդ կը տեսնես, ու ամէն տրտմու-
թիւնդ կը փարատի։ աս բաներս ըսելէն ետքը քո-

վն մարդիկը ձամբեց, ու ինքը Մհերանին հետ ա-
ռանձին մնաց. երբոր իրարու հետ սիրով կը խո-
սէին՝ զարկաւ Վահան ձեռքի նիզակովը ու սպան-
նեց Մհերանը. եաքը գոնեերը գոցելով էլաւ ու-
րիշ սենեակ մը գնաց, ուր կանչել տուաւ Մհերա-
նայ սաեհադպիրն ու սուրհանդակը, և սոխպեց
որ Մհերանայ կողմանէ շուտ մը Թուղթ գրէ Վար-
շէր զօրավարին, որ իրեք հազար զօրք առած՝ իրեք
օրէն իր քովը գայ. ուզածը գրել տալէն եաքը եր-
կուքն ալ խղդել տուաւ. վերջը մնացած զօրաց
մէջն ալ կրակ ձգելով բոլորն ալ այրեց, երբոր
անոնք ուտելով խմելով կ՚ուրախանային:

6. Այսչափ և այսպիսի հնարքներուն յաջողե-
լէն եաքը, կուզէ ըսուած լեռը գնաց բանակը հոն
գրաւ, ու կ՚սպասէր Վարշէրին գալուն. և որպէս
վն զանոնք ալ խաբէ՝ Մհերանայ վրանը կանգնել
տուաւ ու վրանին դիմացը Հայ իշխաններուը կայնե-
ցուց Պարսից հագուստներով: Երբոր եկաւ Վար-
շէր՝ իշխաններուը իրմէ առաջ ներս մտան, անոնց
եաւէն մտաւ Վարշէր ու բարև տուաւ Վահանայ՝
կարծելով թէ Մհերան է: Վահան բարկանալով
մը ըսաւ Վարշէրին. « Որդիք անօրէնութեան,
թերևս մոքերնիդ գրած էիք Հայերը Պարսից ա-
զանդը գարձընելու. անարժան էք կենդանու-
թեան », ասս ըսելով հրամայեց ծառաներուն որ
Վարշէրը ծեծեն. երբոր անիկայ սկսաւ աղաչել
որ գէթ կենացը խնայէ, ըսաւ Վահան. Թէ որ ու-
զածս կատարես՝ կը խնայեմ քեզի. ուստի մէկէն
գրել տուաւ իր զօրապետին որ հազար հոգի կուզէ
լեռան սորոտը խաւրէ, հազար հոգի ալ ուրիշ
տեղ մը, մնացած հազար վեց հարիւրն ալ իրենց
տեղը ձգէ, ու ինքը տասը հոգւով իրեն գայ: Թուղ-

6. Վահան ինչ հնարքով զՎարշէր բռնեց ու
սպաննեց.

Թը գրել տալէն եաքը մէկէն սպաննել տուաւ Վարշիրը. ու երբոր մէկալ զօրապետն ալ եկաւ, զան ալ խղդել տուաւ. վերջը տպիս անդին ցրուած զօրացը վրայ վազելով՝ ամէնն ալ Թրէ անցուց, ո՛րով այնչափ բազմութենէն հազիւ քառասուն հոգիի չափ ազատեցան ու փախան Խոսրովու քով գացին, ու եղած կոտորածները պատմեցին:

7. Խոսրով շատ ուրմեցաւ ու բարկացաւ Վահանայ դէմ, առջինէն աւելի բազմաթիւ զօրք ուղարկեց Միհրանայ Վախտանկ հօրեղբօրը ձեռքը ու Վահանայ վրայ խաւրեց: Վահան Վախտանկայ դէմ վարպետութեան տեղը քաջութիւնն ու հնդանի հաւատքը ղէնք ու օդնական առնելով իրեք չորս անգամ ուժտիկ կարգ տուաւ Պարսից ու փառաւոր յաղթութիւններով իր զօրավարութիւնը պահեց: Վահան ասոնց յաղթութիւններէն եաքը արդէն ծերացած ըլլալով անընդհատ պատերազմներէ ալ ուխտացած՝ մեռաւ, և իր հայրենասիրութեանն ու ազատասիրութեանը հետ անմոռանալի ըրաւ նաև իր պատերազմական հնարագիտութիւնը, որուն մէջ Թէ որ չափազանց երևնայ խորագիտութիւնը, Պարսից անգթութեանը՝ և ան միջոցին Հայաստանի խեղճութեանը նայելով դիւրաւ կ'արդարանայ:

8. Վահանայ քաջութեանը ժառանգորդ եղաւ իր Սմբատ հայրենասէր որդին որ միշտ յաղթող գտնուեցաւ անպարտելի ու զարմանալի քաջութեամբ և Պարսից չորս երևելի զօրավարները ըսպաննեց: Սմբատայ ալ յաջորդեց Վահան որդին որ իր նախորդներուն պէս քաջ, կարիճ ու պատերազմող եղաւ:

7. Վահան ինչպէս արիացաւ Վախտանկին դէմ ըրած պատերազմին մէջ ու ինչպէս մեռաւ.

8. Վահանէն եաքը որո՞նք յաջորդեցին.

ԴԱՍ ԻԴ.

Հագարացոց Հայաստանի տիրևէև ինչուան Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը :

1. Վահանայ մեռնելէն ետքը երբոր Վարազտիրոց մարզպանը Հայաստանէն փախաւ, նախարարները միաբանած՝ Յունաց կայսրէն խնդրեցին որ Դաւիթ Սահառունին իրենց կիւրապաղատ դնէ. բայց իրեք տարիէն վերջը նորէն խռովութիւն կ՚նայով մէջերնին՝ Դաւիթ Սահառունին հանեցին կիւրապաղատութենէն: Ան միջոցներուն Պարսկաստան խռովութիւն ըլլալով Հագարացիք զօրացան և Պարսկաստանի տիրեցին: Անկէց այլ և այլ խումբեր ու ասպատակներ Հայաստանի վրայ վազեցին ու ահան չատ տեղ աւերել աւերշարկել, ու չատ կարդեր ըրին Հայաստանի մէջ (635):

2. Վ՚ահան Կամսարական՝ Գայլ Վ՚ահանայ Թոռը, տեսնելով ազգին Թշուառութիւնները ուժը հազարի չափ զօրք ժողվեց, ու իր Տիրան եղբօրը և Մուշեղ զօրավարին ձեռքը տալով Հագարացոց դէմ խաւրեց: Առնց հետ միացաւ Սահառ Անձևացին իրեն զօրքերովը. բայց պատերազմին առենը Սահառ Թշնամեաց կողմը անցնելով սկսաւ իր ազգայիններուն դէմ պատերազմիլ, տալով Թշնամիները զօրացան ու բոլոր Հայերը կարգեցին

1. Սմբատայ ու Վ՚ահանայ մահուընէն ետքը Հայաստան ինչ վիճակ ունեցաւ.

2. Հագարացիք ինչպէս Հայաստանի տիրեցին ու ասիկայ ինչ վնաս ըրաւ ազգերնուս.

իրենց զօրավարներովը հանդերձ : Հայաստանի նեղութեան ալ վազելով շատ մեսաներ ըրին . Դուին քաղքին մէջ ալ տասուերկու հազար մարդ թրէ անցընելէն վերջը երեսունըհինգ հազար հոգի ալ գերի տարին :

3 · Հպատրացւոց առջի յարձակմունքէն վերջը Յունաց կողմանէ կիւրապաղատդրուեցաւ Վարազ անիրոցը , որ տարին մը չափ պաշտօնը ընկալէն ետքը մեռաւ , ու տեղը անցաւ իր որդին Սմբատ : Ասոր կիւրապաղատութեան երկրորդ տարին Հպատրացիք նորէն անհիւ բազմութեամբ Հայաստանի վրայ եկան և շատ կոտորածներ ըրին : Նախարարները տեսնելով որ Հպատրացւոց անհիւ բազմութեանը և անոնց դաշնային անգթութեանը դէմ դնելը գրեթէ անկարելի է , աւելի օգտակար սեպեցին խոնարհութեամբ յաղթել անոնց դաշնութեանը քան թէ պատերազմով . ուստի իրարու հետ միաբանեցան , շատ ընծաներ տարին , հպատակութիւն խոստացան անոնց և հարկ տալ՝ Յունաց չհպատակելով :

Ակէց դուռ բացուեցաւ որ երբեմն Յոյները և երբեմն Հպատրացիք Հայաստան արշաւելով տասկալի ընաններ հասուցին մեր խեղճ երկրին . վասն զի երբոր Յոյները կը լսէին թէ Հայերը Հպատրացւոց հպատակեր են՝ զօրքով Հայաստանի վրայ վազելով վրէժխնդիր կ'ըլլային . նոյնպէս երբոր Հպատրացիք կ'իմանային թէ Յունաց հետ վերաբերութիւն մը ունեցեր են , ձեռքերնին ու մլաքերնին անցած չարիքը կ'ընէին Հայոց : Ա բանս քառասուն տարիի չափ տևեց :

Ան քառասուն տարուան մէջ Սմբատին տեղը կիւրապաղատ դրուեցաւ Համազասպ Մամիկոնեան , որ հինգ տարի կիւրապաղատութիւն ը-

բաւ. տեղը անցաւ Գրիգոր, որ քանըչորս տարի իշխեցին եղբը պատերազմի մէջ մեռաւ (682):

4. Առջի Հոգարացի ոստիկանը եղաւ Աբդլա անունով մէկը, որ Հայերը օրսալու համար նախ սկսաւ քաղցրութեամբ վարուիլ հետերնին, ու վերջը գրեթէ բոլոր նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու շղթայակապ Դամասկոս խաւրեց: Նախարարներուն մէջէն փախաւ Սմբատ Բիւրատեան Բագրատունին, և Յուստինիանոս կայսրէն օգնութիւն առնելով, ուրիշ ճնացած նախարարներն ալ ժողվելով Աբդլային վրայ պատերազմի եկաւ, և անանկ սաստիկ ջարդ տուաւ որ հազիւ թէ Աբդլան միայն կրցաւ ազատիլ: Իսկ Սմբատ կիւրապաղատութեան պատիւ առնելով վեց տարիի չափ հանդարտութեամբ աշխը կառավարեց, ինչուան որ Մոհմատ անունով զօրավարը եկաւ ու սկսաւ նորէն իշխաներ հասցընել Հայաստանի. ան ատեն Սմբատայ հետ միացաւ Ներսէս Կամսարականը, ու մէկտեղ յանկարծակի Մոհմատին վրայ վազելով փախուցին զինքը:

5. Մոհմատ յաղթուելուն վրայ սաստիկ բարկացած երբոր շատ զօրքով նորէն Հայաստանի վրայ կուգար որ տակնուվրայ ընէ երկիրը, Սահակ կաթուղիկոս՝ որ Դամասկոս գերութեան մէջ էր ու միանգամայն Մոհմատին սիրելի բարեկամ, սա բանս լսելուն պէս խնդրեց որ Մոհմատին հետ տեսնուի: Բայց ճամբան գալու ատենը մեռաւ, ու չկրցաւ հետը տեսնուիլ. Թուղթ մը գրեց Մոհմատին. Մոհմատ երբոր լսեցաւ Սահակայ մահը, հրամայեց որ չթաղեն զտուրքը ինչուան որ ինքը

4. Աբդլա ինչ բռնութիւն ըրաւ Հայոց դէմ ու ինչպէս վանուեցաւ Հայաստանէն.

5. Հայաստան ինչպէս հրաշքով խալըսեցաւ Մոհմատին բարկութենէն.

դայ տեսնէ : Երբոր Մահմատ մեռնելին խուցը մնաս ու բարև տուաս սուրբին , ան ալ բարևը առնելով երկնցուց ձեռքը ու թուղթը տուաս Մահմատին իբրև թէ կենդանի ըլլար : Կարդաց Մահմատ սըրբոյն խնդիրքը , ու ըսաւ , « Կատարուի խնդիրքդ ս այրդ Աստուծոյ » : Ան հրաշքէն շարժած՝ ամենևին մեղա մը չըրաւ Հայոց , և ամիրապետին միջնորդութիւն ընելով ազատեր տուաս Դամասկոս եղած բոլոր Հայոց գերիները :

6 · Քիչ մը տաեն խաղաղութեամբ երթալէն ետքը՝ Հայաստանի ոստիկան խրկուեցաւ Կաշմ, որ խաբէութեամբ բոլոր նախարարները Նախջուանայ եկեղեցւոյն մէջ ժողվելով այրել տուաւ : Կաշմէն ետքը անզգամութեան կողմանէ անուանի եղաւ Եզիտ ոստիկանը , որ ծանր տուրքերով և ապատակութիւններով տասակ նեղեց Հայերը : Երկու տարիէն ետ կանչուելով իրեն տեղը Պատրիկ անուանեց Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը , որ խաղաղութեամբ կառավարեց աղգը խել մը տաեն : Սահակէն վերջը դրուած ոստիկաններուն մէջ ամենէն աւելի Հայերը տանջողը եղաւ Հասան ոստիկանը , որուն տաեներ Հայերը Մուշեղ Մամիկոնեանին առաջնորդութեամբը մեկ քանի կոտորածներ ըրին Հագարացւոց · սա պատճառաւ ոստիկան դրուեցաւ Եզիտ Բ · և տսիկայ զՀայերը անանկ չարչարեց որ նմանը ամենևին չէր եղած :

Կաշմէն լինչուան Եզիտ Բ · որ դրեթէ հարիւր տարուան միջոց է , ոստիկան դրուեցան տասնք · Վ ելք , տասը տարի · Մահմատ , հինգ · Աբդլազիզ , տասը · Մրուան , մեկ · Աշոտ Բագրատունի , տասնըհինգ · Եզիտ Ա · երկու · Սահակ Բագրատունի Պատրիկ , վեց · Սիւլէյման , իրեք · Պէքիր ,

6 · Կաշմ ու իրեն յաջորդ ոստիկանները լինչպէս չարչարեցին զՀայերը ·

ինը · Հասան , իրեք · Հայ իշխաններ , հինգ : Եղեա Բ · տասուերկու (797) :

7 · Եղեաին տեղը ասիկան գրուեցաւ Խուզիմայ անունով Հագարացին , որ հանդարտ խաղաղասէր և լաւ մարդ ըլլալով քսան տարի ասիկանուԹիւն ըրաւ ու ազգը հանգչեցուց · երբոր ինքը մեռաւ , տեղը անցաւ Հոլ անունով մէկը , որ նոյնպէս խաղաղասէր ըլլալով խաղաղուԹեամբ կառավարեց ազգը տասնըեօԹը տարի : Երբոր Հոլ ետ կանչուեցաւ՝ նախարարներուն աղաչանքովը Պատրիկ գրուեցաւ Բագարատ Բագրատունին , որ տասնըչորս տարի իշխեցին վերջը յանցաւոր դանուելով աէրուԹեան բաներուն մէջ՝ երեսէ ընկաւ , ու տեղը խաւրուեցաւ ԱպուսէԹ ասիկանը , որուն ապստրեր էր ամիրապետը որ վարպետուԹեամբ բռնէ Բագարատը ու իրեն խաւրէ · ան ալ խարդախուԹեամբ բռնեց գինքը ու ամիրապետին խաւրեց , ուր Բագարատ մահուընէ ազատելու համար՝ առ երեսս Հաւատքը ուրացաւ : Երբոր Սասունցիք իմացան Բագարատայ բռնուիլը , սասանիկ կատղած ԱպուսէԹին վրայ վազեցին , գինքը սպաննեցին և բոլոր զօրքը ցրուեցին : Ամիրապետը իմանալով եղած գործողուԹիւնները՝ անհամար զօրքով խաւրեց Բուղա ասիկանը , որ բոլոր նախարարները բռնելով իրեն խաւրէ · իսկ հասարակ մարդկանց մէջէն տեսքով , քալ ու բանի եկող մարդիկները տաճկըցընէ ու իր քովը պահէ , մեկալնոնք առանց խնայելու սպաննէ :

8 · Բուղա ամէն չարիք ընելով բոլոր Հայաստանը արիւնլուայ ըրաւ , ոչ աղաչանաց , ոչ խեղ-

7 · Եղեաէն եաև եղող ասիկաններուը ինչպէս վարուեցան Հայոց հետ ·

8 · Բուղա ինչ անգԹուԹիւններ ըրաւ ու ոմ է Սմբատ Խոստովանող ·

Հռոմեան և ոչ ընծայից կը նայէր. այլ ամէնքը անխտիր կը մեծցնէր: Ա՛ս բաներս տեսնալով Սըմ բատ Բագրատունին ուզեց որ ուրիշներուն վնասովը ինքը աս Թշուառութիւններէն ազատի. ուստի շատ ընծաներով Բուղային գնաց, ու ամէն բանի մէջ անոր չարութեանցը խորհրդակից կ՚ըլլար և առաջնորդ Հայաստան մտնալու: Բայց ինչպէս որ սովորաբար կ՚ըլլայ մատնիչներու, ինքն ալ վախճանին չհասաւ. վասն զի Բուղան Հայաստա նէն երթալուատեն ուրիշ կալանաւորաց հետ մէկ տեղ զինքն ալ Պաղտատ տարաւ, ու իր տեղը ոստիկան դրաւ Շէխի անունով Պարսիկ մը:

Ամիրապետը բոլոր նախարարները բանտ դնել տուաւ, Սմբատն ալ հետերնին, ու սկսաւ սպի պել որ հաւատքնին ուրանան: Ոմանք հաւատքնին ուրացան, և ոմանք նահատակեցան. Սմբատ ալ զղջալով ըրած չարութեանցը վրայ, հաւատքին վրայ հաստատուն կենալով բանտին մէջ մեռաւ, ու անով խոստովանող ըսուեցաւ: Ա՛ս Թշուառութիւններէս չորս հինգ տարի վերջը սկսաւ Բագրատունեաց Թագաւորութիւնը:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԴԱՍ ԻԵ.

Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը:

1. Երբոր մեր ազգին դասն գերութեան 431 տարին լմննցաւ, ուզելով Աստուած իր ողորմութեամբը վսխելթարել ազգը և առջի վիճակը կերպով մը նորոգել, Աշոտ անունով Բագրատունի նախարարը հանեց, որ իրեն ազգասէր, ազնիւ և խնամատուն բնութեամբը ամենուն սիրելի ըլլալով կանգնեց թագաւորութիւնը և ազգը գերութենէ ազատեց:

Ա՛ս Աշոտը Սմբատ Խոստովանողին որդին էր. երբոր Շէխին Հայաստանի վրայ տաճկան դրուած էր՝ Աշոտ շատ արդիւնք ցրցուց անոր առջևը՝ իր ազգակիցներուն վրայ գութ ունենալով, Հայաստանի աւերակ գարձած տեղերը նորոգելով և գերութեան ամէն բաներու մէջ հաւատարիմ գըտնուելով զամէնքը կը յորդորեր որ իրեն պէս հաւատարիմ ըլլան և խռովութիւն չհանեն:

1. Բագրատունեաց թագաւորութիւնը որո՞ն ձեռքովը սկսաւ ու ի՞նչպէս.

Երբոր Շէխին եաս կանչուեցաւ, ամիրապետը շատերէն լսած ըլլալով Աշոտին հաւատարմութեան ու լաւութեան անունը՝ ուզեց փոխարէն մը ընել Աշոտին. ուստի շատ ընծաներով և թագաւորավայել զգեստներով Ալի էրմինի անունով ուրացեալ Հայ նախարարը խաւրեց որ պայ Աշոտը բոլոր Հայաստանի վերակացու դնէ, և աս եղաւ 851ին: Աշոտ երբոր առաւ աս իշխանութիւնս, հաւատարմութիւնը աւելցընելով զօրքերը շատցուց, սկսաւ բարեկարգութիւններ ընել ամէն բանի մէջ, իր Աբաս քաջ եղբայրը սպարապետ դրաւ, և անոր հետ մէկտեղ Հայաստանի Թշնամիները վռնտեց, և անունց յաղթութեան ձայնը բոլոր շրջակայ տեղերը տարածուելով ամենուն սիրտը վախ ձգեց ու ալ անկէց եաքը դադրեցան Հայաստան արշաւելէն:

2. Ան միջոցին որ Աշոտ Հայաստանը բարեկարգելու հետ էր՝ Պաղտատի մէջ նոր ամիրապետ նստելով, Բուղային առաջը գերի գնացած նախարարները խնդրեցին նոր ամիրապետէն որ գերութենէ ազատին. ու երբոր կատարուեցաւ խնդիրքնին՝ մեծ ուրախութեամբ Հայաստան եկան, և իրենց ուրացութեանը վրայ զղջալով Աշոտին հետ միաբան սկսան կարգի դնել Հայաստանը: Նախարարները ամէն կերպով խանգարելով Աշոտոյ կատարելութիւնները, խնդրեցին ամիրապետէն որ Թագաւորեցընէ վրանին Աշոտը՝ խոստանալով որ Հայաստաբիմ կը կենան իրենց հպատակութեանը մէջ: Ամիրապետը հաւանեցաւ նախարարներուն աղաչանացը. ու Թագ և Թագաւորական ծիրանի խաւրեց Աշոտին: Աշոտին փառաւորութիւնը լսելով Յու-

2. Նախարարները իրենց գերութենէ ազատեցան ու Աշոտ իրենց Թագաւորեց.

նաց Վասիլ կայսրը որ ազգաս Հայ ու Արշակու-
նեաց ցեղէն էր, Թագ մ՚ալ ինքը խաւրեց (885):

3· Աշոտ Թագաւորելէն վերջը առջի Թագաւո-
րական կարգերը նորոգեց, աւրուած տեղերը նո-
րէն շինեց, երկրագործութիւնը սկսաւ ծաղկեցը-
նել, Թագաւորանիստ քաղաքն ալ Բագարանը ը-
րաւ: Կամաց կամաց սկսաւ նուաճել Հիւսիսայինն
ազգերը, որոնք առենով Հայոց ձեռքին տակն էին,
նոյնպէս նաև Գուգարացիներն և Ուտէացիները,
որոնց կարգ կանոն դնելով խոհեմ առաջնորդներ
ու իշխաններ դրաւ անոնց վրայ: Ա գործողու-
թիւններէս վերջը Աշոտ Պօղոս Լևոն կայսեր տե-
սութեան գացած ըլլալով, պատուով եւ դառնա-
լու առենը երբոր Շիրակ հասաւ, ծանր հիւան-
դացաւ, ու տեսնալով որ մեռնելու մօտ է կանչեց
կաթուղիկոսը, և բոլոր հոգևոր պատրաստութիւն-
ները ընելէն վերջը եօթանասունըմէկ տարեկան
մեռաւ. քսանըվեց տարի իշխանութիւն ընելէն և
հինգ տարի Թագաւորելէն վերջը: Աշոտ խելքով
ու խոհեմութեամբ առաւ Թագաւորութիւնը, քա-
ջութեամբ պահեց, բարեպաշտութեամբ անցուց
կեանքը և ամենուն իրաւցընէ փրկիչ և սիրելի
Հայր հասարակաց եղաւ:

3· Աշոտ ինչ կարգաւորութիւններ ըրաւ ու
ինչպէս մեռաւ.

ԴԱՍ ԻԶ.

Սմբատ Ա. իբրև առանձին խառնուրդներուն ոչ մահը։

1. Սմբատ Աշոտոյ որդին և յաջորդը Գուգաց աշխարհքին էր երբոր լսեց իր հօրը մահը, ուսում շուտ մը եկաւ որ Թագաւորութիւնը առնէ, և բոլոր ազգին հաւանութեամբը Թագաւոր եղաւ։ Ա բանս լսելով Աշոտին Աբաս եղբայրը, ուզեց որ ինքը Թագաւորէ, և պատերազմ բացաւ Սմբատին հետ. բայց Գէորգ կաթուղիկոս արդիլեց զինքը՝ երդում առնելով Աբասէն որ նորէն չապրստամբի. Թէպէտ անիկայ երդմանը վրայ հաստատուն չկենալով նորէն ապստամբեցաւ ու յաղթուեցաւ Սմբատէն։

2. Սմբատ Աբասին յաղթելէն վերջը եղած գործողութիւնները և ան տանեկի հանդարտութիւնը իմացընելով ամիրապետին, արքայական Թագ ընդունեցաւ անկէց. նոյնպէս նաև Լևոն կայսրէն շատ պատիւներ առաւ։ Սմբատայ աս փառաւորութեանցը նախանձելով Ափշին Պարսից ոստիկանը՝ վրան պատերազմի եկաւ. Սմբատ ալ երեսուն հազար զօրքով անոր դէմ պատերազմի ելաւ, բայց առանց արիւնհեղութեան քաղցրութեամբ սիրտը առաւ ու իր տեղը դարձուց։ Եր-

1. Սմբատ ինչպէս Թագաւոր եղաւ ու ինչ կռիւ ունեցաւ իր Աբաս եղբօրը հետ.

2. Ինչու Ափշին պատերազմ բացաւ Սմբատայ դէմ ու ինչպէս յաղթուեցաւ.

կու տարին վերջը Ափշին զղջալով ըրած հաշտութեանը վրայ, ուզեց Հայաստանը նուաճել. ուսոի շատ զօրքով եկաւ սուտ ձայն մը հանելով թէ Հայաստանէն պիտի անցնի երթայ. բայց երբոր խմացուեցաւ խարդախութիւնը, մեկէն Մբատ հրաման խաւրեց նախարարներուն որ իրենց զօրքերովը գան ժողվուին. և անոնց հետ միաբան վազեց Ափշինին վրայ, չարաչար յաղթեց անոր և փախուց զինքը:

3. Ան միջոցին Աշմատ Միջագետաց ոստիկանը ապստամբելով ամիրապետէն Հայաստանի վրայ վազեց. քանի մը ամրաստեր նախարարներ թագաւորին հետ միաբանելով, վանեցուն հազար զօրքով Աշմատին դէմ պատերազմի պատրաստուեցան: Բայց ինչպես շատ անգամ կը հանդիպի որ նաև քաջերուն բազմութեանը մէջ վատեր գտնուին, ասանկ ալ ատ դիպուածիս մէջ Գագիկ Սմբատայ անները փառասիրութեամբ ուզելով թագաւորութիւնը ինքը առնել՝ ծածուկ Աշմատին հետ միաբանեցաւ, ու Սմբատայ չար խորհուրդներ տալով և գէշ ճամբաներէ առաջնորդելով անոր զօրացը կ'ուզէր որ յաղթուի. բայց Հայերը քաջութեամբ պատերազմեցան յաղթեցին Աշմատին ու Գագիկայ անխելք յոյսն ալ պարապը հանեցին: Գագիկ իրեն արժանաւոր պատիժը գտնալով Սմբատին քեռորդին ապաննուեցաւ:

4. Ափշին երբոր լսեց թէ նախարարները պատերազմին լծնալուն պատճառաւ ցրուեր են՝ նորեն վազեց Հայաստանի վրայ. բայց ասանգամ

3. Հայերը ինչպես Աշմատին ալ յաղթեցին ու ոչ է Գագիկ Սմբատայ անները.

4. Սմբատ Ափշինին կատաղութենէն ինչպես խալըսեցաւ ու ինչ հանդիպեցաւ Յուսուփայ և իրեն մէջ.

նախատրաններըը Թագաւորին հրամանին չհնազան-
դելով օգնութեան չեկան. ասով Տարկապրուե-
ցաւ Սմբատ հաշտութիւն խօսելու՝ պատանդ ա-
ղով իր որդին և մէկ եղբօրորդին: Ափշին երբոր
աս բաներով գոհ չըլլալով կ'ուզէր ուրիշ չարիք-
ներ ալ հասցընել, ինքը չարաչար ատակեցաւ,
պատանդներն ալ ազատեցան: Տեղը անցաւ իր եղ-
բայրը Յուսուփ. երբոր աս բանս լսեց Սմբատ՝
դիանալով Յուսուփին խարդախ և անգութ բնա-
ւորութիւնը ապաչեց ամիրապետին որ ատկէց վեր-
ջը Հայաստանին Տարկը ուղղակի Թագաւորը խա-
բէ ամիրապետին ու ատիկաններըը ամենևին չհատ-
նուին, որովհետև սատիկ կը նեղէին զՀայերը:
Ամիրապետը կատարեց Սմբատայ խնդիրքը, և Թա-
գաւորական Թագ և ուրիշ շատ ընծաներ ալ խա-
բեց Սմբատայ: Ա բանիս Յուսուփ սատիկ նե-
ղանալով մէկէն զօրք ժողվեց ու սկսաւ Հայաս-
տանի վրայ վազել. Սմբատ ալ իր զօրքերովը դի-
մացը ելաւ. բայց դեռ պատերազմ չըրած՝ երկու
կողմէն ալ ուզեցին հաշտութիւն ընել և բարեկա-
մութեան նշան՝ Յուսուփ ոսկիէ Թագ խաբեց
Սմբատայ:

5. Հաղիւ Թէ քիչ մը հանգստութիւն գտաւ
Սմբատ Թշնամեաց ձեռքէն, Եգերացւոց Կոստան-
դին Թագաւորը առանց պատճառի պատերազմ
բացաւ Սմբատայ հետ. անոր դէմ գնաց Սմբատ
Վրաց Աբրներսեհ Թագաւորին հետ. ատոնք յաղ-
թեցին Կոստանդինին, և Աբրներսեհ Կոստանդի-
նին հետ հաշտութիւն խօսելու ատենը՝ խաբէու-
թեամբ բռնեց զինքը ու Թագաւորին բերաւ: Սմ-
բատ չորս ամիս Անիի բերդին մէջ պատռուով պա-

6. Սմբատ ինչպէս յաղթեց Կոստանդինին,
ինչպէս Աբրներսեհը ու իրեն դաւակիցները պատ-
ժեց ու Դագիկ ինչպէս Թագաւորեց.

հելէն եաքը գԹագաւ Կոստանդնի վրայ ու ազատեց զինքը։ ասոնք բանս Աարնեբաեհ իրեն անարգանք սեպելով ուրիշ քանի մը նախարարաց հետ խօսք դրաւ որ Սմբատը սպաննէ։ Եւ որովհետեւ նոյն ժիջոցին Թագաւորը Տաշրաց գաւառն էր, ապրստամբ նախարարները մէկերնէն մէկը որոշեցին որ երԹայ Թագաւորին հետ բարեկամութիւն ձեւացընելով զինքը սպաննէ։ Ա բանիս վրայ ապահովելով իրենք վազեցին Անին առին, վերջը Երազգաւորս գացին, ու Թագաւորին պալատը մնալով ժամէ ի ժամ կ'սպասէին որ Սմբատին սպաննուելը լսեն։ բայց բարեբաղդութեամբ իմացաւ Թագաւորը անոնց գաւը, ու մէկէն իր զօրքերը ժողվեց որ ապստամբները նուաճէ։ Պատերազմի առեն Թագաւորին զօրքերը իրենց սիրոյը սիրովը վառուած, այնպիսի սաստիկ կարդ կուտային ապստամբներուն, որ Սմբատայ սիրտը չդիմանալով կ'սպաչէր որ խնայեն ապստամբներուն։ Աարնեբաեհ տեսնելով եղած կարգը, եկաւ Թագաւորին ոտքը ընկաւ ու Թողութիւն խնդրեց իր ապերախտութեանը։ Սմբատ ներեց անոր յանցանացը, և մէկալ նախարարներուն աչքերը փրթել տուաւ։ Բայց անանկով ալ խաղաղութիւն չգտաւ։ վասն զի իր քեռորդին Գագիկ Արծրունի ԹեԹեև պատճառի մը համար սուրբ եցաւ Թագաւորին հետ, դնաց Յուսուֆին հետ միաբանեցաւ ու Սմբատայ վրայ մեծաւեծ ամբաստանութիւն ներ ըրաւ անոր։ Յուսուֆ ալ Հայոց մէջը եպիսկոպոսութիւն ձգելու մտքով Գագկայ Թագ դրաւ ու իր Վասպուրական աշխարհքը խաւրեց։ անիկայ ալ շատ նախարարներ իր կողմը որսալով Հայոց նի սկսաւ Թագաւորել (908)։

6։ Երբոր լսեց Սմբատ Գագկայ Թագաւորելը

6։ Սմբատ երբոր Գագկայ Թագաւորելը լսեց

մեկէն Յովհաննէս կաթուղիկոսը շատ ընծաներով Յուսուֆին խնդրեց որ երթայ Յուսուֆին սիրտը գինովցնէ ու խաղաղութիւն ընել տայ. բայց ոսոխականը փոխանակ գինովցնելու կաթուղիկոսին ազատ չտնացը՝ բանտ դրաւ զինքը, ու սկսաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել: Գարնան սկիզբնեըը Գագկայ առաջնորդութեամբը սկսաւ Հայաստանի ներսերը վազել ու մեծամեծ կոտորածներ ընել, որով նախարարներէն ոմանք յուսահատելով գնացին անձնատուր եղան Յուսուֆին: Սմբատ բան իր ունեցած քիչ զօրքովը որչափ որ կրնար դէմ կը գնէր, բայց ձորը հասնելով Գուգարացւոց երկիրը փախաւ. սա բանս որ խմացաւ Յուսուֆ՝ աւելի ազատութեամբ սկսաւ Հայաստանը քանդել ապականել, մինչեւ ան Սմբատ տեսնելով եղած չարիքները՝ ելաւ Գուգարացւոց աշխարհքէն ու սկսաւ նոր պատերազմի պատրաստութիւ Յուսուֆը վռնտելու համար. բոլոր ունեցած զօրքերը ժողվելով իր երկու որդւոցը աւսաւ. անոնք մեծամեծ քաջութիւններ ընելով երբոր Թշնամեաց սիրտ յաղթեին՝ Սևորդիները թշնամեաց կողմը անցան. անով Սմբատայ զօրքերը հարկադրուեցան փախչելու, և բոլորովին յաղթուեցան: Ան բանս երբոր տեսան ուրիշ շատ նախարարներ, փոխանակ նրանց Թագաւորին օգնելու՝ գնացին Յուսուֆին անձնատուր եղան, որպէս զի բաներնին ապահովցընեն. բայց Յուսուֆ տեսնելով նախարարներուն բազմանալը վախցաւ, ու սուտումոտ պատճառներով շատը յայտնի ըսպաննեց, շատը ծածուկ խղդեց, ոմանց ալ Թոյն տուաւ, որով քովը քանի մը մեծ նախարարներ միայն մնացին:

Ինչ ըրաւ ու Յուսուֆ ինչպէս տիրապետեց Հայաստանի.

7. Տեսաւ Սմբատ որ բոլոր նախարարները քովէն հեռացեր են, ու ինքը չկրնար դէմ դնել Յուսուֆին, ուստի իր մարդիկներովը քաշուեցաւ Կապոյտ բերդը, որ անառիկ էր։ Յուսուֆ եկաւ պաշարեց բերդը ու Հայոց զօրքերը դրաւ որ բերդապաններուն հետ պատերազմին։ Սմբատայ սիրտը չդիմացաւ երկու կողմէն եղած չարդերուն որ իրեն համար էին, և վեհանձնութեամբ յանձն առաւ աւելի իր թշուառութիւնը քան թէ աւանել իր աղգակիցներուն մահը, ու ինք զինքը Յուսուփին ձեռքը տուաւ, երդմունք առնելով անկէ որ իրեն անձին վնաս մը չբնէ։ Յուսուփ առջի բերանը պատուով պահեց զինքն ու եաքը Թողուց որ Շիրակ երթայ. բայց երբոր Դապիկը քովէն փախաւ, Յուսուփ բարկանալով խաբէութեամբ կանչեց Սմբատը ու շղթայն զարկած Դուինի տարաւ. հոն տարի մը մութ բանտի մէջ պահեց հոգի վրայ պահակելներով ու միայն հաց և ջուր տալով. վերջը երբոր լսեց որ Երնջակ բերդին մէջ շատ մը նախարարներ տպստաներ են՝ դնաց անկ բերդը առնելու, ու երբոր պատերազմով չկրցաւ յաղթել, հրաման տուաւ որ Սմբատը բերդին դիմացը տանին ծեծեն ու նախատեն։ Դահիճներըը սկսան տանջանքը աւելցընել որ հաւատքը ուրանայ. նախ Թաշկինակով բերանը գոցեցին որ շունչ չկարենայ առնել. վերջը գելատրանով վիզը ճմլեցին, ու գլուխն վրայ ծանր բեռներ գնելով տասը հոգի վրան կ'ինային որ նեղութիւնը աստիճացընեն։ Ա՛ս ամեն անգթութիւններս ընելէն վերջը, քանի որ գեռ ողջ էր մորթը հանեցին ու Դուինի տանելով խաչեցին երանելի Թագաւորը, որուն վրայ լոյս ծագեց և շատ հրաշքներ ալ եղան։ Ա՛ս բա-

7. Սմբատ ինչ գառն ու սարսափելի մահ ունեցաւ.

նիս մէջ մեր նախաթարաց ըրածը այնպիսի գոր-
ծողութիւն մըն է որ մէջը յայտնի կը տեսնուի
նախանձու և ատելութեան կիրք, քաղաքականու-
թեան պակասութիւն, անձնասիրութիւն, տիրա-
տեցութիւն, և գահավէժ խորհուրդ, որ ատոնք
ամէնն ալ մեծամեծ ու անսպառ աղբիւրներ են
անմիաբանութեան, ազգատեցութեան և կրօնից
ու մարդկութեան պակսելուն, որով գազանային
բնութիւն մը անոնց տեղը կը տիրէ, ինչպէս որ
տեսանք առ բանիս մէջ ու պիտի տեսնենք բոլոր
Բագրատունեաց և Ռուբինեանց պատմութեան
մէջ շատ տեղ: Թէ որ Թագաւորը գէշ ըլլար (ինչ-
պէս էր Արտաշիր Արշակունեաց վերջի Թագա-
ւորը), ան ատեն քիչ մը իրաւունք կրնային ու-
նենալ նախարարները. բայց ոչ չտեսաներ Սմբա-
տայ սքանչելի առաքինութիւնները, այսինքն հայ-
րենասիրութիւնը, խաղաղասիրութիւնը, ներ-
ողամտութիւնը, հայրագութ խնամքը, արդարու-
թիւնը և իրեն ուրիշ շատ հատարելութիւնները.
որով մեկէն յայտնի կ'ըլլայ իր Թշնամեաց ըրածին
վերջի աստիճանի չարութիւնը (914):

ԳԱՍ ԻԷ.

Աշոտ Բ. Երկար, ոչ իր քաջութիւնները:

1. Աշոտ Բ. երբոր լսեց Տրդը մահը, իր ունեցած քիչ մը զօրքը կարգի դրաւ ու անոնց հետ մեկտեղ վազեց Հայաստանի ան քաղաքները վրայ՝ որոնց մէջ բռնացեր էին Յուսուփին զօրքերը. մեծ յաջողութեամբ ու քաջութեամբ թշնամիները վանեց, այլ և այլ տեղեր սաստիկ կարդ ասլով թշնամեաց սիրտը վախ ձգեց ու աս իրեն քաջութիւններուն համար Երկաթ ըսուեցաւ: Նախարարներն ալ սիրտ առին, եկան միացան հետը ու զինքը թագաւոր օծեցին. բայց Հաղիւ թէ խաղաղութեան ձայները սկսաւ տարածուիլ Հայաստանի մէջ, նորէն խռովութեան ձայները հալածեցին խաղաղութիւնը: Ման զի նախարարներէն ոմանք նորէն սկսան մէջերնին կռիւ ընել փառասիրութեամբ և առելութեամբ. ոմանք ալ թագաւորին դէմ ելլալով սկսան պատերազմիլ, ու ցաւալի Հայաստանը տակն ու վրայ ըրին: Յուսուփ ալ առիթ գտնալով վազեց Հայաստանի վրայ ու ինքն ալ սկսաւ քանդել ապականել առջինէն աւելի: Ամբողջ գեղեր քաղաքներ անապատ դարձուց: Բնակիչները կարդել կուտար, մանաւանդ ծերերն ու սկարները, մանր տղաք ու անկարող մարդիկը. միացածները կամ կը տաճկըցը-

1. Աշոտ Բ. ինչպէս վռնտեց զՅուսուփ ու Հայաստան ինչպէս նորէն իր խաղաղութիւնը կորսընցուց.

նէր և կամ կը նահատակէր։ Նոյն բաները սկսան ընել նաև ուրիշ բարբարոս ազգերն ալ։

2. Կոստանդին Պերփիւռուժէն կայսրը ուզեց օգնել Հայոց, և թղթով խնացուց իր կամքը Յովհաննէս կաթուղիկոսին. սա բանիս վրայ մեծապէս ուրախանալով ազգասէր կաթուղիկոսը, շատ եռանդ եղաւ որ նախարարները միաբանէ, որպէս զի հաւանութեամբ թուղթ գրուի Կայսեր օգնութիւն խնդրելով իրմէ բայց անօգուտ. սա պատճառ խելքին չարը հաւնելով՝ ինքը առանձին պատասխան մը գրեց Կայսեր, Հայոց խեղճութիւնները ու թշուառութիւնները պատմեց, ու միանգամայն օգնութիւն խնդրեց. ան թղթէն այնպէս շարժեցաւ Կայսեր դուրը Հայոց վրայ որ մեկէն Թէոդորոս անունով իշխան մը խաւրեց Հայաստան որ գայ Թագաւորն ու կաթուղիկոսը Կոստանդնուպոլիս տանի։ Գնաց Աշոտ, ու շատ մեծ պատիւ և ընդունելութիւն գտաւ Կայսերէն, նորէն Թագաւոր պսակուեցաւ, ու մեծամեծ պարգևներով ու շատ զրքով Հայաստան դարձաւ։ Յուսալի վախնալով որ Աշոտ Յունաց օգնութեամբը կրնայ իրեն վնասել՝ բարեկամութիւն ձևացուց. բայց ուզելով Հայոց մէջ երկպառակութիւն ձգել՝ որ զներնք տկարացընէ առջինին պէս, Աշոտ Երկաթին հօր եղբօր որդին Աշոտը Թագաւոր դրաւ՝ որ Աշոտ Բռնաւոր ըսուեցաւ։ Ա՛ս Աշոտ Բռնաւորը մեկէն սկսաւ Աշոտ Երկաթին հետ պատերազմ ընել որ Թագաւորութիւնը առնէ. նախարարներէն ոմանք Թագաւորին կողմն էին, ոմանք ալ բռնաւորին. սա պատճառաւ շատ անգամ մէջերնին սաստիկ պատերազմներ եղան,

2. Կոստանդին Պերփիւռուժէն ինչ օգնութիւն ըրաւ ու ինչպէս պատուեց զԱշոտ ու Յովհ. կաթողիկոսը ու ո՞վ է Աշոտ Բռնաւորը.

ու ամէն անգամ Յովհաննէս կաթուղիկոս մէջ մտնալով կը խաղաղցնէր։

3· Թագաւորին եղբայրը Աբաս՝ տեսնալով Աշոտոյ առաջ երթալը նախանձեցաւ, ուսաւ Ախխազաց Գուրգէն իշխանին հետ միանալով ապըստամբեցաւ Աշոտէն ու ետևէ էր Աշոտը մեռցընելու· բայց Աշոտ առաջուց իմանալով եղբօրը դաւաճանութիւնը, իր ընտանիքովը ծածուկ Ուտի աշխարհքը վախաւ· հոն զօրք ժողվեց, եղբօրը դէմ պատերազմի ելաւ ու միշտ յաղթող դրտնուեցաւ· բայց վերջէն ուրիշները մէջ մտան ու դրաւանց հաշտեցուցին զիրենք։

4· Անգամ մը երբոր Աշոտ առանց գիտնալու Ուտէացւոց աշխարհքը կ'երթար քանի մը հոգով զուարճութեան համար, մէյմ' ալ լուր առաւ որ Ցլիկ Ամրամ Ուտէացւոց իշխանը ապըստամբեր է իրմէ ու շատ զօրքով պատերազմի կը պատրաստուի։ Աշոտ մէկէն եգերացւոց թագաւորին քովը գնաց, ու անկէ օգնութիւն խնդրեց՝ գիտնալով անոր Ջղմարիա սէրն ու բարեկամութիւնը· և ինչպէս որ կը յուսար իր կարծածէն աւելի օգնութիւն գտաւ անկէ, ու սկսաւ Ուտէացւոց աշխարհքը վազել։ Ամրամ իր զօրքերը անտառին մէջը գարան դրաւ՝ որպէս զի յանկարծակի վազէ Աշոտին վրայ· բայց Աշոտ ծածուկ ճամբաներէ անցնելով գնաց ամուր բերդ մը քաշուեցաւ իրեններովը· Ցլիկ Ամրամ ալ եկաւ պաշարեց բերդը։ Աշոտին զօրքերը յուսահատեցան և խօսք դրին թշնամիներուն հետ որ Աշոտը բռնեն կապեն ու իրենց ձեռքը մատնեն։ Աշոտ իմանա-

3· Աշոտ ինչպէս իր Աբաս եղբօրը դաւաճանութենէն ապրեցաւ·

4· Աշոտ երբոր լսեց Ցլիկ Ամրամին իրմէ ապըստամբիլը ինչ ըրաւ·

լավ անոնց միտքը՝ նոյն գիշեր որ առաւօտը զինքը պիտի մատնէին՝ առանց ուրիշի բան մը ըսելու հե- ծաւ իրեն աշխոյժ ձիուն վրայ ու Թշնամեաց մէ- ջէն անցնելով փախաւ գնաց, ու հարիւր հոգի հե- տը առած՝ Սևան կղզին առանձնացաւ:

5· Ան միջոցին Յուսուֆ նորէն ընդհանուր ա- տիկան դրուելով ամիրապետէն, Հայաստանի վը- րայ առանձին ոստիկան դրաւ Նըսր անունով մէ- կը, որ անտէր գանալով Հայաստանը՝ շատ չարիք հասուց Հայոց· բայց քանի որ աւելի մեծ չարու- թեան մը ձեռք չէր զարկած՝ ետ կանչուեցաւ Յու- սուֆին, ու իր տեղը եկաւ Բըշը ոստիկանը: Ան- կայ լսելով որ Աշոտ Սևան կղզին է քաշուեր՝ գե- ղամայ ծովուն քովը իր անթիւ զօրքերը շարեց: Աշոտ իր մարդիկներէն հօթանասուն հոգի ընտ- րեց ու առաջ նաւով սկսաւ ցամաքիններուն հետ պատերազմիլ, այնչափ որ Թշնամիները բանակին Թողուցած փախան: Բըշը հոնկէց փախչելու ա- ւէն գնաց ուրիշ բերդի մը վրայ, ուր աւելի մեծ չարգ կերաւ Գէորգ Մարզպետունիէն, որ թէ- պէտ և քիչ՝ բայց անպարտելի զօրքովը մեծամեծ գիտաններ հասուցեր էր Թշնամեաց ուրիշ անգամ- ներ ալ:

6· Բըշին տեղը նորէն եկաւ Նըսր, բայց սկսաւ քաղցրութեամբ նայիլ Հայոց վրայ ու պուէթ ցու- ցընել· Աշոտ ալ սիրտ առնելով եկաւ իր Թագա- ւորութիւնը առաւ ու սկսաւ բարեկարգել· իր Ա- բաս եղբօրը հետ ալ հաշտուեցաւ· բայց ամօթ որ Թագաւորութեան խաղաղութիւնը չկրցաւ վայելել, ու հիւանդանալով մեռաւ քսանըչորս տարի նե-

5· Ո՞վ է Նըսր, ու Բըշը ինչպէս Աշոտին ու Գէորգ Մարզպետունիին յաղթուեցաւ·

6· Ո՞ւր և ինչպէս մեռաւ Աշոտ Երկաթ ու ո- րո՞նք են իրեն յաջորդութիւնները·

ղուխեամբ Թագաւորելէն վերջը։ Քանչ էր և միան-
գամայն խոհեմ, խաղաղասէր, ու ներողամիտ.
բայց ժամանակը և նախնեարաց անկարգութիւնը
զրեթէ անպատուական ըրին իր առաքինութիւնները ու
չթողուցին որ թէ ինքը ու թէ Հայաստան վայե-
լեին անոնց արդիւնքը։

7. Աբաս Աշոտոյ եղբայրը նախարարներուն
հաւանութեամբ Թագաւոր ընտրուեցաւ ու աթո-
ռը կարս քաղաքը դրաւ. շատ շինութիւններ ը-
րաւ, ու այլ և այլ պատերազմներով Հայաստանը
խաղաղցուց։ Մերձակայ ազգերը լսելով Աբա-
սայ փառաւորութիւնը ու ըրած բարեկարգութիւն-
ները՝ սկսան վրան նախանձիլ. մանաւանդ
Ափխազներուն Թէր Թագաւորը, որ նաև շատ զօր-
քով վրան պատերազմի եկաւ, ու յոխորտանօք
պատգամ խրկեց թէ հիմի կարսի նոր շինած
մայր եկեղեցին վրաց ծխով օծելու։ Աբաս զօր-
քերը ժողվեց ու պատերազմի պատրաստուեցաւ.
յաղթեց Թէրայ, բռնեց զինքը տարաւ մայր եկե-
ղեցին ու ըսաւ. « Ահա ասա է ան եկեղեցին որ կ'ու-
զէիր օրհնել վրաց ծխով. լաւ նայէ, որովհետև
աղ պիտի չտեսնես ». ասա ըսելով աչքերը փորել
տուաւ. իսկ Ափխազները շատ ընծաներով ու
աղաչանքով ազատեցին Թէրը գերութենէ։ Աբաս
քսանըչորս տարի Թագաւորելէն ետքը խաղաղու-
թեամբ մեռաւ. և ըրած շինութիւններն ու բա-
րեկարգութիւնները իրեն միշտ արձան իր ա-
նուանը յիշատակ կանգնեց Հայաստանի ամեն կող-
մերը (951)։

8. Աբասէն շատ աւելի լաւ, առաքինի ու աղ-

7. Աբաս ինչպես Թագաւորեց ու ինչպես յաղ-
թեց Թէր Ափխազաց Թագաւորին.

8. Ո՞վ է Աշոտ Ողորմած, ինչպէս Թագաւոր
օծուեցաւ ու ինչ պատերազմ ունեցաւ Հադարա-
ցւոց Համառն զօրավարին հետ.

գասէր եղաւ իր յաջորդը որով ազգը երջանկացուց· ասկից էր Աշոտ իր որդին, որ իր բարեգործութիւններուն համար Աշոտ Ողորմած ըսուեցաւ: Ասիկայ հօրը մեռնելէն եաթը ութսուն հազարի չափ զօրք ժողվեց, Գէորգ Մարզպետուհնին Գոռ որդւոյն հետ միացաւ ու Թշնամիները վռնտեց Հայաստանէն մեծամեծ քաջութիւններ ընելով· ինը տարի աս կերպով Հայաստանը խաղաղ պահեց, ինչպէս որ նախարարները առանելով իրեն քաջութիւնները, ազգասիրութիւնը ու բարեպաշտութեան հոգին, ժողովք ըրին ու Թագաւոր օծեցին զինքը բոլոր ազգին վրայ: Երբոր Աշոտ ընդհանուր ազգին Թագաւոր օծուեցաւ, իրեն Մուշեղ եղբայրն ալ քանի մը նախարարներու գլուխ կենալով Կարսի մէջ Թագաւորեց· բայց որովհետև միշտ Աշոտին կը հպատակէր և կ'օգնէր անոր, ան պատճառաւ ձայն չհանեց Աշոտ ու Թողուց որ Թագաւորէ: Աշոտոյ այսպէս ամէն կողմանէ խաղաղութեամբ և հայրաբար ազգը կառավարած տարին՝ Հոգաբարձուց Համուն տարապարեալ ապստամբելով ամիրապետէն Հայաստանի վրայ վազեց· Աշոտ բազմութեամբ զօրաց գիմացը եկաւ, յաղթեց Թշնամւոյն ու բռնեց սպաննեց զինքը· ամիրապետը ուրախանալով և հաւնելով Աշոտին ըրած քաջութեանը՝ կրկին Թագաւորական Թագ ու շատ մեծագին պարգևներ խաւրեց անոր:

9· Աշոտ քաջութեան հետ մէկտեղ բարեպաշտութեամբ և ողորմածութեամբ զարդարուած՝ բոլոր ունեցածը աղքատաց կը բաժնէր, որով մեռնելէն եաթը գանձատունը մէջ տուակ չգտնուեցաւ· շատ հիւանդանոցներ ու աղքատանոցներ շինել

9· Աշոտ իր քաջութենէն դուրս ինչ քրիստոնէական առաքինութիւններ ալ ունէր·

տուաւ, որմէ յետոյ մնած չատ անգամ ինքն ալ անձամբ կ'աշխատէր ու կը ծառայէր հիւանդաց. չատ անգամ ալ ապքանէրն ու ցաւագարնելը իրեն սեղանակից կ'ընէր. եկեղեցիներ, վանքեր ուսումնարաններ և ուրիշ բարեպաշտական տեղեր չինել տուաւ: Իրեն պէս բարեպաշտ ու ողորմած էր իր խոստովանոյշ Թագուհին ալ, որ չատ բարեգործութիւններէ զատ՝ վանքեր, եկեղեցիներ ու հիւանդանոցներ չինել տուաւ:

ԴԱՍ ԻԸ.

Սմբատ երկրորդին ինչուան Բագրատունեաց վերջանալը:

1. Աշոտին իրեք որդւոցը մէջէն, որ էին Սմբատ, Գագիկ ու Գուրգէն, Սմբատը Թագաւորեց, որ իրեն ըրած քաջութիւններուն համար Շահնշահ (Թագաւորաց Թագաւոր) և Տիեզերակալ ըսուեցաւ: Ամիկայ չատ զարգարեց Անի քաղաքը՝ հարիւրաւոր եկեղեցիներ վանքեր ու խել մը պալատներ չինելով. բայց ամենէն մեծ ու յիշատակի արժանի չինուածքն է Անիին շրջապատը քաշած պարիսպը՝ որուն համար ուրիշ տարի հազարաւոր հոգի աշխատեցան. իսկ քաղաքին բոլոր եկեղեցեաց թիւը կ'ըսեն թէ հազար ու մէկ էր, և սակայն սովորութիւն մնած էր ատոնց մէջ Անիին հազար ու մէկ եկեղեցեաց վրայ երդում ընել: Սմբատ երկրորդ, տասնեւրեք տարի Թագաւորեց

1. Սմբատ Բ. իր մեծագործութիւնքը հետ ինչ անկուսակութիւններ ալ ըրաւ.

ու մեռաւ, խաղաղասէր ու աշխարհաշէն Թագաւորի անուն ժառանգելով. բայց բարեպաշտութեան կողմանէ Թագաւորութեան վերջի տարինեըը եկեղեցական օրինաց դէմ բաներ ընելով անունը արատաւորեց: Իսկ ըրած գործողութիւնները ատոնք են. նախ իրեն քրոջը ազգիկը կին առաւ որուն չատ գէմ կեցան եկեղեցականք բայց անսասեց. Թէպէտ և քիչ առենէն կինը մեռաւ, որով և ինքն ալ մեծ սուգի ու սրտմտութեան մէջ ընկաւ: Ասկէ զատ ուրիշ անգթութեան ու անիրաւութեան գործողութիւն մ' ալ ըրաւ՝ որ իրեն մեծանձնութեանը չէր վայլեր: Անգամ մը Թագաւորական խոսկ ու յարդի համբարանոցները այրեցան, որուն գործագիրը գտնելու համար չատ եռանդ եղաւ Սմբատ, բայց որոշ չկրցաւ իմանալ: Օր մը երբոր ժողովուրդը բազմութեամբ եկեղեցին ժողվուած հոգևոր խորհրդին ներկայ էր. յանկարծ խենթ մարդ մը վազեց խորանը ու բուրվառին կրակարանը առնելով ժամէն դուրս սկսաւ փախչիլ. ժողովուրդը աս նորատեսիլ գործողութեան պատճառը հարցուց. անիկայ ալ սկսաւ պոռալով ըսել Թէ կ'երթամ Սմբատայ համբարանոցները այրելու. աս խօսքս Թագաւորին առանջը հասնելով բռնել տուաւ ան մարդը ու առանց քննելու ինչ տեսակ մարդ ըլլալը հրամայեց որ նախ աչքերը փորեն ու վերջը եղեգով պատեր տալով այրեց, և իսոիւ արդիւնց որ չէթաղեն. զասիկայ քանի մը կրօնաւորներ տեսնելով, որոնք և ոչ Թագաւորին հրամանը գիտէին, վերցուցին մարմինն ու Թաղեցին քրիստոնէական ամեն պաշտամունքները կատարելով: Երբոր լսեց աս եղած գործողութիւնը Սմբատ շատ նեղացաւ և նոյնէն հրամայեց որ մարմինը հանեն ու դաշտի մէջ ձգեն. աս բանիս բարկացան ան կրօնաւորներն ու ըսին « Սմբատայ մարմինն ալ իր գերեզմանին մէջը պի-

ալ չմնայ »։ Ըսածնին կատարուեցաւ Սմբատայ մեռնելէն քիչ մը առեն եղբը (988)։

2։ Գագիկ Ա։ եղբօրը տեղը յաջորդելով իր հօրը Աշոտին ու նախորդներուն քաջութեանցն ու առաքինութեանցը հետեւող եղաւ, և քան զանոնք ալ երևելի ըլլալով մեծագործութեանց կողմանէ, բագրատունեաց Թագաւորութեանը պարծանք եղաւ։ Նոյնպէս նաև իր Կատրամիտէ Թագուհին որ լմընցուց Սմբատին սկսած Աղուց մայրը եկեղեցին։ Գագիկ Թագաւորելուն պէս՝ խենթ կնկան մը պատճառաւ խռովութիւն ընկաւ զօրաց մէջ։ վասն զի աս կինս կը քարոզէր ամենուն Թէ Սմբատ Թագաւորը տեսիլքով իրեն երևցեր ու ըսեր է Թէ ինքը գերեզմանին մէջը գեռ ողջ է։ Գագիկ աս խենդիս սուտութիւնը ցուցընելու և ժողովուրդը հանգարտեցընելու համար՝ Սմբատին մարմինը գերեզմանէն հանել տուաւ որ ամենքը տեսնան։ տասվ խռովութիւնը ինչաւ ու ամենքն ալ խաղաղացան։ Գագիկ երեսուն տարի Թագաւորեց միշտ քաջութեամբ, բարեկարգութեամբ ու բարեպաշտութեամբ (1019)։

3։ Գագիկայ տաեղը անուանի եղաւ Դաւիթ կիւրապաղատ, որ Տայոց գաւառին իշխանն էր։ Դաւիթ ծերութեան վերջին տարիներըը Աղրպատական ամիրապետը Մամլանն հարիւր հազար զօրքով Հայաստանի վրայ վազեց։ Դաւիթ օգնութիւն ուղեց Գագիկէն և Վրաց Գուրգէն Թագաւորէն, անոնք ալ տասնըհինգ հազարի չափ զօրք խաւրեցին, որ Դաւթայ զօրացը հետ միանալով քանի

2։ Գագիկ Ա։ ինչպես ըրաւ իր Թագաւորութիւնը ու ինչ պիտեղիք կայ Կատրամիտէ Թագուհուն վրայ։

3։ Ո՞վ է Դաւիթ կիւրապաղատ ու ինչ նշանաւոր մահ ունեցաւ։

հազար եղան: Հայերն ու Վրացիք տեսնալով իրենց քրիստոնէութիւնը, առջի բերանը ահի գողի մէջ էին. մէյմ' ալ կօրացան հաւատքով և զԱստուած օգնութիւն կանչելով Թշնամեաց վրայ վազեցին, ու մեծ ջարդ տալով տաճկըներուն, ծնողացածները ցիրուցան ըրին ու իրենցմէ հինգ վեց Վրացի միայն մեռան: Տայոց ուրիշ իշխաններըը տեսնալով Դաւթի այնչափ փառաւորութիւնը աս յաղթութեանն համար, ամրապինդ անօրէնութեամբ մը հաղորդութեան սուրբ խորհրդին մէջ Թոյն խառնեցին: Դաւիթ իմացաւ ըրած անզգամութիւնին, ներսէց ամենուն ու մեռաւ սրբութեամբ, յանձնելով իր երկրին իշխանութիւնը Յունաց կայսեր, որովհետև ինքը մերձաւոր ազգական չունէր:

4. Յովհաննէս Սմբատ, որ Գագիկայ անդրանիկ որդին էր, հօրը տեղը թագաւորեց. հանդարտասիրտ, խոհեմ, գիտուն էր, բայց միանգամայն դանդաղամիտ, վախկոտ և անգործունեայ. աս իրեն պակասութիւններըը մեծամեծ խռովութեանց պատճառ եղան ոչ միայն իր կենդանութեան ատենը, այլ և մեռնելէն ետքն ալ որով և թագաւորութիւնն ալ վերջացաւ: Երբոր Յովհաննէս Սմբատ թագաւորեց, իր պզտիկ եղբայրը Աշոտ որ քաջ, աշխոյժ, արիագործ ու գիտեցկատեսիլ երիտասարդ մըն էր շատ նախանձեցաւ իր կոչմը որտալով կ'ուզէր եղբօրը տեղ թագաւորել: Վրաց Գորգի թագաւորը ուզելով իմացընել թէ ինքը զՍմբատ օրինաւոր թագաւոր կը ճանչնայ Հայոց՝ ընծաներ ու թագաւորական պատկ խրկեց Սմբատայ. ան բանիս վրայ Աշոտ կրակ դարձաւ և յայտնի ապստամբելով դնաց Վասպուրականի

4. Ի՞նչ բնութեան տէր էր Յովհ. Սմբատ ու ինչ պատերազմ ունեցաւ իր Աշոտ եղբօրը հետ.

Սենեքերիմ Թագաւորին շատ զօրք օգնութիւն առաւ։ Յովհաննէս, որուն կողմն էին բոլոր ժողովուրդը և նախարարներուն մեծ մասը, վախնալն հազարի չափ զօրք ժողված՝ Աշոտին դիմացը ելաւ. բայց որովհետև վախկոտ և պատերազմական բաներու մէջ վարժ չէր, Աշոտին ու անոր քիչ զօրաց քաջութիւնը տեսնալով սկսաւ յուսահատիլ. վասն զի Աշոտ ինքը անձամբ շատ քաջութիւններ ընելով՝ զօրքերը խրախուսեց ու թշնամւոյն մեծ ջարդ տալով հալածեց զնոսինք, ինչպէս եկաւ Անին ալ պաշարեց. քանի մը մեծ նախարարներ, Վրաց Թագաւորը և Պետրոս կաթուղիկոս՝ Յովհաննէսին ցասալն վհճակին վրայ խղճացին ու մէջ մտնալով խաղաղացուցին երկուքն ալ, և պայման դրին որ Յովհաննէս նոյնպէս Թագաւորէ, և Աշոտ իբրև անոր երկրորդը՝ ուրիշ տեղերու իշխէ։ Յովհաննէս իր վատասիրտ երկչոտութեամբը շատ նախարարներուն երեսէն ընկաւ, որ զինքը Թողուցին ու Աշոտին կողմը անցան։

5. Քիչ մը տաճէն Աշոտ զղջալով եղած գաշնագրութեանը վրայ՝ ուղեց նորէն Յովհաննէսին տեղը ընդհանուր ազգին Թագաւոր ըլլալ, բայց որպէս զի խռովութիւն չըլլայ՝ այսպիսի վարպետութիւն մը բանեցուց. ծանր հիւանդ ձևացաւ ու անկողնոյն քովը որոպայթաւոր մեքենայ մը դնել տուաւ. երբոր Յովհաննէս զինքը տեսնելու եկաւ՝ որոպայթին մէջ բռնուելով սկսաւ ազաչել որ կենացը խնայէ. ան տաճն Ապիրատ իշխանը եկաւ կապեց զՅովհաննէս ու ձևացուց որ մեռցընելու կը տանի. բայց ընդ հակառակն տարաւ նորէն Թագաւորեցուց, ըսելով թէ. « Լաւ է խո-

6. Աշոտ ինչ վարպետութիւն բանեցուց դարձեալ զԱմբատ իր Թագաւորութենէն ձգելու ու եաքը ինչ վերջ ունեցաւ.

հեմ դիմած ու վախկոտ Թագաւոր մը ունենանք՝ քան Թէ անիրաւ ու անգութ բռնաւոր մը՝ Թէ պէտ և քաջ» : Աշոտին գործողութեանը վրայ պժգալով նախարարները՝ ամէնքն ալ անօգնական ձգեցին զինքը ու հեռացան քովէն . ինքն ալ կոստանդնուպոլիս գնաց , Վասիլ կայսեր օգնութեամբ շատ զօրքով եկաւ նախարարները նուաճեց , ու շատ քաջութիւններ ընելով այլ և այլ տեղերու ալրեց . բայց վերջը քաջութիւնը մեկդի ձգած՝ զեղխութեանց եաւէ եղաւ կնչուան իր մահը :

6 . Հայոտատան որ արդէն անգադար նեղքին և արտաքին թշնամիներու ձեռքէն սոսկալի ալեհոց տեսարան մը եղած էր , ան միջոցներուն ոտնակոխ եղաւ գազանացեալ և արեան ծարաւի նոր ազգէ մըն ալ , որ էին Սկիւթացիք , և երբեմն երբեմն անթիւ բազմութեամբ յարձակելով կ՚ողողէին աբեամբ Հայոտատանը : Ատոնք նախ վազեցին Վասպուրական աշխարհքը ու շատ մնաս հասցընելով անցան գնացին : Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը կանխատես ըլլալով Սկիւթացւոց ընելու չարեացը՝ Թուղթ գրեց Վասիլ կայսեր , աղաչելով որ Սեբաստիոյ գաւառը կայսրը իրեն տայ ու ինքը Վասպուրական աշխարհքը առնէ . կայսրը հաճեցաւ ու Սենեքերիմին խնդիրքը մէջերնին երդմունքով հաստատեցին . այսպէսով Սենեքերիմ Սեբաստիա գնաց՝ հեռը տանելով չորս հարիւր հազար հոգի , ու Վասպուրական աշխարհքը Յունաց անցաւ . Սկիւթացիք Վասպուրականէն վազեցին Նիգ գաւառին վրայ , որոնց դէմ եկաւ Վասակ Պահլաւունի՝ Դրիգոր Մագիստրոսին հայրը , ու

6 . Ա միջոցիս ինչ նոր արտաքին թշնամի մըն ալ ունեցաւ Հայաստան ու ինչ գիտեցինք կայ Դրիգոր Պահլաւունիին վրայ .

մեծ կատարած ընելով ցուցեց զնորին։ բայց երբոր ինքն ալ առանձնացած ատենը կ'ընէր Աստուծոյ, քանի մը Սկիւթացիք հոն տեղերը պահուռած ըլլալով քար մը զարկին գլխուն ու սպաննեցին պատուական ծերունին։ Ա՛ս բաներս տեսնելով Յովհաննէս Թագաւորը, և բնական երկչոտութեամբն ալ վախնալով որ պիտի չկարենայ դէմ դնել Սկիւթացոց յարձակմանը, գաշինք դրաւ վասիլ կայսեր հետ որ մեռնելէն ետքը Անին կայսեր անցնի, միայն թէ Յոյները օգնեն Հայոց (1024)։

7. Ան միջոցներուն սոսկալի հարուածներ եղան Հայաստանի մէջ. այսինքն երկրաշարժ, սով, ու արեւու խաւարմունքներ, որով ամենքն ալ սկսան վախնալ. մանաւանդ որ աննշան մարդ մը եղած պռոալով քաղաքէ քաղաք կը պտըտէր ու կ'ըսէր. « Վայ ինձ, եղուկ ինձ »։ և որովհետև երևելի էր ան առեններուը սրբութեամբ ու խոհեմութեամբ Յովհաննէս Կոզեռն ըսուած վարդապետը, թագաւորը մարդ խրկեց ու ան երևոյթներուն մեկնութիւնը հարցուց. ինքն ալ զնորին խրատեց՝ յայտնի ցուցընելով Աստուծոյ բարկութեան նշանները։

8. Յովհաննեսին մեռնելէն տասը տարի չանց առաջ վասիլ կայսեր եղբայրը Կոստանդին՝ մեռաւ. ասիկայ մեռնելուս առեն յիշելով Անիին համար եղած անիրաւ և ապօրինաւոր դաշնադրութիւնը, կիրակոս անուանով հայ քահանայ մը կանչել տուաւ ու գաշինքին թուղթը յանձնեց անոր որ տանի Յովհաննէս Թագաւորին տայ։ Իսկ ան արծաթասէր քահանան պահեց թուղթը, ու երբոր Միքայէլ կայսրը Թագաւորեց՝ տարաւ կայ-

7. Ո՞վ է Յովհաննէս Կոզեռն.

8. Կիրակոս քահանային ըրած մատնութիւնը ո՞րն է.

սեր տուաւ, և ինքը անոր վոխարէն շատ տոկ առաւ. Միքայէլ կայսրն ալ օրէ օր կ'ապտակէր Յովհաննէսին մեռնելուն որ Անին պահանջէ: Պատմութեանց մէջէն անհետ ընելու դէպք և անիծից արժանի մատնութիւն:

9. Ան միջոցներուն Յովհաննէս Թագաւորին հօրեղբօրորդին որ Դաւիթ Անհողին կը կոչուէր՝ անուանի եղաւ իրեն խելքովը և ինքնագլուխ Թագաւորեց Գուգարաց աշխարհը. ատ բանիս վրայ նախանձելով Դըւնայ Ապուսալար ամիրան՝ Պարսից Տուղրիլ Թագաւորը դրգռեց, ու երկուքը մէկտեղ անթիւ բազմութեամբ Դաւթայ վրայ եկան: Դաւիթ օգնութիւն ուղեց Հայոց և Աբխազաց Թագաւորներէն. երբոր ամէնքը մէկտեղ միացան ու պատերազմ պիտի սկսէին՝ հարիւրաւոր քահանաներ ու շատ եպիսկոպոսներ միաբերան սկսան աղաղակել « Արի Տէր օգնեա մեզ, և փըրկեա զմեզ վասն անուան քո սրբոյ »: Ա՛ս ձայնէս բոլոր քրիստոնեաները սիրտ առած՝ վազեցին Թըշնամեաց վրայ, մեծ չփոթութիւն ձգեցին մէջերնին ու սաստիկ ջարդ մը տալէն ետքը՝ հարուստ աւարով ամէնքն ալ իրենց տեղը դարձան:

10. Ա՛ս փառաւոր յաղթութեանս վրայ եղած ուրախութիւնը Բերկրի գաւառին մէջ հանդիսացած անգթութեամբը գառնացաւ. Բերկրին Սենեքերիմայ Յունաց տուած քաղաքներէն մէկն էր. Պարսիկք տիրեր էին անոր, ու խարիկ անուշով անգութ մարդ մը քաղաքապետ դրեր էին: Յոյներն ու Հայերը միացած վազեցին Բերկրիին վրայ, ու

9. Հայերը Դաւիթ Անհողինին հետ քանի փառաւոր յաղթութիւն մը ըրին Պարսից և Ապուսալար ամիրային դէմ.

10. Խարիկ ալ է ու ինչ գազանային անգթութիւն մը կը պատմուի վրան.

քաղաքը առնելով Խարիկը բանտ դրին. ասոր երբոր իմացան մօտ տեղերու ամիրանները՝ եկան նորէն առին Բերկրին ու Խարիկը ազատեցին բանտէն. ասոնք բանիս չդիմացաւ Գանձի անուշով իշխանը, շատ զօրքով վազեց Տաճիկներուն վրայ, զօրքերնին ցրուեց, Խարիկն ալ Բերկրին միջնաբերդը փախուց, և վերջը անհոգացած սկսաւ իրեններուվը կերուխումի եռևէ ըլլալ: Ան առեն քանի մը ամիրաներ նորէն միացան, վազեցին Գանձիին վրայ, զինքը սպաննեցին, զօրքը ցիրուցան ըրին, Խարիկն ալ ազատելով՝ առջի իշխանութեանը հասուցին: Խարիկ իր գազանային վրէժը առնելու համար՝ մարդաչափ խորութեամբ փոս մը փորել տուաւ, ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով արիւնով լեցուց փոսը, ու եոքը մէջը մտնալով լուացուեցաւ:

11. Ան առեններըը մեռաւ Յովհաննէս, քան տարի թագաւորելէն եոքը և որդի չթողուց. իր զգուշաւորութիւնը անխոհեմութեան և երկչոտութեան փոխուեցաւ, որով վ. եոա Սարգիս ըսուած մարդուն ու անորնմանեցը երես տուաւ: Վ. ան զի վ. եոան Սարգիս Սիւնեաց փառամոլ ու ազգատեաց իշխանը՝ ինքը ուզելով թագաւորել՝ եռևէ եզաւ որ օրինաւոր յաջորդը չթագաւորէ. ասոր բանիս համար ամէն բանի մէջ սկսաւ Յունաց ձեռնտու ըլլալ, որպէս զի անոնց առջևը արդիւնք մը ցուցընելով իր վախճանին հասնի. և որովհետև Միքայէլ Յունաց կայսրը լսեր էր ան միջոցներուն Յովհաննէսի մասին, մեկէն դեսպան խրկեց նախարարներուն որ Անին ասան. երբոր նախարարները յանձն չառին, կայսրն ալ չորս անգամ զօրք խաբրեց Հայոց վրայ

11. Յովհաննէսին մեռնելէն եոքը ամ զրգռեց զՅոյնները Հայոց դէմ ու Գագիկ Բ. ինչպէս թագաւորեց.

որ երթան բռնութեամբ տիրեն Անիին. և որով հետև բոլոր նախարարները միաբանած չէին՝ ա նոր համար Յոյները շատ չարիք հասուցին Հայոց՝ գոռոզ Սարգսին օգնութեամբը: Երկու տարի այսպէսով անցնելէն ետքը՝ նախարարները միաբանեցան, ու վ՚ահրամ Պահլաւունին վ՚ասակայ եղբայրը որ կուրհ ու առաքինի էր՝ իրենց գլուխ դրին. յիսուն հազարի չափ զօրք ժողվելով քաջութեամբ յարձակեցան Յունաց վրայ, ու անանկ սոսկալի կարդ տուին որ Ախուրեան գետը աբեամբ ներկուեցաւ կ՚ըսէ ժամանակակից պատմիչներէն մէկը: Ան յաղթութենէն վերջը Գագիկ երկրորդը կանչեցին ու Թագաւոր օծեցին, որ Յով հաննէս Թագաւորին Աշոտ եղբօրը որդին էր, ու վ՚էտա Սարգսին բռնութիւններէն փախչելով Թափառական կը պտրտէր:

Գագիկ Բ. երբոր Թագաւորեց՝ տանջվեց տարեկան էր. բայց իր կրթութեամբը, խնամատարութեամբը, զգուշաւորութեամբը և խոհական ընթացքովը մեր երևելի Թագաւորներէն մէկն եղաւ (1042):

12. Վ էտան Սարգիս երբոր խմացաւ նախարարաց միաբանութիւնը և Գագիկայ Թագաւորելը, փախաւ գնաց Անիին միջնաբերդը պահպանեցաւ. Գագիկ եկաւ մինակ քովը գնաց, ու խելացի խօսքերով յորդորեց ու սպրեց զինքը որ միջնաբերդէն ելլէ. Սարգիս գնաց Սուրմառի բերդը քաշուեցաւ, ու երբոր հան ալ սկսաւ իր անհնազարտ բնաւորութեամբը տապատակութիւններ ընել՝ Գագիկ նեղացած զօրք ժողվեց, վրան գնաց բռնեց զինքը ու բանտ դրաւ. բայց վերջը ուրիշ նախարարաց աղաչանքին զիջանելով և անոր կեղծաւորութիւն-

12. Վ էտան Սարգիս երբոր Գագիկայ Թագաւորելը լսեց ինչ ըրաւ.

ներէն խաբուելով բանտէն ազատեց ու նորէն սկը-
սաւ հետը բարեկամութեամբ վարուիլ:

13· Գագիկ Թագաւորութեան բաները հաղիւ
թէ քիչ մը կարգի դրեր էր՝ Սկիւթացիք անհա-
մար զօրքով Հայաստանի վրայ վազեցին· Գագիկ
տանըվեց հաղար զօրքով կարձուելութեամբ պատե-
րազմելով սաստիկ չարդ տուաւ Թշնամեաց, բոլոր
բանակնին ցրուեց, ու յաղթութեամբ գարձաւ
իր աթոռը: Բայց դեռ հանգստութիւն չգտած՝ նո-
րէն իր Թագաւորութիւնը տակն ու վրայ եղաւ
Վեսպ Սարգսի ու Մոնոմախոս կայսեր պատճա-
ռաւ: Վասն զի երբոր Միքայէլ կայսեր տեղը
Մոնոմախոսը յաջորդեց, դեսպանով ձեռքը ըն-
կաւ Յովհաննեսին Վասիլ կայսեր հետ ըրած գա-
շինքը· գեսպան խրկեց Գագիկայ որ Անին տայ·
Գագիկ սիրով ընդունեցաւ գեսպանները, ու խմա-
ցուց թէ ինքը առանց ընդհանուր ազգին հաւա-
նութեանը չկրնար Անին տալ: Կայսրը նեղացած
Գագիկայ առ կերպով իր խօսքը մերժելուն վրայ,
Ասիա զօրավարին ձեռքովը շատ զօրք խաւրեց Թա-
գաւորին վրայ և Դրնայ Ապուսաւար ամիրան ալ
Գագիկայ դէմ պատերազմի գրգռեց· բայց բոլոր
յոյսը պարապ ելաւ· վասն զի Յունաց զօրքը չա-
րաչար յաղթուեցան, Դրնայ ամիրան ալ Գագ-
կայ ընծաներովը հետը բարեկամացաւ: Իմանա-
լով Գագիկ որ Մոնոմախոսը գրգռողը Սարգիսն
է՝ կ'ուզէր սպաննել զինքը· բայց անիկայ յան-
ցանքը Դրիգոր Մագիստրոսին վրայ ձգելով Թա-
գաւորին աչքէն հանեց զինքը՝ որ ամենևին առ բա-
ներուս մէջ ձեռք չունէր: Իսկ Գրիգոր տեսնելով
որ իր կենացը վտանգ կայ՝ ելաւ Կոստանդնուպո-

13· Գագիկ լինչպէս յաղթեց Սկիւթացւոց ու
Մոնոմախոսին զօրացը, ու լինչ գիտելիք կայ Գր·
Մագիստրոսին վրայ·

լես գնաց, և հոն իր կառավարչութիւններուն համար կայսրին Մագիստրոսութեան պատիւ գտաւ. ասով Գագիկայ միաքը աւելի հաստատուեցաւ թէ Գրիգոր Մագիստրոս կայսեր հետ համախոհ է, վասն Սարգիսն ալ արդարացաւ:

14. Երբոր կայսրը յուսահատեր էր Անին առնելէն, վասն Սարգիս ու իր կուսակիցները չար գաւառանութեան խորհուրդ մը տուին կայսեր որ Անին Գագիկայ ձեռքէն յափշտակէ, այսինքն զոն զԳագիկ Կոստանդնուպոլիս հրաւիրէ, ըսին, բարեկամութեան համար, ու մենք ան միջոցին Անին կը մատնենք: Մոնոմախոս ուրախացաւ անոնց տուած խորհրդին վրայ, և թուղթ գրեց Գագիկայ՝ Կոստանդնուպոլիս հրաւիրելով զինքը: Բարակամիտ և հեռատես Թագաւորը խմացաւ դաւաճանութիւնը, ու յանձն չառաւ կայսեր հրաւէրքը, բայց վասն Սարգիս և ուրիշները շատ յորդորեցին խոստանալով որ իրենք Անին կը պաշտպանեն. երբոր տեսան թէ չեն կրնար համոզել զԹագաւորը, պատարագի առեն երդում ըրին հաւատարիմ մնալու Թագաւորին, ու նամակով մը կաթուղիկոսին յանձնեցին: Գագիկ գիտնալով նախապարապտ չարութիւնը՝ յանձն չէր ուզեր առնել. բայց վերջապէս ձարը հատած՝ ելաւ կայսեր գնաց, և Անիին վերակացու դրաւ Ապիրատ իշխանը, որ իրեն շատ սիրելի ու հաւատարիմ էր, ազգականական ընտանիքն ալ յանձնեց վասն Սարգսին:

14. Ինչ գաւառանութեամբ վասն Սարգիս ու նախապարները զԱնի Մոնոմախոսին մատնեցին ու Գագիկ ինչպէս իր Թագաւորութենէն ինկաւ.

15· Գագիկ մեծ պատուո գոտ Մոնոմախոսէն, և իրեն գիմացը եկան Յունաց բոլոր մեծերը: Բայց քանի մը օրէն սկսաւ կայսրը Անին ուզել· երբոր Գագիկ կ'ընդդիմանար անդրաւ պահանջմանը խելացի և իրաւացի պատճառներով, կայսրը զինքը բանտ գրաւ որ Թեբևս անով կարենայ խոնարհեցնել զԳագիկը: Քանի որ դեռ աս գործողութիւններուս հետ էին, մէյմ' ալ Մոնոմախոս Գագկայ գիմացը հանեց Անիին ու իր արքունեաց բանալիները՝ նախապարտոյ միաբան հաւանութեան թղթովը: Ապչեցաւ Գագիկ, խելքը կորնցուց և չէր գիտեր ինչ ընելիքը· իմացաւ որ իր արդարութիւնը, իրաւունք գիտնալը և գթասրտութիւնը չաղթուեցան· մանաւանդ թէ արհամարհուեցան անօրէնութենէ, անիրաւեցութենէ, փառասիրութենէ և ագահեցութենէ, որով և սահպուեցաւ Թագաւորութիւնը ձգել, հայրենիքը թողուլ հեռանալ ու աստանդական կեանք մը անցընելով Հայաստանի ու Անիի աւերակներուն տակը թաղել իր անունը (1045):

Մոնոմախոս Հայաստանի սիրելին եաքը Գագկայ տուաւ Պիզու քաղաքը Կապադովկիայի մէջ, և պալատ մը Կոստանդնուպոլսոյ մէջ· Թագաւորական գանձէն ալ եկամուտ կապեց իրեն: Գագիկ քիչ մը առեն Կոստանդնուպոլիս կենալէն եաքը՝ հրաման խնդրեց կայսրէն՝ ու Պիզու իր քաղաքը գնաց, ուր սիրտը կը հաշեր ու կը մաշէր առանելով ոչ այնչափ իր Թշուառութիւնը՝ որչափ ազգին ողորմելի ու աւազելի վիճակը, որուն պատճառ եղաւ իր մտանիչներուն տոկալի չարութիւնը, որով իրենց շահուն համար բնութեան և ազ-

15· Գագիկ Թագաւորութիւնը կորնչցընելէն եաքը ինչ վիճակ ունեցաւ ու Բագրատունեաց Թագաւորութիւնը երբ վերջացաւ·

գայ օրհնելը ոտքի տակ առնին ու խեղճ ազգը Թըշուառութեան ու գերութեան մէջ ձգեցին: Ա կերպով վերջացաւ Բագրատունեաց Թագաւորութիւնը 1045ին, մօտ երկու հարիւր տարին չափ քշեցին եղաբը:

16. Բագրատունեաց Թագաւորութեան գործանելէն քիչ մը եաքը սկսան տեսնուիլ գլուխ ու Թագաւոր չունենալուն ազդակալ հետևանքները. վասն զի ամէն կողմանէ սկսան Հայաստանի վրայ կատաղաբար յարձակիլ արտաքին ծարաւի գայլերու պէս բիւրաւոր Թշնամիք ու իրենց դէմ եկողմը չգտնելով ամենայն չարիք հասուցին Հայոց: Առանց առջինը եղաւ Տուղրիլ Պարսից Թագաւորը, որ իրեք անգամ անհամար բազմութիւն խաբեբայով խիստ շատ մարդ Թրէ անցուց, եկեղեցիները ու վանքեր փլցընել տուաւ ու շատ մարդ ալ գերի ըրաւ. միայն Արծն քաղքին մէջի ըրած կոտորածէն կրնայ իմացուիլ մեկալներն ալ: Ա քաղքիս մէջ իրեք հարիւր հազար բնակիչ կար ու հաբիւրաւոր եկեղեցիներ. Տուղրիլին պաշարմանը՝ մէջինները դէմ կեցան ու չէին ուզեր անձնատուր ըլլալ. բայց վերջապէս յաղթուեցան ու Թշնամիները կատաղաբար ներս լեցուեցան. հարիւր քառասուն հազար մարդ կոտրեցին, մնացածները գերի տարին, քաղաքն ալ այրեցին, որուն աղետալի աւերակները ինչուան հիմա կեցած են: Վաթսուն հազարի չափ յոյն զօրք կային Հայաստանի մէջ ան միջոցին, բայց փոխանակ օգնելու Հայոց՝ իրենք ալ ձեռքերնէն եկած չարիքը կը հասցընէին: Ա յապիսի գործողութեանց մէջ նշանաւոր է Հարպիկ անունով իշխանին դիպուածը: Երբոր Յոյնք Զորրորդ Հայոց բնակիչները պատերազմով ու հար-

16. Ո՞վ է Տուղրիլ ու ինչ գիտեցինք կայ Հարպիկ իշխանին վրայ.

կահանուլեաւք կը նեղէին, Հարպիկ երէն պզտիկ գնդովը բերդ մը քաշուած՝ Յունաց վնասներ կը հասցընէր. Պետոս Յունաց զօրավարը տեսնելով որ չկրնար բերդին տիրել՝ մօտ գալով սկսաւ ըսել. Ով որ Հարպիկին գլուխը կտրէ՝ բերդը անոր կը պարգեւեմ: Ա սոսկալի ձայնէս խեղճին քունը աչքէն հեռացաւ, և արծաթասէր մտանիչներէ վախնալով չորս հինգ օր ամենևին չքնացաւ: Քանի հատատարիմ կարծուած մարդիկը շատ յորդորեցին որ քիչ մը քուն ըլլայ հանգչի. և հազիւ թէ երկիւղալից ու վայրկենական քունը կոխեց վրան ու աչքերը գոցեց, մէյմ՝ ալ քովիններէը վազեցին վրան ու անողորմաբար մորթելով, մահուան խոր քունին մէջ թաղեցին: Բերդին մէջիններէը երէնց արժանաւոր պատիժը գտնելով, շղթայակապ Պօլիս տարուեցան, Մոնոմախոսն ալ մէկէն քշել տուաւ զերէնք: Ահա այսպէս միշտ մտանիչները մատնուողէն շատ աւելի գառն և ահաւոր պատիժ ունեցեր են:

17. Տուղրիլ Արծն քաղաքը հիմնայատակ ընելէն եաքը՝ երկրորդ տարին շատ զրքով բասեն գաւառին վրայ յարձակելով մեծամեծ ջնասներ հասուց ան տեղերուն ալ. Գագիկ Աբասեան, որ ինչուան ան տեղերը կը թագաւորէր Կարսի մէջ, զրկ ժողվեց թաթուլ քալ սպարապետին ձեռքը տուաւ, ու թշնամեաց դէմ խաբեց: Որչափ որ զրկը քիչ էր՝ քաջութիւնը այնչափ մեծ եղաւ Հայոց կողմանէ, մանաւանդ թաթուլին ըրածները: Բայց երկար տեն թշնամւոյն ընդդիմանալէն եաքը յաղթուեցան Հայերը ու թաթուլ բռնուեցաւ. երբոր Տուղրիլին դիմացը էլաւ քալ սպարապետը, ըսաւ Տուղրիլ. « Թէ որ Աստուած

17. Տուղրիլ բասեն գաւառը ինչ ըրաւ ու ինչ կը պատմուի թաթուլին վրայ.

Իշխանին որդին մահուընէ խալըսի՝ գքեզ կ'ազատեմ, ապա թէ ոչ՝ պիտի մեռնիս »։ պատասխան առաւ Թաթիուլ։ « Թէ որ հարուածը իմն է՝ չապրիր։ Հիմակուընէ սպաննէ զիս »։ Մեռաւ տղան, ու Թաթիուլ սպաննուեցաւ։ Տուղրիլ անկէ գնաց Մանազկերտի վրայ, որուն քաղաքապետը Վասիլ անունով յոյն մըն էր։ ասոր քովը հնարագէտ ու խելացի հայ քահանայ մը կար որ Թշնամեաց ամէն հնարքները պարապը կը հանէր երեն գիւտերովը, այնչափ որ Տուղրիլ յուսահատելով՝ բարկուելեամբ Թողուց գնաց, շատ մարդ ու երեելի անձինք կորնչցնելէն ետքը։ Գաղղիացի մըն ալ գիւրաւառնիւթ մը գտաւ, ու անով այրեց Պարսից ահագին բաբանը՝ որ չորս հարիւր հոգի հաղիւ կրնային շարժել։

18։ Յաջորդ առին մեռաւ Տուղրիլ, ու տեղը յաջորդեց իր եղբօրորդին Ալփասլան, որ գիտնալով Հայաստանի անտէր ըլլալը՝ անվիհ բազմութեամբ Հայոց վրայ եկաւ ու Անին պաշարեց։ Տեսնելով Անիին պարիսպներուն ամրութիւնը, առջի բերանը յուսահատեցաւ։ բայց վերջը նկատելով պարսպին մէկ կողմին տկարութիւնը՝ բոլոր ուժը հոն թափեց, ու բաբանով անդադար զարնելով՝ քիչ մը տեղ փլուց։ Պարսիկները երբոր սկսան ան պատռտուածքէն ներս մտնել՝ քաղաքացիք քաջութեամբ դէմ դրին ու շատ չարդ ըրին իրենցմէ։ Ալփասլան քանի մը անգամ ալ փորձ ընելէն ետքը յուսահատեցաւ ու սկսաւ քաղքէն հեռանալ։ Բագարատ և Գրիգոր քաղքին վերակացուները չկրնալով Ալփասլանին հեռանալը՝ մտքերնին դրին որ պիտի չկարենան ինչուան վերջը Պարսից դէմ դնել։ ուստի յուսա-

18։ Ալփասլան Անին ինչպէս առաւ ու ինչ չարիք հասուց Հայոց։

հատած՝ իրենց զօրքովը միջնաբերդը քաշուեցան։ Քաղաքացիք որոշ չգիտնալով Թշնամեաց հեռանալը, սկսան վախերնին կանչուրտեւ, լալ ու ողբալ։ Ասոնց ձայնէն ետ դարձաւ Ալփասլան, ու տեսնելով որ ամենքը չիսթուԹեան մէջ են՝ կատաղաբար չարդել սուաւ բիւրաւոր մարդիկ։ Քաղքին մէջն ալ քանի մը հազար մարդ Թողուց որ աւերակները նորէն շինեն։

19։ Երբոր Ալփասլան դեսպան խրկեց Գագիկ Աբասեանին որ իրեն հնազանդի, առաջուց խմանալով Գագիկ դեսպանին գալը՝ սուգի զգեստ հագաւ, ու մօխրի վրայ նստած սկսաւ ողբ ու լաց ձեւացընել։ Երբոր հարցուց դեսպանը պատճառը, ըսաւ Գագիկ։ «Ի՞նչ սրտով կրնամ ուրախ ըլլալ երբոր իմ սիրելի բարեկամս Տուղրիլ մեռաւ»։ Ա՛ն բանիս վրայ Ալփասլանին գումը շարժեցաւ, եկաւ հետը սիրով պագաւուեցաւ ու շատ պատիւ ըրաւ անոր։ Բայց Գագիկ գուշակելով որ անկէց վերջը ՀանգաւուԹիւն պիտի չկարենայ գտնել Պարսից ձեռքէն, իր երկիրը կայսեր տուաւ, ու տեղը առաւ իրեք քաղաք, Ծամինդաւ բերդը, Հաբիւր ալ գեղ (1065)։

20։ Ա՛ն միջոցներուս Յունաց՝ Հայոց դէմ ունեցած աւերումԹիւնը նորէն սաստկանալով՝ շատ չարիք հասուցին Հայ իշխաններուն, և ամէն տեսակ նախատինք կ'ընէին ազգին։ Ասոնց պատճառաւ Գագիկ, Բագրատունեաց վերջի Թագաւորը, կեսարիոյ Յոյն մետրապօլիտը ապաննեց, ԹէպԷտ և ինքն ալ սպաննուեցաւ։ Ա՛ն Մարիոս անունով մետրապօլիտը ուզելով զՀայերը նախասահել՝ իր շա-

19։ Գագիկ Աբասեան ինչ հնարքով բարեկամացաւ Ալփասլանի հետ։

20։ Գագիկ ինչ կերպով Մարիոս Յունաց մետրապօլիտին ազգերնուս ըրած վնասը առաւ։

նը անունը Արմէն դրած էր. ասոր բանս լսած ըլլալով Գագիկ՝ առթի մը կ'սպասէր ասոր նախատանաց վրէժը հանելու. ուստի օր մը քանի մը ծառանեղով մեարապօլեին գնաց և երբոր դեռ սեղանի վրայ էին՝ աղաչեց Գագիկ մեարապօլեին որ շունը կանչէ: Երբոր անիկայ նեղը մնանելով շունը կանչեց Արմէն անուանելով, հարցուց Գագիկ ասոր անուանագրութեան պատճառը. մեարապօլեան ալ ըսաւ. « Որովհետև դեռ պզտիկ է՝ անոր համար Արմէն կ'ըսեն »: Մէկէն աչք ըրաւ Գագիկ ծառաներուն. շունը և մեարապօլեան ալ բռնեցին՝ պարկի մը մէջ դրին և սկսան շունը ծեծել. ան ալ կատաղութենէն զտէրը կը խածնէր, որով երկուքն ալ մեռան պարկին մէջ. իսկ Գագիկ եղաւ գնաց անկէ: Յոյնք Մարկոսին աս տեսակ նախատական մահուանը վրայ իրաւամբ կատղած՝ սաստիկ ոխ կապեցին Գագկայ վրայ ու եռևէ էին զինքը սպանելու: Իրաւ, հայրենասէր մարդու մը համար ծանր բան է իր ազգին նախատանացը դիմանալ, բայց Գագկայ հայրենասիրութիւնը արդար վրէժխնդրութեան չափը անցուց, և ըրած անգթութիւնը ոչ երբէք կ'արդարանայ:

21. Անգամ մը Գագիկ Տարսոնի կողմերէն իր քաղաքը Պիզու դառնալով, երբոր Ճամբան կիղնասուա բերդին կողմերը հասաւ, քովի մարդիկը հեռուն ձգեց ու ինքը իրեք հոգւով դէպ 'ի ամրոցին կողմերը գնաց ղբօսանքի համար. բերդին տէրը որ որդիք Մանուաղեայ կ'ըսուէին՝ շատ մը մարդիկ դարանի դրին, իրենք եկան Գագկայ երկրպագութիւն ըրին, ու մեծ յարգութեամբ ընդունեցան զինքը. ան միջոցին դարանամուտները

21. Գագիկ ինչպէս բռնուեցաւ ու սպանուեցաւ ու ինչ գիտելիք կայ Գագիկ Աբասեանին ու Անթրունեաց Թագաւորական ցեղին վրայ.

դուրս վազելով բռնեցին զԳագիկը ու չղթայի զարկած բերդը տարին. իսկ քովի իրեք հոգին աւեն գտնելով փախան գնացին ուրիշ Հայ իշխաններու խնացուցին. անոնք ալ եկան ու սկսան բերդին հետ պատերազմիլ. բայց չկրնալով ինսա մը մը հասցընել անառիկ ըլլալուն համար՝ յուսահատած ելան գնացին: Ան աւեն Մանուալեայ որդիքը զԳագիկը սաստիկ չարչարելով սպաննեցին, ու մարմինը պարսպին վրայ կախեցին որ Հայերը տեսնեն: Ձորս հինգ ամիս ետքը Բանիկ անունով Հայ մը գնաց գիշերանց գերեզմանէն ոսկորները հանեց, որ բերդին պարսպին տակը Թաղուած էին, ու տարաւ Պիզու Գագիկին շինել տուած վանքին մէջը Թաղեց: Ահա այսպէս մեռաւ այն Թագաւորը որ աշխարհքիս անուանի Թագաւորներէն մէկը պիտի ըլլար, և իր անմահական արդեամբքն յաւիտենական յիշատակներ պիտի ունենար. և հիմա անունը հազիւ Թագաւորաց մէջը յիշատակուեցաւ: Մէկ վեստ Սարգիս մը և իրեն պէս քանի մը փառամոլ և ախտալից մարդիկ այսպիսի չարեաց պատճառ եղան, և Թողուցին մեզի իրենց ահաւոր մահնուէնեան պատուղը 'ի խրատ և 'ի յանդիմանութիւն:

Ան աւեններէն վերջացան նաև Գագիկ Աբասեանին, ու Արծրունեաց Թագաւորութեան ճիւղերը, որով բոլորովին ջնջուեցաւ Հայաստանի մէջէն Թագաւորութեան անունը (1070):

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Ռ Ո Ւ Բ Ե Ն Ե Ա Ն Ց

ԴԱՍ ԻԹ.

Ռուբինեանց թագաւորութեան սկիզբը : Թոռոս Ա. իշխանին թագաւորելը :

1. Բագրատունեաց կենաց վերջը երևան ասոր անիշխանութիւն ըլլալով այնպիսի ապերասանութեան մէջ մնաց Հայաստան որ հայրենասէր մարդուն աչքէն արտասուքը չդադրիր հեղուն որ տեսնէ գէթ Ռուբինեանց իշխանութեան կանգնուիլը, որ թէպէտ և ընդարձակութեանն ու զօրութեանը նայելով պզտիկ էր, բայց ըստ քաջութեան, ըստ բարեպաշտութեան և ըստ խոհեմութեան մեծ էր, մանաւանդ այնպիսի դարերու մէջ որ ամէն կողմանէ թշնամիք զօրացած, ու ազգին նեղքին և արտաքին ուժը սկսրացած էին (1089):

2. Ռուբէն Ա. Գագկայ աղգականներէն մէկը,

1. Բագրատունեաց թագաւորութեան կենաքը ապերնիս ինչ վիճակ ունեցաւ.

2. Ո՞վ են Ռուբէն Ա. ու Գոլ Վասիլ ու ինչ պատճառիք կայ Մելիք Շահին վրայ.

որ անոր բանուելու առեն քոմէն էր, Կիլիկիա վախչելով, հոն գտնուած Հայոց էր կառավարելու Թիւննեբոմէն ու քաջութեամբը սիրելի եղաւ. քովի կռիւները շատցուց ու սկսաւ քանի մը սրզոսի քաղաքներու ու բերդերու տիրել. շատ անգամ Յունաց ալ յաղթեց, ու Կիլիկիոյ մէջ գրաւած Հայոց իշխեց: Ռուբենին օգնական ու գործակից եղաւ Վասիլ անունով քաջ ու հնարագէտ իշխանը որ յանկարծ յանկարծ Թշնամեաց վրայ յարձակելով շատ ինսա կը հասցընէր անոնց. ան պատճառաւ անունն ալ Գող Վասիլ դրեր էին: Կիլիկիոյ Հայերը Թէպէտ և իրենց ազգասէր իշխանին առաջնորդութեամբը հանդիսատ ու գոհ էին, բայց բուն Հայաստանի բնակիչները շատ նեղութիւն կը քաշէին Պարսիկ գործակալներուն ձեռքէն, ինչուան որ Մելիք Շահ զՅոյները վռնտեց Հայաստանէն ու ինքը տիրեց. և լսելով որ Պարսից գործակալները զՀայերը կը նեղեն՝ սաստիկ հրաման հանեց որ քաղցրութեամբ վարուին Հայոց հետ. ասով խաղաղ մնաց Հայաստան մինչուան անոր մահը:

5. Ան միջոցներուն մեռաւ Ռուբէն Ա. սանդը հինգ տարի խելքով, արիութեամբ, հայրասիրութեամբ ու քաջութեամբ ազգը կառավարելէն ետքը: Կոստանդին Ա. իր հօրը տեղը յաջորդելով նոյնպէս անուանի եղաւ ընտիր բարեմասնութիւններովը, մանաւանդ զգուշաւորութեամբը, մեծանձնութեամբը և պատերազմական հմտութեամբը. որով Յոյներէն պատերազմով շատ տեղեր առաւ ու տէրութիւնը ընդարձակեց: Աստր սանդը Լսաւնացիք հանեցին առաջին խաչակիր զօրքը Կոստիւեստոսին առաջնորդութեամբը. սանդք երթոր

3. Ո՞վ յաջորդեց Ռուբէն Ա.ին ու կոստանդին ինչ օգնութիւն ըրաւ խաչակրաց.

Անտիոքը պաշարեր էին՝ պաշարնին լինցաւ ու սով ընկաւ բանակին մէջ. Կոստանդին ուրիշ Հայ իշխաններու հետ մեկտեղ առատ պաշար խաւրեց անոնց, որով զօրացած՝ Անտիոքը առին ու Կոստանդին շատ ալինիւ ընծաներով ասպետութեան պատիւ խաւրեցին: Կոստանդին ասանկ լաւ կերպով հինգ տարի իշխեցէն եղբը մեռաւ, և իրեն յաջորդեց Թորոս որդին (1099):

4. Թորոս շատ քաջութիւններով ու բարեկարգութիւններով իր անունը պայծառացուց, շատ անգամ Յունաց յաղթեց ու Անարզաբա քաղաքն ալ առաւ: Ասոր առենը Պարսիկք անհամար բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկան, ու շատ չարիք հասցընելէն եղբը Թորոսէն վերնաւուեցան. նոյնպէս նաև Գող Վասիլ, որ դեռ կ'ապրէր, երկու անգամ Պարսից դէմ մեծ յաղթութիւն ըրաւ: Հաւնիւ թէ Պարսիկք Կիլիկիայէն հալածուեցան՝ անթիւ զօրքով Սկիւթացիք լեցուեցան հոն: Թորոս տեսնելով որ չկրնար միանակ դէմ դնել, օգնութիւն կանչեց Տիգրան և Ապլասաթ Հայ իշխաններէն: Պատերազմը խիստ սաստիկ ըլլալով, քաջութեամբ պատերազմելու առեն երկուքն ալ մեռան. ան առեն Լեւոն Թորոսին եղբայրը երեսը խաչակնքեց ու զԱստուած օգնութիւն կանչելով մտաւ թշնամեաց մէջ, ու այնպէս քաջութեամբ սկսաւ կռուիլ որ հազարաւոր մարդ սպաննեց ու թշնամիները հալածեց:

5. Ան միջոցներուն Թորոսի ու Մանուէլեայ իրենք որդւոցը մէջ թշնամութիւն մը ծագեցաւ. ուսկի Թորոս զօրք ժողվեց, վրանին պատերազմի ե-

4. Թորոս ինչպէս Պարսից յաղթեց ու Սկիւթացիքը Հայաստանէն հալածեց.

5. Թորոս ինչպէս վարպետութեամբ Մանուէլեայ որդիքը բռնեց ու բերդերնուն ալ տիրեց.

լաւ· բայց տեսնելով որ անառիկ է բերդերնին, ա-
նոր համար գիշեր առեն գարանի դրաւ շատ մը
կարճ մարդիկ բերդին քովերը, ու ինքը հեռա-
ցաւ գնաց: Առաւօտանց տեսան Մանուալեայ որ-
դիքը որ Թորոս հոն չէ, կարծեցին թէ յուսահա-
տած ելեր գնացեր է· ուստի բերդին դռները բա-
ցին ու սկսան համարձակ դուրս ներս մտնել ու
ելլել· և ահա յանկարծ Թորոսին գարան դրած
մարդիկը վրանին վազելով բոլոր հոն գտածնին
թրէ անցուցին, Թորոս ալ իր զօրքերովը վրայ հա-
սաւ ու բերդին տիրեց· վերջը Մանուալեայ իրէք
տղաքը բռնեց ու հրամայեց որ Գագկայ Թուրն ու
հագուստները բերեն: Ան միջոցին իրէք եղբայր-
ներէն մէկը գնաց ինք զինքը բերդէն վար նետեց
ու մեռաւ· Թորոս անոնցմէ մէկը սպաննեց ծեծե-
լով, մեկալն ալ շղթայի զարկած հետը տարաւ·
և քանի մը տարի ալ ապրեցուց ետքը մեռաւ՝ քսա-
նուերեք տարի ազգը կառավարեցին ետքը (1122):

6· Որովհետև Թորոս որդի չունէր, տեղը ան-
ցաւ Լեւոն Ա· կարճ ու առաքինի եղբայրը· ասի-
կայ, ինչպէս որ պատմեցինք, արդէն եղբօրը ա-
ւատնին ալ մեծ քաջութիւններ ըրած էր Սիւրիա-
ցւոց դէմ, ու ազգին կառավարութիւնը ձեռք առ-
նելով քաջութիւնն ու խնամքը աւելցուց· Մա-
մեսիա քաղաքը առաւ, և ուրիշ շատ քաղաքներ,
որոնք Յոյները Թորոսի ձեռքէն յափշտակեր էին·
այնչափ անունը մեծցաւ որ ամէնքը կը գոլային
իրմէ, և նոր Աժգահակ կ'ըսէին: Անտիոքայ կոմսը
նախանձելով վրան, ու միանգամայն գիտնալով
որ չկրնար բռնութեամբ յաղթել Լեւոնին՝ սկսաւ
բարեկամութիւն ձեւացընել· օր մը զինքը կոչուն-

6· Լեւոն Ա· ինչ քաջութիւններ ըրաւ Յունաց
դէմ ու ինչպէս Անտիոքայ կոմսին ձեռքէն խալը-
սեցաւ·

քի հրաւիրեց ու վերջը բանեց բանտ դրաւ. Լևոն նեղը մտած՝ շատ տուակ, երկու քաղաք, իր որդիքներէն մէկին ալ պատանդ տալով ազատեցաւ. ու բանտէն ելլելուն պէս նորէն զօրք ժողվեց ու տուած քաղաքներուն վրայ վազելով բոլորն ալ էտ առաւ. այնչափ նեղը խոթեց Լատինացւոց իշխանները, ու մանաւանդ կերպով Անտիոքայ կոմսը, որ միաբանեցան ու շատ պատանդներ և ընծաներ տուին, էտ դարձընելով իրեն պատանդ տուած որդին:

7. Լևոնին քաջութեան համբաւը հասնելով Կոստանդին Պերփեռուժէն կայսեր ականջը, ուզեց որ ինքը անձամբ ելլէ ու Լևոնը ընկճէ: Լևոն երբոր լսեցաւ Յունաց մեծամեծ պատրաստութիւններըը, ազգին կառավարութիւնը ձգեց ու գնաց ամուր և գաւառամատոյց լեռները պահպանեցաւ իր ընտանիքովը: Կայսրը Լևոնին եռևէն մարդ խաբեց որ երթան զինքը պաշարեն, ու ան միջոցին ինքը այլևայլ քաղաքներու տիրեց. ասոնց մէջ Անարզաբան առնելու համար շատ նեղութիւն քաշեց ու անբաւ մարդ կորնչուց. վասն զի քաղաքացիք, որ ըստ մեծի մասին Հայ էին, պատերազմեցան պաշարողաց հետ ու Յունաց բանակը ցրուեցին: Կայսրը աւելի մեծ պատրաստութեամբ նորէն պաշարեց, բայց քաղաքացիք ներսէն ամենայն հնարք կ'ընէին անոնց մեքենաները այրելու ու զինքենք վնասելու: Երեսունըեօթը օր պաշարեցին եաքը վերջապէս պարսպին մէկ կողմը փլուցին, ու Յոյնք կատաղաբար սկսան ներս վազել. բայց քաղաքացիք աւելի կատղելով սոսկալի արիութեամբ ու քաջութեամբ կը պատերազմէին, որով

7. Լևոն Ինչու Հայաստանէն փախաւ, ու Անարզաբայի բնակիչքը ինչ քաջութիւններ ըրին Յունաց զօրաց դէմ.

բիւրաւոր մարդիկ մեռուցին Յոյներէն. ինչուան նաև կանայք ալ ամէն տեսակ կարասի և այրելու նիւթեր կը նետէին պատուհաններէն, որով շատ մարդ սպաննեցին: Առնք ընելէն վերջը՝ Յունաց բազմութիւնը ձգեցին, ու քաղաքը կայսեր Թողլով իրենք եկան գնացին: Եթէ Արշակունեաց տէրութեան խնալէն ինչուան վերջը տեւնուած ըլլար մեր ազգին մէջ սա միաբանական հոգին, սա ամենահարկաւոր առաքինութիւնը, տարակոյս չկայ որ միշտ կանգուն ու զօրաւոր կը մնար:

8. Պերփեռուժէն Անարզաբան առնելէն ետև գնաց Վահկայ ամրոցին վրայ որ ան առեներ Ռուբինեանց մայրաքաղաքն էր. տասը քաղաքապետ էր Ռուբինեանց ցեղէն Կոստանդին անունով կըտրիճ մը, որ նոյնպէս շատ մարդ ջարդեց ու նեղը խօթեց Յոյները. բայց վերջը երբոր ամրոցը առնուեցաւ, զինքն ալ բռնեց կայսրը ու չղթայի զարկած Կոստանդնուպօլիս խաւրեց: Ճամբան նետով երթալու առեն՝ դիշեր մը չղթաները կոտրեց, բոլոր պահապանները ջարդեց, ինքն ալ ցամաքը եկաւ. բայց եռքը քանի մը մարդկանց մատնութեամբը նորէն բռնուեցաւ: Կայսրը բոլոր կիլիկիոյ տիրելէն եռքը՝ Լևոնն ալ իր ընտանիքովը բռնեց ու չղթայի զարկած Կոստանդնուպօլիս տարաւ ու բանտը դրաւ. ուր տարի մը ձգելէն եռքը՝ ուրիշներու աղաչանքովը բանտէն հանեց ու հանպիսա կը պահէր:

9. Առեն անցնելէն եռքը օր մը Թագաւորը բաղնիք գնացեր էր. Ռուբէն Լևոնի որդին հոն տեղն

8. Պերփեռուժէն Վահկայ ամրոցը ինչպէս առաւ, ու Լևոն ինչպէս բռնեց.

9. Կոստանդնուպօլիս ինչ դէպքեր անցաւ Լևոնի վրան. ինչ է Թորոսին տեսած երազը ու Լևոն ինչպէս մեռաւ.

քարէ աւազանը ջրով լեցուն՝ Թէթև բանի մը պէս բռնած՝ մէկ շնչով Թագաւորին առջևը բերաւ. ա- մէնքը զարմացան աս բանիս վրայ ու սկսան գովել Ռուբենին ուժը. բայց վերջը ոմանք վրան նախան- ձելով Թագաւորը յորդորեցին որ խեղճին աչքե- րը կուրցնէ, որն որ ցաւին չդիմանալով՝ քիչ ա- ետենէն մեռաւ: Կայսրը նորէն բանտ դրաւ Լևոնը որդւոյն հետ. հոն Թորոս երազ մը տեսաւ, ու քիչ մը մխիթարուեցան երկուքն ալ, և երազը աս էր. փառաւոր մարդ մը տեսաւ որ եկեր իրեն հաց մը կուտար՝ վրան ձուկ դրած. Թորոս առաւ ան հացը՝ հօրը տուաւ, բայց անիկայ չկերաւ: Երբոր առաւօտ եղաւ՝ պատմեց հօրը տեսած երազը, ան ալ ըսաւ. » Հացը կամ նկանակը կը նշանակէ Թէ նորէն պիտի տիրես դուն բոլոր մեր կորսնցուցած երկիրներուն. իսկ ձուկը կը նշանակէ Թէ ծովու ալ պիտի տիրես. ատոնք պիտի ըլլան, բայց ես պիտի չտեսնեմ » : Երկրորդ անգամ բանտ դրուեցին հա- քը՝ Լևոն տարիի մը չափ ապրեցաւ ու մեռաւ. եաքը կայսրն ալ Թորոսը բանտէն ազատեց ու լաւ աչքով կը նայէր վրան: Լևոնին առջի քաջութեան գործքերը որչափ որ գովելի ու զարմանալի են, մե- ղադրութենէ ազատ չէ վերջի գործքը՝ որ հարկա- ւոր ժամանակ՝ կառավարութիւնը ու ազգը ձգեց քաշուեցաւ. որ եթէ ինքը բոլոր ուժովը դէմ դնե- լու ըլլար Թշնամւոյն՝ չէր կրնար Թշնամին այնչափ վնաս հասցընել աշխարհքին. պարտական էր նաև իբրև հայր հասարակաց իր կեանքը զոհելով ժո- ղովրդեան փրկութիւնը հոգալ և տէրութեան վի- ճակը ապահովցընել (1142):

ԴԱՍ Լ.

Թորոս Բ. իշխանին քաջութիւնները. Մլեհ ու Ռուբեն Բ:

1. Յովհաննէս Պերիւեռուժէն կայսեր առեղը ամենուն սիրելի ըլլալով Թորոս իր զարմանալի կառավարելութիւններովը, երբոր կիա Մանուէլ Յովհաննեսին տեղը յաջորդեց, Թորոս միտքը դրաւ որ Կոստանդնուպօլսէն փախչի ու գայ ազգը ազատէ. ուստի ծածուկ իրեն վստահեալ Պօլսէն Անտիոք երթալու համար ու անկէ փախաւ Կիլիկիա. հոն ինքզինքը քահանայի մը յայտնեց՝ թէ Լեւոնի որդին է. քահանան երբոր ուրիշներէ ալ ստուգեց ան բանս՝ ուրախութեամբ առաւ զինքը իր տունը տարաւ, ու հոն ամենայն պատուով կը նայէր, միանգամայն իմացուց Հայոց մեծամեծներուն, որ Յունաց բռնութիւններէն ձանձրացած՝ կ'ուզէին առջի ազատութիւնին ձեռք ձգել: Կամաց կամաց Թորոսին գալը ամէն տեղ իմացուելով տասը հազարի չափ մարդիկ քովը ժողվուեցան, ու իրեն առաջնորդութեամբը վազեցին Անարզաբա, Առանա ու Վահկայ բերդին վրայ, և ամենուն ալ տիրեցին՝ Յոյները վռնտելով. ասանկ Թորոս Կիլիկիոյ Հայոց հաւանութեամբը իշխեց ազգին վրայ, ու դրեթէ բոլոր Յոյները հալածեց իր տէրութենէն:

1. Թորոս ինչպէս Պօլիսէն փախաւ ու ինչպէս սկսաւ նորէն Հայոց տէրութիւն մը ձեւացնել.

2. Կիւ Մանուէլ կայսրը Թորոսին ըրածնե-
րուն վրայ նեղացած՝ մէկէն հրաման ուղա-
դրկեց Անդրոնիկոս զօրավարին որ շատ զօրքով կիլիկիա եր-
թայ, Թորոսը բռնէ ու երկրին բոլոր բնակիչները
թրէ անցընէ: Իսկ Թորոս իր բնական լաւութեամ-
բը ու գիտնալով միանգամայն պատերազմին գէշ
հետեւանքները, դեսպան ղրկեց Անդրոնիկոսին՝ ի-
մացընելով թէ ինքը կայսեր հրամանին և կամացը
յօժարութեամբ կը հնազանդի՝ եթէ կայսրը ար-
դարութեամբ կառավարէ երկիրը: Անդրոնիկոս
գոռոզութեամբ պատասխան ուղարկեց. « Կայսեր
հրամանը և արդարութիւնը ան է որ զքեզ ան
շղթայով կապեն ու Պոլիս տանին՝ որով քու հայրդ
Լևոն կապուեցաւ »: Թորոս հնարագէտ ու բա-
րակամիտ ըլլալով ձայն չհանեց, ունեցած հեռակ
ջրերը տարաւ կիրճերուն մէջ դարանի դրաւ, ուս-
կից որ Յոյները սահպուած էին անցնելու, և ինքը
ձիաւոր զօրքով ուրիշ ճամբով մը Յունաց եաին
անցաւ: Երբոր Հայք զՅոյները ամէն կողմանէ
պաշարեցին՝ մեծ ջարդ մը տալէն եառքը Յունաց
իշխաններէն շատ մարդ գերի բռնեցին: Կայսրը
սասիկ տրամեցաւ այնչափ իշխանաց գերի բըռ-
նուելուն վրայ. հրաման խաւրեց Անդրոնիկոսին
որ սակով գնէ գերի իշխանները. երբոր դես-
պանները իմացուցին Թորոսին կայսեր կամքը,
պատասխան ուղարկեց. « Կը զարմանամ որ այսչափ
յարդի են եղեր կայսեր դիմացը իմ գերիներս, որ
ես առանց արեան ու սակաւ աշխատութեամբ
բռնեցի. իմ առջիս սակմ՝ ալ չեն արժեր. բայց
երբոր կայսեր պիտանի են՝ Թող ինչ որ կ'ուզէ
վճարէ ու առնէ »: Դեսպանները գերիներուն նա-

2. Թորոս ինչպէս իր հնարագիտութեամբը Անդրոնիկոսին յաղթեց ու ինչ կերպով Յունաց-
ին բռնած գերի իշխանները ետ դարձուց.

խաւինք չընելու համար խիստ շատ սակ տուին ու էտ առին. բայց Թորոս վհատնուելեամբ ան առած սակը զօրքերուն բաժնեց գեսպանաց առջևը. երբոր անոնք՝ զարմացան՝ ըսաւ Թորոս. «Կամաւ ըրի որ նորին ձեր իշխանները քաջուելեամբ բռնելով իմ առջև բերեն»: Եւ յիրաւի, քանի մը տարի էաքը նորին պատերազմ բացուելով Թորոսի և Յունաց մէջ, առջևնին պէս Յոյներէն շատ իշխաններ գերի ընկան, և Թորոս առջևնին պէս ծախեց զնրենք, որով առժամանակ մի հաշտութիւն եղաւ Հայոց և Յունաց մէջ:

3. Ինչ մը առենէն նորին Թշնամութիւն ծագեցաւ՝ Թորոսին Սաբիանէ եղբօրը պատճառաւ. վասն զի ասիկայ ապստամբելով Թորոսէն՝ ինքնագլուխ սկսաւ իշխել, և շատ մը սրիկաներ գլուխը ժողվելով Յունաց մեծամեծ ընծաներ հասուց. անոնք հետը Թշնամանալով դարանի մտան, բռնեցին զինքն ու եռացեալ ջրի մէջ սպաննեցին: Սաստիկ տրամեցաւ Թորոս, ու սուգ մտաւ եղբօրը մահուանը համար. բայց վերջը ուզելով Յոյներէն վրէժը առնել՝ շատ չարիք հասուց անոնց, և ձեռքը ընկածներուն քիթը ու ականջնին կտրելով Կոստանդնուպոլիս կը խաբէր, ինչպէս որ ան առենները սովորական անգթութիւն էր շատ տեղ աս պատիժս տալ գերիներու ու չարագործ մարդկանց: Կիս Մանուէլ կայսրը անձամբ և ահեղ պատրաստութեամբ Թորոսին վրայ եկաւ. Թորոս տեսնելով որ դէմ պիտի չկարենայ դնել անոր զօրաց բազմութեանը, հաշտութիւն խոսեցաւ կայսեր հետ ու բարեկամութեամբ գովը գնաց, ու շատ սիրով իրարու հետ տեսնուեցան: Այսպէս

3. Թորոս կրեն Սաբիանէ եղբօրը մահուան վրէժը առնելու համար ինչ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

Թորոս իշխանը խելքով, քաջութեամբ և հայրասիրութեամբ քանըչորս տարի ազգը կառավարեցին եօթը մեռաւ (1167)։

4. Թորոսին մեռնելէն անմիջապէս եօթը ազգին մէջ խռովութիւն ընկաւ՝ անոր Մլեհ եղբօրը պատճառաւ. վասն զի Թորոս պզտիկ որդի մը ունէր՝ որուն խնամակալ դրեր էր մեռնելու առեն թովմաս Պայլ անուանով իր անեղբը. սա բանս իմանալով Մլեհ, որ արդէն ապստամբած էր, Բերիոյ ամիրային շատ զօրք առած եկաւ Կիլիկիոյ վրայ. առջի անգամուն Կիլիկիոյ մէջ ամէն տեղ խռովութիւն ձգելէն եօթը՝ գործողութիւն մը չկրցաւ ընել. ուստի գնաց Բերիոյ ամիրային նորէն շատ մը զօրք առաւ ու եկաւ թովմաս Պայլին վրայ։ Իշխաններըը տեսնելով որ աս գործողութեան ծայրը գէշ պիտի երթայ, միաբանեցան և կանչեցին Մլեհը երեսնոյ իշխան դրին Թորոսին տեղը. բայց անիկայ մէկէն ինքզինքը զեղխութեան ու անկարգութեան տուաւ, որով զօրքն ալ ձանձրացան ու ապաննեցին զինքը՝ հինգ տարի իշխեցին եաև։ Որովհետև Մլեհ որդի չունէր, անոր համար Ռուբէնը կանչեցին, որ Սահփանէին որդին էր։ Անիկայ իր քաղցր բնաւորութեամբը ամենուն սիրելի եղաւ ու բոլոր մերձակայ և օտար ազգաց առջև ալ մեծ անուն հանեց (1173)։

5. Փուռ պատճառի մը համար մեծ թշնամութիւն ծագեցաւ Ռուբէն երկրորդին ու Լամբրոնի հեթում իշխանին հետ. վասն զի Մանուէլ կայսեր մեռնելէն եօթը նորէն թշնամացան յոյները

4. Մլեհ ինչպէս իշխան եղաւ Կիլիկիոյ ու ինչ գիտեելնք կայ Ռուբէն Սահփանէին որդւոյն վրայ.

5. Ինչէն թշնամութիւն ծագեցաւ Ռուբէն Բ.ին ու Լամբրոնի հեթում իշխանին մէջ ու ինչ վերջ ունեցաւ.

Հայոց հետ. Ռուբէն ալ Տարսոնի վրայ յարձակելով, որ Յունաց ձեռքն էր, առաւ։ Հեթում առ բանս իրեն մեծ նախատինք սեպեց, որովհետև Յունաց բարեկամ էր, կայսրն ալ իրեն յանձնած էր Տարսոն գաւառին պահպանութիւնը։ Երբոր երկու կողմէն ալ պատերազմ բացուեցաւ, Հեթում նեղը մնալով՝ օգնութիւն կանչեց Անտիոքայ Պեմոնդ կոմսը. բայց որովհետև ան ալ կը վախնար Ռուբենէն, խարդախութեամբ բարեկամաբար կոչունքի հրաւիրեց զՌուբէնը, և բռնեց բանտը դրաւ։ Ռուբենին եղբայրը Լևոն մեկէն զօրք ժողվեց ու Լամբրոն բերդին վրայ երթալով սաստիկ նեղը ձգեց Հեթումը, որ ձարը հատած հաշտութիւն խօսեցաւ. վերջը Լևոն շատ ընծաներ տալով Պեմոնդին՝ Ռուբէնն ալ ազատեց ու բերաւ նորէն աթոռը նստեցուց։ Ա՛ս գեղեցիկ և նախանձելի առաքինութիւնները Լևոնին վրայ տեսնուելով, ան սաեղծէն յոյս մը տուին որ սաեղով ազգին ուրիշ մեծամեծ բարիք ալ պիտի ընէ։ Ռուբէն Ր. գովելի կերպով տասնըմէկ տարի ազգը կառավարեցէն եաքը՝ Դրազարկ վանքը քաշուեցաւ, ու հոն քիչ մը սաեղծէն սրբութեամբ մեռաւ, իրեն յաջորդ թողլով Լևոն եղբայրը (1184)։

ԳԱՍ ԼԱ.

Լևոն Բ. իշխանին քաջութիւնները ու թագաւորելը, և ինչուան Հեթում Ա.

1. Լևոն Բ. ազգին կառավարութիւնը ձեռք առնելով սկսաւ ցուցընել իր քաջութեան ոգին ու բարեպաշտութիւնը: Իրեն առջի յաղթութիւնը եղաւ Իկոնիոյ Ռոսատոմ ամիրային դէմ, որ Լևոնին քաջութեանը նախանձելով՝ վրան պատերազմի եկեր էր. բայց դեռ պատերազմը չսկսած՝ յանկարծակի մեռաւ Ռոսատոմ, որով զօրքն ալ շիտաթած սկսան փախչիլ: Լևոն բոլորովին հալածեց զերենք իր երկրէն, ու շատ հարստութիւն ժողվեց անոնց բանակէն:

Եաքը վազեց ուրիշ տեղերու վրայ, եօթանասունհուերկու բերդի տիրեց. Սիս քաղաքը գրեթէ բոլորովին նորոգեց, հիւանդանոցներ՝ ուրիշ շատ շէնքեր շինեց կարօտ մարդկանց համար: Կրօնական պաշտամունց ալ շատ ջերմեռանդ էր, մանաւանդ սուրբ Աստուածածնայ. որով Աստուած ալ իր ամէն բանը կը յաջողէր:

2. Լևոնին իշխանութեան երկրորդ տարին Եուսուֆ Սալահատտինն սաստիկ զօրանալով Երուսաղէմը առաւ Լատինացւոց ձեռքէն՝ երկայն ու արիւնահեղ պատերազմներ ընելէն եաքը: Երբոր աս բանս իմացուեցաւ Եւրոպայ, Փրեդերիկոս Գերմ.

1. Լևոն Բ. ինչ քաջութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ Հայաստանի մէջ.

2. Լևոն ինչ օգնութիւն ըրաւ Փրեդերիկոսի.

մանաւանդ կայսրը և ուրիշ շատ տէրութիւններ միացած՝ անհամար զօրքով նորէն վազեցին Երուսաղէմայ վրայ, և Բերիոյ տիրեցին. բայց պաշարնին լմնցած ըլլալով Փրեդերիկոս Թուղթ գրեց Լևոնին ու խնդրեց որ իրենց օգնէ. Լևոն ոչ միայն առատ պաշար խաւրեց իրենց, հապա նաև շատ ազնիւ ընծաներ, ու առանձին Թղթով մըն ալ կ'իմացընէր իր պատրաստականութիւնը ամէն տեսակ օգնութիւն ընելու, նաև զիրենք ընդունելու յօժարութիւնը: Փրեդերիկոս շատ հաճեցաւ Հայոց աս առաձնին հիւրասիրութեանը վրայ և խոստացաւ որ Լևոնը Թագաւորեցընէ երբոր ինքը Եւրոպա դառնայ: Բայց դժբաղդաբար երբոր Սելևկիոյ դեսէն կ'անցնէր՝ խղդուեցաւ. ետևցած Եւրոպացիք ալ առանց զօրագլխի մնալով չկրցան յաղթել Սալահատտինին, ու սրտերնին կոտրած դարձան Եւրոպա:

3. Լևոն տեսնելով իրեն գործոց յաջողութիւնը՝ դեսպան խրկեց Հռոմ Կեղեստինոս պապին և Հենրիկոս Ջ. Գերմանացւոց Կայսեր, յիշեցնելով Փրեդերիկոսի խոստումնքը: Կայսրը և պապը սիրով ընդունեցան դեսպաններըը ու Փրեդերիկոսին խոստումնքը կատարեցին. պապը փառաւոր Թագ մը խաւրեց Մոգունտիոյ Կոնրատոս արքեպիսկոպոսին ձեռքովը, Հենրիկոս ալ փառաւոր դրօշ մը խաւրեց՝ վրան առիւծ նկարած: Երբոր հասաւ եպիսկոպոսը Կիլիկիա, Թագաւորն ու կաթուղիկոսը հրաման հանեցին ամէն տեղ որ գան ազգին մեծերը Սիս ժողովուին, եպիսկոպոսներ, վանահայրներ, իշխաններ, զօրավարներ և ուրիշ շատ երևելի մարդիկ. և փառաւոր հանդիսով կա-

3. Լևոն ինչ պարգև ընդունեցաւ Կեղեստինոս պապէն ու Հենրիկոս Ջ.էն, ու իրեն Թագադրութեանը ինչ հանդէս եղաւ.

տարուեցաւ Թագադրութիւնը Գրիգոր Ապիրատ ըստուած կաթուղիկոսին ձեռքով՝ Սսոյ տուրբ Սո-
փիա եկեղեցւոյն մէջ (1198)։

4. Հռոմարացւոց ամիրապետը և Յունաց Ալեքս կայսրը լսելով Լեւոնին Թագաւորելը՝ ուրախացան, և իրենց ուրախութեան նշան, ամիրապետը շատ ընծաներով դեսպան խրկեց, Ալեքս ալ մեծագին Թագ մը։ Լեւոն աս ամէն յաջողութիւններս տես-նելով ամենևին իրեն քրիստոնէական ու Թագա-ւորական պարտքերէն չմոռցաւ, հապա մանա-ւանդ շատ բարեպաշտական գործքեր ալ ըրաւ. զամէնքը արդարութեամբ, քաղցրութեամբ ու ո-ղորմածութեամբ կը խնամէր. իսկ օտար Թշնամի-ները օրէ օր նահանձնին կ'աւելցնէին և կ'ու-զէին իրեն վնաս հասցընել։ Առանց գլխաւորներէն մէկը եղաւ Իկոնիոյ Քայքաւուզ ամիրան, որ լսե-լով Թէ Լեւոն Լատինացւոց հետ բարեկամութիւն ըրեր է, ու ամենէն պատիւ գաեր է, շատ զօրքով Լեւոնին վրայ վազեց։ Լեւոնի զօրաց մէկ մասը ի-րենց յանդգնութեանը համար յաղթուեցան. բայց Լեւոն փոխանակ շփոթելու մէկէն մնացած զօրքովը վազեց ամիրային երկիրները ու սկսաւ տակն ու վրայ ընել. Քայքաւուզ իսկոյն ձգեց Կի-լիկիան ու Իկոնիա գարձաւ, և եղածին վրայ սաս-տիկ ցաւելով հաշտութիւն խօսեցաւ Լեւոնին հետ, և առած երկիրներն ու գերիները ետ տուաւ, ինչ-պէս նաև Լեւոն իր առածները։

5. Լեւոնին երկրորդ նահանձողը եղաւ Բերիոյ ամիրան, որ անհամար զօրքով Կիլիկիոյ սահման-

4. Լեւոն ուրիշ ինչ յաջողութիւններ ունեցաւ. ու Քայքաւուզի հետ ըրած պատերազմը որն է.

5. Լեւոն ինչ յաղթութիւն ըրաւ նաև Բերիոյ ամիրային դէմ ու անոր դեսպաններուն հետ ինչ-պէս վարուեցաւ.

նեը գալով զաոակի միջոցները, ապառնալէօք դեպ պան խրկեց որ գայ իրեն հնազանդի, ապա թէ ոչ արիւնով կը լուայ, ըսաւ, երկիրդ, և ուրախու թեան ծնեըդ տրամուԹեան կը դարձընեմ: Լևոն առաջուց իմանալով դեսպաննեըուն գալը, քանի մը իշխան խաւրեց որ այլ և այլ ձամբաներէ ա ռաջնորդելով ուշացընեն անոնց գալը, և ինքը շատ զօրքով յանկարծակի ամիրային զօրացը վրայ յար ձրկեցաւ. անոնք ալ անպատրաստ ըլլալով չարա չար յաղԹուեցան ու բոլոր բանակնին ձգեցին փա խան: Լևոն գարձաւ Կիլիկիա հարուստ աւարնե ըով, շատ վրաններ ու դրօշներ ձեռք ձգած, ա մէնն ալ կարգով բանակի ձևով շարեց և իւրա քանչիւր վրանին դիմացը դրօշը անկեց: Երբոր ամէն բան պատրաստուեցաւ, դեսպաննեըն ալ հասան, ու ան բաներըը տեսնելով Լևոնին ոտքը ընկան որ գէԹ կեանքերնուն խնայէ. Լևոն շատ պատուով վարուեցաւ հետերնին ուետ ձամբեց զնրեննք, ըսելով որ հիմա ես կը պահանջեմ ամի րային ան հարկը որ ամիրան ինձմէ կը պահանջէր:

6. Լևոնին ԹագաւորուԹեան վերջն տարինները մեծ ԹշնամուԹիւն ընկաւ Հայոց և Լատինացւոց մէջ՝ Անտիոքայ իշխանին պատճառաւ: Վասն զի Անտիոքայ Պեմոնդ կոմսը մեռնելէն շատ առաջ իրեն յաջորդ որոշեր էր Պալտին իր որդին, որ Լևոնին Ռուբէն եղբօրը աղջկանը հետ կարգուած էր. բայց Պալտին կանուխ մեռնելով Հայերը իրեն ժառանգ որոշեց Պալտինին Ռուբէն անունով պըղ տի որդին, և սա բանիս համար երդում առաւ Ան տիոքայ եպիսկոպոսներէն ու իշխաններէն: Երբոր Պեմոնդ մեռաւ, Ռուբէն իր Թոռը յաջորդեց ա նոր. սա բանիս վրայ նախանձելով Ճիւան Տրա

6. Հայերը լատինացւոց հետ իրնչու Թշնամա ցան. ու Լևոն ինչպէս մեռաւ.

պօլսոյ իշխանը՝ շատ զօրքով Անտիոքայ վրայ եկաւ, Ռուբէնը հալածեց ու Լատին իշխան մը դրաւ քաղաքապետ, որուն ձեռնտու եղան իշխաններն ու եպիսկոպոսները։ Լէոն ատ բանիս սաստիկ նեղացաւ, բայց չուզեց պատերազմով առաջ տանիլ իր կամքը, հապա Ինովկենտիոս պապին Թուղթ գրեց որ ատ բանս արդարութեամբ որոշէ. պապն ալ դատաւոր և իրաւարար դրաւ ատ բանիս Պետրոս անունով կարդինալ մը որ արդէն ուրիշ անգամ Կիլիկիոյ կողմերը եկած ըլլալով՝ գիտէր ան տեղի բաները. բայց կարդինալը Լատինացւոց կողմը բռնեց, որով անոնք ալ Հայոց դէմ դարձան. ատ բանիս նեղանալով Լէոն՝ բոլոր Կիլիկիոյ մէջ եղած Լատին իշխանները իրենց քահանաներովը վռնտեց հանեց Կիլիկիայէն, մէկ քանին ալ բռնելով բանտ գրաւ։ Անտիոքայ եպիսկոպոսները սպասպեցին իշխանները որ նորէն Ռուբէնը ընդունին. անով հաշտութիւն եղաւ Լէոնի ու Տրապօլսոյ Ճիւան իշխանին հետ։ Իսկ Լէոն երեսունուերեք տարի Թագաւորելէն ետքը՝ գովելի մահուամբ մեռաւ, իրեն յաջորդ Թողլով իր Զապել աղջիկը, որովհետև մանչ զաւակ չունէր (1218)։

7. Զապել Թագուհին տանըվեց տարեկան ըլլալով՝ խնամակալ դրուեցաւ իրեն Կոստանդին իշխանը։ Ռուբէն, որ նորէն Անտիոքէն հալածուեր էր, շատ մը մարդիկ գլուխը ժողվելով գնաց Զապելին քանի մը քաղաքներուն տիրեց։ Կոստանդին դէմն ելաւ, բռնեց զինքը իրեն կուսակիցներովը մէկտեղ բանտ դրաւ, և հոն մեռան։ Իսկ Զապելը կարգեցին Անտիոքայ կոմսին՝ Փիլիպպոս անունով որդւոյն հետ, և զինքը Թագաւոր օծեցին

7. Զապելին Թագուհի եղած միջոցը ինչ պատերազմ հանդիպեցաւ. Փիլիպպոս ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը ու ով է հետևում.

Հայոց, երդում առնելով առաջուց որ ազգային ծէսերու և սովորութեանց չխառնուի: Բայց Փիլիպպոս երկու տարիէն սկսաւ երդմանը դէմ ընել. անով ալ գոհ չըլլալով սկսաւ պալատին ազնիւ զարդերը Անտիոք կրել: Իշխաններըն ասոր բանին նեղանալով՝ բռնեցին բանտ դրին զինքը և սակսպեցին որ խաւարած բաներըն ետ դարձնէ. ինքն ալ տարի մը բանտը կենալէն ետքը՝ սրտին ցաւէն մեռաւ: Ետքը Զապել ուրիշներուն յորդորելովը Կոստանդինին Հեթում որդւոյն հետ կարգուեցաւ, և անիկայ օծուեցաւ Թագաւոր, որ Աղբյակունեաց ցեղէն կարևոր մըն էր, և Ռուբինեանց հետ ազգակցութիւն ընելով Թագաւորական ցեղ կը սեպուէր:

8. Հեթում ցեղին ազնուականութեանը հետ նաև անարատ բարք և շատ գեղեցիկ յատկութիւններ ալ ունէր, որով Ռուբինեանց երևելի Թագաւորներուն մէկը եղաւ, օտար ազգաց ալ շատ սիրելի: Հեթմոյ Թագաւորութեան առջի տարիները՝ շատ խաղաղ էր Կիլիկիա, և Կոստանդին իր հայրը շատ բարեկարգութիւններ ըրաւ, Թէպէտ և Հայաստան այլ և այլ օտար Թշնամիներէ կը չարչարուէր: Նշանաւոր եղան Ճէլալէտտինն բռնաւորը, ու Թաթարաց Չարմաղան զօրավարը, որ Անին առնելով՝ մեծ կարդ ըրաւ անոր բնակչացը: Չարմաղան երբոր մեռաւ, իրեն յաջորդեց զօրավարութեան մէջ Բաչու, որ նոյնպէս շատ վնաս հասուց Հայոց: Հեթում տեսնելով որ Բաչու շատ կոտորածներ ընելով դէպ՝ ի Կիլիկիոյ վայ կուգայ, շատ ընծաներով մարդ խաբեց ու անոր հրապատակեցաւ. Բաչու երդմունքով դաշինք դրաւ Հեթմոյ հետ որ վնաս մը չհասցնէ իրեն. այն-

8. Հեթում ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը, ու Բաչուին կատաղութիւնը ինչպէս կրեցաւ.

պէտք եղաւ գնալ։ Երբոր Թաթարաց Ուխտեա-
խանը մեռաւ, Հեթում անոր յաջորդին Գիւուգ
խանին հետ ալ նոյն դաշինքը նորոգելով հաստա-
տեց, անով Կիլիկիա նեղութիւն մը չքաշեց Թա-
թարներէն։

9. Երբոր Հեթում սա բաներուս վրայած էր,
իր քեռին Կոստանդին Լամբրոնի իշխանը տալը-
տամբեցաւ իրմէ, ու գնաց Իկոնիոյ ամիրային հետ
միացաւ, որ Հեթումին դէմ թշնամացած էր. Հե-
թում զօրք ժողվեց ու գնաց Կոստանդնին երկիրը
ներսն ալ։ Կոստանդին նեղը մտնելով իրեք
օրս անգամ դեսպան խաբեց Հեթումին՝ հնա-
զանդութիւն խոստանալով. բայց Հեթում յանձն
չառաւ պահանջով Կոստանդնին խարդախութիւ-
նը։ Կոստանդին նորէն խիստ թաւրիսներին քովը փախ-
չելով շատ զօրք օգնութիւն առած յանկարծա-
կի Հեթումին վրայ վազեց ու շատ կոտորած ըրաւ.
բայց Հեթում իրեն ցրուած զօրքերը ժողվելէն
զատ՝ ուրիշ զօրքեր ալ բերել տալով նորէն Կոս-
տանդինը Լամբրոն փախուց, ուր որ մեռաւ քիչ
տեւնէն հաքը։

10. Նոյն տեւողութիւնը Գիւուգ խանը մեռաւ ու
տեղը անցաւ Մանգոյ, որ սկսաւ զՀայերը նեղել
իր հարկապահանջներուն ձեռքովը. Հեթում չկր-
մանալով ազգին խեղճութեանը՝ ելաւ անձամբ
Մանգոյ խանին գնաց, ու շատ ընծաներով անոր
սիրտը վաստակեցաւ, շատ պատիւ գտաւ անկէ և
խօսք առաւ Մանգոյէն որ արգիլէ Հայերը նեղե-
լէն՝ ինչպէս որ ալ ըրաւ։ Հեթումին փառաւո-

9. Կոստանդին Հեթումի քեռին ինչպէս ա-
պըստամբեցաւ ու ինչպէս մեռաւ.

10. Հեթում ինչպէս հաշտեցուց զՄանգոյ խա-
նը ու ինչ պատերազմ ունեցաւ Փնտուխտար Ե-
գիպտոսի ամիրային հետ.

բուհլուն ձայնը Եգիպտոսի փնտուխտաւոր ամիրային ականջը հասնելով նախանձը գրգռեց որ Հեթում մին չարիք մը հասցընէ, և իմանալով որ Հայերը ուխտած են քանի մը քաղաքներու որ առենով Եգիպտացւոց ձեռքն էին, դեսպան ղրկեց որ եւս ատոնք քաղաքները: Հեթում օրինաւոր պատճառներով ցրցուց Թէ անոնք արդէն Հայոցն էին ու Եգիպտացիք անիրաւութեամբ յափշտակեր էին: Ամիրան կատղեցաւ ասոնք բանիս, և առանց ձայն հանելու զօրք խաւրեց Կիլիկիոյ վրայ, որ անպատրաստ գտնելով Հայերը՝ շատ աւերմունքներ ու սրինհեղութիւններ ըրին: Հեթում մեկէն ժողվեց զօրքը երկու գունդ բաժնեց, մեկը Լեւոն՝ մեկալը Թորոս որդւոցը առաւ, և ինքը Մանգոյ խանէն օգնութիւն առնելու գնաց: Ան միջոցին Լեւոն, և Թորոս քաջութեամբ քանի մը պատերազմներ ըրին, ու թշնամիներէն շատ մարդ չարդեցին. բայց անգամ մ' ալ Թորոս քաջութեամբ պատերազմելու առեն զարնուեցաւ մեռաւ, Լեւոն ալ գերի ընկաւ. ասով Եգիպտացիք բոլոր Կիլիկիոյ տիրեցին բաց 'ի բերդերէն. վերջը Լեւոնն ալ փնտուխտաւորին առջիը տարին, որ խիստ ախորժելով Լեւոնին ազնիւ սրտին ու կերպին՝ չնեղեց զինքը, ընդհակառակն խոսք առաւ որ Կիլիկիա դարձնէ. բայց իշխանները Թոյլ չտուին:

11. Հեթում երբոր Թաթար վարձուոր զօրքով դարձած տեսաւ եղած ձախորդութիւնները՝ շատ վշտացաւ, ու շատ անգամ առանձին քաշուած կ'ողբար իր որդիքը: Օր մը բոլոր իշխանները քովը ժողվուեր էին. ուզելով Հեթում ամենուն սիրտը շարժել իր խեղճ վիճակին վրայ, հարցուց իշխաններուն. « Հո՞ւ են ամէնքը », երբոր անոնք

11. Լեւոն Հեթումի եղբայրը ինչպէս գերութենէ ազատեցաւ ու Հեթում ինչ մահ ունեցաւ.

պատասխան տուին միաբերան թէ Ա՛յո՛. պատասխանեց Թագաւորը ցաւած սրտով ու արցունքով. « Հապա ո՞ւր է Թորոս, ո՞ւր է Լէոն, որոնցմէ մէկը գերեզմանը անչէշտակ Թաղուած, մէկալը գերութեան տառապանաց մէջ է »: Իշխաններըը շարժեցան Թագաւորին ան խօսքերէն, միաբանեցան մէջերնին ու շատ ստակ ժողվելով ամիրային խաբեցին. ան ալ Հեթումին խնդրեց որ իր Սղուր անունով ազգականը՝ որ Սկիւթացւոց ձեռքը գերի ընկած էր՝ ազատէ. երբոր յայդողեցաւ ան բանս Հեթումին ձեռքովը, ինքն ալ իր խոստմունքը կատարելով ազատեց Լէոնը, որ ազգին մեծ ուրախութեան պատճառ եղաւ: Հեթում մեռնելէն քիչ մը առաջ իր տեղը Թագաւոր դրաւ Լէոնը, և ինքը Դրազարկ վանքը քաշուելով կրօնաւոր եղաւ, ուր քանի մը ամիս ալ ապրեցաւ ու մեռաւ, քառասունըհինգ տարի Թագաւորելէն ետքը: Իրեն մեծ ու յաւերժական պարծանք է ազգին սիրոյն համար քաշած անհամար նեղութիւններն ու վիշտերը (1268):

ԴԱՍ ԼԲ.

Լևոն Գ. ու Հերոմ Բ:

1. Լևոն երրորդ սասանիկ արամբով հօրը մահուանը վրայ, երեք չորս ամիսի չափ սուգի մէջ էր, այնչափ որ արաբն ցաւէն ծանր հիւանդացաւ: Եգիպտոսի և ուրիշ տեղերու ամիրանները լսելով այս բաներս՝ դեսպաններ ղրկեցին զինքը մխիթարելու համար, և յորդորեցին որ հօրը տեղը աղգին կառավարութիւնը ձեռք առնէ: Ա բաներէս յորդորուած՝ Լևոն Թագաւոր օծուեցաւ, ու սկսաւ իսկոյն բարեկարգութիւններ ընել, ողբումածուԹեան գործքերը աւելցընել ու շատ շինուԹիւններ ընել. ուսման եռանդ ըլլալով դպրոցներ հաստատեց, խանգարած հին գրքերը նորոգել տալով վանքերուն մէջը պահել տուաւ ու եռանդ եղաւ որ պիտանի գրքեր գրուին:

2. Երբոր Լևոն աս կերպերովս աղգին բարիք ընելու կ'աշխատէր, իր աղգականներէն ոմանք նախանձելով վրան, գնացին Փնտուխտար Եգիպտոսի ամիրան Լևոնի դէմ գրգռեցին. ան ալ Ալրաբացւոց ու Թիւրքմէններուն հետ միացած՝ Կիլիկիոյ վրայ վազեց, երեն երդմունքը ոտքի տակ առնելով: Լևոն յանկարծակիի եկաւ, և տեսնելով

1. Լևոն Գ. ինչպէս Թագաւորեց ու ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

2. Փնտուխտար Եգիպտոսի ամիրան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու ինչ վնասներ հասուց ու եռանդը ինչպէս յաղԹուեցաւ Հայոցմէ.

իշխանաց անմիաբանութիւնն ու պաղութիւնը, ա-
մուր տեղուանք պահուըտեցաւ. ան պատճառաւ
ամիրային զօրքն ալ առանց արգելքի Կիլիկիա մը-
տան ու շատ մնաս հասուցին ամէն տեղ, մանա-
ւանդ Տարսոն, ուր Թագաւորական գանձն և ու-
րիշ շատ հարստութիւններ ալ կային: Առնք ը-
նելէն վերջը փնտուխտաւ անբաւ հարստութեամբ
և շատ գերիներով Եգիպտոս դարձաւ. բայց քիչ
աւեներն առջինէն աւելի զօրք ժողվելով սկսաւ նո-
րէն Կիլիկիոյ վրայ գալ: Լևոն տեսաւ որ պահուը-
տելովը օգուտ մը չըլլար, որչափ որ կրցաւ զօրք
ժողվեց՝ ամէնքն ալ յորդորեց քաջալերեց, և վեց
գունդ բաժնելով այլ և այլ տեղեր խաբեց. մէկ
գունդը տուաւ իր հօրեղբօրը Սմբատ սպարապե-
տին ձեռքը ու խաբեց Եգիպտացւոց դէմ. երկ-
րորդը ինքը առաւ և ուրիշ ձամբով մը Եգիպտա-
ցւոց եռանը անցաւ: Երբոր Եգիպտացիք Սմբատին
բանակը տեսան, անոնց քիչութիւնը նայելով
անհոգ եղան. բայց Սմբատ յանկարծակի վրանին
վազեց ու մէջերնին շփոթութիւն ձգեց. ան միջո-
ցին Լևոն ալ եռանին յարձակելով մեծ ջարդ ը-
րին երկուքը մէկէն ու բոլոր Եգիպտացւոց բանա-
կը ցրուեցին: Ան հարուածին վրայ փնտուխտաւ
հաշտութիւն ըրաւ Լևոնին հետ:

3. Լևոն հաշտութենէն վերջը թաթարաց Ապա-
զա խանին գնաց, ու շատ սէր և պատիւ դտաւ ան-
կէ իր հաւատարմութեանը համար. ուրիշ ամի-
րաներն ալ բարեկամութեամբ ու սիրով սկսան
վարուիլ Լևոնին հետ՝ ակնածելով իր քաջութիւն-
ներէն:

4. Որչափ որ արտաքին գործողութիւնները

3. Լևոն հաշտութենէն վերջը ինչ ըրաւ.

4. Լևոն ինչ ձախորդութիւններ ունեցաւ ու
ինչպէս մեռաւ.

կարգի դրուեցան ու Լևոնին երկիրը խաղաղացաւ, այնչափ ալ ընտանեկան ձախորդ դիպուածներով փորձուեցաւ իր առաքինութիւնը. քիչ առեն մէջ մեռան իր սիրելի ներսէս որդին, աղջիկը ու կինը. ինքն ալ ծանր հիւանդացաւ, Կիլիկիա ալ փոխադրական հիւանդութիւն մը խնալով շատ ջարդ ըրաւ. բայց Լևոն ամենուն ալ սիրով համբերելով երկու տարիէն երջանիկ մահուամբ մեռաւ քսան տարի թագաւորելէն ետքը:

5. Լևոն երրորդին որդին Հեթում Բ. հօրը յաջորդեց, բայց խոնարհութեան համար չուզեց թագաւոր օծուիլ. չէր ուզեր նաև կառավարութեան հոգը իր վրան առնել. աւելի կը սիրեր կրօնաւորացայց հետ կենակցելով հոգևորապէս զբօսնուլ. ան պատճառաւ քիչ մը առեն ակամայ կամօք իշխեցէն ետքը՝ հրաժարեցաւ իրաւունքէն, ու իր թոռոս եղբայրը իր տեղը թագաւոր օծել տուաւ: Թորոս՝ եղբօրը խորհրդոցը կ'անսար, իշխաններն ալ կը յարգէին զՀեթում. բայց Թորոս քիչ մը առենէն եղբօրը վհճակին նախանձելով թագաւորութիւնը նորէն Հեթումին յանձնեց, ու ինքը վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ: Հեթում՝ երկրորդ անգամ թագաւորելով Թաթարաց Ղազան խանին գնաց աղաչելու որ քրիստոնէից դէմ եղած հալածմունքը դադրեցընէ. Ղազան սիրով ընդունեցաւ թէ աղաչողը և թէ աղաչանքը, ու խնդիրքը կատարեց (1293):

6. Երբոր Սիս դարձաւ, քիչ առենէն Թորոս եղբօրը հետ Կոստանդնուպոլիս գնաց, իր Մա-

5. Հեթում Բ. քնչպէս ըրաւ իր թագաւորութիւնը ու ո՞վ է Թորոս.

6. Սմբատ քնչպէս թագաւոր օծուեցաւ ու քնչ անհրաւութիւն ըրաւ Թորոսին ու Հեթումին դէմ.

ըհամ քրոջմէն հրաւիրուելով որ կայսեր կինն էր։ Ան միջոցին որ իրենք Պօլիս էին՝ Սմբատ եղբայրնին, որուն յանձնած էին աէրուԹեան հոգը, իշխաններըը ու կաԹուղիկոսը համոզելով Թագաւոր օծուեցաւ. վերջը ԹաԹարստան Ղազան խանին ալ գնաց ու իր ԹագաւորուԹեանը հաստատուԹիւն առաւ. նոյնպէս նաև սրբազան պատին հպատակուԹեան ԹուղԹ գրեց ու անկէ օրհնուԹեան գիր առաւ. այսպէսով ամէն կողմանէ ԹագաւորուԹիւնը ապահովցուց, և օրէ օր եղբայրներուն գալաեանը կ՚ապասէր։ Երբոր Թորոս և Հեթում Կիլիկիա կը գառնային, Սմբատ իր զօրքովը դիմացնին ելաւ ու զիրենք վռնտեց. անոնք ալ սկսան Ղազան խանին երԹալ որ անկէ օգնուԹիւն ուզեն Սմբատին դէմ. բայց Սմբատ եռանդն հասնելով երկուքն ալ բռնեց. իշխաններէն ոմանց խորհրդովը Թորոսը ըսպաննեց ու Հեթում ալ կուրցուց։

7. Ա անողորմ գործքին վրայ Կոստանդին մեկալ եղբայրը զօրք ժողվեց, ու եղբօրը դէմ պատերազմի ելաւ. երկու կողմէն ալ շատ մեծ ջարդ եղաւ, բայց վերջը Կոստանդին զօրանալով յաղԹեց Սմբատին ու բռնեց զինքը բանտ դրաւ, եաքը Հեթումը հանեց բանտէն ու աղեկ նայելով վիշտերէն ազատեց. իսկ ինքը եղբօրը տեղը Թագաւոր նստաւ։ Երկու տարիէ չափ Թագաւորեցին եաքը երբոր հրաշքով մը Հեթումի աչքերը բացուեցան, ժողովուրդը ուղեց որ ինքը Թագաւորէ երրորդ անգամ. ինքը յանձն չառաւ, վանք մը փախաւ ու պահուըտեցաւ, բայց զօրքը զինքը բռնուԹեամբ վանքէն հանելով բերին Թագաւորեցուցին։ Կոստանդինին ծանր գալով աս բանս՝

7. Սմբատ ինչպէս ԹագաւորուԹենէն ինկաւ ու Հեթում ինչպէս նորին Թագաւորեց.

պիսաւ եռանդ ըլլալ որ Հեթումին աեղը ինքը թագաւորէ. աս պատճառաւ եռանդ եղաւ որ Սմբատը բանտէն հանէ ու անոր հետ միասեղ Հեթումը վանտէ. բայց Հեթում չկանալով որ խռովութիւն չըլլայ՝ երկուքն ալ հնարքով մը բռնեց ու Պօլիս կայսեր խաւրեց, ուր ինչուան իրենց մահը մնացին (1300):

8. Հեթում երբորդ անգամ որ թագաւորեց՝ չորս հինգ հեղ պատերազմ ըրաւ Եգիպտացւոց ու Լիկայոնացւոց հետ և միշտ յաղթող գտնուեցաւ. վերջը ուզելով բոլորովին հրաժարիլ աշխարհէն, որովհետև ինքը կուսակրօն էր՝ իր եղբօրորդին Լեւոնը որդեգրեց իրեն ու եռքը զանիկայ թագաւոր օծել տուաւ. իսկ ինքը Թէպէտ և թագաւորահայր կ'ըսուէր՝ բայց վանք մը քաշուած կը կենար (1304):

9. Նոյն միջոցներուն Կոռիկոս ըսուած բերդին Հեթում իշխանն ալ հրաժարեցաւ իր իշխանութենէն ու Կիպրոս Լատինացւոց վանք մը քաշուեցաւ. վերջը Հռոմ երթալով Թաթարաց պատմութիւն մը գրեց գաղղիարէն, որուն հայերէն նոր թարգմանութիւնն ալ ունինք:

10. Լեւոն Դ. Հեթումին խրատներովն ու խորհըրդովը, իրեն ալ բնական ընախը բարուքը և խոհեմութեամբը շատ լաւ սկսաւ կառավարել աշխարհը. բայց հաւատոյ խնդիրներու համար եկեղեցականաց ազիատութենէն մեծամեծ խռովութիւններ ծագեցան Կիլիկիոյ մէջ. վասն զի Գրիգոր Անաւարզեցի կաթուղիկոսը ուզելով քանի մը բարե-

8. Հեթում ինչ պատերազմներ ունեցաւ ու ինչու թագաւորութենէն քաշուեցաւ.

9. Ինչ պիտի կայ Հեթում իշխանին վրայ.

10. Լեւոն Դ. ինչպէս սկսաւ իր թագաւորութիւնը՝ ու Սոյ ժողովքը ինչպէս եղաւ.

կարգութիւններ ու ազգային մեկ քանի ծիսից փո-
փոխութիւններ ընել, առ բանիս համար ուզեց որ
ազգային ժողով մը գումարուի. բայց երբոր տե-
սաւ որ առաջնորդաց ու եկեղեցականաց մէջ առ
բաներուս համար խռովութիւններ ու տարաձայ-
նութիւններ կ'սկսին՝ Հեթում Թագաւորահօր
Թուղթ մը գրեց, յորդորելով որ իր դիտաւորու-
թեանը առաջ երթալուն փոյթ ունենայ, գիտնա-
լով որ ամէնքն ալ զինքը կը սիրեն և բառնը ան-
յապաղ կը կատարեն. դաւանութեան ձևն ալ
շարադրեց ու Լեւոնին խաւրեց, բայց ինքը ան մի-
ջոցին հիւանդանալով մեռաւ: Լեւոն ու Հեթում
մէջերնին միաբանած՝ հրաման հանեցին որ Սսոյ
մէջ ժողով մը ըլլուի, ուր եկան Կիլիկիոյ ամէն
եպիսկոպոսաները ու վանահայրները. հոն Գրիգոր
Անաւարզեցին Թուղթը կարդալով ինը գլխաւոր
ու էական բան որոշեցին ու Կոստանդին Կեսարա-
ցին կաթուղիկոս գրին, որ ան որոշմանց ձիշդ
պահպանութեանը ջանք ընէ. բայց ընդհակառակն
շատ խռովութիւններ ու ապստամբութիւններ ալ ե-
ղան ան պատճառաւ:

11. Ինը տարիէն նորէն Ասանայի մէջ ժողով
գումարուեցաւ ու անցած ժողովին վճիռները նո-
րէն հաստատուեցան. բայց հակառակաէր մար-
դիկ եռքը դէմ կեցան, և իշխաններուն մեծ մասը
եկեղեցականներէն գրգռուելով Լեւոն Թագաւո-
րին ու Հեթում Թագաւորահօր հետ թշնամա-
ցան. և որովհետև ձեռքերնին բան չէր գար՝ գնա-
ցին Թաթարաց Պիլարղու զօրավարը Լեւոնին և ա-
նոր կուսակիցներուն դէմ գրգռեցին, որ հաղար
հոգւով Անարզաբա կընստէր Կիլիկիոյ պաշտպա-

11. Լեւոն ու Հեթում Թագաւորահայրը ինչ-
պէս առնլի եղան եկեղեցւոյ ու իշխաններուն
ու Պիլարղու ինչպէս զիրենք սպաննեց.

նուիրեան համար: Պիլարդու տեսնելով իրեն զօրաց քիչ ըլլալուն չհամարձակեցաւ պատերազմի ելլելու. խաբեբայութեամբ իրեն կանչեց Լևոնը, Հեթումը և իրենց կուսակից իշխանները. երբոր եկան՝ զամէնն ալ թրէ անցընել տուաւ, ու սկսաւ կիլիկիոյ վրայ գալով տիրել ան տեղերուն (1308):

ԴԱՍ ԼԴ.

Օշին, ոչ Լևոն է:

1. Հեթումին պզտիկ եղբայրը Օշին լսելով Պիլարդուին ըրած անիրաւ սպանութիւնները, շատ ցաւեցաւ ու մէկէն գնաց Սիս քաղաքը, ծնացած իշխաններն ու զօրքերը ժողվեց, Պիլարդուն կիլիկիայէն վռնտեց, ու երկիրը անոր բռնութիւններէն ազատեց: Իշխանները միաբան գինքը թագաւոր օծեցին, և սկսաւ բարեկարգութիւններ ընել. հոգէ եղաւ որ Սսոյ մէջ որոշուած կանոնները պահուի. բայց ան պատճառաւ նորէն խռովութիւն ընկաւ ոգեպ առաջնորդներու ու ժողովրդեան մէջ, թէպէտ և մեծ չարիք մը չհետևեցաւ: Օշին Լատինացւոց հետ խնամութիւն ըրաւ, ու Սիկիլեացւոց թագաւորներուն ցեղէն իրեն կին առաւ. սակայն բարեկամացաւ Եւրոպացւոց հետ ու անոնցմէ օգնութիւն ուզեց:

2. Ան միջոցներուն Եգիպտոսի Նասր սուլթանը

1. Օշին ոմէ է ու Պիլարդուն ինչպէս կիլիկիայէն վռնտեց.

2. Օշին ինչ նշանաւոր յաղթութիւն մը ըրաւ Նասր սուլթանին դէմ ու ինչպէս մեռաւ.

շատ զօրք խաւրեց Կիլիկիոյ վրայ. Օշին յանկարծակիի գալով չկրցաւ մեկէն զօրք ժողվել, ու հետը ունեցած երկու հարիւր հոգւովը դիմացին եղաւ, բոլորովին Ասուծոյ ապաւինած. երբոր անոնք անհոգութեամբ ու առանց պատրաստութեան կեցեր էին՝ վրանին վազեց, ու բանակին կարգը շփոթելով վեց հազար հոգիի չափ ջարդեց, մնացածները փախուց, ու շատ մ՚ալ գերի բռնեց: Օշին ան յաղթութենէն եառքը տարի մ՚ալ ապրելով մեռաւ, իր տասուերկու տարեկան Լեւոն որդին իշխաններուն յանձնելով, և Թագաւորած հայր դրաւ անոր Օշին պայլ իշխանը (1319):

3. Օշինին մեռնելէն եառքը տասակ չարժ մը եղաւ Հայաստան որ շատ տեղեր աւերակ դարձուց, ինչպէս Անին և ուրիշ քաղաքներ. ան աւերակ դարձած քաղաքներուն բնակիչները Հայաստանէն ելան Թաթարստան գնացին. բայց հոն ալ հանգիստ բնակութիւն չգտնելով անոնցմէ կէսը Ղրիմ անցաւ, կէս մը Եհասատան, կէս մը Ուլահի երկիրը, մնացածներն ալ այլ և այլ տեղեր ցրուեցան:

4. Լեւոն տասուերկու տարեկան էր երբոր Թագաւոր օծուեցաւ Հայոց վրայ, ու քանըմէկ տարի Թագաւորեց. ասիկա որ ախտամոլ ու անգութ բնաւորութեամբը իր անունը նուաստացուց, տէրութեան Թշուառութիւնը աւելցուց և ցաւալի Թագաւորութիւն ու մահ ունեցաւ: Վասն զի Օշին պայլ՝ իր աղջիկը Լեւոն տուաւ, ու անոր Յովհաննա լատին խորթ մայրը երեն կին առաւ. Լսելինացիք ասոնք բանիս նեղանալով Հայ իշխաննե-

3. Օշինին մեռնելէն եառքը ինչ հանդիպեցաւ ու Հայերը ինչպէս ցրուեցան.

4. Լեւոն ինչպէս ազգերնիս աւելի Թշուառացուց.

լէն մէկ քանին Լևոնին ու Օշինին դէմ դրգռեցին, ու երկպառակութիւն ձգեցին ազգին մէջ։ Լևոն շատ զօրքով վազեց Տիւրոսի վրայ ու յաղթեց Տիւրացւոց որ աս խռովութեանց պատճառ եղեր էին։

5. Ան դիպուածները և Օշին Թագաւորին մահը լսելով Նասր Եպիստոսի սուլթանը՝ ուզեց առջի յաղթուելուն վրէժը առնել, զօրք խաւրեց որ երթան Կիլիկիան աւարի առնուն. բայց այլ և այլ տեղեր Հայերը յանկարծակի վրանին վազելով Կիլիկիայէն վռնտեցին զանոնք, հինգ հազար հոգի չափ ալ սպաննեցին։ Ան կոտորածէն փախած Եպիսկոպոսները՝ օգնութիւն առին այլ և այլ բարբարոս ազգերէ, եկան նորէն Կիլիկիոյ վրայ ու սկսան տակն ու վրայ ընել աշխարհքը. աս բանս լսելով սրբազան պապը՝ յորդորեց Լևոնը որ Եւրոպացիներէն օգնութիւն ուզէ, բայց անոնք տեղերնէն չշարժեցան։

6. Լևոնին Եւրոպացւոցմէ օգնութիւն ուզելը իմանալով Նասր՝ աւելի կատղեցաւ, ու անթիւ զօրք ժողվելով միտքը դրաւ որ Հայոց ազգը ջնջէ. իրեն հետ միացաւ Թիմուրդաշ Թաթարաց զօրավարը, որ Հայոց օգնութեան եկեր էր. ուստի իրեւ բարեկամ մնաւ Կիլիկիա ու սկսաւ աւերշարկել երկիրը։ Հազիւ թէ առջի կոտորածին մեռելները պերեզմաններու մէջ ամփոփուեր էին, վազեցին Թուրքերը Կիլիկիոյ վրայ ու Թաթարաց պէս ամէն չարիք հասուցին. երբոր ատոնք ալ ա-

5. Հայերը իմչպէս յաղթեցին Նասր սուլթանին զօրքերուն ու Լևոն իմչու Եւրոպացւոցմէ օգնութիւն ուզեց.

6. Նասր ու Թիմուրդաշ իմչպէս Կիլիկիա մտան, Թուրքերն իմչ վնասներ քաշեց ազգերնիս.

սարներով ու գերութեամբ կը դառնային՝ վազեցին Եգիպտացիք, ու առջիններուն չքրած չարիքները՝ ի գործ դրին : Ա խելքութեան միջոցները իշխաններըը փոխանակ մէջերնին միաբանելով Թըշնամւոյն դէմ՝ ելլելու, իրարու դէմ ունեցած առերութիւնին կը անուցանէին :

7 . Լևոն տեսնելով որ բոլոր Կիլիկիա այսպէսով աւերակ պիտի դառնայ, արբազան պապին Թուղթ գրեց և օգնութիւն ուզեց . պապը շատ սաստկ խաւրեց աւերակաց շինութեանը համար , խրատական Թուղթ ալ գրեց՝ յորդորելով որ միաբան սիրով վարուին իրարու հետ : Լևոն նոյնպէս մարդ խաւրեց Թաթարաց Պուսայիտ խանին որ օգնէ իրեն . ան ալ քանհազար զօրք հասցուց Կիլիկիոյ պաշտպանութեանը համար , Եգիպտոսի ամիրային ալ հրաման ըրաւ որ Հայերը չնեղէ , ու հետերնին սիրով վարուի . ասով քիչ մը հանգըստացաւ Կիլիկիա :

8 . Երբոր արտաքին թշնամիները դադրեցան , սկսան ներքին խռովութիւններ , որ ուրիշ անգամ ներու պէս աւելի վնասակար եղան Հայաստանի քան Թէ արտաքին թշնամիները : Լևոն Օշին պայլին հետ սաստիկ թշնամութիւն ունեցաւ . զօրք խաւրեց Ատանայի վրայ ուր էր Օշին , բռնեց զինքը Կոստանդին եղբօրը հետ ու սպաննել տուաւ . Կէրկը իր կինն ալ սպաննել տուաւ՝ որ Օշին պայլին աղջիկն էր , ու անոր տեղը լատինացի մը առաւ . Օշինին գլուխը Նասրին խաւրեց , Կոստանդինին ալ Պուսայիտին :

7 . Ա հարուածներէն ետքը Լևոն որու գիմեց ու Կիլիկիա քիչ մը հանգստացաւ .

8 . Լևոն Օշին պայլին հետ քիչ թշնամութիւն ունեցաւ ու քիչպէս զինքը ու իր կինը սպաննեց .

9. Նասր ու Բերիոյ ամիրան նորէն Կիլիկիոյ վրայ սկսան վազել. վասն զի լսելով որ Լատինացիք խաչակիր զօրք պիտի հանեն սուրբ երկիրը ազատելու համար՝ կարծեցին թէ Հայերուն դէմ դուրթեամբն է ասա բանս, ուստի մոքերնին դրին որ Հայերը բոլորովին ջնջեն. երկուքը մէկէն վազեցին Կիլիկիա, քաղաքներն ու գեղերը աւերակ դարձուցին, բնակիչները Թրէ անցուցին ու հարըստութիւնները ժողվելով եկան գնացին: Լևոն վախցաւ դիմացնին ելլելու. փախաւ գնաց Կիլիկիայէն, ինչպէս ըրին նաև իշխաններէրն շատը. բայց Եգիպտացիք նորէն եկան ու առջինէն շատ աւելի չարիք հասուցին Հայոց: Լևոն աղաչանաց Թուղթ գրեց Նասրին որ Հայերը չնեղէ ու հաշտութիւն ընեն մէջերնին. սուլտանը յանձն առաւ՝ երդմունք ուզելով Լևոնէն որ մէյմ՝ ալ Եւրոպացւոց հետ Թղթակցութիւն չընէ. ինքն ալ դեսպանաց առջև աւետարանին վրայ երդմունք ըրաւ. այսպէսով երեք տարի Կիլիկիա խաղաղացաւ: Վերջը Լևոն նորէն ծածուկ սկսաւ Թղթակցութիւն ընել պապին ու արևմտեան իշխանաց հետ. բայց իմացուելով ասա բանս՝ Նասր նորէն շատ զօրք խաւրեց, որ եկան ամէն տեսակ չարիք ըրին ու հարստաւ աւարով ելան գնացին:

10. Ա խեղճութիւններս տեսնելով ընդհանուր ազգը՝ շատ եռևէ եղաւ որ ալ բարեկամութիւն չընեն Եւրոպացի իշխանաց հետ, մանաւանդ որ օգնութիւն մը չէին տեսած. բայց ոմանք ալ

9. Նասր ու Բերիոյ ամիրան իմնչու նորէն Կիլիկիոյ վրայ վազեցին ու Նասր իմնչ պայմանաւ հաշտութիւն ըրաւ.

10. Իմնչպէս խռովութիւն ծագեցաւ Լևոնին ու Յակոբ կաթուղիկոսին մէջ ու Լևոն երբ մեռաւ.

Թագաւորին հետ միացած՝ կ'ուզէին անոնցմէ օգնութիւն խնդրել, ու անոնց հետ բարեկամութիւն ընել. սակայն մեծ խռովութիւն Թագաւորին ու կաթուղիկոսին մէջ, և ասոր պատճառաւ Յակոբ կաթուղիկոսը պաշտօնէն ձգուեցաւ: Լևոն երկու տարի ալ Թագաւորելէն ետքը մեռաւ՝ առանց քաջութեան յիշատակ մը ձգելու (1341):

ԳԱՍ ԼԴ.

Յովհաննէս Պայլեն ինչուան Ռուբինեանց թագաւորութեան վերջանալը:

1. Որովհետև Լևոն որդի կամ եղբայր չունէր, իշխաններըը Կիպրոսի Թագաւորին եղբօրորդին ընտրեցին, որ Յովհաննէս Պայլ կամ Ճիւան կ'ըսուէր և Թագաւորելով Կոստանդին Գ. ըսուեցաւ. սակայ մօր կողմանէ միայն Հայ էր, ան պատճառաւ ալ Հայու ազգը կ'ատէր ու բնութեամբ ալ խռովարար մարդ էր. սկսաւ ազգին բարի սովորութիւններն ալ արհամարհել ու փոխել. մանաւանդ արքունեաց բաները, որով ամենուն ատելի եղաւ. վերջը սկսաւ սոխակել Հայերը որ ազգայնին ծէսը փոխեն ու լատինացուցը ընդունին. սա բանիս չդիմանալով ոչ իշխանները, ոչ ժողովուրդը և ոչ զօրքը, վրան վազեցին սպաննեցին զինքը՝ տարի մը Թագաւորելէն վերջը. և միաբան խորհրդով Յովհաննէսին գուխաւն եղբայրը կանչեցին ու իրենց Թագաւոր օծեցին:

1. Ո՞վ է Կոստանդին Գ. ու ինչպէս Հայոց ատելի ըլլալով սպաննուեցաւ.

2. Գուիտոնի առեներ անթիւ բազմութեամբ կիլիկիոյ վրայ վազեցին Եգիպտացիք. որոնց դէմ ելլելու վանենալով Գուիտոն, փախաւ բերդի մը մէջ պահու ըռեցաւ որով Եգիպտացիք առանց արգելքի մուտ կիլիկիա ոտնակոխ ըրին, կը տեսնէին սա ամէն չարիքս իշխաններըը ու անհոգ կը կենային, վասն զի ազգին սէրը մարած էր սրտերնուն մէջ, իրենց վիճակին պարտքերը մոռցած էին, տգիտութեան խաւարին մէջ թաղուած. մէկ խօսքով ամէնքը իրենց ազգին Թշնամի՝ միայն իրենց առանձնական օգուտը կը մտածէին, որ ինչպէս յայտնի է, հասարակաց կործանումն է:

3. Երբոր Թշնամիները ելան գնացին Կիլիկիայէն՝ Գուիտոն դուրս ելաւ պահուըտած տեղէն, ու սկսաւ եղբօրը պէս անմտութեամբ եռանդ ընել որ ազգին ծէսը ու արտաքին սովորութիւնները փոխէ. իշխաններըը յորդորեցին զինքը որ անանկ փուճ բաներու եռանդ չընէյ. բայց երբոր անիկայ արհամարհեց անոնց խրատը, իրենք ալ զինքը սպաննեցին երկու տարի Թագաւորելէն ետքը (1344):

4. Գուիտոնին տեղը Կոստանդին չորրորդը Թագաւոր դրին, որ Թէպէտ և հօր կողմանէ լատին էր, բայց խելացի ու զգուշաւոր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց ազգը: Երբոր ասիկայ սկսաւ լատինացւոց հետ Թղթակցութիւն ընել, Եւդիպտոսի սուլդանը շատ զօրք խաւրեց Կիլիկիոյ

2. Ի՞նչպէս նորէն Եգիպտացիք սերեցին Կիլիկիոյ և ազգին ատ նեղութիւններուն ու հարուածներուն պատճառը ինչէն էր.

3. Գուիտոն ինչու սպաննուեցաւ.

4. Կոստանդին Դ. ինչպէս Աստուածաստուր ջրապետին օգնութեամբը յաղթեց Եգիպտացւոց ու քանի՞ տարի Թագաւորեց.

վայ. Կոստանդին առաջուց իմանալով անոնց գա-
լը՝ ինքն ալ իր զօրքերը ժողվեց ու պատերազմի
պատրաստուեցաւ. օգնութիւն եկան իրեն Կիպրո-
սի Հուգոն Թագաւորը և Հոոդացւոց Աստուածա-
տուր զօրապետը. ասոնք ամէնքը միացած՝ վազե-
ցին Թշնամեաց վրայ, սոսկալի չարդ տուին իրենց
ու բոլորն ալ Կիլիկիայէն վռնտեցին, Թէպէտ և
իրենցմէ ալ շատ մարդ մեռաւ: Կոստանդին խա-
զաղութեամբ քանի մը տարի ալ տպրեցաւ մեռաւ՝
տասներուեքը տարի Թագաւորելէն յետքը (1364):

5. Կոստանդինին մեռնելէն յետքը իշխաններըը
չկրնալով մէկերնին միաբանիլ, քանի մը տարի ա-
ռանց Թագաւորի մնացին: Ուրբանոս Ե. պապը
իշխաններուն յորդորանաց Թուղթ մը գրեց որ
Թագաւոր դնեն Լևոն Լուսինեան ըսուած իշխա-
նը՝ որ մեր կողմանէ միայն հայ էր ու Գուիտոնին
և Ճիւանին ազգական. իշխաններըը միաբանեցան
ու հրաւիրեցին Լևոնը որ Թագաւոր օծուի. ինքն
ալ յանձն առաւ՝ պապին յորդորանքներէն ասի-
պուած: Բնութեամբ լաւ և Թագաւորավայել կա-
տարելութիւններով զարդարուած էր Լևոն. բայց
ազգին խեղճութիւնը և ժամանակին պարագանե-
րը՝ Ռուբինեան Թագաւորներուն ամէնէն ցաւա-
լին ու գժբաղդը ըրին զինքը:

6. Լևոն Թագաւորելուն պէս՝ Եգիպտացիք ան-
Թիւ զօրքով Կիլիկիա տարածուելով սկսան այրել
ու աւերշարկել քաղաքները. Լևոն քիչ զօրքով
Թշնամեաց դէմ ելաւ ու մեծ վնաս հասուց անոնց,
բայց ինքն ալ պատերազմի առեն վիրաւորուելով
փախաւ գնաց անմատչելի լեռներու մէջ պահուը-

5. Լևոն Լուսինեան ինչպէս Թագաւորեց.

6. Լևոն ինչ քաջութիւններ ըրաւ Եգիպտա-
ցւոց դէմ ու ինչպէս Թագաւորութիւնը նորէն
ձեռք առաւ.

տեցաւ, որով և ձայն եղաւ թէ մեռած է պատերազմի առեն: Իշխանները երկու տարիէն եռքը ուզեցին ՈՒթոն անունով դուքսը թագաւոր դնել իրենց՝ պատկեղով Լէոնին Մարիամ թագուհիին հետ. երբոր պատկի օրերը մօտեցան՝ խմացուեցաւ որ Լէոն ողջ է եղեր, ու քիչ մը առենէն ինքն ալ գալով թագաւորութիւնը նորէն ձեռք առաւ, որով ազգին մեծ ուրախութիւն եղաւ. բայց ափսոս որ երկար չտևեց:

7. Երկու տարիէն Էյրէֆ Ղապան անունով մէկը Եգիպտացւոց սուլդան ըլլալով, և քրիստոնէութեան սաստիկ թշնամի, շատ զօրք խաւրեց Կիլիկիոյ վրայ, որ երթան հիմնայատակ ընեն քաղաքները ու թագաւորութիւնը վերցընեն. սոնք գայրացեալ գեսի մը պէս Կիլիկիա տարածուելով արիւնով ողողեցին դաշտերը, որով շատ մարդ փախաւ այլ և այլ օտար թագաւորութեանց ապաւինեցաւ, շատն ալ լեռները ու բերդերը պահպանեցան, մնացածները թրի բերան գնացին: Եգիպտացիք ամէն տեղերու տիրելէն ու աւերակ դարձընելէն եռքը, երկու ամիսէ չափ Սիս քաղաքը պաշարելով առին ու աւերակ դարձուցին. թագաւորաց և իշխանաց գերեզմանները բացին, ու ան պատուական ոսկորները այրեցին. և բոլոր Կիլիկիան, որ մեր վերջին թագաւորաց իսանձարուն էր, այնպիսի ողորմելի և աւերակ վիճակի մը հասուցին որ սոսկաց թագաւորական գաւազանը ան աւերակաց վրայ տիրելու:

8. Լէոն տեսնելով որ անկարելի է Թշնամեաց անհամար և կատաղի բազմութեանը առաջը առ-

7. Էյրէֆ Ղապան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու ինչ խեղճութեան հասուց ազգերնիս.

8. Լէոն ինչպէս Եգիպտացւոց ձեռքը գերի ինկաւ.

նուէ իր քէչուր զօրքովն՝ իրեն ընտանիքովը կա-
պան ամուր բերդին մէջ պահուըտեցաւ. Թշնա-
միները եկան ու սկսան հետը պատերազմիլ, բայց
չկրնալով ինծա մը հասցընել՝ եկան գնացին ու փոք-
րիկ գունդ մը Թողուցին բերդը պաշարելու հա-
մար: Լևոն ինը ամիս բերդը կենալէն ետքը յու-
սահատելով դեսպան խաւրեց Եգիպտացւոց զօ-
րավարին՝ խոստանալով որ անձնատուր կ'ըլլայ.
միայն Թէ երդնու ինքն ալ ինծա մը չհասցընելու
իրենց կենացը: Երբոր երդում ըրաւ զօրավարը՝
բերդին դռները բացին, Թշնամիք մէջը մտան, գը-
տած բաներնին յափշտակեցին ու Թագաւորը և
իրեն ընտանիքը չղթայի զարկած Եգիպտոս տա-
րին. ատ եղաւ 1375 ին:

9. Էջրէֆ Շապան եօԹը տարի խիստ բանտի
մէջ պահեց Թագաւորական ընտանիքը հաւատք-
նին չուրանալնուն համար. վերջը Հռոմկայ քա-
հանայապետին և Սպանիացւոց Յովհաննէս Թա-
գաւորին աղաչանքովը ազատեցան ամէնքն ալ բան-
տէն. ու Յովհաննէս Թագաւորին երաշխաւորե-
լովը հրաման ալ եղաւ որ ուր կ'ուզեն երթան:
Լևոն մեկէն իր ընտանեօքը Երուսաղէմ Քրիստո-
սի սուրբ Գերեզմանին ուխտի գնաց. հոն Թողուց
իր կինն ու աղջիկը իրենց ուզելովը, և ինքը Ե-
րուպա անցնելով նախ Հռոմ գնաց, ուր շատ պա-
տիւ գտաւ սրբազան պապէն. անկէ անցաւ Սպա-
նիա, ուր Յովհաննէս Թագաւորը շատ սիրով ըն-
դունեցաւ զինքը և բնակուԹեան տեղ տուաւ:
Հոն երկար տաեն կենալէն ետքը ՀամբորգուԹեան
համար Գաղղիա ու Անգղիա գնաց, ու վերջը փա-
րիզ հասնելով հոն հիւանդացաւ և մեռաւ 1393ին,
Նոյեմբերի 22ին վաԹսուն տարեկան: Մեծ հան-

9. Լևոն ինչպէս իր բանտարգելուԹենէն ազա-
տեցաւ ու ինչպէս մեռաւ.

գիտով Թաղուհեցաւ Կելեստինեանց վանքին եկե-
ղեցւոյն մէջ ուր որ փառաւոր դամբան շինած է
վրան Գաղղիոյ Թագաւորաց ու անուանի զօրա-
վարներուն շարքին մէջ :

10 · Միակտուր սև մարմարիոնէ է դամբանը ,
որուն վրայ տարածուած կը կենայ Լևոն Թագա-
ւորին արձանը ձերմակ մարմարիոնէ , Թագաւո-
րական վերարկուով ծածկուած : Գլուխը Թագ ,
աչ ձեռքը Թագաւորական գաւազան ու ձախ
ձեռքն ալ Թաթիպան : Իսկ ոտքին կողմը երկու ա-
ւիւծ իրարու կռթընած կը կենան : Տապանագրին
արձանագիրն է ասիկայ .

« Ա յս է տապան քաջասոհմիկ և ամենապա-
» տիւ իշխանին Լևոնի Լուսինեան հինգերորդի [1]
» Լատին արքայի Թագաւորութեան Հայոց , որ
» աւանդեաց զհոգին ի ձեռս Աստուծոյ ի փա-
» րիզ ի 22 Նոյեմբերի յամի փրկութեան մե-
» ծոյ հազարերորդի հարիւրերորդի ինիաներոր-
» դի երրորդի » :

10 · Լևոնի դամբանը ինչպէս է ու ինչ արձա-
նագիր գրուած է վրան .

1 Ա յս տապանագրին մէջ Լևոն վեցերորդը հինգերորդ
ըսուեր է , Լևոն երկրորդը Րուբինեանց առաջին Թագա-
ւորն ըլլալուն համար Լևոն Ա սեպելով :

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀԱՅՈՑ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

1. Որուբինեանց Թագաւորութեան վերջանալու առեններըը Ասիոյ մէջ շատ զօրացած էր Լանկ-Թամուր կամ Թիմուրլէնկ Էօզպէկք Թաթարնեբուն Թագաւորը, որ Սմրղանտ կը նստէր: Ասիայի իր Թագաւորութեան երկոտասաներորդ տարին անհամար զօրքով վազեց Պարսկաստան ու Ասորեստան, և բոլոր անոնց տեղերը նուաճելով անցաւ Հայաստան, և հասած տեղերը ասկալէն անգթութիւններ ըրաւ: Օրինակի համար, կը պատմեն թէ Լանկթամուր կարս քաղաքը առնելու առեն այսպիսի գործողութիւն մը ըրաւ. շատ մարդ ջարդել տալէն ետքը, թէ տաճիկ և թէ հայ, հրաման տուաւ որ իրեք հարիւրական հոգւով երկու խումբ կազմեն, մէկ խումբը տաճիկ՝ մէկալը հայ. երբոր զատունք դիմացը հանեցին՝ Լանկթամուր ըսաւ. Ա՛ս երկու խումբէն մէկը ի՛ուզէի ջարդել

1. Լանկթամուր ո՞վ է ու ինչ նշանաւոր գործողութիւն մը ըրաւ կարս քաղքին մէջ.

տալ, որուշեցի որ քրիստոնեաները Թրէ անցընեմ: Հայերը սիրով յանձն առին մեռնիլ քան տաճկը նալով ազատիլ. բայց մէկերնէն երկու հոգի Տաճիկներուն կողմը անցնելով հաւատքնին ուրացան. ան առեն Թագաւորը հրամայեց որ Հայոց տեղ Տաճիկները սպաննեն. աս որ տեսան ան երկու ուրացեալները՝ նորէն քրիստոնէից կողմը անցնելով սկսան կանչել, Մենք քրիստոնեայ ենք ու Քրիստոսի ծառայ. ան առեն ԼանկԹամուր յանդիմանելով ան երկուքին անհաւատութիւնն ու չարութիւնը՝ միայն զանոնք սպաննել տուաւ ու մկաները աղատ Թողուց:

2. Կարսէն գնաց Փոքր Ասիա Սեբաստիոյ վերայ. երբոր քաղաքացիք ընդդիմացան իրեն՝ դեսպան խաւրեց խաբէութեամբ երդում ընելով որ եԹէ խաղաղութեամբ քաղաքը տան՝ բնակիչները Թրէ չանցըներ: Խոստմունքը պահելով Թրով չըջարդեց զնրենք, բայց սոսկալի տանջանքներով սպաննեց. ամէն տեսակ հասակի և վիճակի մարդկանց զատ տանջանքներ ու մահեր հնարելէն ետքը՝ բոլոր տղաքը ժողվեց, ու կապած ձեռքով և ոտքով ձգեց դաշտի մը մէջ ու կառաջ ձիերու կոխկրտտել տուաւ. ասով ան դաշտին անունը Սև հողեր կը կոչուի, որ ինչուան հիմայ Հայոց պերճ մանուցն է. եաքը զօրքերը բռնեց ու ողջ ողջ Թաղեց, ըսելով Թէ Երդուընցեր եմ Թրով չսպաննելու: Իսկ քաղքին մէջ գտնուած բոլոր տներն և ուրիշ պակասաւոր մարդիկը խղդել տուաւ ըսելով. Ես ողջերուն չխնայեցի, դուք ինչ բանի հարկաւոր էք: Ա՛ն անգԹութիւններս ընելէն վերջը չատ մարդ ալ գերելով Խորասան տարաւ:

2. Սեբաստիա ինչ անգԹութիւններ ըրաւ ԼանկԹամուր.

3· Լանկթամուրին թագաւորութեան վերջին տարիները Սիւնեաց կողմերը կը զօրանար Պեկլիներէ Ուռպելեան անունով կուրիճ իշխան մը, որ Սիւնեաց աշխարհքին ու Կապանի մեկ մասին կը տիրէր· իր իշխանութեան տակը վաթսուն հազարի չափ Հայ ունէր, ու հայրաբար զիրենք կը խնամէր, և փախչողներուն պատսպարան կ'ըլլար: Տեսնելով Պեկլիներէն յառաջադիմութիւնն ու մեծնալը ի րաց թագաւորը սկսաւ վրան նախանձիլ, ու եաւէ ըլլալ որ սպաննէ զինքը· սա բանիս համար Աճնագին անունով անզգամ ու արծաթասէր Հայ մը գտնելով անոր ձեռքովը թոյն խմցուց Պեկլիներէն· մեկէն կարեւոր գործոններըը ըրին, բայց օգուտ մը չըլլալով մեռաւ Պեկլիներ ու մեծ սուգ մէջ թողուց իր ժողովուրդը· իսկ Աճնագին իրեն արժանաւոր պատիժը գտնելով չարաչար սպանուեցաւ Հայերէն:

4· Պեկլիներէն իշխանութեան առեններըը շատ զօրացած էր Սուլդան Մէհէմմէտ Ֆաթիհ Օսմանցւոց թագաւորը, որ Պօլիսը Յունաց ձեռքէն առաւ· և ուզելով որ հոն ալ գտնուին Հայեր՝ վաճառականութիւն և ուրիշ արհեստներըը ծաղկեցնելու համար, Պրուսայէն և այլ և այլ տեղերէ շատ Հայեր բերել տուաւ ու Պօլսոյ զանազան կողմերը բնակեցուց· ատոնց վրայ Յովակիմ անունով պատրիարգ մըն ալ դրաւ իշխանութիւն տալով տիրել փոքր Հայոց և Յունաստանի մէջ գտնուած բոլոր Հայերուն:

5· 1453էն ինչուան 1603 մտանաւոր բան մը

3· Պեկլիներէն վրայ ինչ գիտեցիք կայ·

4· Սուլդան Մէհէմմէտ Ֆաթիհ ինչ բան ըրաւ ազգերնուս·

5· Շահաբաս ինչ աւերմունք ու կոտորած հասուց ազգերնուս·

ջատամուխը Հայոց վրայ· իսկ աս միջոցներուն Շահ-
աբաս Պարսից Թագաւորը Օսմանցւոց ձեռքէն
առնելով Հայաստանը՝ խիստ շատ աւերմունք ու
կոտորած ըրաւ հոն· որով և Ասուածոյ բարկու-
թեան վերջն և սաստիկ պատիժը եղաւ մեզի: Եր-
բոր Օսմանցիք լմացան որ Պարսիկք Հայաստանի
տիրեր են, ճղալէզատակ Սինան փաշային ձեռքը
անհամար զօրք տուին ու Հայաստան խաւրեցին
Պարսից դէմ· Շահաբաս բոլոր Հայերը արտօրա-
նօք իրենց քաղաքներէն ու բնակութիւններէն հա-
նել տալով Ադրարատայ դաշտին մէջ ժողվել
տուաւ, որպէս զի անկէ Պարսկաստան անցընէ·
քաղաքներն ու բոլոր արտերը այրել տուաւ, շէն-
քերը հիմնայատակ կործանեց, որպէս զի Օսման-
ցիք գալով ոչ պաշար գտնեն և ոչ բնակութիւն:
Երբոր Օսմանցիք Կարս հասան, Շահաբաս հրա-
ման տուաւ որ բոլոր ժողված Հայերը Պարսկա-
ստան քշեն տանին· և որովհետև Երասխ գետէն
կ՚անցնէին, բաւական նաւակ ու լաստ չըլլալով
սկսան ժողովուրդը գետը ձգել որ կրցողը լողա-
լով անցնի· ասով հիւանդոտ ու ծեր մարդիկ, կա-
նայք, տղաք և ուրիշ լողալ չգիտցող անհամար
մարդիկ խղդուեցան: Շահաբաս գետին քովը նըս-
տած կը տեսնէր ան խեղճութիւնները, տեսնոց
հոգ ընելու աւելի կը փութացընէր ժողովրդեան
գետէն անցնիլը· հասան եղկելիները ուրիշ անբաս
գժուարութեամբ ու վտանգով Պարսկաստան, և
ըստ մեծի մասին Շահաբաս ղրկեց Ասպահան
քաղաքը բնակեցուց· ամենքը մէկէն տասուերկու
հազար տուն էին՝ այնչափ կոտորածներէն զատ:
Շահաբաս որպէս զի Հայոց սիրտը վաստկի որ
սիրով կենան, սկսաւ գթութեամբ վարուիլ հե-
տերնին ու հարկերը շատ թեթևցուց· եռքը ու-
րիշ շատ գաղթականներ ալ բերաւ Շահաբաս,
որոնցմէ շատը օգին գէշութեններն մեռան, մէկա-

նանք ալ Պարսից մէջ ցրուեցան. իսկ ինչուան հի-
մա մնացածներն են Նոր Ջուղայի բնակիչները,
որ իրենք չինեցին ան քաղաքը հին Ջուղային յի-
շատակ:

6. 1722ին աւեններըը երբոր Սիւնեաց աշխարհ-
քին Հայերը կը նեղուէին երբեմն Օսմանցիներէն
ու երբեմն Պարսիկներէն, Դաւիթ Սիւնի կարիճ
ու հայրենասէր մարդը քանի մը հոգի ժողվեց
գլուխը, շատ խելքով կառավարելով զանոնք՝ Թըշ-
նամեաց դէմ երթալ ու սկսաւ իր ժողովուրդը խնա-
մել. կամաց կամաց զօրքը ինչուան չորս հարիւր
ըրաւ և անոնց զօրավար դրաւ Մխիթար անունով
իր անպարտելի օգնականը: Տաճիկները լսելով
Դաւթին զօրանալը՝ իրենք ալ այլ և այլ տեղերէ
զօրք ժողված մեծ պատրաստութեամբ վազեցին
Դաւթի վրայ. քանի մարդիկը տեսնելով Թշնամեաց
բազմութիւնը՝ ձգեցին փախան, ոմանք ալ Թշնա-
մեաց կողմը անցան, այնպէս որ Դաւիթ տասնըհօ-
Թը հոգւով մնաց. բայց ան միջոցին եկան հետը
միացան Հալիճորոյ Մելիք Փարսադան և տէր Աբե-
տիք կարիճ պատերազմողները. քանի մը հոգւով.
ապտիէն անգիէն խել մը մարդիկ ալ գալով նորէն
չորս հարիւր յիսուն հոգի եղան:

7. Դաւիթ յորդորեց ամէնքը հոգևորապէս ալ
պատրաստուելու, ուսախ ամէնքն ալ խոստովա-
նեցան հաղորդեցան, ու քաջութեամբ պատերազ-
մի պատրաստուեցան: Թշնամիները եօթանասուն
հազարի չափ էին, մեծ մասը հայ, և ուրիշ շատ
հասարակ ժողովուրդ. իսկ Դաւիթ իրեքհարիւր
հոգի միայն ունէր հետը բերդին մէջ: Պատերազմը

6. Դաւիթ Սիւնիին վրայ ինչ պատահեցաւ կայ.

7. Դաւիթ իրեն կարիճ ընկերներովը ինչ չարդ
տուաւ Տաճիկներուն ու ինչ կը պատմուի Տէր
Աբետիք ու Մխիթար քաջերուն վրայ.

վեց օր միակերպ տևեց. Թշնամիները չէին գրեթէ ամէն օր 300 հոգի կը մեռնէին, իսկ Դաւիթ կողմէն օրը հազիւ մէկ հոգի. վասն զի բերդականները դրսի եղածները կը տեսնէին ու դրսինները զիրենք չէին տեսներ: Տաճիկները յուսահատեցան ան կերպով բերդը առնելէն, ու սկսան ամէն կողմանէ մեծամեծ ու բարձր գործիքներ դնելով պարսպէն վեր ելլել. բերդականները երբոր տեսան սա բանս, քահանաները, կանայք ու տղաք ժամ վազեցին ու կ'աղօթէին որ սա վտանգէն ազատէ զիրենք Աստուած. իսկ Դաւիթ ու իր քաջ զօրքերն ու զօրավարները այնպիսի արագութեամբ ու զարմանալի յաջողութեամբ կը պատերազմէին որ մէկու մ' ալ չէր տուզին որ բերդէն նեղս մնայ, ու վեր ելածները թրով կամ հրացանով վար կը գլորէին: Ան միջոցին տէր Աւետիք և Մխիթար երկու հարիւր հոգի առած հետերնին՝ ուրիշ ճամբով մը բերդէն դուրս ելան ու թշնամեաց եռանդն սկսան պատերազմիլ. ասով տասուերկու հազար մարդ չարգելին ան օրը, և մնացածները փախուցին, հարիւր քառասուն և ութ դրօշ ու շատ ազար առած յաղթութեամբ դարձան եկան: Վերջը փախչողներուն եռանդն գնացին Աւետիք և Մխիթար վաթսուն հոգւով, մեծ կարդ մ' ալ տուին անոնց Մեղրի քաղքին մէջ, ու դարձան Դաւթին քովը եկան: Դաւիթ իր հնարագիտութեամբը, քաջութեամբը ուրիշ շատ յաղթութիւններ ալ ըրաւ, որով թշնամեաց սիրտը վախ ձգեց ու հալածեց զիրենք. վեց տարի իշխեց իր պզտիկ տէրութեանը վրայ գովելի և զարմանալի խելքով ու կառավարութեամբ, և մեռաւ խաղաղութեամբ յիսունըչորս տարեկան:

8. Դաւթի մեռնելէն ետքը իր մարդիկը միաբան

8. Դաւիթ Սիւնիին մեռնելէն ետքը ինչ խռովութիւն ինկաւ Հայոց մէջ.

հաւանութեամբ մէկէն ընտրեցին Մխիթարը իրենց առաջնորդ. բայց հոգին մէջերնին խռովութիւն իյնալով ոմանք Տէր Աբեռնիքին կողմը եղան, ոմանք ալ ուրիշներու. այսպէսով իրենց միութիւնը որով և զօրութիւնը պակսեցաւ: Ասոնց Տաճիկները բերդականներուն անմիաբանութիւնը, եկան պաշարեցին, ու սկսան նեղը խոթել մէջինները. բերդին Հայերը Մխիթարէն ծածուկ միաբանեցան որ բերդը մատնեն ու իրենք ազատին երթան. ասոր համար պատգամաւոր խրկեցին Տէր Աբեռնիքը: Տաճիկները երդմամբ յանձն առին, բայց բերդը մտնելէն հոգը մեծ մասը թրէ անցուցին, որ իրենց անմիաբանութեանը արժանաւոր պատիժ եղաւ. իսկ Տէր Աբեռնիքը ազատ թողուցին՝ որ ուր կ'ուզէ երթայ:

9. Մխիթար իրենները մատնութիւնը առաջուց իմանալով փախաւ գնաց, ու քիչ մը առեն պահուըտեցէն հոգը եկաւ նորէն շատ մը մարդ ժողվեց գլուխը, ու շատ քաջութիւններ ընելով քանի մը քաղաքներու ու բերդերու տիրեց: Երբոր Խնծորէսք լսուած բերդը պաշարեր էր, օր մը քնանալու առեն քովի մարդիկը սպաննեցին զինքը, ու գլուխը Դավըժ նահապետ բժիշկին տարին. բժիշկը արդարութեամբ մնածելով պատժեց ասոնց անզգամութիւնն ու անհաւատարմութիւնը և զամէնքն ալ սպաննել տուաւ, ըսելով որ «Դուք աշխարհքս այդպիսի քաջ մարդէ մը զրկեցիք, և թէ որ անոր կեանքը անպիտան ու ինքնակար ձեռներէցիք աշխարհի, ուրեմն ձերը ինչ բանի պիտանի պիտի ըլլայ ով անգութ և դաւաճան մարդիկ»:

10. Մխիթարին քովի մարդիկը բոլոր ցրուե-

9. Մխիթար ինչպէս սպաննուեցաւ.

10. Ի՞նչ գիտեցիք կայ Յովհաննէս իշխանին վրայ, և թէ անկէ վերջը ինչ վիճակ ունեցաւ մեր ազգը.

ցան, շատն ալ Յովհաննէս իշխանին քովը գնացին, որ շատ քաջութիւններ ըրած էր Ուռհայոյ աշխարհքը Տաճկաց դէմ. բայց վերջէն կասկածելով իր մարդիկներուն դաւաճանութենէն, ինքիմ Տաճկաց յանձնեց իր քաղաքը, ինքը եւս Աժաերիան գնաց ու հոն շատ պատիւ գտաւ:

Վերջի առեւնները Դահմազ Ղուլի կամ Նազըրշահ խան Պարսից Թագաւորն ալ շատ չարչք հատուց հայոց. բայց մենք աւելորդ կը սեպենք այսուհետեւ այսպիսի խեղճութիւններ պատմելը, և միայն մեր ընթերցողաց կը թողունք խմաստասիրել՝ թէ ան ցաւալի դիպուածներէն շատին աղբիւրն ու առաջին պատճառը ազիսութիւնն եղած է, որով մեր պատուական ազգը բոլոր իր պարծանքները գրեթէ մոռցած, ու ազիսութենէ ամէն տեսակ պակասութեանց մէջ քիչ շատ ինկած է: Իրաւ է որ իր մէկ քանի ազնիւ կատարելութիւններովը, որոնց գլխաւորներն են աստուածպաշտութիւն, հաւատարմութիւն, խոհեմութիւն, արիութիւն, և ամէն տեսակ գիտութիւն և արուեստ սորվելու զարմանալի յարմարութիւն, օտար ազգաց առջեւը միշտ պատուաւոր ու սիրելի եղած է. բայց ասոնք կատարելութիւնները շատ աւելի կրնան զարգանալ ու մեր ազգին վերջի փառքը քան զառաջինն ալ կերպով մը մեծ ընել՝ թէ որ ջանայ իր ուսումնասիրական նոր եռանդը օրէ օր շատցընել, և գովելի կերպով պողպաքեր ընել. իր քաջ և անուանի նախնեաց պատմութիւնները իրեն հայելի ու ապագայ կեանց կանոն բռնել, և ոչ պակասութիւններն որ իր խեղճութեանցը պատճառ եղեր են՝ անոնցմէ իբրև ծանօթ և վնասակար թշնամիներէ զգուշանալ:

ՀԱՄԱՌՕՏ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՄԱՍԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ուշի ուշով և անաչառ ոգւով աս համառօտ պատմութիւնս կարդացողը կրնայ առանց մեծ դըժուարութեան մը՝ ինչ նիւթերու վրայ որ պիտի խօսինք՝ անոնց տոյգ պատճառները գտնել իսնալ. բայց որովհետև տարաձայնութիւն կարծեաց կրնայ ըլլալ ինչպէս ուրիշ խնդրոց՝ ասանկ ալ աս նիւթիս մէջ, անոր համար հարկ համարեցանք մեր կարծիքն ալ համառօտել հոս, և առանձին աս խնդրոց վրայ թէ ինչ պատճառներով Հայկազանց տէրութիւնը այնչափ երկար տաեն դիմացաւ, Արշակունեացը անանկ քիչ տաեն մէջ զօրացաւ ու պայծառացաւ մեծամեծ գործողութիւններով, և թէ ինչպէս ընդհատեցաւ այնպիսի ցաւալի կերպով, ինչպէս նաև Բագրատունեաց թագաւորութիւնը, և ինչ բաներ եղան աս անկարգութեանց պատճառները:

Տէրութեան մը կործանման պատճառ կրնան ըլլալ մեյմը արտաքին Թշնամիք, մեյմ՝ ալ ներքին Թշնամիք. Հայկազանց տէրութիւնը որ այնչափ երկար տաեն տևեց՝ յայտնի կը ցուցընէ որ աս երկուքէն ալ ազատ էր 1800 տարուան միջոցին

մէջ, որ գրեթէ միշտ յաջորդաբար իր Հայկազուն իշխաններուը ունէր։ Պատմութենէն յայտնի կը տեսնենք թէ ինչուան Արտաշէս առեներուը, որ 300 տարուան միջոց է, Հայերը կամ քիչ և կամ ամենևին պատերազմ չեն ունեցած. ասոր պատճառն ան է որ չզհեղեղէն եաքը ազգերը նոր ձևանալով, և իրենց քիչուորութեանը համեմատ երկիրներու վրայ յարձակելու, առանց փառասիրութեան կամ ամբարտաւանութեան վախճան մը ունենալու, ինչպէս էր Նեբրովթայ պատերազմը. բայց որովհետև նախ ամբարտաւանն Նեբրովթ եւս արդարութեան ու խաղաղասիրութեան հետ կառնելու՝ ու չարաչար յաղթուեցաւ, տարակոյս չկայ որ ամենուն սիրտը վախ ձգած էր արդար կռուին յաջողութիւնը։ Դարձեալ, Հայերը ուշ գրած էին միայն իրենց բազմանալուն, որով և քաղաքաց չինութեան, ինչպէս իրենց գրած անուններն ալ կը ցուցընեն։ Երեքհարիւրերորդ տարուոյն սկիզբները երբոր ժողովուրդները բազմացան և զօրացան, այլ և այլ ազգեր սկսան նաև Հայաստանի վրայ վազել. բայց քաջն Արամ անոնց դէմ ելլելով ոչ միայն անոնց առաջ գալուն ընթացքը արգիլեց, հապա դէպ ’ի ետ հալածելով սիրեց բովանդակ անոնց երկիրներուն, որով և աշխարհակալ ըսուեցաւ ու ազատեց Հայաստանը օտար թշնամիներէ։ Ան առաջին անգամն էր որ Հայերը օտար երկիրներու սէր եղան, և բարեբախտաբար կրնանք ըսել որ վերջինն ալ եղաւ միանգամայն. որովհետև Հայկազանց մէջէն ուրիշ մէկու մը վրայ ալ յիշատակութիւն չունինք որ երկրակալութեան եռեւէ եղած ըլլայ։ Բարեբախտաբար վերջինն ըզաւ ըսինք, վասն զի տոյդ է աս Հիմարտաւթիւնս՝ թէ ան տէրութիւնն որ առակ աշխարհակալութեամբ կը տարածուի՝ իրեն թշնամիներ կը շատ-

ցընէ ու երկար չկրնար տակաւ, ինչպէս Ալէքսան-
դրի և ուրիշ աշխարհակալներու տէրութեանը վը-
րայ փորձով տեսնուած է: Ասոր հակառակը, այ-
սինքն երբեմն ունեցածովը գոհ ըլլալը, Հայոց չա-
փաւորեալ խառնուածքէն ալ առաջ կուգայ, և
ոչ եթէ երբեմն քիչուորութենէն և կամ տկարու-
թենէն, ինչպէս որ ոմանց թերևս այնպէս տես-
նուի. վասն զի տէրութիւն մը որ 1800 տարի իր
ամբողջութեանը մէջ մնայ, ամենաքիչ պատերազմ
ունենայ, մանաւանդ տևական պատերազմներ,
միշտ դրսէն գաղթականներ ընդունի ու ինքը գաղ-
թական չհաւրէ, պէտք է որ շատ բազմանայ. և
մեր աշխարհքին տարածութեանը նայելով պէտք
էր բնակիչը գէթ 15,000,000 ըլլար. և միթէ ատ
տասներկինգ միլիոնը, որոնց քաղաքութիւնը յայտնի
է ամենուն, չէրնի կրնար աշխարհակալութիւններ
ընել Մակեդոնացւոց, Պարսից, Հռոմայեց-
ցւոց պէս, որ 'ի սկզբան մեզի հաւասար և քան
զմեզ աւ թերևս քիչ էին բազմութեամբ: Ըսած-
ներնէս յայտնի կ'ըլլայ որ Հայկազանց տէրութեան
երկար դիմանալուն առաջին և գլխաւոր պատճառն
է մեր ազգին անաշխարհակալ և հանդարտասիրող
ոգին, որով նաև երկայն տարի աւ Ասորեստա-
նեայց իշխանութեան տակին էին ու անոնցմէ պաշա-
պանուած իբրև մերձաւորագոյն և քան զմեզ ա-
ւելի զօրաւոր ազգէ մը, ինչպէս Խորենացւոյն խօս-
քերէն աւ յայտնի է: Մեր Հայկազուն նախնեաց
աս հանդարտասիրութիւնը ինչպէս որ զերծնիք
արտաքին թշնամիներէ ազատ պահեց, տասնիկ աւ
նեղքին վիճակին վրայ մեծ ազգեցութիւն ըրաւ.
այսինքն Ա. Ժողովրդեան երբեմն իշխանաց վրայ ու-
նեցած վստահութիւնն ու հանդարտասիրոյ հպա-
տակութիւնը. և անոր փոխարէն իշխաններուն
Ժողովրդեան վրայ ունեցած հայրագութ խնամքը:
Բ. Կուսակցութիւններ չըլլալը, որով 365 տարի

Հայկայ որդւոցմէ ընտրուեցան նահապետները յաջորդաբար, և երբոր ան ցեղին յաջորդութիւնը լմնցաւ, Հայկայ մեկալ որդւոցը անցաւ առանց խառնուելու մը եղելու. ասով յայտնի կ'ըլլայ իրենց խաղաղասիրութիւնն ու միաբանութիւնը. Գ. Հիւրասիրութիւն և վեհանձնութիւն, որով իրենց ապաւինածները սիրով ու պատուով ընդունելով՝ աշխարհքին հզօր պաշտպաններ կ'ասեղծընէին: Տարակոյս չկայ որ այսպիսի հանդարտասիրոյ ու խաղաղասէր կանոններու վրայ հաստատուած ժողովուրդը կամ՝ տէրութիւնը երկար պէտք էր դիմանար. և թէ որ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ բռնաւորութեամբը իրեն զօրութիւնն ու խաղաղութիւնը չայլայլէր, չէր ընդհատեր ան տէրութիւնը, որ մերձակայ ազգերուն պատկառելի, հեռաւորաց բարեկամ, իրեն քիչովը գոհ, զօրինչները չփնասող, խաղաղութիւն սիրող տէրութիւն մըն էր: Ա բանս միայն խոստովանելի է որ քաղաքական և ուսումնական յառաջադիմութիւն խիստ քիչ ըրած կ'երևայ՝ այնչափ երկար ժամանակ լինքնիշխան տէրութիւն ունենալնուն համեմատ. որովհետև ուրիշներու՝ մանաւանդ ծաղկած ազգերու հետ վերաբերութիւն չունենալով իրենք իրենց գիտութեամբը մնացին ինչուան Տիգրան Երուանդեանին առեները, որ օտար ազգաց հետ ունեցած հաղորդակցութեամբը և իր անձին գեղեցիկ յատկութիւններովը ազգին յառաջադիմութեանը մեծապէս պատճառ եղաւ: Հայկազանց տէրութեան վիճակին վրայ ուրիշ գլխաւոր բան չունենալով խօսելու՝ անցնինք Արշակունեաց Թագաւորութեան վրայ համառօտիւ խօսելու:

Արշակունեաց Թագաւորութեան շքեղ կերպով սկսին ու քիչ առնի մէջ պայծառանալն ու զօրանալը՝ շատ զարմանալի ու խելքէ վեր կրնայ սեպնուիլ. բայց երբոր մտածենք թէ ատ Թագա-

ւորութիւնս քալօրովին նոր չէր ան ժողովրդեան ու ան աշխարհքին համար որ արդէն հազար ու թը հարիւր տարի տէրութիւն ունեցեր էր, և թէ տէրութիւնն ալ ընդհատելով միշտ իրեն տէրունչութեանն ու ազգութեանը մէջ մնացեր էր, և տէրութիւնը կործաներ էր ոչ եթէ բարոյական պակասութիւններով, հապա դիպուածական և օտար ընտանիէ մը, ան ատեն զարմանալի չիգար· որովհետև այսպիսի տէրութիւն մը հին, մեծաշէն ու հաստահիմն տան մը կը նմանի, որ հնութեանը պատահական վնասներուն պատճառաւ քիչ մը նորոգութեան կը կարօտի: Արշակունեաց տէրութիւնը Հայկազանց տէրութեանը վրայ այնչափ աւելի նոր կառարելութիւններ աւելցուց որ ինչպէս իրեն պայծառանալուն՝ ասանկ ալ իր թշուառութեանն ու կործանմանը պատճառ եղաւ: Հայկազանցը որչափ որ քիչ գործունեայ ու առանձնացած տէրութիւն մըն էր, Արշակունեացն ալ անոր հակառակը պատերազմող, աշխոյժ ու գործունեայ եղաւ· և սա բանս սկսաւ նոյն իսկ Արշակունեաց տէրութեան առաջին տարիները: Արշակունեաց առեն Հայերը Վաղարշակայ պատճառաւ նախ վերաբերութիւն ունեցան Պարթևաց մեծ և հզօր ազգին հետ, որով նաև Պարսից և Մարաց հետ· արդէն կուսակալաց առեներ Սելևկիացւոց պատճառաւ՝ Հայերը իրենք հարիւր տարիէ ջափ Յունաց հետ ունեցեր էին՝ չէ թէ պարզ բանակամական վերաբերութիւններ, հապա անոնց հպատակած ալ էին· վերջը Արտաշէս Ա.ին աշխարհակալութեամբը գարձեալ խիստ շատ վերաբերութիւններ ունեցան Յունաց հետ, որով ինչուան անոնց չատուածներն ալ Հայոց մեհեաններուն մէջը կանգնուելով Հայերէն պաշտուեցան· յայտնի են գարձեալ Արշակունեաց Հռոմայեցւոց հետ ունեցած վերաբերութիւնները՝ Տիգրա-

նայ ու Միհրդատայ պատերազմներուն պատճառաւ։ Առնցմով յայտնի կ՚ըլլայ թէ ինչպէս Հայերը հարիւր տարուան միջոցին մէջ աշխարհքիս խիստ զօրաւոր տէրութեանց հետ վերաբերութիւններ ունեցան, որ ինչպէս մեծամեծ օգուտներու՝ նոյնպէս ալ խիստ շատ վնասներու առիթ եղաւ։

Ծաղկեալ ազգերու հետ վերաբերութիւն ունեցող ազգը բնականաբար ինքն ալ կը ծաղկի. ասիկա կը տեսնուի նաեւ Հայոց վրայ Արշակունեաց թագաւորութեան տաեներ։ Արդէն յայտնի է պատմութենէն Վաղարշակայ ըրած բարեկարգութիւններովը եւ ուսումնասիրութեամբը Հայոց ուսումնական եւ քաղաքական յառաջադիմութիւնը. Արշակայ, Արտաշէսի եւ Տիգրանայ պատերազմասէր եւ հոգոյ պաշտօնասէր բարքովը մեհենից զարդարուիլը եւ պատերազմական կարգերուն առաջ երթալը. Անանէի, Սանասարկոյ, Երուանդայ եւ Արտաշէս երկրորդին աշխարհաշինութեամբը Հայաստանի քաղաքաց ծաղկիլը, գեղեցիկ շինուածքներով զարդարուիլը, որոնց շինութեանը համար՝ ինչպէս պատմութենէն գիտենք՝ օտարազգի ճարտարապետներ ու բանուորներ եկան։ Ասոնց նման օրինակ գրեթէ ամէն բան որը քիչ որը շատ առաջ գնաց, որ առանց ասոնց կարեւոր հաղորդակցութիւններու չէր կրնար ըլլալ։ Այս տեսակ վերաբերութիւններուն ինչպէս որ օգուտները յայտնի եւ մեծամեծ էին՝ ասանկ ալ վնասները յայտնի եւ պարզ են. օտար ազգի մը հետ եղած վերաբերութիւնները կամ անոնց գերի ու հպատակ ըլլալով է, կամ պատերազմական, եւ կամ բարեկամական. գերութեան կամ հպատակութեան վերաբերութիւնը ժողովրդեան քաջութեան ոգին կը նուազեցնէ, երկպառակութիւնները կը շատցնէ, հոսակցութեան խանգարիչ ոգին կը

մոցընէ : Ա բանս այնչափ ինսասաբեր չեղաւ Հայաստանի կուսակալաց իշխանութեան ժամանակը. որովհետև վերաբերութիւննին քիչ էր Յունաց հետ, և իշխաններէն շատը Հայ էին՝ Սելևկիացւոց մեր աշխարհէքն հետու ըլլալուն պատճառաւ: Տեսականն պատերազմներուն ըրած ինսաները յայտնի են որ ժողովուրդը կ'աղքատցընեն, աէրութիւնը կը տկարացընեն, Թշնամիները կը շատցընեն և ուրիշ շատ կերպերով ինսասակար կ'ըլլան նորա կիրթ ազգի մը. սա ինսաներէն խնսա շատը կրեց Հայաստան Արտաշէս Ա.ին և Տիգրանայ պատերազմներովը: Բարեկամական հաղորդակցութիւնը կ'աւելցընէ ժողովրդեան մը մէջ ան պակասութիւնները որ բարեկամ աէրութիւնն ունի, Թէ իրեն կառավարութեան կերպին և Թէ ժողովրդեան բարքին մէջ: Ա իրեք տեսակ հաղորդակցութիւններն ալ քիչ շատ ինսասաբեր եղան Հայաստանի, և կերպով մը նաև իրեն վերնալուն պատճառ: Հպատակութեան վերաբերութիւնը մեծապէս ինսասեց ղՀայաստան՝ Արտաշիր Սասանեանին ակրապետութեան առեն. իսկ պատերազմականը ինսասեց Արտաշէս Ա.ին աշխարհակալութեամբը, որուն շքեղ յաղթութիւնները Հայաստանի Թշնամի յարուցին բոլոր հիւսիսային ազգերը, Պարսկներն ու Հռովմայեցւոց հզօր կայսրութիւնը, որ Հայաստանի անկախութիւնը վերցընելով հարկատու ըրաւ զինքը, անոր մեծնալուն և զօրանալուն բոլորովին արգելք եղաւ, ու վերջապէս ներսէն և դրսէն շատ չարիք հասուց մեր աշխարհքին. և սա ինսաներս սկսան Արշակունեաց Թագաւորութեան առաջին տարիները: Հիւսիսային ազգաց և Պարսից հասուցած ինսաները պատմութենէն յայտնի են ամենուն, որովհետև ըստ Խորենացւոյն « Հանուրց Հիւսիսականաց վհատոյն » էր մեր ազգը. և անոր համար ա-

նոյց աչքին փուշ եղած էր Հայաստանի մեծ նալը:

Հայոց նախարարներուն ևս և ժողովրդեան բարքին աւրուելուն առաջին պատճառ եղան պատերազմները, երկրորդ պատճառ առաջինին շատ աւելի վնասակար՝ Արտաշէսին Հայաստանի տիրելը՝ ինչպէս որ վերն ալ յիշատակեցինք: Արտաշէս և իր որդին Տրդատ երեսուն տարի իշխեցին Հայաստան, և ամէն տեսակ չարիքով լեցուցին զՀայաստան, այսինքն փառասիրութեամբ, կուսակցութեամբ, տիրատեցութեամբ, ու ան ամէն չարիքներով որ աշխարհք մը գերութեան տակ ինդալով կ'ունենայ. և սա բաներս Հաստատուած են հին և նոր աղբեաց պատմութեանց անթիւ և անհամար վկայներէն, անոր համար չենք ուզեր երկարել հոս ան չարեաց վրայ զատ զատ խօսելով. միայն ասիկայ կրնան գիտնալ ամէն ընթերցողք թէ Մերուժան և Վասակ Սիւնի ուրացող ազգատեաց և փառասէր նախարարներուն ըրած անզգամութիւններն, ինչպէս նաև ուրիշ անոնց նմանողներուննը, բոլոր վերի բաժնեբնուս հետևանքներն են:

Ան միջոցին որ Հայաստանի մէջ մտան գերութենէ առաջ եկած սա գարշելի և կործանիչ սովերը, ուրիշ կողմանէ Հայաստանի կործանմանը երրորդ պատճառ եղաւ՝ Հռոմայեցւոց կայսերութեան կատարեալ տիրապետութիւնը, որով մերձաւորութեան և քրիստոնէութեան պատճառաւ՝ ազգութիւնին մեծցաւ ու աւելցաւ Հայոց վրայ. երթևեկութիւններուն յաճախութեամբը բարեկամութիւնն ու ընտանութիւնը շատցաւ. որով մէկ կողմանէ Յունաց սովորութիւնները մտան Հայոց մէջ, ուրիշ կողմանէ ալ նոր նոր կուսակցութիւններ աւելնալով Յունաց կողմը, սկսաւ ան ատեն Հայաստանի համար ան սոսկալի

եկեղեցւոյն որ կամաց կամաց աւելմունքներ ընելով հասն հանցաւ բոլորովին աւերակներու տակը թաղեց զՀայաստան: Եւ ո՞վ չգիտէր ան առանձնի կայսերաց Թուլամորթութիւնն ու վատութիւնը, անոնց արքունեաց զեղխութիւններն ու ապականութիւնները, և ընդհանրապէս Յունաց և Հռոմայեցւոց բարուց աւրուիլը, որով մի և նոյն պակասութիւնները մեռան Հայոց մէջն ալ. և ասով է որ մենք ալ գժբախտաբար ունեցանք ան վատ, զեղխ ու անպիտան Թագաւորաց շարքը, որոնք մեր Թշուառութիւնը բազմապատկելով մեր կործանումը երագեցին: Թագաւորաց ան ասոնձանի խեղճութեանը պատճառաւ նախարարները մեծցան ու զօրացան, որով հասն անգամ Թագաւորին անհարգութիւններուն ընդդիմանալով կամաց կամաց սկսան նաև օրինաւոր ու արդարացի հրամաններուն ալ դէմ ելլել. ասով գրեթէ մէյմէկ ինքնագլուխ իշխաններ ձևացան. և ահա ասկէյ ալ եղաւ չորրորդ պատճառ մեր ազգին Թագաւորութեանը վերնալուն: Ա՛ս ամէն չարեաց առաջը միայն գիտութիւնն ու կրթութիւնը կրնար առնուլ. բայց որովհետև եկուքն ալ հետև մնացին, և այնոնց հակառակ եկամուտ ախտերը զօրացան, ասով օր օրուան վրայ Հայաստանի վիճակը վատթարացաւ. ասկէյ ալ եղաւ հինգերորդ պատճառ, և կերպով մը առաջինն իրեն մեծութեան նայելով:

Մեզի ասոյգ և իրական տեսնուած գլխաւոր պատճառները ասոնք են, որոնցմէ զատ ուրիշներ ալ կրնան գտնուիլ, որ ատ գլխաւոր պատճառներէն կրնան առաջ գալ: Ուսոի մեզի բոլորովին ծուռ և սխալական կը տեսնուի ոմանց ըսելը Թէ Հայոց տերութիւնը կործանեցաւ իրենց բնաւորութեանէն, նախանձոտութենէն, քսութիւններէն, մատնչութենէն և ուրիշ ասոնց նման

սակալի պակասութիւններէ, որոնք ըստ ինքեան հետևանք են առջի ըսած պատճառներուս, և երբ կրօրդաբար միայն պատճառ եղան մեր կործանումը. անոր համար ալ հարկաւոր սեպեցինք աս պակասութիւններուն ինչ բաներէ առաջ գալը բացատրել հոս, որպէս զի մեր ընթերցողները ալ մտքերնին չդնեն թէ աս պակասութիւնները բնական են, հապա թէ եկամուտ և պատահական պակասութիւններ, որոնք ամէն տկարացած ու անիշխանութեան մէջ մնացած ազգերուս կը պատահին և կրթութեամբ միայն կը շտկուին:

Բագրատունեաց թագաւորութեան խելքով թեանը և շուտով կործանելուն պատճառներուն վրայ աւելորդ կը համարինք առանձին խօսիլը հոս, որովհետև մի և նոյն պակասութիւններուն դարմանը չտանելով, մանաւանդ թէ անոնց աճելովը եղած է, մանաւանդ որ առջի թշնամիներուն վրայ ունեցաւ Հայաստան Բագրատունեաց առեները՝ ուրիշ նոր նոր ահաւոր թշնամիներ ալ, որոնց դէմ կրնար դնել միայն ան պակասութիւններուն հակառակ կառավարութեամբը, ինչպէս որ ընդդիմացաւ ինչուան Տրդատայ առենները ունեցած ահեղիմ թշնամիներուն:

Իսկ Ռուբինեանց տէրութեան այլ և այլ հանգամանացը և վերնալուն վրայ խօսիլը կերպով մը մեր խնդրէն դուրս է, որովհետև ան իշխանութիւնը Հայաստանէն դուրս ըլլալով առջիններուն շատ նմանակութիւնը չկրնար սեպուիլ, և միշտ մնանական թագաւորութիւն մըն է: Ա յայնէ է որ իրեն պզտիկութեանն ու տկարութեանը համեմատ՝ ամէնէն աւելի շատ և կատաղի թշնամիներ ունեցաւ, մանաւանդ վերջերը, որոնց դէմ այնչափ զիմանալն ալ շատ մեծ բան պիտի սեպուի, և Ռուբինեան իշխանաց անպարտելի քաջութեանը յայտնի ապացոյց:

ԿԱՐԳ

ԹԱԳԱԻՈՐԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

ՎԵՀ ԱՇՂ

2107 Հայկ Ծ.
2026 Արամեակ ԽԶ.
1980 Արամայիս Խ.
1940 Ամասիա ԼԲ.
1908 Գեղամ Ծ.
1858 Հարմա ԼԲ.
1827 Արամ ԾԸ.
1769 Արայ ԻԶ.
1743 կարգոս ԺԸ.
1725 Անուշաւան կ.
1662 Պարէտա Ծ.
1612 Արբակ Խ.
1568 Զաւան ԼԷ.
1531 Փառնակ Ա, ԾԳ.
1478 Սուր ԻԵ.
1433 Հաւանակ Լ.
1403 Վաշտակ ԽԲ.

1381 Հայկակ Ա, ԺԸ.
1363 Աֆրակ Ա, ԺԴ.
1349 Առնակ ԺԷ.
1332 Շաւարշ Ա, Զ.
1326 Նորայր ԻԴ.
1302 Վահամ ԺԴ.
1289 Կար Դ.
1285 Գոռակ ԺԸ.
1267 Հրանտ Ա, ԻԷ.
1242 Ընձակ ԺԵ.
1227 Գզակ Լ.
1197 Հօրոյ Գ.
1194 Զարմայր ԺԲ.
1180 Շաւարշ Բ, ԽԴ.
1137 Պերճ Ա, ԼԵ.
1102 Արբուն ԻԷ.
1075 Պերճ Բ, Խ.
1035 Բագրեւկ Ծ.
985 Հոյ ԽԴ.
941 Յուսակ ԼԱ.
910 Աֆրակ Բ, ԻԷ.
883 Կայպակ ԽԵ.
838 Փառնաւազ Ա, ԺԷ.
805 Փառնակ Բ, Խ.
765 Սկայորդի ԺԷ.
748 Պարոյր Ե.
743 Պարոյր Թագաւոր կը պահուի ԽԴ.
700 Հրաչեայ ԽԲ.
678 Փառնաւազ Բ, ԺԴ.
665 Պաճոյճ ԼԵ.
630 Կռնակ Ը.
622 Փաւոս ԺԷ.
605 Հայկակ Բ, ԼԶ.
569 Երուանդ Ա, Դ.
565 Տիգրան Ա, ԽԵ.

520 Վահագն Ի։
493 Առաւան ԺԸ։
475 Նեբսէհ ԼԵ։
410 Զարեհ ԽԶ։
394 Արմոգ Թ։
385 Բայգամ ԺԴ։
371 Վան Ի։
351 Վահէ ԻԳ։

ԿՈՍԱԿԱՑ

325 Մխհրան Ե։
319 Նէոպտղեմէոս Բ։
317 Ագաւրդ ԼԵ։
284 Հրանտ Բ, ԽԵ։
239 Արտաւազ Ծ։
189 Արտաշատ Լ։
159 Արտաւազդ Ժ։

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

149 Վաղարշակ Ա, ԻԲ։
127 Արշակ Ա, ԺԳ։
114 Արտաշէս Ա, ԻԵ։
89 Տիգրան Բ, ԾԴ։
55 Արտաւազդ Ա, Ե։
30 Արշամ Խ։
1 Աբգար Լ։
Քեռէ եղբը
30 Արգար քրիստոնեայ կ՚ըլլայ։
34 Անանէ Դ։
38 Սանատրուկ Լ։
68 Երուանդ Բ, Ի։
88 Արտաշէս Բ, ԽԱ։
129 Արտաւազդ Բ, Բ։
131 Տիրան Ա, ԻԱ։

152 Տիգրան Գ, ԻԲ.
194 Վաղարշ Ի.
214 Խոսրով Ա, ԽԵ.
257 Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կը ծնանի.
259 Արշաւիր Հայաստանի կը տիրէ ԻԵ.
283 Շապուհ երկու փորի.
286 Տրդատ Ծ.Ձ.
301 Սուրբ Հռիփսիմեանք կը նահատակուին.
302 Տրդատ ազգովիմբ կը մկըրտուի ու քրիստոնեայ կ'ըլլայ.
319 Տրդատ ու սուրբ Գրիգոր Հռոմէ կ'երթան.
341 Տրդատ կը մեռնի.
344 Խոսրով Բ, Թ.
353 Տիրան Բ, ԺԱ.
363 Արշակ Բ, ԺԸ.
381 Պապ Գ. կամ Ի.
383 Մեծն Ներսէս կ'ապաննուի.
384 Վարազդատ Բ.
386 { Արշակ Բ, Գ.
    { Վաղարշակ Բ, Ա.
388 Խոսրով Գ, Դ.
392 Վռամշապուհ ԻԱ.
406 Սրբոյն Մեսրոպայ ձեռքովը Հայոց նշանագիրները կը հնարուին.
415 Շապուհ Դ.
422 Արտաշիր Զ.

Թագաւորք Վէրին Հայոց

Ք. Ա.

27 Արտաշեսս ԺԱ.
16 Տիգրան փոքր ԺԸ.
2 Երուազ 00
2 Տիգրան Դ.

Բլխասոսկ հաքը.
6 Ապրսամ արծրունի ԺԴ.
19 վռնան Բ. Արշէս Բ.
21 Ջենան Աբուաշէս ԺԷ.
38 Արշակ ուէթ ամիս.
38 Միհրդատ ԺԶ.
55 Հռամիզդ հօթը ամիս
55 Տիրիթ Է.
60 Տիգրան Գ.
63 Տիրիթ (վերսաին) Թ.

Մ՚ԸՂՈՒԹԻ

428 Վեհմիհրշապուհ ԺԴ.
442 Վասակ Ժ.
451 Վարդանանք կը նահատակուին.
452 Արտրմիզդ ԺԲ.
464 Արվէնատոպ ԺԷ.
481 Սահակ Ա, Ա.
483 Շապուհ, վեց ամիս.
484 Անդեկան, հօթը ամիս.
485 Վահան ԻԶ.
511 Վարդ Դ.
515 Բուրղան Գ.
518 Մժէժ Լ.
548 Դենշապուհ Դ.
552 Վշնասվահրամ Զ.
Հայոց տօնարը կը նորոգուի, և անկէ կը սկսի Հայոց Թուականը 552ին.
558 Վարազդատ Զ.
564 Սուրէն Է.
571 Վարդան Է.
578 Միհրան ԺԵ.
593 Սմբատ Ը.

601 Դաւիթ ԻԴ.
625 Վարազտիրոց Է.

կիրակոսեան

632 Դաւիթ Դ.
636 Թէոդորոս Է.
643 Վարազտիրոց, ուրբ ամիս.
644 Սմբատ ԺԱ.
654 Համազասպ Ե.
659 Գրիգոր ԻԴ.
685 Աշոտ Դ.
690 Ներսէհ Դ.
695 Սմբատ Թ.
743 Աշոտ ԺԵ.
760 Սահակ Բ, Զ.
835 Բագրատ ԺԴ.

Ոսկիան

693 Աբգէս Բ.
704 կաշմ ԺԳ.
717 Վիլէթ Ժ.
727 Մահմէտ Ե.
732 Աբգարզիլ Ժ.
742 Մրուան Ա.
758 Եզիտ Ա, Բ.
766 Սիւլէյման Գ.
769 Պէքիր Թ.
778 Հասան Գ.
786 Եզիտ Բ, ԺԲ.
798 Խուզիմայ Ի.
818 Հոշ ԺԷ.
848 Ապուսէթ Ա.
850 Բուղայ Ե.
855 Շէխի Դ.

ԲԱԳԱՏՈՒՆԻՔ

859 Աշոտ Ա, ԻՀ.
885 Աշոտ Ա. *Թագաւոր կը պսակուի ամիրա-պետէն, ու հինգ տարի կը Թագաւորէ.*
890 Սմբատ Ա, ԻԳ.
908 Գագիկ Արծրունի *Թագաւոր կ'ըլլայ վասպուրականի.*
914 Աշոտ Բ, ԺԴ.
928 Աբաս ԻԴ.
952 Աշոտ Գ, ԻՀ.
977 Սմբատ Բ, ԺԲ.
989 Գագիկ Ա, ԻԹ.
1020 Յովհաննէս Ի.
1042 Գագիկ Բ, Գ.
1046 *Բագրատունեաց տէրութիւնը կը վերցուի.*
1079 Գագիկ Բ, *կ'ապաննուի.*
Թագաւոր վասպուրականի և կարսոյ
908 Գագիկ արծրունի ԻԹ.
921 Աշոտ Շապուհեան ԺԵ.
937 Դերենիկ Աշոտ ԺՀ.
953 Աբուսահլ ԺԹ.
962 Մուշեղ ԻԳ.
972 { Աշոտ Սահակ ԺԴ. / Գուրգէն Խաչիկ ԼԲ. / Սենեքերիմ ԾԵ.
1022 Սենեքերիմ *Սեբաստիա կ'անցնի.*

ՌՈՒԲԻՆԵԱՆՔ

1080 Ռուբէն Ա, ԺԵ.
1095 Կոստանդին Ա, Ե.
1100 Թորոս Ա, ԻԳ.
1123 Լեւոն Ա, ԺԵ.

1144 Թորոս Բ. ԻԹ.
1168 Թոռնիկոս պայլ Ա.
1169 Մլեհ Ե.
1174 Ռուբեն Բ, ԺԱ.
1185 Լևոն Բ, ԺԹ.
1198 Լևոն Բ. *Թագաւոր կը պսակուի և կը թագաւորէ* ԻՆ տարի.
1219 Զապել Ա.
1220 Փիլիպպոս Բ.
1224 Հեթում Ա, Խե.
1269 Լևոն Գ, Ի.
1289 Հեթում Բ, Գ.
1293 Թորոս Գ, Բ.
1296 Սմբատ Բ.
1298 Կոստանդին Բ. Բ.
1300 Հեթում Բ. վերստին Ե.
1305 Լևոն Դ, Գ.
1308 Օշին ԺԲ.
1320 Լևոն Ե, ԻԲ.
1342 Կոստանդին Գ, Ա.
1343 Գուիտոն Բ.
1345 Կոստանդին Դ, ԺԸ.
1365 Լևոն Զ, ԺԱ.

ՅԱՆԿ

ՄԱՍՆ Ա.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԳԱՍ Ա. Հայկէն սկսեալ ինչուան Արամ . 9
ԳԱՍ Բ. Արամէն ինչուան Պարոյր . . . 13
ԳԱՍ Գ. Պարոյրէն ինչուան Հայկազանց թագաւորութեանն կործանիլը. և կուսակալաց իշխանութիւնը . . 17

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԳԱՍ Դ. Արշակէն սկսեալ ինչուան Արտաւազդ Ա. 22
ԳԱՍ Ե. Արտաւազդ Ա. Արշամ և Աբգար . 28
ԳԱՍ Զ. Անանէ, Սանատրուկ, և Երուանդ . 32
ԳԱՍ Է. Արտաշէս երկրորդէն ինչուան Տըրդատ 35
ԳԱՍ Ը. Տրդատ և Խոսրով Բ. 39
ԳԱՍ Թ. Տիրան և Արշակ 43
ԳԱՍ Ժ. Պապ և Վարազդատ 47
ԳԱՍ ԺԱ. Խոսրով Գ. Վռամշապուհ և Արտաշէս Գ. 50

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԱՍ ԺԲ. Վ. հմիհրշապուհ և Վարդանանց պատերազմը 55
ԳԱՍ ԺԳ. Արտօրմիզդ և Արտաշնասպ և Վա-

Հանայ ըրած պատերազմները . 60
ԳԱՍ ԺԴ . Վարդէն Ինչուան Սմբատին Կիւ-
րապաղատուԹիւնը 65
ԳԱՍ ԺԵ . Սմբատ Կիւրապաղատէն Ինչուան
Բագրատունեաց Թագաւորու-
Թեան կանգնուիլը 70

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԳԱՍ ԺԶ . Աշոտ Ա . և Սմբատ Ա 75
ԳԱՍ ԺԷ . Աշոտ Բ . Երկաթ և Աբաս . . . 79
ԳԱՍ ԺԸ . Արծրունեաց կամ Վասպուրական
աշխարհին Թագաւորութիւնը :
Աշոտ Ողորմած ու Սմբատ Բ . 82
ԳԱՍ ԺԹ . Գագիկ Ա . և Յովհաննէս Սմբատ . 85
ԳԱՍ Ի . Գագիկ Բ . և Բագրատունեաց Թա-
գաւորութեան կործանիլը . . 87

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԳԱՍ ԻԱ . Ռուբէն Ա . Կոստանդին Ա . Թո-
րոս Ա . Լեւոն Ա . Թորոս Բ . Մլեհ
և Ռուբէն Բ 93
ԳԱՍ ԻԲ . Լեւոն Բ . Փիլիպպոս ու Հեթում Ա .
Լեւոն Գ 97
ԳԱՍ ԻԳ . Հեթում Բ . Ինչուան Ռուբինեանց
Թագաւորութեան կործանիլը . 100
ԳԱՍ ԻԴ . Ռուբինեանց տէրութեան կործա-
նելէն Ինչուան մեր առեն եղած
դիպուածները 105

ՄԱՍՆ Բ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԴԱՍ Ա. Մեր ազգին սկիզբը. Հայկայ ա-
պըստամբութիւնը, Բէլայ հետ
ըրած պատերազմը, և իրեն կա-
տարելութիւններն ու մահը . 109
ԴԱՍ Բ. Հայկայ յաջորդները մինչեւ Ա-
րամ 113
ԴԱՍ Գ. Արամ և իրեն քաջութիւնները . 115
ԴԱՍ Դ. Արային Շամիրամայ հետ ըրած պա-
տերազմը, ու Շամիրամայ գործ-
քերը 119
ԴԱՍ Ե. Պարեւաէն սկսեալ մինչեւ Ա՛ծն
Տիգրան 124
ԴԱՍ Զ. Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւն-
նները 128
ԴԱՍ Է. Վահագն ու անոր յաջորդները :—
Հայկազանց Թագաւորութեան
վերջանալը 133

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԴԱՍ Ը. Արշակունեաց Թագաւորութեան
սկիզբը:—Վաղարշակ, Արշակ Ա. 136
ԴԱՍ Թ. Արտաշէս Ա. 141
ԴԱՍ Ժ. Տիգրան Բ. և իրեն քաջութիւնները 144
ԴԱՍ ԺԱ. Արտաւազդ Ա. ու Արշամ. . . 152
ԴԱՍ ԺԲ. Արշամ, և Աբգարու գործքերը . 154
ԴԱՍ ԺԳ. Անանէ, Սանատրուկ, Երուանդ և
Արտաշէս Բ. 160
ԴԱՍ ԺԴ. Թագաւորք վերին Հայոց . . . 170

ԳԱՍ ԺԵ. Արտաւազդ Բ. Տիգրան Ա. Տիգրան Գ. և Վաղարշ 173
ԳԱՍ ԺԶ. Խոսրով Ա. 176
ԳԱՍ ԺԷ. Տրդատայ քաջութիւնները ու Թագաւորելը 180
ԳԱՍ ԺԸ. Խոսրով Բ. Տիրան, Արշակ Բ. . 188
ԳԱՍ ԺԹ. Մերուժան Արծրունիին ըրած անզգամութիւնները ու մահը, Պապայ և Վարազդատայ Թագաւորելը 197
ԳԱՍ Ի. Արշակ Գ. Վաղարշակ Բ. Խոսրով Գ. Վռամշապուհ 202

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԶՊԱՆԱՑ

ԳԱՍ ԻԱ. Վեհմիհրշապուհ առաջին Մարզպան, և Վարդանայ պատերազմը 211
ԳԱՍ ԻԲ. Արշէնաասպայ մարզպանութիւնը և Վահանայ պատերազմը . . 218
ԳԱՍ ԻԳ. Վահանայ մեռնելէն ինչուան Հագարացւոց Հայաստանի տիրելը. 223
ԳԱՍ ԻԴ. Հագարացւոց Հայաստանի տիրելէն ինչուան Բագրատունեաց Թագաւորութեան սկիզբը . . 230

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԳԱՍ ԻԵ. Բագրատունեաց Թագաւորութեան սկիզբը 236
ԳԱՍ ԻԶ. Սմբատ Ա. իրեն առնելի խռովութիւնները ու մահը 239
ԳԱՍ ԻԷ. Աշոտ Բ. Երկաթ, ու իր քաջութիւնները 246
ԳԱՍ ԻԸ. Սմբատ Բ.ին ինչուան Բագրատունեաց վերջանալը 252

ԹԱՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԴԱՍ Ի. Ռուբինեանց Թագաւորութեան սկիզբը : Թորոս Ա. իշխանին քաջութիւնները 271
ԴԱՍ Լ. Թորոս Բ. իշխանին քաջութիւնները, Մլեհ ու Ռուբէն Բ. . . 278
ԴԱՍ ԼԱ. Լեւոն Բ. իշխանին քաջութիւնները ու Թագաւորելը, և ինչպէս հեռացաւ Ա. 283
ԴԱՍ ԼԲ. Լեւոն Գ. ու Հեթում Բ. . . . 292
ԴԱՍ ԼԳ. Օշին ու Լեւոն Ե. 298
ԴԱՍ ԼԴ. Յովհաննէս Պայլէն ինչպէս Ռուբինեանց Թագաւորութեան վերջանալը 303
ՅԱՒԵԼՈՒԱԾ. — Հայոց անիշխանութեան ժամանակի ընդհանուր վիճակը. 309
Համառօտ խորհրդածութիւն Հայոց պատմութեան այլ և այլ մասերուն վրայ 317

2782

